



Հայկական գիտահետազոտական համգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Աստղագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Արտօն Հովհաննես Յանձնի



1804 - 1848



Առաջնահանձնութեան

Ա Բ Ա Վ Յ Ա Ն

Հ Ա Յ Ա Ն

— — —



Թ Ե Տ Հ Բ Ա Տ - 1 9 3 3 - Յ Ե Ր Ե Կ Ա Ն


Պետհրատի տպարան
Գլուխի № 8040 (р)
Հրատ. № 1801
Պատվիր 44
Տպ. 6000

Շապիկը՝ Հակ. Կոջոյանի
Ստիլիստ յեկ սրբադրի՝ Լ. Ա. Ռ Ո Վ. Յ Ա Ն

Համանված և արտադրության 7 հունվարի 1933 թ.
Ստորագրված և տպացրելու 3 հունիսի 1933 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	b2
Ակունքներ	3
Հանգույց	17
„Երջադարձ“	27
Ազդեցություններ	41
Լեզենդ	59
Մահ	77
Ժառանգություն	108
* * *	138



Լույս և տեսել Ակսել Բակունցի նոր մի գրվածքը՝ «Խաչատուր Աբովյանի „անհայտ բացակայումը“ (Յերեան, 1932)» վերապատճեամբ։ Հեղինակի անունը տրամադրում է ինքան լենթագրեւ, թե շնորհալի բելեատիստի նոր վիպասանությունն ե լինելու այս Ալգահս ել ե, իրոք, Գրվածքը բեղմնավորողը հեհինակի վիպագրական արվեստն ե։ Ակներեւ ե միայն, վոր մեր այս կարծիքին համամիտ չե ինքը հեղինակը, ինչպես, հավանորեն, նաև նրա ընթերցողների մեծ մասը։ Ալսպես լինում ե հաճախ։ Գաղափարներին կպցրած յառկիկը — ինչպես Մարքսն և նկատել — հաճախ ավելի վտանգավոր ե, քան գինու շին կպցը-քած յառկիկը. վիրշինս խաբում ե յերբեմն առնողին, մինչդեռ առաջինը՝ և առնողին, և ծախողին։

Յառլիկից դատելով՝ գրվածքը, իրոք, վոչինչ առնչություն չունի վիպասանության հետ։ Գիտական հավակնություններով գրի առված մի աշխատասիրություն ե այս՝ հիմնված «արխիվային նոր վավերագրերի և անհայտ նամակների» վրա։ Գրվածքի մեջ գետեղված են ոգտագործված մի շարք դոկումենտների նմանահանությունները։ Աչքի լե զարնում մանավանդ չափ ու սահմանը հեղնող «ապարատը» — հեղինակի «բանասիրական» ծանոթագրությունները։

Հանգամանքներ են սրանք, վորոնք պարտավորեցնում են քննադատորեն տրամադրված ընթերցողին։ Անհնարին ե, իրոք, վեր հանել գրքի վիպական բովանդակությունը, յեթե չփորձենք պարզել նրա «գիտական» արժեքը, յեթե չվերլուծենք գիրքը վորպես ուսումնասիրություն։

Վիրն ե ընկ. Ակսելի դրադմունքի առարկան։ Շատ ծեծված, բայց յերբեք չլուծված մի հարց — Աբովյանի անհետացման կամ, ինչպես նշել են գեղքն արձանագրող վոստիկանական որդանները, նրա «անհայտ բացակայումի» առեղծվածը։ Քննելով անհետացման բոլոր հայտնի վերսիրաները, հեղինակն անում ե ընդհանուր այն նկատողությունը, թե դրանք բոլորն ել անհիմն յենթագրություններ են լոկ կամ նպատակավոր հերլուրանքներ։ Ժամանակակից-ները հեռու ելին մանավանդ Աբովյանի մահանալու մտքից։ վոստիկանության թե ժողովրդի կարծիքը այն եր, թե նա փախած պիտի լինի վորևե մի տեղ. ամենից հավանականն եր համարվում, վոր անցած լինի Արաքսի մլուս ափը։ Իր գրվածքում ընկ. Ակսելը

փորձում և վերանորոգել հենց ալդ կարծիքը, գլխի շընկնելով, վոր վոստիկանությունը չեր կարող առնասարակ արձանազբել անհետացած մեկի մահի, յեթե չկան ուղղակի տվյալներ, — թեև ընկ. Ակսելի բերած աեղեկություններից իսկ յերեւմ ե, վոր ժամանակակիցները փնտումներ ելին կատարում նաև Արովլանի դիակիը հայտնագործելու ուղղությամբ, — ինչպես և չկասկածելով, վոր մեռածին կենդանացնելու մտայնությունը սովորական և առնասարակ լեզենդի համար, հերլուրլած լինի այն վոստիկանության գրասունլակներում, թե ծագած «ժողովրդի մատածմունքի» մեջ...

Սակայն ընկ. Ակսելի վերսիան հետաքրքրական և վոչ այն տեսակնետից, զոր Արովյանի անհետացման չափացուցված էին վերսիաներին ավելացնում և մի նորը, ասենք թե հնագույնը Հետաքրքրականն այն և, զոր այդ վերսիան ջանք և տնօում վերագնահատելու Արովյանին Արովյանը հայտնվում և մեր պահ վորպես մի մարդ, զորը պատակավում և Փետպալական և կաղիտավեստական տիրող դասակարգերի և շարական տիրող ռեժիմի հետ, փախչում շրջապատող մութ ու գարշ միջավարից, վողբերդական վախճան ունեցած իր այդ ժեստով իսկ կարծես նախատինք զառնում միջավարի իշխող ուժերի ու հասկացողությունների համար։ Դատեցնք ինքններդ։ Այն մարդը, զորի գործունելությունը թվում եր թե դադախարավխոսական անդրանիկ ազգարարն եր կովկասահայ միջավարում սայմանավորվող կապիտականական հարաբերությունների և զորի գլուխ գործոցը միաժամանակ՝ գովքը ցարական եքսպանսիայի և նախերգանքը բուժությական նացիոնալիզմի, — հայտնվում և այստեղ վորպես մեկը, զոր անդրադարձնում և դլուղացիության հակակրանքը ցարիզմին և բուրժուազիային, յերես շուռ տալիս տիրող ուժեմին և տիրող հասարակարգին, անցնում Արաքսը, ապավինում հայկական ընաշխարհում յերկրագործական չարքաշ աշխատանքով ապրող մասսայի բախտին կամ, ով գիտե, հենց նույն այն ժամանակ, 1848 թ. գարնանը, Յելլուպալում բռնկած հեղափոխության հուսակալանին։

Վերագնահատումը կատարյալ ե, իրոք Ալդ տեսակետից ե հենց, վոր ընկ. Ակսելի կոնցեպցիան թե նոր ե, թե խիզախ, թե հետաքրքրական միանգամայն. Բայց վերքան նիմնավոր ե այն Ալս ե խնդիրը. Յեվ այս խնդրի շուրջն ե հենց, վոր պիտի դառնա ամեն մի քննադատություն, վոր նպատակ կընի իրեն՝ վորոշել ակսելլան հալտնության բուն նշանակությունը, մերկացնելն ըստ վիպական, Փոլիցրալին ատաղձը, ընությագրել այն վորպես Խվենդ Առուանի ժաման.

ՕՐՈՎԱՐԱՄԱՐԴ ոչ մաս ցցնեղաւ զրցիցու ոչ սարդարաց
և ըստից առաջ ով մասաւայս պլումեաւ . բայ վե մաշոյ հմայ վայս
ու ամբ ամե և առաջ անուանու ով լուս ու այս հայաց մայլ ծագաւ ոսկ

— այսակը մայաբռով ժիկ եւսկսախաւր դոյ զմացքալու յաճ
դի մայաբռոս — յմայլոցն դի չըշաբռով» զնոջ ըլտու մայո
ժիկաբդախաւր «մ մայիսըմանեան դոյ և փողդիք ու խեւութէ
-ալսոյ զարդի յդեալիւումահամար դի յդեալիւուման դի
-շարուց սկըզբի յմայլոցն ոմ մամբաւամ օվդմշդիքաբռով» սկը
-զամ ընդում սկըզբումիմ ուսոյ և նախամ ուղար և յանհամ և ծախ
ԱԿՈՒ ՆՔՆԵՐ

Յայի խոյն ոլորտութեան դպի ռանդիք յառաջիւս մի պահան

Ընկ. Ակսելի գրվածքը լենում և զեկավարող մի տեսակետից,
վոր նախադաշտմունքի կայունություն և ձեռք բերել արդեն,
Դա Արովյանի՝ «գլուղացի» կամ «գլուղագիր» լինելու հանգա-
մանքն ե, արծատացած այն կարծիքը, վորը կովկասահայ «նա-
հապետական» գլուղի ու գլուղացիության դադախարախոս և
հոչակում «Վերք էի հեղինակին¹: «Վերք Հայաստանին — գրում
և ընկ. Ակսելը — գովքն և վոչ միայն ոռւսական զենքի, այլև հայ
գլուղի, նրա բարքերի ու այն ակնկալությունների, վոր ուներ
«Հայկական Մարզի» գլուղը շահի ու նրա սարդարների բռնու-
թյունից ազատվելու հույսով։ Մի այլ տեղ, ընորոշելով Արօվյանի
տեսակետը վաճառական ության ու առևտրական կապիտալի մա-
սին, հեղինակն ընդգծում ե նրա բացասական վերաբերմունքը
գեպի բուրժուազիան, դեպի առևտրական կապիտալին առհասարակ։
Մասցածը պարզ ե ինքան։ Եթե ոռւսական զենքի շառաջն ու
շոխնդը, նրա հաստատած լերկաթե լուծը չարդարացրին գլուղա-
ցիության ակնկալությունները, լեթե ոռւսական նույն այդ զեն-
քին ապավինած առևտրական կապիտալը վոտքի տակ տվեց գլուղի
հին կենցաղը, նրա վաղեմի բարեկեցությունը, պետք ե վոր,
հարկավ, հուսախար լիներ նաև «գլուղացիության դադախարա-
խոսը», Արօվյանը։

Վերն և այս մերձեցման հիմնական արտադրությունը կազմությունը կազմությունը

Աբովյանը ծնվել է գլուղում։ Նրա գրականութիւնը անդրադարձել է հայկական գլուղաշխարհին, գլուղական թեմատիկային։ Նա գրել է մի լեզվով, վոր հասկանալի յեր գլուղացուն, արծար-

¹ Հմմ. Թ. Ավելաբեգյան. «Խաչատուր Աբովյան», Վաղարշապատ, 1910. նույն
հեղինակի՝ «Հոռի վիշտը Մուրացանի յերկերում», Վաղարշապատ, 1912, յեր. 4 և
հետ. և Հայր, զյուղը Հ. Թումանյանի յերկերում, Երեկոն, 1925, յեր 11 Խակ
Ա. Տերտերյանի «Նկասողություններ» մեր զյուղագիրների մասին հոդվածը
(«Հայաստանի Գետհամալսարանի Գիտ. Տեղեկագիր» Ա 2-3, Երեկոն, 1927, յեր-
276 և հետ.);

ծել հայացքներ, վոր պատվաստվում ելին գլուղական միջավալ-
բում: Բայց իր գործ «գլուղացի» է եր Արովլանը — սոցիալական իր
ծագումով ու դիրքով, և վոր ամենաելականն եւ գասակարդալին
իր մտայնությամբ, իր զաղափարախոսությամբ: Արդյոք իսկա-
պես «գլուղագիրների» նահապեան եր Արովլանը, ինչպիս ընդուն-
ված ե կարծել և շարունակում ե, ըստ յերեսութին, կարծել նաև
մեր հեղինակը:

Կարելի՞ իւ անգիտանալ միթե, վոր «գլուղացի» Արովլանը
ծնվել եր գլուղի ժառանգական տանուտերների, գլուղի թարխան-
ների, գլուղական աղնվականների ընտանիքում, վոր Արովլան-
ների գլուղական «խրճիթը» աղգակցական ու սոցիալական կա-
պերով հլուսվում իր մի ժամանակ Յերեանի մելիքական տան և
Եջմիածնի վեհարանի հետ, ինչպիս պատմել ե այդ մասին ինքը
Արովլանը Հաքստհառուղենին հանձնած գերմանիրն իր հիշատա-
կարանում²: Ինքնակենսադրական մի հատվածի մեջ Արովլանը
դրել ե, վոր իր հայրենական տունը նշանավոր ե «այս յերկըում»
և ամենից հարդգած³: «Վերքըում խօսելով Արովլ պապի մասին,
հեղինակը զրում ե. «Հարիր տարի կըլի վոր լուսահոգի Արովլը
մեռել ա, ելի նրա վողորմին հա կա, հա կա, թուրք ու հայ նրա
գերեզմանովն են որթում ուտում: Ճամփի վրի մենծ իգու անունը
Հնդստան ա հասել են ջադղան բաղը իր ձեռովը տնկեց, վոր անց
կենողը գնա նրա բարությունը վալելի: Չորս կատեպան ամեն
առավոտ, ինչ պատու ծառիցը վեր եր ընկնում, հավաքում, քիոց-
ներով տանում ելին ճամփին գնում ու անց կենողի ջերն ու
խորչինը լցնում: Են մեջա իգուը մեկ պատու, մեկ թաս գինի
իրանց տանը չելին բանացնիլ, ջոկ կպահելին ու աղքատ գե-
ղցոնցը կրաժանելին»:

Արովլ պապի հարստությունը չեր սպավել նաև Արովլենց Հա-
րությունի, զրողի հոր, ժամանակ: «Զանգվում» Հարությունը
դուրս ե բերգած վորպես «Թանաքուտ աղնվական», մի իզիթ, վորը
«քահան» ձին տակին բաղմանչիների ձեռքով առաջ եր տանում տա-
կավին «մենծ իգու» գործերը: Ձիշտ ե, հետագալում խարիսլեց Արո-
վլաների տոհմալին բարեկեցությունը, Բայց շրջվեց արդյոք դրանով
գրողի սոցիալական դիրքը և, վոր ամենից կարևորն ե ներկա դեպ-

² A. Freiherr von Haxthausen: «Transkaukasia». Leipzig, 1856, I, 181, 191, 204 & հետ.

³ Ն. Տեր-Կարապետյան. «Խաչատուր Արովլան», Բագու, 1911, յեր. 15

քում, հասարակական նրա գիտակցությունը։ «Աբովի թոռը» եջմի-
ածնի ժառանգավոր, վանքի դպիր ու «հոգեղավակ», սեմինարիալի
մոնթ, Ներսեսի կուսակից — ահա Աբովյանի նախնական «վարքը»,
նրա սոցիալական գիտակցության ակունքը, «Դորպատի ստու-
դենտը, — պատմում ե ընկ. Ակսելը, — զրկվեց ժառանգական իրա-
վունքներից, իսկ փոքր ինչ ուշ զրկվեց նույնիսկ «հոգեոր կոչու-
մից»։ Բայց միթե ժառանգությունից զրկվելը վերացնում է
ինքան զիտակցությունը ժառանգության մասին, կամ «հոգեոր
կոչումից» հեռացվելը վերացնում ինքան ամեն մի առնչություն
է եկեղեցու հետ։ Ուշագրությամբ կարդացեք Աբովյանների ազնվա-
կան ծագման մասին Հաքստիառուղենի զրած եջերը, և դժվար
չի լինի համոզվել, վոր Աբովյանն ե հենց, վոր տրտունջ ե հալտ-
նել նրան այն մասին, թե ուստանեն անարդարացի լեն գտնվել
իր տոհմի հանդեպ, զրկելով նրան այն իրավունքներից, վոր
այնպիսի առատությամբ հատկացվել ելին վրաց կնյացներին։
Դորպատի «իմացական ավագանը» ընդարձակեց, հարկավ, Աբո-
վյանի մտահորիզոնը։ Հասարակական ավելի զարգացած հարաբե-
րությունների վրա հանգչող կուլտուրական այս միջավայրում եր
անշուշտ, վոր ձեռք բերեց Աբովյանը լեվոպատական կրթություն,
լուրացրեց առաջամարտ հայացքներ գրականության և դպրո-
ցի, ազգային և «մարդկային» իրավունքների, հայ միջավայրում
իշխող ունեոր տարրերի կույր եղողիզմի, կղերի անծայր տղի-
տության մասին և այլն։ Սակայն գոյություն ունի նաև Դոր-
պատի գերազահատման վտանգը, վորքան Աբովյանի նացիո-
նակ-գեմոլիրատական մեծարողները, վեր հանելով Յեվրոպայում
լուրացրած պրոդրեսիվ նրա հայացքները, անզիտանում են այն
հանգամանքը, վոր գրողի ամբողջական նկարագրի կազմակեր-
պության վրա վորոշ իր կնիքն ե զրել նաև նրա ապրած ասի-
ական միջավայրի հետամնացությունը, նրան շրջապատող հայ
և անդրկովկասլան իրականության բախտորոշ ազդեցությունը։
Դորպատը շեշտեց միայն Աբովյանի սոցիալական գիտակցության
իրկվությունը. այն մտցրեց իդեալական նրա տեսադաշտը դասակար-
գալին դիտակցության նոր տարրեր, բայց չխղեց, արմատախիլ
չարեց նրա հին սոցիալական հոգեբանությունը, չփոխեց հիմնե-
վեր քաղաքական նրա հին մտալինությունը։

Դորպատի շրջանից Աբովյանը ժառանգություն ե թողել մեզ

ընդարձակ իր հիշատակարանները, վորոնք ցուց են տալիս, վորոնք հորիզոնների տակ խակ Եջմիածնի դպրի կանքն ընթանում եր վանական կանոնների համաձայն, Ծոմ ու պահեցողություն, աղօթք ու բարեպաշտություն—պարտավորություններ ելին որանք, վոր կատարում եր Արովյանը ամենայն խստությամբ նաև Դորպատում: Տոն որերին կամ հանդիսավոր առիթներով այցելում եր գերմանացի իր ծանոթներին՝ ու բարեկամներին՝ հազնելով պատշաճ զգեստը՝ Եջմիածնից բերած փարաջան: Ճիշտ ե, Արովյանը տուրք եր տալիս նաև սիրային հրապուրներին. սրանց հետքերը պահպանել ե անդամ մեղ հետաքրքրող գրվածքի անվանաթիրթը, վորի վրա ընկ. Ակսելը, հնազանդ բելետրիստի իր կոչումին, ավելի լավ գործադրման արժանի խնամքով զիաեղել ե Արովյանին զբաղեցրած բազմաթիվ հերոսուհիներից մեկի, Շարլոտտա Շուլցի, սրտաճմլիկ տողերը ... Սրանով Արովյանը հակասում եր, իհարկե, վանական թեորիային, թեև, հայտնի բան ե, այս ամենը մաղաչափ անդամ չեր մեղանչում վանական պրակտիկայի դեմ: Այստեղից չի կարելի լեզրափակել նույնիսկ, թե Արովյանն անհոգ եր առհասարակ վանական թեորիայի նկատմամբ: Կան շոշափելի փաստեր, վորոնք հակառակն են վկայում. դորպատան այս տարիներին եր հենց, վոր Մալլանթյանը և Մոերը ծրագրում ելին Արովյանի հետ մեկտեղ Վենետիկի Միլիթարյանների պես ուսումնական մի միաբանություն հիմնել Ս. Խաչ վանքում՝ ցարի և թեմակալ Ներսեսի հովանավորության տակ: Վաղեմի ծրագիր եր այս, վորին տուրք են տվել ժամանակին Ներսես Աշտարակեցին, Մանվել Կյումուշխաննեցին և ուրիշները և վորի իրազործմանը ձեռք ելին զարկում ներսիսյան կուսակցության Շնոր սերնդի՝ ներկայացուցիչները և դրանց թվում նաև Արովյանը: Այս նպատակից շատ հեռու չեր Արովյանը, լերը գեռես ուսուպարսկական պատերազմի ժամանակ պատրաստություն եր տեսնում արտասահման անցնել: «Ես ժամանակին, — պատմում ե նա ովերքում, — վարժառտանից գուրս եկա ու Թիֆլիզուցը զնացի Հախպատ Յեփրեմ կաթուղիկոսի մոտ, վոր թուղթ առնեմ, գնամ, իմ ծնողացը հասնիմ, նրանց հետ քոչիմ ու դնամ Վենետիկ»: 1832 թվին Մոերը հրավիրում եր Արովյանին «պարագլուխ» կանգնել նոր ուխտի հիմնադրման ձևանարկին: Սակայն Արովյանը հնարավոր եր համարում վոչ թե Նախիջևանը, այլ հենց Եջմիածինը

6 «Փարոս» 1876 թ., տետր 6., յեր. 7 և հետ. Ս. Մաերյան. «Պատմութիւն կաթողիկոսաց Եջմիածին», Մոսկվա 1876, յեր. 260 և հետ. 266 և հետ. և Ա. յետ.

դարձնել աղջի լուսավորության կենտրոն։ Նույն 1832 թվին նա կոչ եր անում Կարբեցուն՝ ջնջել աղջի լեռներից տողիտության ախտը, ժողովների թիր թիվ տակ պիտանի այն մարդկանց, վորոնք կարող կլինելին ստանձնել և տողանդալ ըազմության կրթության պաշտոնը։ Մատնանշում եր, վոր այդպիսի մեկը — Մ. Թաղիբաղյանը — գործի լեն անցել արդեն Եղմիածնում, մինչդեռ մլումը — Մսերը — անդորրության և մատնված թիվլիսում⁶։

Աբրյանը հայրենիք վերադարձավ հենց նույն այդ վայրում և նույն այս ծրագրով աղջի տողիտության ախտը սրբելու համար։ Միամիտ, Գանտաստիկ ծրագիր եր այս, վորի իրագործումը կենթաղբեր, թե Կարբեցին իր իսկ հակառակորդների, ներսիսլան կուսակցության մարդկանց, ժամանդավայր պիտի դարձներ Եղմիածնը։ Ծրագիրը մերժվեց, իհարկե, և հասկանալի լե, վոր գեղջկական մտախության համար չե, վոր Կարբեցու արրանցակները վտարեցին վանքից նաև «ազգամոռաց», կրոնադրուժն Արովյանին։ Այլ և այլ պատրվակներով և ձեռքով նույն այս վերաբերմունքին ելին արժանանում բոլոր ներսիսականները։ Արովյանն անցավ պետական ժառանգության, նվիրվեց դպրոցական գործունելության Բայց դարձլավ՝ փոխվեց նրա սոցիալական դրությունը, հարազատացմակ նա վորես չափով գլուղին և գյուղացիությանը։

Աբրյանին ժամանակակից գլուղը նախակապիտախտական ժամանակաշրջանի գյուղն եր Սխալ և Շնահապիտական համարել այդ գլուղը, ինչպես սխալ կլիներ նաև գերազնահատել ապրանքային տնտեսության դերն այդ գլուղում։ Տիրապետողը ֆեռագական համակենցաղն եր, նահապետականության հետքերով և ապրանքանքային հարաբերությունների նախանշաններով։ Շնոպես մարդ կար, վոր տարենը երկու հարեր, իրեք հարեր լիտր տանձ, խնձոր, ծիրան ծոխում եր ու մեկ ենքան ել աղքատի ու ճամփորդի ուտացնում, յա դեղապիհաի հմար պահում, վոր սարի աղջատ խալիք՝ թուրք, հայ՝ չունքի բաղ չունին, մեկ հիվանդ պատահելիո գան տանին։

Գյուղացիությունը ներեսկ տարը եր տիրող ավատականության։ Գյուղացիական միջավայրում տարվող աղջանական պըռ պաղանդն իսկ նշան եր այդ ներհակության, անդրադարձ գյուղացիությունից դուրս գտնվող դաստիակարգերի հասարակական

Սեղբակյան։ «Հովհաննես յեպ, Շահիսթումյանի կենսագրությունը», ՍՊԲ, 1898 յեր 27 և հետա միացաւ պատասխանայ մշյաց միացաւ ուղարկություն ուղարկություն և Ն. Ցեղ-Կարապետյան, յեր 262, Հանուղյան և առաջարկած ուղարկություն

ծուռ հայելու մեջ։ Առետրական, վաշխառուական կապիտալի պրոպագանդն եր այդ, վոր ճիգ եր անում քարշելիք հետեւից զլուզացիությունը, ցարիզմի նվաճողական քաղաքականությանը նողառոտղ մի հենակետ դարձնել Պարսկաստանի ֆեռողալական կարգերի գեմ նրա ունեցած դժգությունը։ Արովյանին ժամանակակից գյուղացիական շարժումները Ռուսաստանում, Ռէկրալինայում և Կովկասում զաղուրային շարժումներ ելին՝ ուղղված ուռաւական մետրոպոլիտի կալվածատիրության և նրա հետ դողված առևտրա-վաշխառուական կապիտալի գեմ։ Շարժումներ ելին դրանք՝ ուղղված ցարիզմի ուղղմա-ֆեռողալական քաղաքականության, նրա գաղութային եքսպանիայի, նրա գաղութային ոհմին մի դեմ։

Կարմղ ենք սակայն այս ասպեկտի մեջ դիմել Արովյանի կատարած աշխատանքը։ Նրա «Վերք Հայաստանի» մեծարում եր ցարիզմի «ազտարար» պաշտօնը։ Նա խոսք չուներ ֆեռողալական կարգ ու սարքի զեմ առհասարակ։ Զմուաննք, վոր Արովյանի փառարանած «ազտարար» ցարիզմը Պարսկաստանի և Թլուրքիայի հազին փորձում եր միայն հաղթահարել Ռուսաստանի ճորտափական տնտեսության ճգնաժամը։ Իր հերթին՝ Արովյանի ճգումն եր փոխարինել ֆեռողալական մի միստեմը, պարսկականը, մի այլ, ուռաւական, զարձյալ ֆեռողալական, սիստեմը։ Արովյանի մի վուտանավորը ներբողում եր Սարգիս Զալալյանին նրա հնախոսական ջանքերի համար։ «Վերքը թախիծով եր նշում Հայաստանի ֆեռողալական անցյալը, պատկառանքով հիշում հայ լեկեղեցական նվիրապետության—խունկ ու մոմի, խաչի ու ավաղանի—մասին» «Վերքը մեծարում եր «մեր առաջին» են հիմնալի թաղավորաց, իշխանաց գործքն ու կրանքը, մեր հայրենյաց, մեր սուրբ աշխարքի առաջվան սքանչելիքն ու հրաշքը»։ Անիի ավերակները լցնում են Աղասու կուրծքը հայրենասիրության խանդով։ Նա լերազում եր վերականգնելու Անին։ «Նրա միտքն են ա, վոր Անի շինություն քցի»։ Արովյանը խտացնում եր գուները, պատկերացնելով զլուզի նահապետական անցյալը։ միտումավոր մի նկարազրությունն եր այդ, վոր կամենում եր ցույց տալ, թե միմիայն պարսիկն եր խախտում գլուզի վաղեմի ինքնարավ կացությունը, նրա ներքին անդորրը, նրա սոցիալական ներդաշնակությունը։ Արովյանի պատկերած նահապետական իդիլիան ստորագաս տեղ եր տալիս գլուզի ներքին պառակտմանը, ազգային միասնական նակատ հարդարում «հարամու» դեմ։ «մենք, վոր իիրար թա-

սիր քաշենք, իրար քոմագ անենք, իրար պալծառացնենք, շենացնենք, ծովս ել տեղիցը վեր կենա, մեզ տակովը չի կարալ անիլ, ինչ թե ոսմանցին, լա պարսիկը: Մեզ՝ ամենաբարի արարիչը են հոգին, են խելքը, են շնորհքը չի տվել, վոր նամարդի մուհտաճ մնանք: Աստված հիմիկ մեզ լիս ա բաց արել, ոռւսաց թրին սարեր չեն դիմանալ, վոր ջանք անենք, մեկզմեկու սիրենք, մեր լեզուն, մեր լեկեղեցին ենպես ղալիմ բռնենք, ինչպես մեր լեզանիկ նախնիքը, հավատացիր ինձ աստված ել կսիրի մեզ, մարդն ել:

Ալստեղ Աբովյանը կրկնում եր մի միտք, վոր տարիներ առաջ հայտնել եր Կարբեցուն ուղղած նամակում՝ «վոչ թե պարսիկը, վոչ թե թուրքը, ալ մենք ինքներս ենք մեր կորստի և մեր կործանման պատճառը. ատելով և հալածելով իրար, խախտելով միասիրտ միաբանությունը՝ ազգը զրկվեց իր բախտավորությունից»⁷: Ազգի «բախտավորության» համար, արտաքին թշնամու զեմ նրա ուժերը համախմբելու համար, Աբովյանը պահանջում եր վերստեղծել նախկին «միաբանությունը», զըսեորելով սրանով գաղափարական իր սերտ կապը վոչ միայն «առզի» ֆեռդալական խավերի, ալև ֆեոդալական կարգերի ժամանակ աճող մի ալ ուժի — քաղաքացին բուրժուազիայի հետ:

Աբովյանի սերտ կապը հասարակական այս ուժի — բուրժուազիայի հետ վոչ միայն չի նկատում ընկ. Ակսելը, ալև ուղղակի ժխտում: Ընկ. Ակսելը ևս շեշտում և Աբովյանի «բացասական» վերաբերմունքը դեպի վաճառականը, առևտրականը, կապիտալիզմն առհասարակ: Ընդգծում ե, վոր Աբովյանը մնաց մինչև վերջը «տարամերժ դեպի վաճառական դասը, դեպի առևտրական կազմականը, վորը պատերազմին հաջորդած խաղաղ շրջանում (Անդրկովկաս տրանզիտի վնարացման պալմաններում | ? — Ա. Հ.) աճում եր ավելի արագ, ինչպես սունկերը հորդ անձրեկց հետո»:

Տեսակետ ե այս, վոր լեզակի չե դարձաւ, ալև բղխում ե ըստ ամենալինի Աբովյանի «ացիոնալ - դեմոկրատ «քննադատների» ցանած նույն այն նախապաշարմունքից, վորի գոհերից մեկն ե ընկ. Ակսելը: Ճիշտ ե, վոր Աբովյանի նկարագրած գլուղում ակրապետողը «շեն ու բոլք տնտեսությունն ե: «Վորը լերկու, վորը իրեք բաղ ուներ, նոքար, հոգաղ դուանը հազիր, ու տան ներսն

⁷ Գրաբար տեքստերը այստեղ և վարը փախադրում ենք սովորաբար ազ-խարհաբարը:

ու պուճախը դրմբում եր»։ Արովլանի նկարագրածը գլուղացիական մանր անտեսությունը չե, այլ զուղական համփաների, քենդիսուշաների, զուղական «իշխանների» այն անտեսությունը, վորի նկարագիրը տվել ե նա նաև Հաքստհառուղենին հանձնած հիշատակարաններում, այնահեղ, վորտեղ խոսում և Արովլ տղաղի բուրեկեցիկ որերի մասին։ «Վերք»ի մեջ շեշտված և նատուրալ տնտեսության պատկերը Արովլանի դուրս բերած «զուղացի ներն» ատելությամբ են խոսում վորդի ու վորտատիրության մասին։ Սակայն ներկա դեղքում Արովլանը ոռմանիկ մտացնության ներկայացուցիչ եր, իսկ նրա դրածը պատմական մի վիպասանություն, վորտեղ, ինչպես Նալբանդյանն և նկատել տակավին, տեսնում ենք «հայկական կյանքի մեռած պատկերը»։ Նատուրալ և ապրանքային տնտեսության շուրջը «Վերք»ի եջերում արծարծվող զիալոգը մտանում և միայն վաշխառուական կապիտալի աճող աղղեցությունը, անդրադարձում դրույդի և քաղաքի, գլուղական «իշխանների» և քաղաքային գովլաթավորների ներքին բաղխումները։ «Վերք»ի մեջ ինսամի Հարությունը—հանձին վորի հեղինակն ըստ յերևութիւն հրապարակ և հանելիք հորը, Արովլնց Հարությունին (հանգամանք, վոր անտես են առել հեղինակի կենսագրողները)՝ խոսելով առևտրականի մասին՝ մատնանշում և միայն գյուղի սոցիալական ներդաշնակության խղումը, և ճոթ առնելիս հո՛ շատն ուղում ա, մեկ յերկու շահի վող ենք դատել, են ել նա խլի Ե՛լ գիտի ժամանակ հա, թէլ եր աերել կամ լակ ավալի սըֆթա եսպես ըաներ, դասն ու գելն ի միասին արածում ելին, հըմիկ կովը վեր են քաշում, վոր տեսնեն, թէ տակին լարաբ ֆորթ կմ, թէ չե։ Սատկած ծիու նալի յեն ման գալիս, ել մւմ ասես դարդդ, Հերը վորդուն չի մանաշում, վորդին հորը, ախպերն ախպորը, լավ ա՞լը քարը քարի վրա կանդնած մնում ա»։ Տանուտերը իրատում և Հարությունին, «Մենք ել լավ գիտենք, վոր գրուստն ես ասում. ամա ինչ անես, վոր գեղըցու խոսքը չվանի չեն զնում, քաղաքացին ել տեղը տաքացրել տաղ արել իր չալը խմում, և մ դարդն ա, թէ քարը քարի վրա չի կանդնիլ, ամեն մարդ իր գղակն ա զզում, իր գլուխը քորում, Բերանդ քաց անելիս, հող են ածում, աչքդ քաց անելիս՝ թող, շունը տերը չի ճանաչում, և մ ասես, և մ. կուտ ունիս, քո համի առաջն ածիր, դան ունիս, քո ջաղացը տար, դու ել թէ ձեռքիցդ գալիս ա, դանակդ սրիր, մեկ կողմից վրա թոիր, աշխարքս թալան, թալան ա, նամարդը իշի փալան ա»։ Առևտրական կապիտալի հղոխտական մո-

բալը ճեղք եր բացել արդեն տանուտերի ուղեղում, նրա բերնում լևու յեն առնում վաշխառուի բարոյական նորմերը: արձա մայթ Արովլանը, հարկավ, դատապարտում եր վաշխառուական կապիտալի գոորողիական մորալը: Նշանակմամ ե այս առհասարակ, թե նա ժխտում եր դրանով կապիտալիստական բարոյախոսության հիմքերը:

Ընկ. Ակսելը հիշատակում ե նրա՝ «Հախվերմաղի գովքը» վոտանափորը և ցասկոտ այն նամակը, վոր ուղղել եր նա իր «հախը» կտրող հայ հարուստներից մեկին, վորի գլխավոր հանցանքը «մարդուն մարդատեղ չքցին» եր, Յեվ հենց այս փաստից շտապել ե յեղրակացնել Արովլանի հակակապիտալիստական մտանության մասին, մոռանալով, վոր «ապարտաճանաչության» ու «մարդուն մարդի տեղ գցելու» սկզբունքի հոչակումով ե հենց, վոր պատմական ասպարեզ իջավ բուրքուազիան: Բնկ. Ակսելը կրկնում ե ալստեղ վոմանց այն սխալը, վորոնք, որինակ, «աշխատավորության» իդեոլոգ են համարում Սունդուկյանցին սոսկ այն պատճառով, վոր վերջինս մտրակում ե ստորագրած մուրհակը կամ «իսղճի դավթարով» վերցրած պարտքն ուրացող Զիմզիմովներին...

Մեր հեղինակին շփոթեցրել ե այնուհետև Արովլանի այն տրառունջը, թե «վաճառականության վոգին» ե ծանրանում ազգի մեծավորների գործի ու ընթացքի վրա և զուր ե՝ զրական ոժանդակություն սպասել նրանցից «ընդհանուր բարորության» համար կամ Արովլանին համախոհ նազարյանցի այն խոսքը, թե՝ «վորոնի իշխում ե վոսկե զահի վրա և հոգուա ժողովրդի արած բուժիչ առաջարկներին վոչ վոք ականջ չի դնում»:

Նազարյանցի գրությունները լիքն են, հիբավի, նման տըըտունչներով: Բայց նշանակմամ ե այս, թե նազարյանցը մերժում եր «վոսկե զահը»: Ամեննին: Պնդել այս՝ կնշանակեր անգիտանալ նազարյանցի գերն ու նշանակությունը: Նազարյանցը և իր համախոհները կամենում ելին միայն հետացնել «վոսկե զահից» նրա վրա բազմած «վորոմը», և միայն այս: Նրանք ավետարան ելին կարում կապիտալիստական զալիքի գլխին, վորոնք չելին տեսնում կապիտալի կուտակման և «ընդհանուր բարորության», կամ, վոր միենուէնն ե, կապիտալիստական հարստահարության և հոգուա ժողովրդի արած բուժիչ առաջարկների մերքին կապը: Զրակեցնող ժամանակաշրջանում նազարյանցը հառում եր իր աչքը ազգի «ընտրության» զավակների վրա: «Ժողովրդական մասսաները — զրում եր նազարյանցը — նվիրված են ամենուրեք նլութական-

արդյունագործական կլանքին, նրանք հազիվ են մերձենում դիտության սեղանին, իսկ ընտրյալները հազվագյուտ են ամենուրեք... Խոսելով ժողովրդի մասին ընդհանուրպես, պիտք ե ուշադրության առնել նրա ծաղիկները, նրա հոգեոր և բարոյական կացության ներկալացուցիչներին, բայց վոչ՝ քայլքալիչ աղդեցությունների ներքո անդամատված, գեղեցիկ ամրողջից պոկլած մասերն ու մասնիկները»⁸: Ազգային լուսավորության ասպարեզում նազարյանցը զոհաբերության կոչ եր անում հայ մեծատուններին և հասարակին՝ «առանց միտ դնելու այն ահազին անհավասարության, վոր կա մեծատունի և չքավորի մեջ»⁹: Նա կշտամբում եր ինքնապաստան մեծատուններին, նրանց, վորոնք չելին կամենում «իմաստությամբ խոնարհելուրյանց աթոռի բարձրությունից դեպի ժողովրդի հասարակը, և ձեռք ձեռքի տված լեզրալրասիրաբար հառաջ տանել ընդհանուր աղդալին լուսավորության գործը»¹⁰, Մարակելով կապիտալի նախնական կուտակման հայ ասպետներին, կովկասահայ կոմպլքադորներին, նազարյանցը և իր նամախոնները չելին մերժում, ինարկե, վաճառականությունն ընդհանուրպես, կապիտալն ու կապիտալի մասաւրակ, քանի վոր իրենք ելին հենց մեկի և մյուսի գաղափարական մունեաթիկները: «Մի ազգի փեղիքական բարեկեցությունը — գրում եր նազարյանցը — կախ ե վաճառականության ու ֆարբիկագործության հառաջադիմությունից, վորովնետե գուցքի կուտակությունը կրթյալ ընկերությունների մեջ վոչ թե միայն կարող ե պաշտպանել սովոր լերեսից, այլև դա յե այն հնարը, վոր կարող ե բանալ աշխարհի իսկական ոգտարուխ աղբյուրը»¹¹: Վաճառականությունը չեր մերժում անգամ նազարյանցից ավելի արմատական Մ. նալբանդյանը, վորը համոզված եր հաստատակես, թե «ազգի անդամաստանում հինգ հատ ցորենաբուլս չկա, բայց վուշ ու վորո՞մ բլուրավոր»: Անգամ հեղափոխական մանր բուրժուազիալի գաղափարներով տոգորված «Յերկրագործության» ուսուպիան եր դառնում «ազգալին վաճառականության» շուրջը: Ազգային այդ վաճառականությունն եր հենց, վորին հրավեր եր ուղղվում՝ բազմացնելու և հավաքաբար ծախսու հանելու աղդի անդամաստանում ծած ցորենաբուլսը:

⁸ «Ученые записки, издаваемые имп. Казанским Университетом», 1846, кн. II, յեր. 112:

⁹ Մ. նազարյանցի «Յերկերը», հ. 1, յեր. 264:

¹⁰ Ն. առ., յեր. 1, 282.

¹¹ «Հյուսիսափայլ», 1858, յեր. 233.

Դալովի իրեն՝ Արովյանին, վաճառականության հետ նրան շաղկապում եր թեկուղ հենց այն հանգամանքը, վոր նա նույնջան ոգլուղացի» լիր, վորքան և քաղաքացի և ավելի շատ քաղաքացի, քան ոգլուղացի։ Պատանեկան տարիները անց եր կացրել վաղարշապատում, վոր վաղեմի առեստական կենտրոն եր. վանքի շրջապարիստի ներսում իսկ հատուկ տեղ եր բռնում առեստական շուկան, միքանի տասնյակ խանութներով։ Հետազայում ամբողջ գիտակցական իր կլանքը Արովյանը ապրել եր քաղաքներում՝ Թիֆլիսում, Թորպատում, Յերևանում։ Սակայն քաղաքի, քաղաքային բուրժուազիայի հետ ևս Արովյանի կապերն ավելի խոր ելին, «տոհմալին»։ Արով պապը «արդյունագործական ձեռնարկություններ ու խանութներ» ուներ Յերևանում, վորոնք շահագործվում ելին քրահով¹², 40-ական թվականներին Մորիկ Վագները հիշատակում է Արովյանի՝ Յերևանում գտնված հայրական տունը¹³, Քաղաքային առեստի և արդյունարերության, քաղաքային բուրժուազիայի հետ կապեր ուներ նաև Արովյանի կուսակցությունը, Մագումովի և դիբքով կապված լինելով ազնվականության հետ Ներսես Աշտարակեցին վաճառականության մարդն եր միաժամանակ՝ Թիֆլիսում դպրոց հիմնելուց առաջ նա կառուցեց այստեղ համբարանոց, քարվանսարա և անգամ ապակու գործարան, Հետազայում սրանց ավելացավ դպրոցին կից հիմնված արդյունարերական մի այլ ձեռնարկ՝ տպարանը, վոր հիմնել եր Ներսեսյան կուսակցության դլամակոր ոլուներից մեկը՝ Թիֆլիսի Գոստիննի պապի սեփականատեր Գիորգ աղա Արծրունին¹⁴, Հետաքրքրական ե, վոր ավելի ուշ, 40-ական թվականների վերջերին Ներսեսն եցմիածնում շաքարի դործարանի և շերամարուծության հիմք դրեց¹⁵, Աշտարակեցու քաղաքականության վրա բախտորոշ ազգեցություն ուներ շարունակ հայ կապալառուների, վաճառականների դասը՝ Թիֆլիսից մինչեւ հեռավոր Հնդկաստան, 1843 թ. նրա ընտրությանը և հաստատմանը զորավիրդ հանդիսացան Անդրկովկասի, Հյուսիսալին Կովկասի, Մոսկվայի և Պետերբուրգի հայ կոմպրադորական կապիտալի ներկալացուցիչները։ Առանձնապես խոշոր դեր

¹² Schr. Haxthausen, Ե. ա., I. յեր. 203:

¹³ Moritz Wagner: «Reise nach dem Ararat und dem Hochland Armenien», Stuttgart und Tübingen, 1848, յեր. 231.

¹⁴ Haxthausen, Ե. ա., I, 270 և հետո.

¹⁵ А. Д. Ерицов: «Патриарх всех армян Нерсес V, князь М. С. и княгиня Е. К. Воронцовы в их частной переписке», Тифлис, 1898, յեր. 28:

խաղացին Թիֆլիսի մոքալաքները, զլուխ ունենալով մեծահարուսակապարուսակապարուս Դ. Թամամշովին։ Հայտնի է այնունեան, թե վորքան մեծ աղղեցություն ունեցան Ներսեսի վարչության ժամանակ մի Դ. Խերեդինով Թիֆլիսում, մի Հ. Խալիբովի Հովսիսալին Կովկասում և ալլն։

Ընկ. Ակսելը կարծում է, թե առեւտրական կապիտալի ներկայացուցիչները գրական նշանակություն ունելին Արովյանի աչքում, քանի նա գեռ չեր ճաշակել կենաց ծափ պտողը, չեր ճանաչել «մուրտառ մանեթի» մարդկանց, այսինքն՝ մինչև Դորպատից հայրենիք դառնալը, լերը աղոտ հույս ուներ տակալին, թե փողատեր հայերը ևս կմասնակցեն «ազգաշեն հայրենասիրությանը», տեսնելով, թե ինչպես անծալր աղքատությունը տանջում ու մաշում եր «մեր պատվական հայերից հազարավորներին, վերջին հուսահատության մեջ քցելով» նրանց։

Սակայն իսկապես արդյոք կլանքի դառն փորձն ալլքան շնչառ համոզեց Արովյանին, թե զուր և միանգամայն հույս դնել հարուսաների վրա։ Զե վոր վաճառականությունից ձեռք չքաշեց Արովյանը նաև Անդրկովկաս վերադառնալուց հետո, լերը գրի լեր առնում իր ամենից հասուն գործը՝ «Վերք Հայաստանին»։ — Արովյանը հերոսացնում եր այստեղ վոչ միայն Հայաստանի «Փրկիչիներին» — Յերմոլովինու Պասկեվիչին, Մագաթովինու Բերութովին, Սահակ-աղալինու Ներսեսին, այլև «աստվածասեր» մեծավորներին, առհասարակ, Շվոնկե գահին «ապատվարժան» գահակալներին ընհանրապես։ Արովյանը մեծարում եր Թիֆլիսի անվանի կապալառուներին, տոհմացին պատվավոր քաղաքացիներին, «ազգի պատվական իշխան» պարոն Զավրովին, Խերեդինովին, Դավիթ Թամամշովին, Մովսես Տեր-Դրիգորովին։ Նա գովերգում եր Ղարաբաղի և Շուլավերի, Փամբակի և Լոռու «աժդահա» ասլան-ղափլան կտրած մելքներին, փառաբանում բայազետցի «հոլակապ իշխանքը» — Բարսեղ, Մանուկ, Մկրտիչ աղաներին, վեր հանում հայ դովլաթավորի «փառապանծ» անունը, մեծարում ղարսեցի «աշխարհահոչակ» տունն Տիգրանյան։ Պատահական անուններ չեյին սրանք, անցած մարած դեմքեր, այլ մեծ մասամբ տակավին կենդանի, գործոն մարդիկ, վորոնք հենվելով իրենց թրի կամ քսակի զորությանը՝ պետք ե նեցուկ ու զեկավար լինելին «ազգին», կատարելին Արովյանի «մուրազը»։ Արովյանի հիշատակած թյուրքահայ իշխաններն իմկավաճառականություն անող այն մելքներից ելին, և վորոնց մասին՝ Ժամանակակիցները վկայում ելին, թե

Թլուրքիայից Թուսաստան անցնելով իրենց հետ բավականին հարստություն մտցրին Անդրկովկաս։ Դրանցից մեկի՝ Արովլանի մեծարած Մկրտիչ աղալի մասին, որինակ, բազմատեղիակ Շոպենը հայտնում է. «աղբապորշչիկ Մկրտիչ աղա Արծրունին, Բալագետ քաղաքից, բնակություն հաստատելով Գյորչիայի մահարում, շրջանառության մեջ դրած ունի, ինչպես հավատացնում են, ավելի քան տասը հազար թուման»¹⁶։

Մկրտիչ աղալի և լուրալինների հարստության մասին գաղափար և տալիս նաև մի ալլ հանգամանը։ 1830 թվին նա առաջարկում եր Պասկեվիչին Գյորչյայի շրջանում հայ գաղթականների հիմնելիք քաղաքների և գլուղերի սահմանները սեփական ուժով պաշտպանել, խսկ ոսմանցոց և պարսիկների հետ պատերազմ լինելու դեպքում՝ իրենց ծախքով պատերազմի դաշտ ուղարկել 1000 ձիավոր¹⁷։

Հասարակական այս ու նման տարրերի գերիշխանությամբ բնորոշվող համակենցաղի մեջ եր ամփոփված նաև Արովլյանի աղային խղեալը։ «Վերք»ի հետ զրեթե միաժամանակ Արովլանը գրի առավ «Թիֆլիսի հայոց հանգստարանը»։ Հեղինակը վողբում և այսուղ ազգի իշխանների՝ Դ. Խերեդինովի, Յե. Խատիսովի, Միրզոյեվի, Շահբաթովի, Սուրբունովի, Տեր-Գրիգորովի և նմանների նտանեկան դժբախտությունները, միիթարանքի, կարեկցության խոսք ուղղում նրանց։ Արովլյանը հավատացած եր, թե «արժանավոր» մոքալաքների — «ողարոն Զավրովի, պարոն Դ. Թամամշովի, պարոն Հովին» Միրիմանովի և են իշխանաց հոգին, վոր Նրանց քոմակ են անում, քանի աշխարհքս կա, ու են հանգստարանը կմնա, հազար բերան՝ նրանց պետք և վողորմի տա, հազար բերան նրանց լիս դառած հոգին որհնի։ Արովլյանը վոչ միայն ծռւնկ եր չոքում իրեն ժամանակակից, ներսիսլան կուսակցության հենարան դարձած ալդ սովորաբարների «վոսկե գահի» առաջ, ալլե գուշակում նրանց լերկնավոր թագավորություն, հրամցնում նրանց «վոսկեղեն գրով գրած՝ աթոռ աստվածության»¹⁸։

Պարզ եւ «Վոսկե գահի» վրա նստողը նազարլանցի մատնանշած վորոմը չեր միայն, այլ լերբեմն նաև «աստվածավախ» այն մեծատունը, առանց վորի, Արովլյանի կարծիքով, գլուխ չի կարող

¹⁶ «Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи», СПБ, 1852, յեր. 877։

¹⁷ Տես՝ Լազարյանների ընտանեկան արխիվը, գիրք 59, լե 108։

¹⁸ Տես՝ «Տարագ», 1914, լե 1, յեր. 6։

դաւ վոչ մի «բուժիչ առաջարկ»։ Յեվ այս մտավնութլունն ունենաւ լով դժվար թե շատ զարմանար Արովլանը, լեթե մի որ կարգաբուժներ տպադրված «Ներք»ի վրա Հովսեփ Փոնդոլանի անունը, վորը լեթե վաճառական ել չեր, գեթ «աղղասեր» իր մտքերով — տես այդ մասին հետաքրքրական նրա եջերը 1863 թվականի չկոռւնկառում — արժանի չեր համենալն գեպս թառելու լերկնքում՝ «աստվածութլան աթոռի» վրա բաղմած աղղալին սովորաքարների կողքին։

ՀԱՆԳՈՒՅՑ

Կասկած չկա, վոր Աբովյանի «մուրազը» գալիս եր ընդարձակելու կովկասահայ կապիտալիստական հարաբերությունների շրջանը, կասկած չկա, վոր Աբովյանի գրականությունն ու դպրոցը կանխում եր կովկասահայ կապիտալիստական բուրժուազիայի սոցիալական պատվերը, «Հոգևոր» զենքեր ելին դրանք, վորոնցով հասարակական-քաղաքական կրկես պիտի իջներ կովկասահայ բուրժուազիայի հաջորդ սերունդը:

«Կապիտալիզմի միջոցով ֆեոդալիզմի վերջնական հաղթահարման դարաշրջանն ամբողջ աշխարհում կապված եր ազգային շարժումների հետ։ Այդ շարժումների տնտեսական հիմքն այն ե, վոր ապրանքալին արտադրության լիակատար հաղթության համար անհրաժեշտ ե, վոր բուրժուազիան նվաճի ներքին շուկան, անհրաժեշտ ե, վոր տեղի ունենա մի լեզվով խոսող ազգաբնակություն ունեցող տերիտորիաների պետական համախմբում, վերացնելով այդ լեզվի զարդացմանը, գրականության մեջ նրա ամրացմանը խանդարող բոլոր խոչընդոտները։ Լեզուն մարդկային հաղորդակցության ամենակարևոր միջոցն ե. լեզվի միությունը և նրա անարգել դարձացումը կարևորագույն պայմաններից մեկն ե ժամանակակից կապիտալիզմին համապատասխանող ապրանքային — իրապիս ազատ ու լայն շրջանառության, ազգաբնակության բոլոր առանձին դասակարգերի ազատ ու լայն խմբավորման համար, վերջապես այն ե շուկայի և յուրաքանչյուր խոշոր կամ փոքր տնտեսագիրոջ, ծախողի ու առնողի սերտ միության պայմանը»¹⁹։

Տակալին նալբանդյանն ե առարկել այն կարծիքի դեմ, թե Աբովյանը գրել ե «ուամկի» համար և ռամկի վոճով, «Բոլորի համար ե գրված, — հայտարարում ե նալբանդյանը. — այնտեղ կառսանելիք, վոչ միայն շինականի համար, այլ և քաղաքացու, այլ և հայոց կիսատ-թերատ ուսումնականների համար ևս»²⁰, Աբո-

¹⁹ Ленин: „Сочинения“, 2-ое изд., XVII, յեր. 428.

²⁰ Մ. Նալբանդյանի «Յերական», Խոհեմարտություն 1900, I, 92.

վլանի գրականությունը քաղաքացիացրեց «Ժողովրդական» կենացանի լեզուն։ «Մախսուս ես լեզվով՝ գրեցի, վոր գեղցիք ել համականան, քաղաքացիք ել», — ասում են «Ժեռովորակի» առաջարանում ինքը՝ Արովլանը։

Նիմեկով «սրտի սիրեկան ազգին»՝ նա գրում և «Վերքառում։ «Թող տրամաբանություն գիտեցողը իրան համբարի համար գրի, յես քո կորած շվարած վորդին՝ քեզ համար» և այլն կամ «Պարագ վախտի խաղալիք»ի առաջարանում՝ «թի գիտուն, խելոք մարդիկ ինձ պախարակեն, դու ել ա ինձ պահիր՝ սիրելի ազգ, չունքի իմ ուղածն են ա, վոր քեզ ծառալեմ, քեզ իմ կյանքս տամ, քանի շունչս բերնումս ա»։ Ներքին շուկայի ընդարձակման, ապրանքալին տնտեսության ազատ ու լայն շրջանառության, ազգային գասակարգերի ազատ ու լայն խմբավորման համար անհրաժեշտ եր, վոր գրականությունն ու գրականությունն ու գրական լեզուն դադարելին գիտունների մենաշնորհ լինել, անհրաժեշտ եր, վոր գառնային մասսայական հաղորդակցության, մասսայական փոխանակման միջնորդ։ Այստեղ ե հենց Արովլանի ռամկախոսության գաղնիքը։

Արովլանի գրականության լեզվական ձեր համապատասխանում եր նրան զբաղեցնող թեմատիկալին, նրա ստեղծագործության մոտիվներին։ Հարանց վարքի կամ աստվածաբարանական խորհրդածությունների տեղ Արովլանն անդրադարձալ քաղաքացուն և գյուղացուն հուզող «սրտի բաներին», հումանիտար և ազգային մոտիվներին։ Բնություն, սեր, բարեկամություն, ընտանիք, «հայրենասիրություն» (իմա ազգայնության պրոպագանդ կամ ուղղակի ազգայնական պրոպագանդ), յերելի անձանց «մեծագործություն», քաջերի գովք — ահա Արովլանի ստեղծագործության մոտիվները։

Զուգահեռ ուղիներով ծավալվեց նաև Արովլանի դպրոցական աշխատանքը։

Արովլանը սովորեցրեց իր սաներին լեվորպական լեզուներ։ Ռուսերենի կողքին շեշտում եր Անդրկովկասի տեղական լեզուների գասավանդման կարևորությունը. նա ձգտում եր տեղական լեզուների ուսուցումը դնել ուստերենի հետ հավասար պալմանների մեջ²¹. Լեզուների, ինչպես նաև բոլոր մյուս առարկաների դասավանդումը ծառալելու լեր գործնական նպատակների։ Զուր չե, վոր՝ Դորպատում՝ Արովլանը լուրացրեց վաճառականական և արդյունաբերական դի-

²¹ «Հորիզոն», 1914, № 91.

տելիքների մի ամրող «ենցիկլոպեդիա»—աստվածաբանական «գիտության» կողքին՝ լեզուներ, թվաբանություն, լերկրաչափություն, չերաժշտագիտություն, ընդհանուր պատմություն։ Սրա հետ միասին ուսումնասիրում եր ապակու գործը, հաց թխելու արվեստը և ալյու հարկավ, նահապետական թղնիրը հավերժացնելու համար չե, վոր ուսումնասիրում եր Արովլանը հաց թխելու արվեստը Մտարերենք միաժամանակ, վոր ապակու գործով հետաքրքրված եր նաև Արովլանի կուսակցության լիդերը՝ Ներսեսը։ Նկատենք նաև, վոր նույն այդ ժամանակ ապակու գործարան գոյություն ուներ Յերեանում։ Բոլոր պարագաներում՝ Արովլանի «ենցիկլոպեդիան» աչքի առաջ ուներ ժամանակի կենսական պահանջր։ Պատահական չե, վոր Արովլանն ավելի ոգտակար եր համարում «սովորել նպատակահարմար զասավանդության կերպն ու յեղանակը, քան առարկաների—խոսքը վերացական գիտությունների մասին և — մի կուլտ»²², նա հետամուտ եր գործնական թեքում հաղորդելու զպրոցին։ Թիֆլիսում Արովլանը կազմեց հայերենի դասավանդության գործնական մեթոդով կազմած աշխարհաբար ձեռնարկ — «Նախաշաշավիղը»։ Յերեանի գավառական գպրոցում առաջարկում եր զուղատնտեսական գործնական պարապմունքներ մտցնել աշակերտների համար, նպատակահարմար եր համարում «այս կողմերի համար» «գործնական տնտեսագիտության» դասավանդումը։ Դպրոցում ջանք եր գործ դնում կիրառել առարկաների գիտակցական, բացատրական ու զննական ուսուցում և ալյու²³։ Արովլանը միջոցներ ձեռք առավ տեխնիկալին, բամբակի, ամերիկան ծխախոտի, զաֆրանի, ինդիգովի և ալյ շահավետ բույսերի սերմեր, ինչպես նաև բամբակի սերմզատ մեքենա ձեռք բերելու գպրոցի համար²⁴, նպատակ ունենալով, կարծես, հերքել միաժամանակ այն առասպելը, թե ինքը կողմնակից և յեղել գուղլի նահապետական կեցության։ Արովլանը—պատմում և Պոռշլանը—«Հրամակեց վարժապետին ընդմիջտ ազատել մեզ պատժից, արգելեց ամառն՝ որվան շոք ժամանակի պարապմունքը, խաղն ու լողը մտցրեց մեր մեջ, վոր մինչև են որը մահացու հանցանք եր»²⁵, Արովլանը հետամուտ եր «ղվաթ» դնելու «մեր բարի ազգի, բարի

²² «Մուրմ», 1904, 3, յեր. 119։

²³ «Գործ», 1917, 5—6, յեր. 37 և հետ.

²⁴ Տես. ն. ա., 8—9, յեր. 54։

²⁵ «Հանդես դրականական և պատմական», վեցերորդ դիրք, 1895, յեր. 101։

ւերեխեքանց սրտերումը, վոր հասնողը նրանց գլխին չտա, ինչ-
պես մինչև եսոր տվել են»²⁶.

Կովկասահայ կապիտալիստական հարաբերությունների հա-
մար անհրաժեշտ գործնական և քաղաքական դաստիարակության
մի ամբողջ սիստեմ եր ալս, վոր մշակեց Արովլանը: «Եղ մեւ վրա-
մեք թուր հանել, հալոց մեծ աղզին չե՞ք ճանաչում», «Վերքայ-
նախարանի ալս մեկ հատիկ բացականչության մեջ վողջ Արո-
վլանն ե, նրա սոցիալ-քաղաքական բովանդակ նկարագիրը:

Սակայն Արովլանը հասարակական բարդ հլուսվածքի արդա-
սիք եր: Ճանապարհ հարթելով գալիքի առաջ, պատմականորեն
նա սեղմված եր տակավին հնի շրջանակներին: Այս վոչ այնքան
ալս պատճառով, վոր Արովլանն աղնվական ծագում ուներ, կամ
վոչ միայն շնորհիվ նրան, վոր աղնվականության քայլալումը
պարսիկների որով, նրա կրած վնասները պատերազմի ժամանակը,
նրա մասնավոր «զրկանքներ» ոռուսների տիրապետության առա-
ջին շրջանում հարկադրում ելին յերբեմն ռոմանտիկական ոլատ-
րանքով տարգելու անցյալի վերաբերմամբ, մեծարելու անցյալի
մարմավորող ուժերն ու կարգերը: Ինքը բուրժուազիան, դեպի
վորը դիմադրած եր յեղել Արովլանը, «ազգասեր» իր գործառնու-
թյամբ յենթակա յեր տակավին ֆեռոդալական ալդ ուժերի ու հրա-
նարկների գաղափարական գերիշխանությանը:

Արովլանն ապրում եր կաղմալուծվող հին, ընատնտեսական,
և ձևավորվող նոր, ապրանքարտազրող, ֆիոդալիզմի շրջանում, վոր
սահմաններում ծալը և առնում և զարգացման վորոշ աստիճանի
համար կապիտալիզմը: Նրան ժամանակակից կապիտալիզմն
Անդրկովկասում դեռ չեր կտրել իր պորտը ծնող մորից — ֆեռ-
պալիցից: Բուրժուազիան դասակարգ եր «ինքյան», բայց չեր
դարձել տակավին դասակարգ Շիր համար՝ — խոսքը կովկասահայ
բուրժուազիայի մասին ե, հարկավ: Յեղ հասկանալի յե՛ արդյանա-
բերական բուրժուազիան սաղմային վիճակի մեջ եր, իսկ առեւրա-
կանը՝ խարսխված ամբողջովին մանր արտադրության վրա: Տի-
րաբետում եր տակավին գյուղացիական և արհեստագործական
մանր տնտեսությունը, արտադրական այդ բաղիսի վրա ընդարձակ-
վում ելին բեգական-աղալարական կալվածատիրության սահման-
ները՝ մի կողմից, և վաշխառուական կապիտալի աղղեցությունը՝
մէուս կողմից: Կապիտալի նախնական կուտակման շրջանն եր ալս:

Հերբ հող եր նվաճվում Անդրկովկասում կապիտալիստական տնտեսության համար, բայց զեռ չեր դրված բուրժուազիալի առաջքադակական իշխանություն նվաճելու հարցը, չեր հարուցվում ֆեոդալիզմի լիկվիդացիալի, այսինքն՝ բուրժուական-դեմոկրատական հեղափոխության ինդիբը: Արովյանը չեր գալիս հեղաշրջելու ֆեոդալական տիրող հասարակարգը, այլ բարեհակելու այն, ապահովություն և բարեկեցություն ստեղծելու այդ հարաբերությունների սահմաններում՝ «վոսկե դահի» համաններին էնթակա և իրենի աղջին համար: Արովյանի պանսիոնը, նրա գպրոցը, նրա դաստիարակչական սիստեմը, նրա գրականությունը ֆեոդալական դրույլը և քաղաքն ողակող առևտրական հարաբերությունների գաղափարական շաղախն եր միայն: Պատմական-հասարակական այլ և այլ գործոնների ու մտաշերտերի մեջ բեկված նրա աղքասիրությունը, նրա ռամկասիրությունը, նրա աղքատասիրությունը, նրա սերը գեպի «Ժողովրդի կենդանի լեզուն, «Ժողովըրդական» մոտիվները, «Ժողովրդական» թեմատիկան՝ ֆեոդալական հարաբերությունների սահմաններում «ազգը» կազմակերպելու, ազգային բուրժուազիալի համար ներքին շուկա ստեղծելու ձըդտումի գաղափարախոսական անդրադարձումն եր միայն: Պատահական չե բնավ, վոր ձեակերպելով աղջալին լուսավորության խնդիրները, Արովյանը և իր համախոնները հեգեմոնն ելին վորոնում «Երրորդ դասից» և կապիտալիստական հարաբերություններից դուրս գտնված հասարակական կատեգորիաների, հայ արտոնյալ դասի—կղերի և ազնվականության և սրանց հետ սերտորեն կապված կոմպրադորական բուրժուազիալի շրջաններում:

Արովյանին ժամանակակից Յելլոպալիի և Ռուսաստանի բուրժուական-դեմոկրատական, աղջալին-աղատադրական շարժումների հիմնական սլաքն ուղղված եր ճորտատիրության մասցըրդների դիմավոր հենակետի—ցարիզմի դեմ: «Մանր աղջությունները նշանակություն ելին ստանում կամ վորպես արևմտյան դեմոկրատիայի և հեղափոխական ժողովուրդների, կամ վորպես ցարիզմի հնարավոր դաշնակից»²⁷: Բոլոր այն ժողովուրդները, վորոնք ուժ ելին տալիս համայնքութական ռեակցիալին, ընդարձակում ելին միայն «ռեակցիոն ժողովուրդների» շրջանը, դառնում ոռւսական ֆորպոստ»: Քանի վոր դեմոկրատիայի առանձին պահանջները բացարձակ արժեք չեն ներկալացնում, այլ «մասնիկն են կազմում համադեմոկրատական (ներկալիս համասոցիալիստական) համաշխարհալին

²⁷ Ленин: „Сочинения“, 2-ое изд., XIX, յեր. 259:

շարժման»²⁸: Արովլանի ժամանակ կովկասահայ առևտրական կապիտալը վաշխառուական բնույթ ուներ զերազանցորեն: Այն վոչ միայն չեր կովում գլուղացիության ֆեոդալական շահագործման դեմ, այլ և հենակետ եր զառնում ֆեոդալական տիրող սիստեմին, հավերժացնում և սրում գլուղացիների ճորտատիրական շահագործումը: Ինքը Արովլանը սոցիալական առաքինությունների քարող եր կարգում հայ վաշխառուներին, սակայն չեր շոշափում ֆեոդալական հասարակությունը պառակտող հիմնական հակասությունները, վորոնց գլխավոր ջրարաշխը նրա ժամանակ անցնում եր մի կողմից գաղութիւն և մետրոպոլիայի, մլուս կողմից՝ գլուղացիության և հասարակական այն վերնախավերի միջև, վորոնցից նա իր «մուրագի» իրագործումն եր ակնկալում: Նա չեր թագյնում «ազգը» ղեկավարող մեծավորների հոռի հատկությունները, սակայն կատարելության տիպար փնտուելով «ազգի» ֆեոդալական անցլում կամ իր ժամանակ իսկ իշխող փողի և դիրքի արտօնված ներկայացուցիչների շրջանում, ֆեոդալական վերնախավերի ձեռքն եր տալիս «ազգային վարչության», «ազգի» լուսավորության դեկը, զանց առնելով գլուղացիության շահը, գլուղում արծարծվող շարժմները:

«Նախակապիտալիստական արտադրության ամեն մի լնդանակի ժամանակ — զրում ե Մարքսը — վաշխառուն հեղափոխական դեր ե կատարում միայն այնչափ, վորչափ խարխլում ե և վոչընչացնում սեփականության այն ձները, վորոնց ամուր բազիսի և անընդհատ վերարտադրության վրա միենույն ձեռվ հանգչում և յերկրի քաղաքական կազմը: Ասիսկան ձեռըով՝ վաշխառությունը կարող ե շատ յերկար գոլություն ունենալ առաջ չըերելով վոչ այլ ինչ, քան տնտեսական անկում և քաղաքական կոռուպցիա: Միայն այնտեղ և այն ժամանակ, վորտեղ և յերբ առկա յեն արտադրության կապիտալիստական յեղանակի մլուս պայմանները, վաշխառուն այն գործիքներից մեկն ե, վոր քալքայում ե, մի կողմից, ֆեոդալներին և մանր արտադրողներին, կենտրոնացնելով, մլուս կողմից, աշխատանքի պայմանները և կապիտալ դարձնում նրանց»²⁹:

Համեմատելով Ռուսաստանի և Անգլիայի գաղութալիին առևտուրն Արենելըում, Մարքսը «Կապիտալ»ի խմբագրման պահին:

²⁸ Ленин, 2. ш., XIX, յեր. 257 և հետ.

²⁹ К. Маркс: «Капитал», изд. 1929 г., т. III, ч. II, յեր. 110:

դրում եր այն մասին, թե՝ «Անդլիականին հակառակ՝ ոռւսական տռետուրը, ընդհակառակը, անխախտ և թողնում ասիական արտադրության տնտեսական հիմքերը»³⁰. Մարքսի բնորոշած այդ գրությունն Անդրկովկասում սկսում ե փոխվել հիմնականում միայն դարավերջի 2—3 տասնամյակների ընթացքում։ Բնորոշ ե, վոր, ծանոթագրելով Մարքսի վերջին դիտողությունը, Ենգելսը նկատում եր արդին. «Սա նույնպես սկսում ե փոխվել այն ժամանակից ի վեր, յերբ Ռուսաստանը զանազան ջղաձգություններով ճիգ և անում դարձացնելու սեփական կապիտալիստական արտադրություն, հաշվի առնելով բացառապես ներքին և սահմանամերձ ասիական շուկան»³¹,

Արովյանի ժամանակ Անդրկովկասում բացակայում ելին «արտադրության կապիտալիստական սխսքեմի մուտ պայմանները», Ռուսի խոսք չեր կարող լինել վաշխառուական կապիտալի «հեղափոխական» դերի մասին։ Մինչդեռ անտես առնելով այս հանգամանքը և աչքի առաջ ունենալով Արովյանին ժամանակակից առետրական կապիտալը, ընկ. Ակսելը խոսում է կովկասահամայ առետրական կապիտալի «առաջատար» դերի մասին։ Մեջ բերելով լենինի բնութադրած կապիտալի կովկասայան ներարշավը՝ ընկ. Ակսելը կարծում ե, թե այդ յերևուկթը Արովյանի ժամանակ ե, վոր սկսվել եր։ Սակայն մեր հեղինակը, ըստ յերևութին, ուշադրությամբ չի կարդացել լենինի տողերը։ «Այսպիսով՝ գրում ե լենինը՝ ուսւ կապիտալիզմը համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ մտցրեց Կովկասը, հարթելով նրա տեղական առանձնահատկությունները — հին նահապետական փակ տնտեսության մնացորդները, — ուսկասեղձեց իր գործարանների համար։ Յերկիրը, վոր հետուեֆորմյան շընակ սկզբում քիչ եր բնակեցված կամ բնակեցված եր լեռնականներով, վորոնք կտրված ելին համաշխարհային տնտեսությունից և անդամ դուրս՝ պատմությունից, դարձավ նավթարդյունաբերողների, դինեվաճառների, ցորենի և ծխախոտի ֆարբիկանների յերկիր և պարոն կուպոնը անխղճորեն փոխում եր հպարտ լեռնցու հագուստը՝ պոետիկ ազգային զգեստի փոխարեն յեվրոպական լակեյի զգեստ հազցնելով նրան»³². Լենինը գրում ե այսեղ այնպիսի յերևուկթների մասին, վորոնք սկսվեցին Յօ-ական թվականների ռեֆորմներից և կովկասայան լեռնականների պարտու-

³⁰ Ն. ա., III, յեր. 257:

³¹ Ն. ա., ծանոթադրություն:

³² Ленин: «Сочинения», 2-ое изд., т. III, 464.

թիունից նետք: Թոսկլով Ռուսաստանի գաղութային քաղաքական-նության մասին, Լենինը նկատում է ուղղակի, վոր Կովկասի «տնտեսական» «նվաճումը» Ռուսաստանի ձեռքով — ուստի ավելի ուշ կատրից, քան քաղաքականը. լիակատար չափով տնտեսական այդ նվաճումը չի ավարտված նույնիսկ մինչև հիմա»³³.

Գաղութային Կովկասի գարզացման մարքսիստական - լենինյան այս կոնցեպցիայի շրջանակներում և միայն, վոր հնարավոր և ըմբռնել կովկասահայ «վերածնության» շրջանն առնասարակ և կովկասահայ առաջին «լուսավորիչների» գործունելությունը մասնավորապես:

Կովկասին վերաբերող այս կոնցեպցիայի լիակատար անդիտացումն եւ առնասարակ, վոր լայն գուռ եւ բացել XIX դարի կովկասահայ հասարակական շարժումների և մասնավորապես կովկասահայ գրական մտքի ողատմազրության խեղաթլուրումների և մարքսիստական ըմբռնումների մեխանիստական վուլգարիզացիայի առաջ:

Կովկասահայ բուրժուազիայի 60-ական թվականների «վերածնությունը», յերկրի տնտեսական հետամնացության շնորհիվ ամուր սոցիալական հող չգտնելով Անդրկովկասում, կուլտուրական ծիլեր եր արձակում հայկական բնաշխարհից դուրս՝ Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում և հայ առեւրական այն գաղութների մեջ, վոր անտեսապես զողված ելին արդին արդյունաբերական այդ կենտրոնների հետո Պետերբուրգն ու Մոսկվան, Ն.-Նախիջևանն ու Աստրախանը, Ղզղարն ու Մողդոկը շատ ավելի անմիջորեն ելին կապված 50—60-ական թվականների հայ բուրժուական ըլուսավորիչներից՝ Նազարյանցի և Նալբանդյանի, Պատկանյանի և Շահազիզի հետ, քան Յերևանն ու Ղարաքիլիսին, Գլումրին ու Դիլիջանը՝ «կուսավորիչների» որդան «Հյուսիսավագալը» քիչ-շատ զեռ բաժանորդներ եր գտնում միայն կովկասահայ առևտրականների այնպիսի կենտրոններում, ինչպիս Թիֆլիսն ու Շամախին, Ազուլիսն ու Շուշին:

Հետաքրքրական ե, վոր ավարտելով Դորպատում ուսման դասընթացը՝ Աբովյանը դժվարությամբ եր ընտելանում հայրենիք վերադառնալու մտքին: Նա մտադրվում եր մնալ Յեվրոպայում և այստեղից ազդել հալրենի գործերի վրա. Եիմ վաղեմի ցանկությունը — զըռում ե նա 1836 թ. փետրվարին Մոսկվայից արևելա-

³³ Ն. ա., յեր. 463:

գիտ Թրենին ուղղած իր նամակում՝³⁴ — ըստ կարելույն այստեղից նպաստել լերեսի վրա զցած իմ հայրենիքին, ինչպես նաև իմ վիճակը՝ լենթարկված և հիմա անհայտ, և կարելի լե ասել, անուրախ մի ճակատագրի։ Թշնամանքի հանդիպելով Անդրկովկասում և Հայաստանում՝ Աբովյանը գործունելության նոր հանգրվան, ուսոր առն ու նոր հայրենիքը եր վորոնում հյուսիսում, Պետերբուրգում կամ Կաղանում։ Նազարյանը, վոր փոքրոգության նշան եր համարում ընկերոջ այդ վարմունքը, գնաց փաստորեն նույն այդ ճանապարհով։ Վերջացնելով համալսարանական իր ուսումը՝ նա գրեթե Աբովյանի խոսքերով եր դիմում դարձրալ Թրենին։ «Դժվար չե գուշակել, — գրում եր նա 1841 թվին, — վոր հայրենիքում ինձ սպասող վիճակը, աչքի առաջ ունենալով միջավարի թշնամական վերաբերմունքը, նպաստավոր չե լինելու իմ նպատակների իրադորձման համար։ Նախատեսելով իմ գրությունը իմ՝ հազար ու մի նախապաշարումներով պատաճ հայրենակիցների մեջ, թվում ե, կամ ուղղակի պարզ ե, վոր հայրենիքից հեռու մի վայրում, հայերի թերահավատ ու նախանձու աչքից հեռու, շատ ավելի արդյունավոր կերպով կարող եմ ազդել նրանց վրա, քան նրանց մեջ գործելով։

Այս մտայնությունը պատահական լերնուլիթ չեր առաջին դորպայանների ըրջանում։ Նրանք հարկադրված ելին հեռանալ հայրենիքից — հավատարիմ մնալով ուսանողական տարիներին լուրացրած լուսավորական գաղափարներին, կամ մնալ հայրենիքում և այդ դեպքում՝ աղատագրվել գաղափարականությունն կոչված Շնախապաշարմունքից։ «Անցյալ ուսանողական որերը — գրում ե 1856 թվին Թիֆլիս վերադարձ վաղեմի գորպատլաններից մինը, Ալ. Ռոտինյանը, — ճնշում ելին իմ ներքին արամադրությունս և հիշեցնում ելին, թե լես ամենի համար ոտար եմ, ոտար իմ հասկացողությամբ, ոտար ճաշակով, ոտար կենաց պահանջներով։ Յես սեր ունելի գեպի գիտությունը, այսինչ բոլորը վկայում ելին ինձ, վոր այս սիրույն ընդմիշտ պիտի հրաժեշտ տամ և մի նոր կլանքի ալեկոծության լենթարկվեմ — պիտի թողնեմ ինչ վոր սրբություն սրբոց ելի համարում։ Համալսարանի շողը վորպես մի սիրուն աստղ մուլթ գիշերում շողջողում եր և հազար ու մի բան

³⁴ Այսուեկ և հետադայում ոդափում ենց Աբովյանի և Նազարյանցի՝ Թրենին գրած նամակների՝ Լենինդրագի Գիտությանց ձեմարանում պահպաժ գերմաներներն ընադիմները փոտոկոպիաներից, վոր սիրալիք կերպով տրամադրեց մեզ տկալ. Ս. Ֆ. Ոլդենբուրգը

եր ինձ ներշնչում... Զորս կողմս պատերազմ ելի տեսնում փողի սիրուցն»³⁵: Ռոտինւանը չդիմացավ կապիտալի նախնական կուտակման պրոցեսի ավերիչ աղղեցությանը. նա գնաց «փողի սիրուցն» հարմարվողների լայն ճանապարհով. «Հարկավոր եր հարմարվել նոր կենցաղավարության, հաշտվել տիրապետող հայացքի հետ, և հինը, բախտավոր որերը մոռանաւ, և սկսեցի մոռանալ», զրում ե նա»³⁶:

Ավելի դժվար ճանապարհով գնաց Արովյանը: Վերադառնալով հայրենիք, թեև միշտ աչքը դուրս և ավելի լավ փիճակի հետամուտ, նա լեռանդ վատնեց՝ հաշտեցնելու անձնական դաղափարականությունը առևտրական բուրժուազիալի «փողի սիրուցն» հետ, — լուսավորել «ազգը» ապավինելով արտանյալ գասի և նրա հետ շաղկապված վաշխառուական կապիտալի հովանուն: Ծանը, հոգնատանջ, սիզիֆային մի աշխատանք եր այս, վոր վերջիվերջու հուսաբեկ արեց «ազգային լուսավորության» դաղափարախոսին՝ Արովյանին: Վողբերդական մի ձեռնարկ եր այս՝ լուսավորելու Բաֆֆու բնորոշած «մոռալ դասակարգը», լերը այն ոժտված չեր տակավին «յեվրոպականանալու» լայն պահանջներով և, բացառապես լենթակա գոփելու կուլը տարերքին, քարշ եր տալիս հետևից խավարի մեջ խարխափող խալիսը — «ազգի» քաղքենի բազմությունը:

35 «Արձագանք», 1892 թ., № 110:

36 Ն. ա.

«Շ Ր Զ Ա Դ Ա Ր Ձ»

Աբովյանն ուսումնասիրող հեղինակը պարտավոր եր, անշուշտ, մեր հանել բոլոր այս հանգամանքները, Ընկ. Ակսելը վոչ միայն չի արել այդ, այլև պարզապես չի ըմբռնել իր հերոսի վերապրած վողբերգությունը, այդ վողբերգության ներքին զսպանակները, նրա սոցիալական բովանդակությունը։ Զատելով Աբովյանին առետրական բուրժուազիալից և միաժամանակ ըառաջատար» տարր հոչակելով սրան՝ նա ընկել ե հակասությունների մեջ, վորոնցից դլուխ կարելի յե հանել միայն՝ մի կողմ նետելով այս խնդիրները շոշափող տրադիցիոն ըմբռնումները։ Սակայն ընկ. Ակսելը վոչ միայն չի ըմբռնել Աբովյանի վողբերգության սոցիալական բովանդակությունը, այլև խեղաթյուրել միաժամանակ նրա հաղահական իմաստը։

Խոսելով «Աղասու գրքի» մասին՝ ընկ. Ակսելը գրում ե մելամաղձորեն։ «Յեկ այս գիրքը կատարեց նաև այնպիսի մի գեր, վորի համար, յեթե գիտենար Աբովյանը, չեր գրի վոչ մի «Թարաղա»։ Սա արգեն «կուահում» չե, այլ կատարչալ մի թյուրիմացություն։ «Աղասու գրքի» բոլոր «Թարաղաները» ըստ ելության կանխում ելին հենց նույն այն գաղափարները, վորոնց արծարծմանը ծառայեցին նրանք տասնամյակներ շարունակ։

Հարկավ՝ Աբովյանի ժամանակ չկար «թյուրքահայ հարց»։ Աղասու հրոսակախմբերը գործում ելին վոչ թե թյուրքի, այլ՝ «աջամի» դեմ։ Նրան զինակցում ելին «Քրդստանի» հայ «կարիմները» — բայց դարձալ՝ սարդար Հասան-խանի ռեժիմը տապալելու և Պակեվիչի առաջ ճանապարհ հարթելու համար։ Մուլլ ներկերով չեր պատկերանում Աբովյանին «ազգի» վիճակը թյուրքիայում։ «Թե Ղարսա, թե Բայազդու փաշեն հայերուն (կարդա՞ հայ իշխաններուն և աղաներուն. — Ա. Հ.) իրանց վորդու պիս ելին սիրում», գրում եր Աբովյանը։ Զրի տուրք չեր այս սերը, Վեր հանելով արծափեցի Մանուկ աղալի «գերորինակ հսկալությունը և քաջությունը»՝ Աբովյանը պատմում ե, վոր 1829 թ. պատերազ-

մից առաջ նա հին Բալագետի շաբը ու ձոր վոտատակ եր տալիս, փաշեն ու Բալազդու գավառը պահում, քրդերին քարեքար տալիս, հալածում» : Մանուկ աղան լեզակի դեմք չեր. քրդերի դեմ կովելով «անուն» հանեցին նույն այդ ժամանակ Ալաշկերտի, Հայոց ձորի, Շատախի և այլ կողմէրի մելիքները³⁷:

Արովլանը գոհ եր, վոր թյուրքահայ արհեստավորությունը — «սանիաթքարները» — կտղմակերպվում եր «քաջարի» այս մարդկանց զեկավարությամբ: «Բարեկամի մոտ» զրվածքում այս ասիթով նա զրում ե. «Բարսեղ, Մկրտիչ աղի անունը, վոր տալիս ես, ուղում են՝ յերեսները խաչ հանեն: Եսպես ել յերախտազետ սիրտ կը լի, վոր սրանք ունեն: Ո՞վ ա ասում, թե հալը լավություն, իշխանի պատիվ չգիտի»³⁸: «Ովսանա» վիշպակի պերսոնամներից մինը կանխում ե, կարծես, կովկասահայ ալն հալդուկներին, վորոնք կապում են իրենց բախտը թյուրքահայ արս «իդիթների» հետ: Ընկ. Ակսելը մի ալլ կավակցությամք հիշատակում ե Վանովի խոսքերը: «Գլուխս պետք ե առնեմ, կորչեմ, ընկնեմ՝ սարեսար, քարեքար, կերթամ մեկ կորած աշխարք, արինս վեր կածեմ, վոր ինձ հարամ ա ետուց դենը. ղոչազությունով, քաջությունով ել ա կմեռնեմ»: Կասկած չկա՝ Արովլանի մեծարած «իշխանները» ճանապարհ ելին բացում չունոների և Արարոնների առաջ, ճիշտ նույն չափով, ինչ չափով Արովլյանը՝ Ռաֆֆու, իսկ Աղասին՝ Խենթի առաջ. «Ձկնորսը ձկնորսին հեռվից ե նշանառում»: Ռաֆֆին «հալդուկների մի հրոսակեց հոչակեց Աղասուն, հաջորդականության պիծ քաշելով նրա և իր՝ Սարհաղների և կարոնների միջե»³⁹:

Անկարելի է, իրոք, անանցանելի բարիեր քաշել աղդային շարժման տարբեր այս ետապների մեջ. այդ կնշանակեր միաժամանակ — սկզբունքային տարբերություն դնել ոռւսական աղքա-սիալի պարսկական և թյուրքական ետապների մեջ, նվիրագործել մինը, դատապարտել մլուսը: Կասկած չկա, վոր նշանավոր չափով Արովլանից ե ծայր առնում գրական-քաղաքական այն հոռանքը, վոր ջանք թափեց կապել ոռւսահայ մասսաների բախտը վհչ թե ոռւս հեղափոխության և ոռւս առաջամարտ մտքի, — չմոռանանք, վոր Արովլյանն ապրում եր դեկաբրիստների և Բելինսկու դարաշըջանում, — այլ՝ ցարիզմի նվաճողական քաղաքականության հետ, նրա հաղթաշարժ եքսպանսիալի հետ:

³⁷ Տես՝ «Արձականը», 1882, № 41:

³⁸ «Անտիպ յերկեր», I, Թիֆլիս, 1904, յեր. 37:

³⁹ «Արաքս», 1892, դիբը Ա., յեր. 99 և հետ.

«Անհայտ բացակալումի» առեղջվածը լուծելու համար ընկ-Ակսելը կարծում է, թե Արովլանը հրաժարվեց վերջիվերջո քաղաքական այս մտայնությունից: Նրա անհետացումը, պարզաբանում է նա, «Վերք»ի հեղինակի մեջ տեղի ունեցած ոչադարձի արձագանքն եր, նրա արտաքին ժեստը:

Տեսականորեն դատելով՝ անհնարին բան չե ալս: Բայց դրա համար հարկավոր եր ցուց տալ, վոր Արովլանը նշանաւով իսկապես ազգային-քաղաքական հին դիրքերից, փոխեց դասակարգալին հին տեսանկյունը, վորդեգրեց հասարակական-քաղաքական նոր տեսակետ և նոր հեռանկարներ:

Արովլանի «ոռւսասիրությունը», նրա ցարապաշտությունը, քաղաքական մի մտայնություն եր, վորի մեջ 18-րդ դարից ի վեր միախառնվում ելին հայ առևտրական կապիտալի և հայ տանուտիրական գասի, հայ մելիքության, հայ ազնվականության, հառվաքական շահերը, Առաջ բերելով ոչադարձի տեսությունը, պետք եր ցուց տալ, վոր Արովլանը յուրացընեց հետազայում նոր հայացքներ, վորոնք ծալը առնելով հասարակական այլ կատեգորիաների և ամենից առաջ՝ գլուղացիության շահերից ու ձգութեաներից, խզում ելին նրա կապը «ազգը» գլխավորող վերնախավերի հետ:

Սակայն ընկ. Ակսելի գրվածքը վոչ միայն ցուց չի տալիս այդ, այլև ակնհայտ կերպով զուրկ ե այս կետում պահանջված հետևողականությունից: Մի կողմից պնդում է, թե Արովլանը գրեթե հենց են գլխից «հարազատ» ե լեղել գլուղացիության, Դորապատից հայրենիք վերադառնալուց անմիջապես հետո Արովլանը իրը թե կոիվ հայտարարեց կապիտալին և կապիտալիզմին, միաժամանակ խորթ լինելով հետազալի քաղաքական այն մտայնության, վոր դալի շարական դարձրեց գլուղացիության շահերի և ըմբռնումների թարդման հնայրենասիրի վողը: Մյուս կողմից՝ ընկ Ակսելն աշխատում է համոզել, թե Արովլանը հրաժարվեց «Վերք»ի քաղաքական որիննտացիալից, վորով կարծես նոր միայն մոտեցավ իր փառաբանած «փրկիչներից» լերես գարձրած գլուղացիությանը: Հեղինակը փառտեր ե քաղում գերմանական ուղեգիրներից, վորոնք նկարագրում են ոռւս չինովիկների կամայականությունները, հայկական Մարզում (նախկին Յերևանի և Նախիջևանի խանությունների շրջանը) նրանց կաշառակերությունն ու շահատակությունները, մերկացնում ոռւս գաղութային ոեթիմն առհասարակ, վոր վողջ իր ծանրությամբ իջնում եր գլուղացիության

շնքին Բնկ. Ակսելը հավատացնում ե, վոր իրերի ալդ զրությունն Արովյանն ըմբռնեց «Վերք»ից հետո, Թիֆլիսից Յերևան փոխադրվելուց, այսինքն 1843 թվից հետո, յերբ Մարզում սատացած անմիջական տպավորությունները վերիվայը շրջնցին նրա հույսից սերը. ուղեկցելով լեվոպական ճանապարհորդներին՝ Արովյանը կարծես մի յերկրորդ անգամ սուլլից «իմացական ավազանի» մեջ, «ճանաչեց յերկրը, մարդկանց, ցարական աղմինիստրացիան», համոզվելով, վոր ինքն այլևս վոչ մի կովան չունի ուստական ուժիմի ներքո ստեղծված իրականության մեջ. Այստեղից ել, կարծում ե մեր հեղինակը, սկսվեց հենց Արովյանի նահանջը, նրա դարձը «Վերք»ի դիրքերից:

Բոլոր պարագաներում այստեղ ևս, հեղինակը վերջին հաշվով լելում ե դարձյալ չիմնավորված այն կոնցեպցիալից, վոր ընողությունն ա Արովյանին վորակես «գլուղադիր», վորպես դյուլացիական տրտունչներն ու ակնկալություններն արտահայտող մի աշուղ...

Բայց տարորինակ չե՞ ընկ. Ակսելի նշան այն փաստը, վոր ուստական ուժիմից լերես դարձնող Արովյանը «միայն դառնացավ, հուսահատվեց, սակայն վոչ մի բառ չջնջեց այն եջերից, վորտեղ գովարանել եր «հյուսիսի արծվին»։ Զի՞ մատնում այս հանգամանքը հենց այն, վոր Արովյանը փաստորեն չեր լիել «Վերք»ի դիրքերը, չեր գտնում, վոր իր գրածից վերացել ե արդեն քաղաքական իմաստության հետքը։

Հիրավի, վոչ մի հիմք չկա կապել Արովյանի կուած դառնությունները, նրա ճաշակած հուսախարությունները ճամբորդական նրա տպավորությունների հետ, վոչ մի հիմք՝ գուշակել նրա հոգեկան ընկճածության մեջ քաղաքական բախտորոշ շրջադարձ։ Յերևան փոխադրվելուց հետո չեր ծայր առել Արովյանի հոգեկան ընկճածությունը, և Յերևանից փախչելով չե, վոր վերջ պիտի դաներ այն։

Արովյանը Յերևան եր փոխադրվել արդեն իսկ լքված հոգեպես. «Ստիպված յեղա հեռանալ Թիֆլիսից, վոր գոնե հոգեկան հանգիստ գտնեմ», գրում ե նա ⁴⁰. Հասկանալի յի, իհարկե, Արովյանի այն ժամանակվա վիճակը։ Անդրկովկասյան դպրոցների դիրքեկիան «գագառ» եր՝ փոխադրում Արովյանին՝ համարելով նրան «անբավարար հատկությանց տեր», մի մարդ, վորն իբր թե անկարող

⁴⁰ Տես՝ «Տեղեկադիր Հ. Ս. Խ. Հ. Գիտության և արվեստի ինստիտուտի» Յերևան, 1928, № 3, յեր. 125։

Եր լեղել տիրան հանձնված ուսումնարանը բարձրացնել մինչև այն աստիճանին, վոր որինակելի լինի դա Անդրկովկասլան լերկրում՝⁴¹ Արովլանին նեղում ելին թիֆլիսում պաշտոնակիցների անհասկացողությունը, նրանց ինտրիգները. այս են վկալում նաև Արովլանին թրենին ուղղած նամակները: «Նախանձը և պաշտոնակիցներիս բազմապիսի դիմադրությունները հարկադրեցին ինձ թողնել ընդմիջա թիֆլիսն ու իմ սիրելի գործը, վոր ձեռնարկել ելի ապագաժողովրդական ուսուցիչներ պատրաստելու համար, գրում ե նա մրենին: Կամ, ինչպես շեշտում ե մի այլ տեղ՝ «Նախանձը և պաշտոնակիցներիս չարակամությունը բռնի կերպով գրկեցին ինձ իմ վորգեգիրներից, պատճառ լինելով ինձ թողնելու թիֆլիզը և հեռանալու այստեղ (Յերևան)»⁴², Արովլանը դո՞ն չեր հարկավ, վոր կարքեցու հալածանքը հարկադրեց իրեն հրաժարվելու նախազծած ծրագիրներից ու պետական ծառայության միջոցով հոգալու առողջա իր ասլրուստը: «Բայտ այս — գրում ե նա մրենին — պետք ե վոր յես արքունական ծառայությամբ հալիթալիթեմ իմ ապրուստի միջոցը. վորպիսին հեռանկար ինձ համար: Բարերար յերկինքը դուցե ուրիշ ճանապարհով կապահի ինձ»: Այս տողերը ցուց չեն տալիս սակալին, թե Արովլանին սարսափեցնողը պետական դըպրոցների հաղախական ուժիմն եր: Արովլանը տեսնում եր այդ ուժիմի բազմաթիվ արատները. նամակներից մեկում, որինակ, մատնանշում ե դպրոցական աշխատանքից իր ունեցած զժգոնության պատճառը. «անկատարությունը, վոր նկատում եմ իմ և իմ պաշտոնակիցների մեջ և ել ավելի շատ՝ այն միջոցների և հրահանգների մեջ, վոր տրվում են մեր ձեռքը»: Նա նկատողության և առնում այն հանգամանքը, վոր գպրոցական առարկաների ցանկը կազմվում ե և հաստատվում Պետերբուրգում և վոչ տեղերում, և մի բան, վոր ամենից բնականը կլինները: Հետագայում Արովլանն առաջարկում եր ուսուցիչ էամ աշակերտ ընդունելիս նկատի չառնել նրանց սոցիալական ծագումը և այլն: Սակայն Արովլանի հայցըն ավելի հեռուն չեր թափանցում: Թվում եր նրան, վոր ժամանակի ընթացքում կառավարությունը կվերացնի այս բացերը, և գավառական իր դպրոցը հնարավորությունն կստանա «մըցելու յելլուպական լավագույն դպրոցների հետ»: Յերբ նիկոլայի հրամանով Պետերբուրգից կովկաս յեկալ սենատոր Գանը՝ քննելու և

⁴¹ «Արձականք», 1896, № 102:

⁴² «Փորձ», 1880, № 9, յեր. 196:

բավարարելու տեղական պահանջները, Աքովլանը, վորի մասին Գանին լավագույն հանձնարարություններ եր արել Ֆրենը, ամբողջովին հափշտակվեց կատարվելիք սեվիդիալի հեռանկարներով։ 1838 թ. մայիսի 19-ին Ֆրենին դրած նամակում Աքովլանը հայտնում եր, վոր ինքն արդեն իսկ «մխիթարական ապացուցներ» ունի, թե գեռ «վորքան սեր ոլիտի վայելի այն անձնավորություններից, վորոնք դիրք ու պաշտոն չեն փնտում մարդկանց մեջ, այլ աշխատում են հարգել նրանց մեջ այն, ինչ վոր ազնիվ և ճշմարտապես։ Առաջին իսկ վալրկանից մինչեւ հիմա անկեղծ կարեկցություն եմ վայելում՝ սենատորի բարեհաճ ուշադրության և անդրկովկասյան ժողովուրդների ընդհանուր բարորությունը հետամտող նրա վերաբերմունքի շնորհիվ։ Անշուշտ, ի երբ ապագայում նրա այստեղ գալու մեծ նպատակը աստծո ոգնությամբ իր պտուղները տա Վրաստանի վայելչության համար, հույս ունեմ իմ բաժինը ևս սահանալու դրանից։ Ըստ վորում այնպես, ինչպես վոր նա հետաքրքրվեց իմ հետապնդած նպատակով, կասկած չունեմ նաև, վոր իմ ակնկալություններն ու ցանկությունները, վոր հաղորդեցի նրան, անկատար չեն մնալու։ Ինչքան վորքողի յէ հաճախ մարդու։ Աստծո ամենազետ տնօրինությունը վոչ վորին չի թողնում այն վիճակում, վորը սարսափելի յէ թվում մեղ։

Այս տողերը բնորոշում են վոչ միայն Գանի բարլացակամ վերաբերմունքը դեպի Աքովլանը, այլև վերջինիս դրական վերաբերմունքը դեպի քաղաքական այն իշխանությունը, վորի ագենտներից մեկն եր Գանը։

Պարզ է այս դրություններից, վոր Աքովլանը դժգոհ եր ոռւս բյուրոկրատիալի շահատակություններից տակալին 30-ական թվականներին, նախքան Յերևան փոխադրվելը։ Թվում ե մեղ, վոր մի հայտնի չափով այդ դժգոհության արդասիքներից մեկն ե հենց «Վերքը», վորի հեղինակը, անբավական չինոմնիկների գոռող, մեծամիտ, անձնահաճ վերաբերմունքից, նրանց այլամերժ քաղաքականությունից, հիշեցնում եր ոռւս նվաճողներին նրանց «ապատարար» նպատակները, շեշտուով միաժամանակ նաև «ազգի» ծառայությունները ոռւս դենքի հաջողության գործում։ Ազգային արժանապատվության դիտակցությունն ե, վոր թէ եր տալիս այս դեպքում Աքովլանին, դիտակցություն, վոր ծառանում եր ինքան ոռւսական ամենակուլ ու հարթարար աղքալին քաղաքականության դեմ։ «Վերք» ու շեշտված ազգայնական ոռմանտիզմը, հայկական մնապարծությունը, ատելավառ նացիոնալիզմը պարսիկների հան-

դեպ—այս ամենը ներկեր են, վորոնց ոգնությանն ե դիմում Աբովյանը վեպի քաղաքական ալդ տեսդենցն արտահայտելու համար։ Նշանավոր չափով այս ամենը պատկանում են այն միջոցների շարքին, վորոնցով շատ հաճախ, ինչպես Մարքսն և ասում, «մեծարում են իրենց անցյալը ապահանաչված ազգությունները»⁴³։ Ջուր չե, վոր խտացրած այս ձևով չենք հանդիպում այս բոլորը հեղինակի «Վերք»ի հետ գրեթե միաժամանակ գրված մլուս լեռների մեջ, վորտեղ ավելի անմիջորեն են յերևան դալիս նրա աշխարհայեցողության գեմոկրատական, ազգությունների խաղաղ համակինցաղը մեծարող մտանության տարրերը։

Հանգամանքներ են սրանք, վոր պետք ե նկատի առնել «Վերք»ի վիակատար ու բազմահայաց արժեքավորման համար։ Վերը նշեցինք այն առնչությունը, վոր գոյություն՝ ունի «Վերք»ի և Բաֆֆու հայդուկային վեպերի միջև։ Ալստեղ պետք ե շեշտենք այն տարբերությունը, վոր կա այս վերջինների և «Վերք»ի միջև։ «Վերք»ի հայդուկային մտանությունը հետեւանք եր այն հանգամանքի, վոր կովկասահայ աղքային շարժումն Աբովյանի ժամանակ ջատագովում եր ցարսիզմի «ազատարար» միսիան, քանի վոր աղքային արդ շարժման մեջ մասնակցող ժողովրդական տարրը դեռ չեր հասունացած Ռուսաստանի գաղութային քաղաքականության հանդեպ հետևողական-գեմոկրատական գիրք գրավելու համար։ Բաֆֆու հայդուկային գաղափարախոսությունն ընդհակառակը, արդյունք եր նրան, վոր կովկասահայ աղքային շարժումը նրա ժամանակ արդեն իսկ յերես եր դաշնուու հետևողական գեմոկրատիայի գիրքերից, ընդառաջելով փաստապես ցարիզմի գաղութային քաղաքականությանը, նրա առաջակար-ասիական եքսպանսիային։ Թիշշատ նետելվողական, ռադիկալ-գեմոկրատական, հեղափոխական գիրք գրավեցին կովկասահայ աղքային շարժման հուզած խնդիրների վերաբերմանը Շերեկրագործության հեղինակը, ինչպես նաև նրան հաջորդող կովկասահայ «նիհիլիստները»։ Աբովյանի ժամանակ վերջիններս դեռ չկային հրապարակի վրա, իսկ Բաֆֆու շրջանում նահանջում եին արդեն կովկասահայ բուրժուազիայի ազգբնիվ նացիոնալիզմի առաջ։

Աբովյանի անհետնողականությունը, նրա գաղափարախոսության մեջ ճայթած հակասություններն աղքային շարժման տհա-

⁴³ К. Маркс и Фр. Энгельс, Сочинения, XXII, 1-й л. 159.

սության, նրա ազգային դիմադրկության, նրա քաղաքական անկենսունակության հայտարարն եր:

Անգրկովկասի արտադրական ռւժերի կապիտալիստական հարաբերությունների անզարդացած վիճակի շնորհիվ՝ իրերի այս գրությունը բնական եր և անխուսափելի Ավելի ևս. յերբ ազգային լուսավորության դեկը վատահացվում եր նախակապիտալիստական խավերին, մինչդեռ հենց սրանց դեմ պիտի ուղղվեր անմիջօրեն պայքարը, վորչափ Անգրկովկասում սրանք ելին հենց ցարիզմի գլխավոր պատվարներից մինը, նրա մոլուանդ աջակիցները՝ յերկիրը նվաճելու և նվաճած յերկրում «կարդ ու կանոն» հաստատելու գործում:

Տաղկապված կալվածատիրության և նրա քաղաքական դիկտատուրայի հետ՝ Արովյանի ժամանակ կովկասահալ բուրժուազիան հազիվ եր միայն անում իր առաջին ինքնուրույն քայլերը։ Տակավին յերկշուռ ու յերերուն՝ նա ակնկալում եր ցարիզմից քաղաքական պաշտպանություն և իրավաբար միջամտություն՝ ներքին և արտաքին շուկաներում կշիռ ստանալու համար։ Խրախուել վորևե պայքար ցարիզմի գաղութային քաղաքականության դեմ — այդ գուրս եր բուրժուազիայի նպատակից։ Նման պայքարի համար նա չուներ վոչ կամք և վոչ իսկ՝ շահ։ Ռեժիմի ու նրա պաշտպանած հողային հարաբերությունների դեմ յերեմն լսելի ելին լինում գլուզացիների խուլ բողոքները, յերեմն հուզվում նրանց անկազմակերպ շարժումները, վորոնք հայկական գավառներում չհանգեցին մասսայական շառաչուն բռնկումների, ազգարարային կամ ազգային-հեղափոխական նպատակ հետապնդող տեղական ապստամբությունների։ Բուրժուազիայի առաջավոր ներկայացուցիչները, նրա լուսավորության հոգսերով տարված առաջին մտավորականները, անկարող յեղան պոկվելու դասակարգային հարազատ պատվանդանից, գլխավորելու մասսաների տարերային շարժումները, ընդգրկելով այդ շարժումները կազմակերպչորեն, տալով նրանց ուղղություն և ծրագիր։ Անկարող փշրելու բուրժուական շահերի ու հեռանկարների շրջագիծը՝ նրանք անկարող պիտի լինելին յելք գտնելու նաև ժամանակի սոցիալական և քաղաքական հակասությունների միջից, ամլության մատնելով իրենց իսկ անշահախնդիր տենչերն ու ձգտումները... Այսպէս բուրժուազիայի ամենից լուսամիտ գաղափարախոսոյ՝ Արովյանի գեմոկրատական առանձին ձգտումները ես, գամված մնալով ֆեռուալիզմի և ինքնակալության պատմական շրջանակներին, դարնվում

ելին վոչ թե տիրող կարգերի ու ռեժիմի, այլ միայն մեկի և մլուսի վատթար սպասավորների հետ։ Այս հն վկարում հենց նրա «շըր-ջադարձի» ժամանակամիջոցին վերաբերող նյութերը, մանավանդ այն տվյալները, վորոնք գալիս են ընորոշելու Արովյանի քաղաքականացեսիր՝ գործունելությունը Յերևանում։

1845 թվին դպրոցական հիմանում հաշվետվության մեջ Արովյանը կոչ եր անում այլ և այլ ազգությունների պատկանող – հայ, թուրք, ոռուս, վրացի – իր «պատվելի» համաքաղաքացիներին ու սիրելի աշակերտներին՝ «հետեւնք մեր սրտի մաքուր ձայնին, վոր առօգորված ե բոցավառ սիրով գեղի մեր սիրելի միապետի գահը, մեր թանգաղին հալրենիքի ու սրբության և ազատության հրեշտակ՝ փրկչի գահը։ Ռուս անունը պետք ե մեզ համար լինի սուրբ, ինչպես և նրա անունը, վորով մենք ազատվել ենք ընդմիջու, նույնպես սուրբ պետք ե լինի նրա խնամքը, վորի ներքո մենք ապրում ենք, պաշտպանված լինելով կատարելապես մեր հավատքի ու հալրենիքի թշնամիներից»⁴⁴։ Արովյանն այնքան հեռուն եր գնացել վոր անդամ անդրկովկասլան դպրոցների վերատեսուչ ի. Կուլֆինսկին եր նկատում՝ «հաշվետվության» լուսանցքի վրա. «Ալդ բոլորը գրված ե շատ լավ և արդարացի, բայց վոմանք այդ չեն հասկանալ, իսկ նրանք, վորոնք կհասկանան, կարող են վիրավորվել»⁴⁵։ Կուլֆինսկին նկատի ուներ այն հանգամանքը, վոր Արովյանի գրվածքն ուղղվում եր ի գիտություն մասնավորապես այն թուրք քաղաքացիների, վորոնց ազգային և կրոնական արժանապատվությունը չեր կարող չխոցել Արովյանի ուսուապատրիոտական այս յելույթը։

Բայց Արովյանն ավելի հեռուն գնաց. Յերկու տարի անց, 1847 թ. նոյեմբերի 23-ին, նա դիմում ե անում դպրոցական իշխանության՝ տեղացիների մեջ ոռու «տիրող լեզվի և բուն քրիստոնելիական վորու տարածման» նպատակով նշանակել գավառական դպրոցի համար ոռու կրոնուսուց մի քահանա. Քահանան կրոնի դասեր սիրտի տար վոչ միայն դպրոցի ուղղափառ աշակերտներին, — ինչ կարելի յեր առարկել սրա գեմ Արովյանի ժամանակ, — այլև «բոլոր հալերին», վորոնց ևս, Արովյանի կարծիքով, «անհրաժեշտ հարկավոր և ուղղափառ դավանանքի դասավանդու-

⁴⁴ «Տեղեկադիր Հ. Ս. Խ. Հ. Դիտության և արվեստի ինստիտուտի», III, յեր. 133:

45 Ն. առ.

թլունը՝⁴⁶, Փաստը, իսկաղես, արտառոց և և կարու ստուգման թնկ. Ակսելը ձեռքի տակ ունենալով համապատասխան վավերագրեց, պարտավոր եր հերքել և կամ հաշվի առնել այն, Փոխարենը իսոհեմություն և համարել լուսթյան մատնել փաստը, Բայց լուսթյունը համողիչ արգումենտ չե ինքյան համառ իրականության դեմ:

Ավելի հիմնավոր չե ընկ. Ակսելի մի լերկորդ պնդումը: Առսելով Աբովյանի և Ներսեսի հարաբերության մասին, նա զրում ե. «Ներսես Աշտարակեցու հանգեղ տածած խոր հարդանքը, վորդուգորդում եր Ներսեսի պաշտպանած քաղաքականության ջատագովման, վշշրվեց նույն Հայկական Մարզում, վորտեղ և ծնվել եր: Ազդ այն ժամանակ եր, իերք արդեն չկար որապական Հայկական Մարզը, և նրա հետ միասին չքացել ելին ազգային անկախ կյանքի ակնկալությունները».

Այստեղ այնպիս և ներկայացվում ներսեսի և Աբովյանի հարաբերությունը, վոր իբր վերջինս բաղանականացն հուսախաբ լեղավ Ներսեսից, կորցրեց նրա անվան հետ կապված քաղաքական «անկախ կյանքի» ակնկալությունները: Մի կողմ թողնելով, վոր ալստեղ ընկ. Ակսելն ուղցնում ե ներսեսի և նրա արքանուակեների քաղաքական վաղեմի ակնկալությունները, ինքյան վոչ մի փաստ չկա՝ արված լեզրակացությունները հավաստելու համար:

Նկատենք ամենից առաջ, վոր Հայկական Մարդի չքացումն Աբովյանի փառաբանած Գանի ռեվիզիայի անմիջական «պատուղներից» մեկն եր, Աբովյանը, վոր 1838 թվին ուղեկցում եր Գանին՝ Հայկական Մարզում կատարած նրա ճանապարհորդության ժամանակ և տեղիակ եր, անշուշտ, Անդրկովկասի վարչական միավորները վերակազմելու նրա առաքելությանը, չենք կասիածում, վոր Մարզի վերացման կողմանակիցներից եր:

Անվիճելի փաստ ե, վոր Հայաստանի ազգաբնակությունը վողջունեց Մարդի լիկվիդացիան, վորով քաղաքացիական վարչություն եր մտցվում Անդրկովկասում, նկատելով ալդ իր զրությունը բարվոքող մի ձեռնարկում: Հիբավի չինովնիկական կամաւականության, չարաշահության և կաշառակերության աննախընթաց մի շրջան եր Մարդի ժամանակաշրջանը. այդ են վկայում ժամանակակից ու հետագա բոլոր ազգությունները: Հետաքրքրական ե, սակայն, վոր Մարդի վարչության դլուխ եր կանգնած Աբովյանի

մեծարած թեհրուղովը, հալազգի մի կոնդոտիւեր, վորը «հերոսի» հոչակ ձեռք բերեց նաև կովկասյան պատերազմների ժամանակ, մանելով «ազգի պարծանք» հալ գեներալների շարքը: Խոսելով այս մարդու մասին, Վագները զրում է. «մի քանի տարի ուսւական նահանգապետի պաշտոն վարելով, նա վատթարագույնն եր նահանգի գլխին պատուհաս դարձած կողոպտիչներից և բռնակալներից, վորոնց նղովում և վողջ ժողովուրդը: Վոչ մի փաշա և վոչ մի սարդար չի լնղել, վոր կարողացած լիներ խեղճ գլուղացիների քրտնքից վոսկի կտրել կամ կախարդական մի գավաղան դարձնել մարակը՝ լերկաթե իր դանձարանը լցնելու համար, այնպես, ինչպես վոր այս հայն եր անում: Նրա դժբախտ համերկրացիներն անսանկի տանջանքներ կբեցին և ամեն մեկը՝ նրա համեմատաբար յերկարատե սարսափների որով, թափծանքովներ վերհիշում պարսիկների ժամանակները: Թեհրուղով ոժտված և կեղծելու և դավելու ալնպիսի ընդունակությամբ, վոր հայերի մեջ իսկ հազվագյուտ եւ: Ժամանակի սուսական վարչության պետ բարոն Փոն Ռոզենի աշքում իսկ կարողացավ ջերմ պատրիոտ և ժողովրդի յերշանկությանը նախանձախնդիր մեկը ձեանալ, և մինչդեռ նրան յերկրպագու բոլոր չինովնիկները, վորոնք անխափը նրա մարդիկն ելին, քափ ու քրտինք կտրած ոժանդակում ելին նրբարվեստ նրա կեղեքումներին, իսկ Յերևանի ժողովուրդը գտնվում եր ծալը կարիքի մեջ, — Թիֆլիսում կարծում ելին, թե ալնտեղ ամեն ինչ կարգին ե գնում: Վարչության պետը կարծում եր անգամ, թե իշխան թեհրուղովը, վորը միշտ ճիշտ ժամանակին եր տեղ հասցնում պետական հարկերը, որինակելի մի աղմինիստրատոր եւ: Բողոքի և վոչ մի ծպուտ չեր հասնում Թիֆլիս կամ Պետրոպուրդ. այս մարդու բռնատիրությունը կաշկանդում եր սարսափահար բոլոր լեզուները: Գավառների բոլոր վարիչները նրա ջանադիր յերկրպագուներն ելին, քանի վոր կարող ելին ազատորեն անել իրենց սրտի ուղածը, յեթե միայն վճարում ելին ձեռք բերած պաշտոնների լիակատար գինը: Հարստահարությամբ ծանրաբեռնված, շքանշաններով և չիներով զարդարված այս սրիկան լքեց իր պաշտոնը, վորպեսզի տեղ տա ոուս մի մարդու, վորն ավելի բարի պառուղ չեր, քան նա»⁴¹:

Հասկանակի լի, վոր Հայկական Մարզի հպատակները վոչ մի պատճառ չունեյին վորևե չափով տիրելու թեհրուղովի մռալլ այս

որերը հիշեցնող Մարդի չքացման առիթով: Դիտենք միաժամանակ, վոր Հայկական Մարզը վերացավ 1840 թվի ապրիլին, մինչդեռ հաջորդ տարին ե, վոր Արովլանը դրի առաջ «Վերքը», վորտեղ ջատագովում եր Ներսեսի քաղաքականությունը: Սակայն Արովլանը Ներսեսի կողմն եր շրջում գեմքը Հայկական Մարզը չքանալուց շատ ավելի ուշ ես:

Բնորոշ ե այդ տեսակետից 1845 թ. փետրվարի 15-ին Ներսեսին գրած նամակը: Արովլանի համար Ներսեսի գարշապարնիսկ «սուրբ» եր այդ պահին, Ներսեսը նրա համար «Հայաստանիալց հուլսն եր», նույն այն «Տորիթա հրեշտակը», վորին փառաբանում եր «Վերքը»ում: Հայտնում ե, թե վաղուց մտադրվել եր տեղափոխվել Ռուսաստան կամ Գերմանիա, բայց Ներսեսի գալուստան «ավետալուր համբավը» կապել-կաշկանդել ե իրեն «հայրենիալց բարեբախտության» նոր հուլսերով ու հեռանկարներով: Արովլանը կամենում ե լինել Աշտարակեցու «վոտի շլուզը», թողնել տուն և ընտանիք ու նորից «բառնալ Քրիստոսի խաչը»: Հուլս ուներ, թե այդ քայլն որինակ կղանար նաև իր աշակերտների համար և դուցե հենց բացվեր «վոսկեղեն» նոր դար Հայաստան աշխարհի համար⁴⁸: Պետք ե լինթաղբել, թե նման ակնկալություններ հայտնում եր Արովլանը նաև իր աշակերտ դր. Շահնազարովի բերանով, վորը Ներսեսի ոծման որը, 1846 թ. հունիսի 9-ին, Եջմիածնում ոռւսերեն ճառ արտասանեց «համբուր պատշաճի»⁴⁹:

Բայց ընկ. Ակսելն անում ե նաև նոր մի հայտարարություն: Գնդում ե, վոր Արովլանի հիասթափությունը սոսկ անձնական չեր, ալլև անդրադարձնում եր «Ներսեսի գրուպպալի» ընդհանուր արամադրությունը: «Գրուպպան» ե, վոր թիկունք դարձրեց Ռուսաստանին, դիմադրձ լինելով դեպի Թյուրքիան: Բայց, յեթե հիրավի դա այդպես եր, ինչու պետք ե նվազեր Արովլանի «հարգանքը» դեպի Ներսեսը: Միթե Ներսեսին ե, վոր մերժում եր «գրուպպան» իր հարգանքը: Բայց չե վոր հենց «գրուպպալի» շանքերով ե, վոր նույն այդ ժամանակ «պատվական ազգը» կաթողիկոս ընտրեց նրան: Իսկ յեթե «գրուպպալի» հետ մեկտեղ Ներսեսն ել եր հուսախար լեղել Ռուսաստանից, այդ դեպքում մելքխոթել այն փաստը, վոր նա յեր հենց միահեծան գլուխ կանգնել «ազգին», հենվելով ցարական հրամանի և հայ ազնվականներին:

⁴⁸ «Փորձ», 1880, № 9, յեր. 197:

⁴⁹ Տես՝ «Կավказ», 1846, № 25:

ու փողքաթչիներին բարլացակամ Նարանցովի պաշտպանության վրա։ Ի՞նկ. Ակսելը լսել ե, իհարկե, վոր ցարիզմի հրատարակած «Պոլոժենիե» դժողովություն առաջ բերեց հայ պահպանողական շրջաններում, բայց գլխի չի ընկել, թե՛ լմբը կամ վճրտեղ։ Ազդել եր արդյոք «Պոլոժենիե» Արովյանի վրա։ «Պոլոժենիե» հրատարակել եր 1836 թվին, մինչդեռ Արովյանը ներքություն եր ցարիզմը 1841 թվին և այնուհետև։ «Պոլոժենիե» նշանակում ե, չի փրկում Արովյանին, մինչդեռ ընկ. Ակսելը, աչքի առաջ ունենալով «Պոլոժենիե» ի հետ կապված անցքերը, Արովյանի հետ մեկտեղ փորձում ե կարծես «պարզերես» անել նաև Ներսեսի «գրուպպան» առհասարակ։ Ասել ե թե, ջանք ե թափում վերջիվերջո արձակել մեղքերից այն մարդկանց, վորոնք առաջին մուրճերը դարկեցին կովկասահայ մարտական բուրժուազիալի և գարական ազգեսիալի քաղաքական դաշինքի սալին... Անշուշտ, անձնական չեր Արովյանի կապը Ներսեսի հետ, այլ հասարակական, «գրուպպայական»։ Տարբեր սերունդների մարդիկ ելին նրանք, սակայն լերկուան ել աղնվազարմ «գլուղդացիներ», վորոնք, հենվելով քաղաքալին շուկալի հետ շաղկապված առևտրական հանգույցների վրա, ձգտում ելին հանգավորելու հայ առևտրական կապիտալի և հայ աղնվական դասի զուգադիպվող շահերը, նրանց քաղաքական և լուսավորական ընդհանուր ջանքերը։ Ներսեսը, ճիշտ ե, վերջին պահին լքեց Արովյանին, չարդարացրեց նրա ավելի հեռուն միտող հովաները։ Սակայն վայրկան եր այդ, յերբ արդեն Արովյանը, հուսալքլած միանգամայն, անընդունակ եր առհասարակ հասարակական քաղաքական վորոնք հեղադարձության...»

Հետաքրքիր ե նաև նույն այս խնդրի մլուս կողմը, Ներսեսի՝ դեպի Արովյանը հայտաբերած վերաբերմունքը։ Ներսեսն Արովյանի առաջ գոցեց վանք վերադառնալու ուղիները։ Արդյոք անհնարին եր ձեակերպել նրա ապահարզանը, թե՛ լերկմիտ եր վերանորոգչական նրա ծրագրերի նկատմամբ, — դժվար ե վարոշել։ Թերևս դեր եր կատարում այս նկատառութերից թե մեկը, թե մլուսը։ Բոլոր պարագաներում չպետք ե կարծել, թե Ներսեսը մերժում եր Արովյանին՝ հավատ չընծալելով նրա անկեղծությանը կամ կասկածելով նրա հավատարմությունը։ Վոխակալ, հիշաշար, կամապաշտ և ինտրիգան այս կղերականը սովորություն չուներ հաշտվողական կամ համբերատար վերաբերմունք ցույց տալու մարդկանց, վորոնք անբարլացակամ ելին դեպի ինքն ու իր կուսակցությունը։ Զուր չե, վոր Նիկոլայ Պալկինի վեղարավոր այս

սատրապը լրտեսական մի ամբողջ ցանց կազմակերպեց Անդրկով-կասում, մի տեսակ հոգևոր Արքաժանձունք, վոր աճ ու գողի մեջ եր պահում կաթողիկոսի թշնամիներին ու բարեկամներին: Արովյանին, համենայն գեղս, Ներսեսը չեր դասում թշնամիների շարքը: 1844 թվին Պետերբուրգից հասուկ զրությամբ Արովյանին եր հանձնարարում ուղեկցելու Արիխի վերելքը գեղի Արտաքա: Անհավանական չե, վոր 1846 թ. աշնանն Արովյանը ուղեկցած լինի նաև Ներսեսի հովանավորության ներքո գանգած գեներալ Մուրավյովին—1848 թ. լույս տեսած «Գրչունական արքի հեղինակին—նրա՝ Հայաստանում կատարած ճանապարհորդության ժամանակ»⁵⁰: Նույն թվին Յերեանում Ներսեսը խոստանում եր Արովյանին՝ Գերմանիա ուղարկել նրա լավագույն աշակերտներին՝ ուսումը շարունակելու համար: Վերջապես 1848 թվի փետրվարին առաջարկել եր Արովյանին, ինչպես ասում են, Թիֆլիսի իր անվան դպրոցի տեսչության պաշտոնը⁵¹: Ներսեսի կողմից վստահության գերազույն նշանն եր ալս. ալս մարդը, վոր հոգեոր և աշխարհիկ վոստիկանության բոլոր ճանապարհներով տարիների ընթացքում հալածում եր Մ. Նալբանդյանին, չհանդուրժելով անգամ, վոր «հետուալ» ալդ դպիրն ուսուցչության պաշտոն վարի Լազարյան ճեմարանում—հոժարում եր նախկին դպիր Արովյանի ձեռքը տալ իր սրտին ու մտքին այնքան մոտ դպրոցի դեկլը:

⁵⁰ Ստ. Նալբանդյանը՝ «բարերար», իսկ հետագայում նրա կատաղի թշնամիք: Սոլոմոն Տեր-Դուկանյանը 1848 թ. սեպտ. գրում է Մուրավյովին. «Абовъян с восхищением к Вашему христианскому смирению, благоговению и усердию к святыням; он писал ко мне, что даже не видывал он армянина подобно Вам усердного к святыне. Тоже многие эчмиадзинские монахи писали; из Тифлиса тоже, это было мне приятно». Տես՝ Լազարյանների տիեզյալին արխիպել Փոնդը, գիրք XVII, № 9 գրությունը.

⁵¹ Տես՝ «Կոռունկ», 1861, № 7, յեր. 540:

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնկ. Ակսելի պատմական կառուցումների մեջ զգալի տեղ երանում գերմանական ճանապարհորդների աղդեցության խնդիրը։ Նրա կարծիքով գերմանական դիտունների հետ կատարած ճանապարհորդությունները, նրանց հետ ունեցած հանդիպումներն ու նամակադրությունները վոչ միայն նողաստում ելին Աբովյանի քաղաքական շրջադարձին, այլև, ըստ յերևութին, մի հայտնի չափով շրջում նրա միաքը Յեվրոպայում ծավալվող հեղափոխական շարժումների կողմը։

Անշուշտ, նշանավոր չափով, գերմանական աղդեցությունների տակ ե ձեակերպվել Աբովյանի ընդհանուր աշխարհայացքը Դորպատում և այնուհետեւ։ Կամկածից վեր ե նաև, վոր Դորպատից դուրս՝ Յեվրոպայի և լեվոպատացիների հետ ունեցած մշտական շփումների շնորհիվ եր, վոր զարգացան հատկապես Աբովյանի աշխարհայցողության պրոգրեսիվ տարրերը։ Բայց կարմղ եր արդոք աղդեցությունների ալդ աղբյուրը վորեն վեր կատարել նրա քաղաքական ուղղարձի ուղղությամբ։ Յեվովքեր են, վոր կարող ելին նման բախտորոշ գեր կատարել Աբովյանի կլանքում։

Հարցեր են սրանք, վորոնց պատասխանելու համար անհրաժեշտ ե վոքը ինչ պարզորեն գծագրել պրոցրեսիվ այն աղդեցությունների շրջանակները, վորոնց լենթակա լե լեզել Աբովյանը տակավին ուսանողական տարիներին Դորպատում։ Նշանակալից ժամանակներ ելին, հիրավի, այդ տարիները (1830—1835 թ.թ.), Աբեմալյան Յեվրոպայում ծայր առած ազգալին ազատազրական շարժումների դարաշրջանն եր այդ, վոր գրեթե ամենուրեք զուգորդում եր բուրժուական գեմոկրատիալի նոր զարթոնքին։ 1830 թ. հուլիսին Պարիզում բանկեց մի հեղափոխություն, վոր ցնցեց հին Յեվրոպան։ Ռեֆորմների բիլը Անդլիալում, ապստամբություններ Բելգիայում, գերմանական պետությունների մեջ, Անդաստանում և Իտալիայում։ Վորպես հեղափոխության վճռական, առաջամարտություն հրապարակ ե գալիս բանվորությունը (բարիկադալին կոիվսեր

Գարիղում — 1830 թ., բանվորական ապստամբություններ կրոնում — 1831 և 1834 թ. թ., չարախստական շարժում Անդլիալում): Բանվորության հետ կողք կողքի կռվում եր ուսանողությունը՝ ֆրանսիայում և Գերմանիայում: Յերևութներ ելին սրանք, վոր արմատական ընթացքի մեջ դրին ժամանակի առաջավոր բուրժուական-դեմոկրատական կազմակերպությունների գործունելությունը, հեղհեղեցին նրանց մտավոր-քաղաքական կրանքը: Բավական ե հիշել Մաձձինիի և Գարիբալդիի անվան հետ կապված խմբակցություններն Խտալիալում, Բյորնելի և Հայնելի լելությունները Գերմանիայում և այլն:

Անշուշտ, այս ամենը առանց արձագանքի չեր կարող մնալ նաև Արևմուտքի շեմքին ընկած Դորպատում: Արովլանի ստեղծագործության մեջ հայտաբերված ազգային-ազատագրական, բուրժուական-դեմոկրատական մտալնության տարրերն անդրադարձում ելին, իհարկե, ժամանակակից խոշոր այս իրադարձությունների ազդեցությունը: Սակայն բավական չե շեշտել այս Անհրաժեշտ ե նկատել և վեր հանել նաև Եներիակ այն ազդեցությունները, վորոնք անդրադառնում ելին Արովլանի վրա վոչ պակաս ուժով, սահմանափակելով, թուլացնելով, չեղոքացնելով նրա մեջ առաջավոր, արմատական հոսանքների ներգործությունը, և վորոնք բաղխվելով սրանց հետ, — շեշտում ելին նրա գիտակցության մեջ ծայր առած յերկպառակությունը, խորացնում նրա հասարակական-քաղաքական ինտերեսների ու մտալնության անկամքջելի յերկվությունը: Այս յերկվությունն ու յերկպառակությունն ե, վոր փոթորկել ե Արովլանի հուղական աշխարհը, դորեղ շունչ հաղորդել նրա ստեղծագործությանը: Նույն արդյունքութն ե, վոր ընդարձացը և վերջիվերջո նրա յեռանդը, կազմակերման կորիզ դառնալով նրա կլանքի և ստեղծագործության համար:

Մեզանում փորձեր են լեղել կապել առաջին դորպատաւանների գործունելյությունը «Յերիտասարդ Գերմանիայի» կամ ժամանակի ազգային-ազատագրական շարժումների անմիջական ազդեցության հետ ⁶², Մինչդեռ ակներև ե, վոր ժամանակի արմատական, հեղափոխական այդ շարժումներն ու գաղափարական հովերը անդրանիկ դորպատաւանների գիտակցությանը հասնելու համար բեկվում ելին հաճախ վոչ միայն նրանց շրջապատող պրոֆեսուրայի, սրանց չա-

⁶²Տես՝ Լեռ. «Ստ. Նազարյանց», Թիֆլ., 1902. I, յեր. 94 և հետա

փալոր-պահպանողական հայացքների, սրանց մերձբալտկան տրամադրությունների պրիզմայում, այլև կաղապարվում անցնում իրենց իսկ, ասիացի ուսանողների, Մասիսի փեշերից Եմբալսի ափերը հասցրած աղջալին. կրոնական նախապաշարումների թանձր մառախողի մեջ, Արովյանի ու Նազարյանցի գիտակցության վրա աղջած գործոնները հաշվի առնելիս պետք ե հիշատակել վոչ միայն նրանց ուսանողության ժամանակ ծալը առած հեղափոխական շարժումները, այլև ռեակցիոն այն ուժերը, վոր գլուխ բարձրացնելով Ռուսաստանից, շարժվեցին Արևմուտք՝ խեղդելով արծարծվող հեղափոխությունը և պատվար դառնալով քաղաքական ընդհանուր այն դեպքեսիալին, վոր իշխող փաստ դարձավ Յեվրոպայի համար՝ լերենական թվականների կեսերից սկսած գրեթե մի ամբողջ տասնամյակ: Զմոռանաք, վոր Նիկոլայ Լի մառլ դարձըրջանն եր ալդ, լերը ցարական կրունկի տակ ճզմվել եր գեկարիստների շարժումը և դաժանորեն հալածվում եր հեղափոխական լեհասահանը: Գրականության մեջ կարամզինյան սանտիմենտալիզմը փոխանցվում եր Ժուլիովսկու ոռմանտիզմին: Վոլտերականության և մասնական շարժման տեղ գլուխ եր բարձրացնում նորից միստիցիզմը և պրավուլավ կրոնամոլությունը, թե մեկը և թե մլուսը թրծված ցարապաշտական, թթու-պատրիոտական, պանսլավիստական գաղափարախոսությամբ: Հնարավոր ե արդյոք այնպես պատկերել դրությունը, վոր Դորպատում «քաղաքակըրթվող» ասիացի լերիասարդները մեկեն ի մեկ լերես շուռ տվին իրենց բարձրաստիճան «բարերարներից»՝ տարվելով լերիասարդ Գերմանիալի արմատական հովերով, հետեղողական դեմոկրատիալի հասարակական-քաղաքական իդեալներով: Վոչ ինարկե, Արովյանի և Նազարյանցի գրական հետագա գործունելությունը չի մատնում վոչնչով մի Բյորնելի կամ մի Հայնելի, մի Շարառուսի կամ մի Ֆուլերախի գաղափարական աղղեցությունը:

Հակառակորդները մեղադրում ելին նրանց լութերականության մեջ: Կղերի և նրա գործակալների համար այս մեղադրանքը վարկաբեկելու, զրպարտելու միջոց եր ինարկե: Բայց և այնպես չի կարելի անդիտանալ իսպառ լութերականության աղղեցությունը Դորպատի անդրանիկ հայ ուսանողների գիտակցության վրա, Վանական խուցից յելած Արովյանը գերմանական միջավայրը ընկնելով՝ ամենից առաջ պետք ե վոր անդրադառնար լութերական և լուսավորչական լեկեղեցիների միջև ընկած տարբերությունը:

թյանը։ Բլուրգերական լուսավորության հիմքերի լուրացումը պետք է վոր աղջեր նախ և առաջ Աբովյան դպրի կրոնական-չեկեղեցական հայացքների վրա, և այս գեղքում բնական ե, վոր անխուսափելի լիներ լութերականության, կալվածատերերի հետ զորված բլուրգերականության լուրատեսակ այդ մասնության աղջեցությունը։ Սրան ապացուց կարող են լինել «Վերք»ի այն եջերը, վորտեղ հեղինակը քննադատում և լուսավորչական լիկեղցու ծիսական ավելորդությունները։ Աբովյանը ձանձրացնում եր լիրկար ժամասացությունը։ «Են, ժամ չի դառավ մեր գլխին, մեկ եշի հարսանիք դառավ, տո», ասում ենաւ։ Աբովյանը կարծում ե արգեն, վոր իմաստ չունի տարին յերեք, չորս անդամ սրբություն առնել, խոստովանվել, պատ ու ծով պահել, մանավանդ, վոր հավատացողը «խելքումը չեր նոտացնում, թե բանի դրությունն ինչ ա»։ Աբովյանը քննադատում և մանավանդ լիկեղեցական խոստովանության «խորհուրդը»։ «Ենպես բաներից (են) խարար առնում, վոր չոլումը չի պետք և խոսացած, բալքի թե քամին իմանա, առնի ուրիշի ականջը զցի...»։

Սակայն լութերականությունը չեր սահմանափակվում լոկ կրոնական, լիկեղեցական խնդիրներով։ Գերմանական միջավայրում լութերականության հետ կապված եր նաև գրական լեզվի խնդիրը։ Հուգելով լեզվական ռեֆորմի խնդիրը՝ անդրանիկ դրապատյանները վոգեշնչված եցին անշուշտ այն դերով, վոր կատարել եր Լութերը գերմանական, Գանահեն կամ Գետրարկան իտալական գրականության վերաբերմամբ։ «Եերանի են սհաթին, — գրում եր Աբովյանը, — վոր մեկ ազնիվ հայի ծնունդ իմ անպիտան լեզվի վրա բարկանա, իմ անպիտան գրությունը դեն քցի ու ինքը նորեն գրի մեր հայի պատմությունը, վոր լող կարդացողը վառվի, բորբոքի, զարմանա, հիանա ու են գրողի զալամն ու գիրքն ինչպես Գետրարքինը՝ մասունքի տեղ պաշտի, ծոցումը պահի» («Զանգի»)⁵³։ Բնորոշ ե, վոր աշխարհաբար դրելու միտքն իսկ արմատացավ Աբովյանի մեջ աստվածաբանության պրոֆեսուր, հեգելլան դպրոցին հարող պաստոր Յովլիու Վալտերի⁵⁴ աղ-

⁵³ Հետաքրքրական ե, վոր Աբովյանի թողած աեւբակների մեջ հանդիպում ենք «Յերազ Գետրարկա բանաստեղծի» վերնապրով մի զբաժքի հիշատակությունը (տես՝ Տեր-Կարապետյան, ն. ա., յեր. 280)։ Յենթազրում ենք, վոր Աբովյանի ձեռքով Գետրարկայից կտաքած թարգմանության վերնագիրն ե այդ։

⁵⁴ Վալտերի մասին տես «Биографический словарь профессоров и преподавателей Юрьевского, бывшего дерптского университета», изд. под ред. Г. Левицкого, Юрьев, 1913, т. I, стр. 56.

դեցության ներքո Ռւսանողական։ հիշատակարանում Արովլանը հիշատակում և առանձնապես, վոր վերջինս շեշտում եր աշխարհաբար աստվածաշնչի կարենորությունն ու նշանակությունը⁵⁵, 1834 թ. վերջինից Արովլանը վորձեր արեց գրել «աշուղական» լիդվոլ։ Դրանով վոչ միայն տուրք եր տալիս Վալտերի ներշնչած մտքերին, այլև ընդառաջում մի պահանջի, վոր իրենից առաջ իսկ զգացել ելին ուրիշները։ Այսպես, ուշամաս պարսկական պատերազմի ժամանակ ուստի զինվորականներն ու չինովորիկները հայ բնակչությանը, կտմավորներին ու կապալառուներին ուղղած իրենց աղքերն ու կոչերը ապօտմ ելին նույն այդ ժողովրդական, «աշշուղական» լիդվոլ։ Մեր ձեռքի տակ կան Թիֆլիսի բարբառով գըրված նման տպագիր զիմումների բազմաթիվ նմուշներ։ Հետազալում «Վերք»ի հեղինակը վոչ միայն իր սրութեատով եր անդրադարձնում պատերազմի ժամանակաշրջանը, այլև իր գործ գրած լիդվոլ։ Հետաքրքրական ե, վոր Արովլանի աշուղական լերգերը գրված են վոչ թե Յերեանի, այլ Թիֆլիսի բարբառով⁵⁶,

ժամանակակից դրականության մատերիալիստական, աթեխտական, արմատական-դիմոկրատական հոսանքների փոխարեն առաջին դրամատյանները լինթարկվեցին, լավագույն գեղքում, միայն դասական դրականության, մի ևսսինգի, մի Հերդերի—վերջինով տարիված եր մանավանդ ուսանող նազարյանցը—և առավելապես Շիլերի և Գյոթելի, ազդեցությանը, այսինքն, հեղինակների, վորոնց մեջ ևս ժամանակի հեղափոխական շարժումներն ու տրամադրություններն անդրադարձել ելին վերջին հաշվով իրենց «բարեխառնված»։ չափալոր արտահայտություններով, իրենց վեղկված, բեկված, լերկճուռ, լանուսալին կերպարանքով։

Ռւսանողական հիշատակարանում Արովլանը տրտմությամբ և արձանագրում Գյոթելի մահը։ Հետագայում նա զբաղեցնում եր իր սաներին Գյոթելի և Շիլերի ընթերցանությամբ։ Կասկածից դուրս և «Ավագակիների», թերևս նաև «Գյոց ֆոն Բեոլիխինգինի» ազդեցությունը «Վերք»ի հեղինակի վրա։ Շիլերի ազդեցության հետևանք և անշուշտ, լերը նրա գրչի տակ «գաղափարական ավագակը» ուռապոր և դառնում ժամանակի հուզող մտայնության, կամ լերը «վողրի» գործող անձերը տարբում են ուղղոնյորությամբ։ «Վերք»ի հջերում զգացվում են նմանապես «Վիլհելմ Թիլլը» և «Ռոլֆանի կուլյասի մարտական շունչը։ Հիմնականը, ինարկե,

55 Հմմ. Տեր-Կարապետյան, ն. տ., յեր. 109:

56 Տես՝ ն. տ., յեր. 158 և հետո, ժամանթաղբություն։

ձեական ազգեցությունը չեւ ի՞նչպես են բեկվել Արովլանի դիտակցության մեջ ոտար հեղինակները, ի՞նչպես և վմբչափով և յուրացրել նա դրանց ստեղծագործության պրոգրեսիվ աենդինցները։ Արովլանի մասին ֆրանսական մի ճանապարհորդ զրել է Սա. Վոսկանին։ «Եիլլերը ջրի պես դիտե. Լեսովինգին, Լելպնիսին կարծիքները մաղեւ անցուցեր եւ իր տօխական լիւեվակալուրյունով անոնց նոր զույն մը կուտա»։ Շատ հետաքրքրական են ընդգծված տողերը։ Զպետք և անդիտանանք, վոր Լեսովինգի Նաթանը «մաղեւ անցուցվելով» Արովլանի գիտակցության մեջ՝ թելազրում եր նրան յերբեմն հռչակել հայ աղջը «ազնիվ» և «ընտիր», նրա լեզուն ու հավատը «սուրբ», մինչդեռ, տարամերժուրեն, թուրքի կամ պարսկի լեզուն՝ «հարամ» կրոնը՝ «պիղծ»։ Նկատենք նաև, վոր «հարամու» մարմինը՝ գիշատող հայ Մոռի թիկունքում կանգնած եր Աշտարակեցի վեղարավոր խմբապետը, իսկ փոքր ինչ դենը՝ զեկարբիստների, այլև Լիհաստանի և Հունգարիայի ապստամբության դասնիճը — ցարական սարդար Պատկեվիչը, վորին «Վերք»ի հեղինակը «Պոլշիո տստված» եր համարում... Ահա թե ուր եր սահնում յերբեմն լեզրովական կլասիկները «մաղեւ անցուցող» «ասիական յերեակալությունը»։ Ասիական այդ «յերեակալությունը», ասիական այդ զգալականությունը հայտնագործում և մեր առաջ միաժամանակ Արովլանի աշխարհազգացողության, նրա ստեղծագործության վրա անդրադարձ լեզրովական աղջեցությունների ալլ հետքեր ևս։ «Քըլը դերը» հոդվածում Արովլանը հիացումով և պատմում նրանց բնական կենցաղի մասին և մեջբերելով մի եպիզոդ քրդական կլանքից՝ «կիսավալրի Վերբեր անունն և տալիս նրա հերոսին» «Վերթեր»ի հարեանցի այս հիշատակությունը պատահական չեւ։ Այդ հիշեցնում և մեզ Արովլանին — վոչ միայն զրոյին, այլև մարդուն — բնորոշող սանտիմենտալիզմը։ Սերը դեպի բնությունը, կենդանական աշխարհը, «կիսավալրի» մարդը, պարզ բարքն ու վարքը — գիմոկրատական այս գիծն ուղեկցում և նրա կլանքն ու գործը։ Արովլանի դեմոկրատական այս գիրքորոշման վրա զգալի լեւ, անշուշտ, Ռուսասոյի հզոր չունչը։ Ռուսասոն աղդել եր մանավանդ նրա մանկավարժական հայացքների վրա։ Գրովի թղթերի մեջ հանդիպում ենք «Ժյուլի կամ նոր կլոյիզա» անվան խուլ հիշատակությունը⁵⁷։ Հնարավոր եւ, վոր Արովլանը ձեռնարկած լինի համանուն գործի թարգմանությանը։

⁵⁷ Հմմ. Տեր-կարապետյան, ն. տ., յեր. 280:

Հարկավ, նրանից չեր ալս, վոր Արովյանը Շգլուղի» մարդ եր, գլուղի գաղափարախոս և ալճն՝ Սանտիմենտալիզմը, վոր Արովյանի աշխարհազգացողության և ստեղծագործության բնորոշ մի գիծ դարձավ, քաղաքի ծնունդ եր, վորչափ քաղաքն եր, և հատկապես Դորպատը, վոր գուրս եր մղել նրան կյանքի սովորական հունից, մտածողության և զգացողության տրորված ուղիներից, սասակացնելով նրա նյարդերի լարվածությունը, բորբոքված, անհավասարակիռ վիճակի մեջ դնելով նրա հոգեկան աշխարհը: Հետազայում, յելք փնտուելով հասարակական հակասությունների ցանցերից, Արովյանը խուսափում եր բնության ծոցը. Վրաստանում և Հայաստանում կատարած բազմաթիվ շրջադաշտությունները, Արարատը բարձրանալու նորանոր փորձերը գեղքերի պատահական բերմունք չելին լոկ, այլև բուռն ներքին պահանջ Արովյանի համար: Պատահական չեր նույնպես, յերբ հոգեոր կոչումից իրեն ազատելու դիմում ուղելով Եջմիածին, Արովյանը խոստովանում եր, թե անկարող ե կրել հոգեոր կոչում, քանի վոր՝ «փոփոխութիւն մտաց և վարուց իմոց ոչ կարեն պատասխանել ճիշտ ծանր և ժուժկալ կենցաղավարութեան հոգեռական վիճակի և ալճն»⁵⁸:

Սանտիմենտալիզմի արտահայտություններից մեկն եր ալս նույն չափով, վորչափով նաև Արովյանի հետազա՞ ընտանիքից դեպի վանք դիմելը, նրա ձգտումը՝ «բառնալ» կրկին Քրիստոսի խաչը, վերստեղծել Հայաստանի նոր վոսկեդարը, այն տարբերությամբ միայն, վոր այստեղ սանտիմենտալ աշխարհազգացողությունը հասնում ե լարման ալն կետին, յերբ նա անզգալիորեն փոխանցվում եր ուսմանտիզմին, վորտեղ արևակեղ բնությունն ընկդմվում ե, կարծես, դիշերային խավարի մեջ: Դորպատյան հիշատակարանում Արովյանը նկարագրում ե իր հանդիպումը ուստ ոսմանտիկական բանաստեղծության պարագլուխ ժուկովսկու հետ: Շինուացարիայի վրայով նոր վերադարձած լինելով Իտալիայից՝ ժուկովսկին Մոնրլանի վողջուրնն եր հաղորդում Արարատի գագաթը բարձրացած արևելցուն: Արովյանը հարգանքով ու համակրանքով ե խոսում նշանավոր ոսւս բանաստեղծի մասին, վորի համար ևս 30-ական թվականների Դորպատը ոսմանտիկական ներշնչումների մի ազդը ուր եր⁵⁹: Արովյանի, ինչպես նազարյանցի

⁵⁸ «Փորձ», 1880, № 9, յեր. 193:

⁵⁹ Հմմ. Ալ. Վեսելովսկի: «Западное влияние в новой русской литературе», М. 1896, յեր. 153:

համար ևս, Դորպատը մտավոր ջրապառւյտի այն վալրն եր, վորտեղ Sturm und Drang-ի դասականության հետ միաժամանակ նրա վրա ազգում եր գրական ներհակ հոսանքը, ոսմանափզմը։ Անշուշտ դորպատյան հովերի մի վերհուց եր, ի երբ հետազալում Նաղարյանցը Շիլլերի անկումնային տրամադրություններն արտահայտող «Մեսինական հարսի» և «Կասանդրայի» թարգմանության հետ մեկտեղ զետեղում եր «Հյուսվսափալլառում Շատուրիանի «Ծիննեան և «Աթալաան։ Իր գրությունների մեջ Արովյանը ևս տուրք եր տալիս, անշուշտ, ոսմանափիկական ազգեցությանը, ի երբ ծառանալով դասական չափ ու ձեմ դեմ՝ աղատ եր արձակում պարզության և սրտալիության սանձերը, բռնկելով վորպես զգացմունքների անզուսպ մի հրաբուխ։ Ռոմանափիկական գույն և ստանում հաճախ նրա սերը գեղի մարդը, բարեկամը, կինը, հայրենիքը, ժողովուրդը, ազգը, յեկեղեցին։ Ռոմանափիզմի կնիքն են կրում նրա այն եջերը, վորոնց վրա նկատելի յեն հեղինակի լերեակայության հիվանդագին ջղաձգությունները, նրա վերապրած մղձավանջի մռայլ տեսիլները...

Արովյանի ուսանողական տարիներին «Խլրտումներ» կալին համալսարանական ուժիմի դեմ։ Արովյանը միանդամայն հեռու լեր կանգնած այդ շարժումներից, թեկուղ հենց, ասենք, այն պատճառով, վոր ինքը, ըստերևութին, ձեսկանորեն ուսանող չեր զրված համալսարանում կամ անձնապես ուսանողական ընդհատակյա կազմակերպությունները հալածող ուեկտոր Պարբուտի մերձավոր մարդն եր... Ուսանողական «Խլրտումներն» Արովյանի համար ևս լերսի աննպատակ «հատաղություն», անպարկեցած լելույթներ ելին, վորոնք սեղմում ելին միայն համալսարանին ի վերուստ շնորհված «աղատությունները», ինչպես կարծում եր նրա ընկեր Նաղարյանցը⁶⁰. Զի՞ բնորոշում Արովյանի այդ ժամանակվա քաղաքական մտալությունը թեկուղ հենց այն փաստը, վոր 1834 թվին, կամենալով ոռու մամուլի եջերում հողված զրել Ալամդարյանի հիշտատակին, Արովյանը դիմեց «Северная пчела»-ի խմբագիր Բուլզարինին։ Բուլզարինը հիմասթափացը Արովյանին, բայց պերճախոս եր ինքան Արովյանի ձեռնարկած փորձը։

Հարկավ Դորպատում Արովյանն առիթ ունեցավ շփյելունակ այնպիսի մարդկանց հետ, վորոնք ավելի բարերար աղղեցություն կարող ելին ունենալ Արովյանի վրա։ Այսպես, ուսանո-

⁶⁰ «Մուրճ», 1904 թ., № 2, յեր. 100:

զական հիշատակարանում Արովլանն արձանագրում է մաթեմատիկոս Բուրգերի տված խրատը: Մեծաբեկով ամերիկան դեմոկրատիան, Բուրգերն ասել է Արովլանին. «Ամեն մի բարիք ազատությունից եւ առաջանում: Գիտեմ, վոր ուսա պաշտոնյաները բազմաթիվ անկարգություններ են անում ձեր կողմերում: Սրա դեմ չեա այլ հնար, քան՝ արթնացնել ազգի վողին: Յուրաքանչյուր ազգի ինքն եւ պարտավոր զգալ իր բարիքը և առաջ տանել այն: Ձեր ազգը քաջանք ազգ եւ Միայն թե անհրաժեշտ եւ արիցնել նրան՝ հայրենի ազատության համար: Իսկ սրա համար անհրաժեշտ եւ ուսում: Խոսքս բարձրագույն ուսման մասին չե, այլ այնպիսի ուսման, վորով ազգը հնար ստանա ծանոթանալու փոքր ինչ աշխարհի գրությանը: Դրանից հետո մնացածն ինքն իրեն կիրականից⁶¹:

Բայց Բուրգերի նման մարդկանց կողքին և նրանցից վոչ պակաս ազդում ելին նաև ուրիշները, վորոնք ասում ելին Արովլանին, թե ազգին ողնել կարենալու համար «իմ խորհուրդն ե, վոր զուստանաս հեղ հոգի, ըոլորի հետ սիրով վերաբերվես, Քրիստոսի որինակից ողտվես»⁶²:

Այս կարգի խրատներն անհետեանք չելին կարող անցնել Արովլանի համար, մանավանդ վոր «քրիստոնեական» նույն ալդ վոգով եր ազդում Արովլանի վրա այն իսկ մարդը, վոր, անկասկած, ամենից ճակատագրական դերը կատարեց Արովլանի կյանքում: Մեր խոսքը Ֆր. Պարուսի մասին ե:

Խոսելով Արովլանի «շրջադարձի» մասին, ընկ. Ակսելը շեշտում եւ ամենից առաջ նույն ալդ Պարուսի բախտորոշ դերը: Խնդրի առարկա յեղած միջոցում Պարուսն անմիջական ազգեցություն չուներ Արովլանի վրա: Սակայն «Պարուսը — զրում ե Ակսելը — հեռվից» հեռու ազդում եր նրա վրա, հաճախ զեկավարում: «Կարելի յե ասել, — շարունակում ե ընկ. Ակսելը, — վոր մինչեւ անհայտացումը Արովլանը մի վոտքով դեռ Դորպատում եր, այն մտքերի ազդեցության տակ, վոր մի անդամ դրոշմվել եր», ծիշտ ե միանգամայն: Բայց ինչ մտքեր ելին դրանք, ի՞նչ եր Պարուսը և վժը՝ նրա ազգեցությունը:

Նկատենք ամենից առաջ, վոր Պարուսը մեռավ 1841 թ., ալսինքն յերկու յերեք տարի Արովլանի վերապրած «շրջադարձից»

61 Տեր-Կարապետյան, ն. ա., յեր. 112:

62 Ն. ա., յեր. 93:

առաջ, դժվար եռութեմն պատկերացնել Պարրոտի մասնակցությունը իր մահից հետո տեղի ունեցած այդ «շրջադարձի» մեջ, Բալց ըստ ելության՝ իսկ մոտենալով խնդրին՝ Պարրոտն այն անձը չեր, վոր կարող եր «հեղաշրջել» Արովլանի միտքը, անգամ լեթե այդ պարտավորությունից ազատած չլիներ նրան վաղահաս մահը, Կարդացեք նրա «Reise zum Ararat» աշխատությունը, և ձեզ վեռլի կպատկերանա Պարրոտի նկարագիրը: Ըստական տիրապետությունը, Պարրոտի կարծիքով, ապահովել ե վրացիների ու հայերի համար «իերազած խաղաղություն» և «լերջանիկ որեր», վորոնք ձեռք են բերվել ուստական գալիսոնի և տեղական ժողովուրդների անրավ զոհերի գնով: Պարրոտի ցանկությունն եր միտլն, վոր լերկը «ազ իվ ու ի մաստուն իշխանավորները» կարողանան «զգալի դարձնել բոլոր ասպարեզներում իրենց վարչության վոգին, վորպեսզի անխառն, աղբյուրից ի վերուստ հոսող վողորմությունը չանհետանա չարաշահության և տմարդության չոր գետնի վրա»⁶³: Տեսակետ ե այս, վորը, ինչպես տեսնում ենք, լուրացրել եր նաև Արովլանը, և վորն ընտելացրել եր նրան այն մտքին, թե ցարական չինովնիկների «չարաշահության և տմարդության» ամեն մի լեռնուլթ կարող ե վերանալ ցարիզմի «ի վերուստ հոսող վողորմության շնորհիվ միայն»:

Անձնապես Պարրոտն ի լրո չեր դատում ցարական այդ վողորմության մասին: Նրա հալրը, ակագեմիկոս Ֆ. Ֆ. Պարրոտը, վոր անշուշտ մեծ ազդեցություն եր ունեցել վորդու վրա, Ալեքսանդր I ցարի քաղաքական մենտորներից եր և Նիկոլայի ժամանակ իսկ շարունակում եր վայելել կալսերական «շնորհը». Հոր միջոցով ե, ըստ լերենութին, վոր «բարերարը» կապէր եր պահպանում Պետերբուրգի սփերաների հետ: Արարատի վերելքը հովանավորում եր ինքը ցարը: Վերելքից հետո Աննալի շքանշանը զարդարեց պրոֆեսորի կուրծքը, հանգամանք, վոր լերախտագիտության զգացմունքով եր արձանագրում վերջինս⁶⁴, Պարրոտի նման կապէրի շնորհիվ ե, վոր Արովլանը և Նազարյանցը թոշակ ստացան Դորպատում ուսանելու համար: Վոչ մի հիմք չկա, իհարկե, կարծելու, թե Պարրոտը թշնամական տրամադրություններ կարող եր ներարկել արևելցի սաներին նրանց ցարական «մեկենասի» դիմ: Մորից կազները, վորը մոտ շփում ունեցավ Արովլանի հետ վերջինիս Յերկան փոխազդրվելու տարում, բնորոշում ե նրան

⁶³ Fr. Parrot: «Reise zum Ararat», Berlin, 1834, յեր. 32:

⁶⁴ Ն. ա., յեր. 4: Հմմ. նաև Ֆը. Պարրոտը 1832 թ. ուկառը ական «Festrede»-ի:

վորապես մի մարդու, վորը «խոր լեռախտաղիտության և վոգեշունչ անձնվիրության զգացմունքներ և տածում դեպի կայսրը, վորն ընդառաջ եր գնացել նրա բաղձանքին և միջոցներ տվել գերմանական կրթություն ձեռք բերելու, դառնալով ալսպիսով նրա խոշորագույն բարերարը»^{65:}

Պարբուժի քաղաքական հալացքներին համապատասխանում եր ըստ ամենայնի նրա ուսակցիոն-քրիստոնելական աշխարհական ցողությունը, վոր հարկավ վորոշ դեր խաղաց նաև Արովյանի կյանքում: Պարբուժը վերելք կատարեց դեպի Արարատի գագաթը՝ հավատացած լինելով, թե բարձրանում ե «Նորի սրբազն լեռը», «տիեզերապատմական խոշորագույն անցքերի ու մարդկալին ցեղը պահպանելու համար աստծո արած անմիջական տնօրինության» նվիրական վայրը^{66:} Արարամի գագաթին հարգո պրոֆեսորը պրպատումներ եր կատարում նաև այն հարցի շուրջը, թե մուր կարող եր անհետացած լինել ջրհեղեղից հետո Արարատի վրա կանգ առած «տապանը»: Ցեղ գալիս եր, հարկավ, այն լեզրակացության, թե՝ տապանը թաղվել ե ջրհեղեղից հետո կուտակված սառցի հաստ շերտերի տակ^{67:} Դիտնական Պարբուժն այս կետում ավելի սրամիտ չեր, քան ժողովրդական «իմաստուն» այն խոսքը, թե՝ սիրի կրակը Մասսա զլիին դնես, տապանը կերևա: Հետաքրքրական ե, վոր «St.-Petersburger Zeitung»ի 1835 թ. փետրվարի 7-ի համարում Արովյանը կրկնում երՊարբուժի նույն արգումենտը, արդարանալով այն մեղադրանքի դիմաց, թե իրենք անսուրբ վոտներով «աղղծել» են բիբլիական տապանի հանգրվանը... Հետաքըրքրական ե, վոր ավելի ուշ, «սրբազն» նույն այս յերկյուղածությամբ եր վոտք դրել Արարատի գագաթը Արովյանի հետ ճամպորդած մի այլ գերմանացի՝ Արիխը^{68:}

Անհիմն չեր, ուրեմն, լեռը Արովյանը հավաստիացնում եր «Վերք»ում, թե՝ «Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ քնած տեղս ել ինձ ասում ելին, վոր յես իրանց վորդին եմ: Ցեղուսպա թե Ասիա ինձ անդադար ձեն ելին տալիս, թե Հայկա զավակն եմ յես, նոյան թոռը, եջմիածնա վորդին, դրախտի ընակիչը...»: Հայկական լեռնացած նախապաշտառումների դեմ «Ցեղուսպան» առա-

⁶⁵ M. Wagner, ն. ա., յեր. 86:

⁶⁶ Parrot, ն. ա., յեր. 3:

⁶⁷ ն. ա., յեր. 160:

⁶⁸ Wagner-ի «Die Besteigung des Ararat». (Beiträge zur Kenntnis des Russischen Reiches), St.-Petersburg, 1849, XIII, 41 ff.:

ջարկում եր պալքարել նախապաշարումների իսկ միջոցով։ Պարբռոտը համոզված եր, թե նախապաշարումներից ազատվելու համար հարկավոր ե, վոր հայերը «ըաց ու անմիջական հայացք զցեն աստվածային հայտնության պարզ հայելու վրա», քանի վոր նրանք կարիք ունեն «նախախնամության կամքի և մարդկային ցեղի փրկության համար արված աստվածային տնորինության զուտ իմացությանը»։ Հայերը — հայտարարում եր Պարրոտը — անկարող են հասնել ալղակիսի իմացության, յեթե հոգ չտանեն իրենց ռքահանալական դասի վերածնության մասին։ Այս առիթով գերիմաստ պլրոֆեսորն անում եր ուշադրավ խորհրդածություններ, Փոքրինչ յերկար են այդ խորհրդածությունները, բայց չենք կարող թագցնել նրա մտքերը ընթերցողից, քանի վոր նրանք մերձավոր կապ ունեն հենց Արովյանի հետ։ «Մեծ պահանջ կա — զրում եր նա — հիմնել քահանայացուներ պատրաստելու մի ընծայարան, հայրենական, բուն հայկական մի հիմնարկ, վորի սաները, Եջմիածնի սինոդի հաստատումից հետո, կարող լինելին վայելել աղջիկ վստահությունը։ Յեթե նույնիսկ պատմության, աշխարհազրության, տարրական մաթեմատիկայի դասավանդությունը կարելի լինի վորեւ արտասահմանցու տալ վերջինս պետք ե վոր սահմանափակվի գիտական առարկաների դասավանդումով։ Աստվածաբանական կրթությունը պետք ե միանդամայն թողնվի հայերին, քահանայական դասից լինեն զրանք թե վանական, ալդ միննույն ե, և ըստ կարելուն ալնպիսիներին, վորոնք չեն յեղել արտասահմանում կամ գեթ շատ ժամանակ առաջ են յեղել, վորով հնարավոր կլինի խուսափել վերանորոգչության ամեն մի քալից, վորը՝ հարկավ, միշտ արդարացի կասկած ե առաջ բերում ժողովրդի մեջ»⁶⁹։

Հատուկ ուշադրության են արժանի Պարրոտի այս առաջարկությունները։ Նա նախադժում եր ըստ ելության Արովյանի «մուրազը», մատնում նրան Դորպատ ուղևորելու բուն նպատակը, այն ծրագիրը, վորի իրազորդումը նրա վոգորումների առարկան եր և վորի անկատար մնալը՝ նրա տառապանքների աղբյուրը։

Դորպատի «իմացական մկրտության ավաղանը» սուզվելով, Արովյանը նախապատրաստվում եր հատկապես հենց Պարրոտի նախադած ընծայարանը կազմակերպելու համար։ Ընծայարանի միջոցով ե, վոր Արովյանը յենթադրում եր գլուխ բերել ազգալին

զուսավորության իր ծրագիրը Իր կողմից Պարրոտն արեց, համենալին դեպս, ամեն ինչ՝ Արովյանի միտքն ալս կետին սևեռելու համար: 1830 թ. ապրիլի 4-ին Արովյանին ուղղած ալն նամակում, վորով հրավիրում եր նրան Դորպատ, Պարրոտը գրում ե. «Ձեզ հետ բերեք հալոց պատմության, մատենազրության և դաշնության վերաբերյալ մի քանի հայերեն դրաբեր, հատկապես բառարան և ս. զիրք և չթողնեք Ձեր հոգեորբական հազուստը, վոր մեզ հետ Արարատ բարձրանալու արժանացավ»⁷⁰: Պարրոտի մասին ինքը Արովյանն է պրել թե «արդելում ե հաղորդություն ունենալ իրենց կրոնի հետ, հրամալում և պահպանել հայրենի բոլոր որենքները, պասերը; աղոթքները և այլն»⁷¹: Կամ թե՝ «նրա կամքը ամեն ժամանակ են եր, վոր իմ սրտումը կարողանա ազգի, լեկեղեցու և մեր աշխարհի սերը վառել»⁷²: Դորպատի հիշատակարանի մեջ Արովյանն արձանագրել ե անդամ իր «բարերարի» խրոխտ պատղամը. «Այն որը, յերբ Դուք կուրանաք ձեր հավատքն և որենքները, նույն այդ որը խզված կլինի նաև Ձեր և իմ կապը, այդ որվանից չեմ կամենա այլևս տեսնել Ձեզ»⁷³: Նույն այդ «բարերարն» եր հենց, վոր «հեռվից-հեռու» իսկ պատվիրում եր Արովյանին պատսպարվել դարձալ լեկեղեցու փեշի տակ: Յեվ լեթե «բարերարվողը» դրժեց նրա պատվերը — կողմերի վոչ մեկի, վոչ մյուսի հանցանքը չեր այդ — «հանցանքը» Հովհաննես Կարբեցունն եր, վորը դուրս քշելով վանքից Արովյանին, իը կամքից անկախ, ճշմարդար բարերար հանդիսացավ նրան՝ լուսավորական նրա ջանքերն աւխարհիկ հունի մեջ դնելու խնդրում...

Ավելի արգասավոր չեր կարող լինել մի ալլ գերմանացու՝ բարոն ֆոն Հայստհաուլցենի աղդեցությունը: Պրուսական այս յունկերը, վորը, վերջերս հայտնագործված, տակավին չհրապարակված թղթերից դատելով, Ռուսաստանում գաղտնի հանձնարարություն եր կատարում պրուսական կառավարության համար, իսկ Անդրկովկասում ճանապարհորդում — ինչպիս, ի դեպ, նաև Արովյանի հետ շփված բոլոր մյուս գերմանացի ճանապարհորդները — յերկրի կառավարության բարձր հոգանավորության ներքո — այն մարդը չեր դարձյալ, վոր վորևս չափով կարող եր նպաստել Արովյանի «շրջադարձին», նկատենք վոր Յեվրոպակի իսկ փրկությունը պատվարժան

⁷⁰ Յե. Թոփյան. «Լույս» որացույց, 1905 թ., Թիֆլիս, 1904, յեր. 386:

⁷¹ «Հանդես ամսորյա», 1929, յեր. 404:

⁷² «Կոունկ», 1861, յեր. 537:

⁷³ Ն. Տեր-Կարապետյան, ն. ա., յեր. 107:

բարոնը հեղափոխության մեջ չեր փնտռում, այլ Արևելքի և հատկապես Ռուսաստանի ավանդական «ռուսությունների մեջ, Հայտնի լեն նրա հայացքները ռուսական համայնքի մասին և զաղափարական նրա ազգակցությունը ռուս սլավոնոֆիլների հետ; Նրա «Transkaukasia»ն անվերապահ մի ջատագովանք և ռուսների նվաճողական քաղաքականություն և հատկապես կովկասի ու Առաջավոր Ասիայի վերաբերմամբ⁷⁴; Նրա կարծիքով ցարիզմն եր էնց, վոր «Փրկեց» Անդրկովկասի ժողովուրդներին, «Յերկիրն ընդհանրապես վայելում ե հանգստություն ու խաղաղություն և սկսում ե ծաղկել», գրում ե նաև ծիցիանովը և Պասկեվիչը, Նրա կարծիքով, «հանգստության և կարգի «արդարացիորեն մեծարվող գործիքներ լեզան» Անդրկովկասի համար; Հայ ժողովուրդը և հայ լեկեղեցին «իրապես և արժանապես շնորհապարտ են Ռուսաստանին — զրում ե Հաքստհառուղենը — անհանդուրժելի և նվաճացիչ ստրկությունից ազատվելու համար⁷⁵; Հայտարարություններ են սրանք, վորոնք ընդառաջում ելին, ըստ ամենալինի «Վերք»ի գաղափարախոսությանը; Հաքստհառուղենը վեր եր հանում մասնավորապես «Պոլոսինիեցի» «ըրբերեր» ազգեցությունը, վորով իր թե վերջ դրվեց լեկեղեցու ներսում Խոլամի տիրապետության ժամանակներից ի վեր տիրող կամայականություններին⁷⁶; Նա շեշտում եր հատկապես սենատոր Գանի առաջարկած վարչական սեփորմների դրական նշանակությունը, վորոնք, ինչպես պատմում ե, «մուծվեցին ամբողջ ժողովրդի խանդավառ քայլական չությունների ներքո»⁷⁷; Հաքստհառուղենը շոշափեց նաև ռուսական հարստանարությունների խնդիրը, Ակնրախ ու բացահայտ հարստահարությունների քովից չեր կարելի անցնել, իհարկե, Բայց վարեն եր Հաքստհառուղենի ընդհանուր լեզրակացությունը; Պարսկական ժամանակակից միլիոնների 1/2—1 միլիոն ռուբլի տուրքի փոխարքին՝ Յերեսանի-

⁷⁴ Հմմ. Haxtheusen, ն. տ., Ա, յեր. 121 և հետո.

⁷⁵ Ն. տ., առաջարան և Ա, յեր. 67, 220, 275 և 294; Ընկ. Ակնելը, վոր ուղղվել ե դրբի կրծատված և աղճատված թարգմանությունից, իր աշխատության 43-րդ յերեսում չակերտների մեջ առնելով հաղորդում և մեղ հաքստհառուղենի ընդհանուր յեզրակացությունը. «Պարսից ժամանակների համեմատությամբ այժմ ավելի յե ճնշված ժողովուրդը»: Թող ներվի մեղ հարցնել՝ վերտնդից և քաղել ընկե. Ակնելս այդ տողերը... նման մի միտք տարուրինակ կլէնիր հաքստհառուղենի բնագրում և կատարյալ այուրպիլոց ցենզորի միքատած թարգմանության մեջ...

⁷⁶ Ն. տ., յեր. 275 և հետո.

⁷⁷ Ն. տ., Ա, 68:

խանության սահմաններում ռուսները 142 հազար ռուբլի տուրք են վերցնում միայն և միջոցներ ձեռք առնում տնտեսական հարստահարությունների դեմ⁷⁸, Այստեղ կարող ենք կրկնել, ի՞արկե, Մարքսի մի դիտողությունը. «հարգու ռեգիրունգսրաա Հաքստհառւդենին հիմարացրել են չինովնիկները և չինովնիկների դաստիարակած դլուղացիները»⁷⁹, Հաքստհառւդենի նշան սահմաններում ռուսները հենց միայն հողալին տուրք ելին վերցնում. այսպես՝ 1836 թվի համար ոմիայն հողալին արտադրանքի դիմաց՝ կառավարությունը հաշվում եր 148 հազար ռուբլի տուրք⁸⁰. Ըստ չինովնիկների քանի մի արարմունքների առիթով տրտնչացող լունկերը սահում եր հարկավ նման փաստերի կողքով:

Ի վերջո հետաքրքրական ե, վոր Հաքստհառւդենը ևս առաջարկում եր հայերի լուսավորության համար մի ծրագիր, վոր ըստ ամենայնի Պարուսի ծրագիրն եր հիշեցնում: Նրա կարծիքով անհրաժեշտ ե, վոր Ռուսաստանը հնարավորություն տա հայերին կազմակերպելու իրենց ազգային լուսավորության գործը: «Ամենից առաջ հարկավոր ե նրանց հոգեորականների կրթություն, բարութական, կրոնական, աստվածաբանական կրթություն. այդ կրթության հետ ձեռք ձեռքի տված պետք ե առաջ ընթանա աշխարհիկ գիտությունը, ինչպես դրան ձգտում եր առաջներում Մխիթարը, իսկ ներկայիս՝ ներսեսը: Հարկավոր ե հայ լերիտասարդներին 10—12 տարեկան հասակում ուղարկել գերմանական դպրոցները, որինակ, սաքսոնական ուսումնարանները, փակ դպրոցները և ալին, թողնել, վոր նրանք Գերմանիայում, այնտեղի համալսարաններում, 10—12 տարի հիմնավոր գիտություն ձեռք բերեն, և ապա՝ ուսուցիչ կարգել նրանց սեմինարիաններում և հիմնելիք գիմնազիոններում: Ըստ սաստանը կարող ե ընդ սմին վարվել հոչակավոր laisser faire! սկզբունքի համեմատ, մանավանդ վոր հայերը պիտությունից չեն պահանջում վորեմ ոժանդակություն, այլ ամեն ինչի մասին հոգ ե տանելու կաթողիկոսը, վորը կարող ե տնօրինել վողջ ժողովրդի ընթացքը»⁸¹: Դժվար չե գուշակել, վոր լեթե Պարուսի լուսավորական ծրագիրն անմիջապես անդրադարձավ Արո-

⁷⁸ Հմմ. ն. տ., յեր. 67 և 220:

⁷⁹ К. Маркс и Ф. Энгельс: «Сочинения», т. XXII, յեր. 362:

⁸⁰ «Акты Кавк. Археогр. Комиссии», VIII, յեր. 517: Հմմ. ն. ակ. M. Wagner, ն. տ., յեր. 80. Վաղները ուսուական դանձաբանի՝ Հայաստանում հավաքած թեկամուտը կես միլիոնից ավել ե հաշվում:

⁸¹ Ն. տ., յեր. 292 և հետա.

վյանի հայացքներին, ապա Հաքստհառուղենի խորհրդածությունն ներն անդրադարձնում ելին անմիջորեն հենց իրա՛ Արովլանի ազդեցությունը: Ըստ յերեսութիւն Արովլանի վրա ազդելու փոխարեն Հաքստհառուղենն ե, վոր հայերին վերաբերող հարցիրում ազդվում եր նրանից: Հաքստհառուղենը հայտարարում և առհասարակ, վոր իր «բարեկամ» Արովլանից ստացել ե վոչ միայն հայերի մասին հաղորդած տեղեկությունները, այլև զրանց մասին հալտնած սեփական իր հայացքները, «վորոնք մասամբ նույնպես նրանից ե, վոր փոխազդրվել են նյութին»⁸²:

Դառնանք Արովլանի մի յերրորդ «բարեկամին»՝ Թր. Բողնշտեղտին: Վորպես «բանաստեղծական» խառնվածքի մարդ, վերջինս գուցե ավելի յեր հարազատացել Արովլանին, քան բարոն ֆոն Հաքստհառուղենը: Հայացքներով ևս տարբերվում եր նա վերջինից: 1848 թ. լույս տեսած իր «Die Völker des Kaukasus» աշխատության մեջ նա բազմաթիվ ուղիղ դիտողություններ եր անում Խուսաստանի կովկասյան քաղաքականության մասին, շեշտելով միաժամանակ ցարիզմի վտանգն Արևմուտքի համար: Սակայն ոժվար ե հավատալ, թե ոռուսական սալոններում յերես առած յերիտասարդ Բողնշտեղտն անձնապես այն մարդն եր հենց, վոր կարող եր նպաստել Արովլանի «շրջադարձին», Զմոռանանք, վոր ոեակցիոն բուրժուազիային սպասարկող այդ վերսիֆիկատորը — հետագալում Բիսմարկի անձնվեր յերկրպագուներից մեկը միաժամանակ մեկն եր այն «որիենտալիստներից», վորոնք խուսափելով քաղաքական փոթորիկներից՝ քնարերգում ելին կլանքը վորպես սիրո և զվարճության հանդիս և հոգնած 1848 թվի վերիվարություններից և «ժամանակակից քաղաքականության» անուրախ իրադարձություններից⁸³, հանգիստ ու վայելք փնտռում Արևելքի «իմաստության» մեջ:

Ավելի ուշազրագ գեմք ե Մ. Վագները, վոր և անհամեմատ ավելի սուլք աշքով դիտեց Անդրկովկասի քաղաքական դրությունը, քան հիշատակված ճանապարհորդները: Հերթական և կռահումներից կարգով ընկ. Ակսելը շեշտում ե առանձնապես Վագների ազգեցությունը Արովլանի վրա: «Վագները — գրում ե ընկ. Ակսելը — Պարբուծից հետո յերկրորդ գերմանացին ե Արովլանի վրա թողած իր ազդեցությամբ»: Անհայտ ե մեղ այս պնդումի հիմքը: Սակայն

⁸² Ն. ա., I, յեր. 180:

⁸³ Fr. Bodenstädt: «Tausend und ein Tag im Orient», Berlin, 1850, Bd. I, Prolog, p. XV.

Էլիշա իսկ լինի ալն՝ դրանից հաղիվ թե շատ բան շահել կարողանաւ ընկ. Ակսելի տեսությունը:

Ճիշտ ե, վոր Մ. Վաճաները գուշներ չեր խնալում ցարական ռեժիմի հոռի հատկությունները վեր հանելու համար: Նրա ճանապարհորդագրությունը լսելի լե դարձնում վոստիկանության լախար տակ կքած զյուղի թանչոցը: Սակայն Վաճաները ևս հեղափոխականի աչքով չեր դիտում ուուսական կարգերը:

Զինովիկների վատթար արարքների համար նա պատասխանատու չեր համարում ցարական ռեժիմն ընդհանրապես և Պետերբուրգի կամ Թիֆլիսի վարչությունը մասնավորապես: Ամենից քիչ մեղավոր ե ինքը ցարը, վորը, ինչպես հավատացնում եր Վագները, միջոցներ ե ձեռք առնում վերջ դնելու չինովնիկների շահատակություններին: Նկարագրելով թյուրքահար գաղթականների ծանր վիճակը, ուուս ստորին պաշտոնյաների տմարդի վերաբերմունքը դեպի գաղթականությունը, Վաճաները շեշտում ե, վոր նման վերաբերմունքը հակառակ ե կառավարության կամքին ու ցանկությանը⁸⁴: Վաճաները ևս վեր եր հանում Գանի մտցրած ռեփորտների ըրաբերար ազգեցությունը, գտնում եր, վոր Կովկասի քաղաքացիական վարչության պետ Նալդհարդի և նրա հաջորդի՝ փոխարքա Վարանցովի որով Յերեանի նահանգն շապաքինվում եա նախորդների հասցրած «վերքերից»⁸⁵: Հանգամանք, վոր, ի դեպ և ասել, համապատասխանում ե Հաքստհառեցնի վկայությանը և մի ավելորդ անգամ կասկածի տակ դնում ընկ. Ակսելի՝ Հալկահան Մարզին վերագրած նշանակությունը:

Վաճաները մեծ արժեք եր տալիս նաև յեկեղեցու կատարելիք դերին: Նա վաս կարծիք չուներ, ըստ յերեսութին, «Պոլոֆենիե»ի մասին: «Սինոդը և կաթողիկոսը, վորոնք պարսկական ճնշումների ժամանակ ծայր աստիճան կորցրել ելին իրենց ազգեցությունը, կարող են հիմա, ուուսական գալիսոնի առահօվ պաշտպանության տակ, ձեռնարկել վստահորեն հայ յեկեղեղու և ազգի վերակազմության գործին»⁸⁶: Սա, ինչպես տեսնում եք, նույնպես մի կարծիք ե, վոր մատնում ե Աբովյանի ազգեցությունը Վաճաների վրա: Տիրող ռեժիմի շրջանակներում պակաս սպասելիքներ չուներ Վաճաներն անձնապես իրենից՝ Աբովյանից: Յերկրի ընդհանուր վիճակի բարվոքման տեսակետից Վաճաները մեծ տեղ ե հատկաց-

⁸⁴ Wagner ն. ա., յեր. 219:

⁸⁵ Ն. ա., յեր. 82:

⁸⁶ Ն. ա., յեր. 128:

նում գավառական դպրոցների դործունելությանը, վորոնց մասին, ինչպես հավատացնում եր, առանձնապես հոգ եր տանում կովկասիքաղաքացիական վարչության պետ Նայդարդը և նրան հաջորդության վարանցովը։ Այդ դպրոցներն ե, վոր պետք ե հնարավորություն տան չինովխիկների կազրեր ստեղծելու և դաշտիներից, սահման գնելով լեկվորների վասարեր դործողություններին։ Այս կապակցությամբ Վագները վողջունում է Յերևանի գավառական դպրոցում Արովյանին տեսուչ նշանակելու կարգադրությունը։ Հանգամ իր ներկա բավականաչափ սահմանափակ հանգամանքներում գերմանական վոգու այս աղնիվ բուկու չպիտի զլանա լավ հույսերով և գեղեցիկ արդյունքներով բարի սերմեր ցանել իր հայրենի քաղաքի խնամաղուրկ լերեխանների մեջ։⁸⁷

Ճանապարհորդների հայացքները, ինչպես տեսնում ենք, զարմանալի կերպով զուգադիպում են Արովյանի հենց այն հայացքներին, վորոնց մեջ անդրադառնում ելին վոչ թե նրա աշխարհակացության պրոդրեսիվ-դեմոկրատական տարրերը, այլ ընդհակառակը, հայտնվում այդ աշխարհայեցողության ռեակցիոն կամ կոնսերվատիվ աքիլեսյան դարշապարը։ Հանգամանք, վոր զըրկում ե ընկ. Ակսելի «շրջադարձի» թեորիան նրա կարևոր մի հենակետից և՝ լեվոպական ազդեցությունների վերաբերմամբ արված յենթադրություններից։

ԼԵԳԵՆԴ

Ալստեղ մոտենում ենք ընկ. Ակսելի կատարած հետախուզությունների վերջին ողակին՝ Աբովյանի «Փախուստի» վերսիային:

Փախուստի միտքը, լենթաղբում ե ընկ. Ակսելը, զբաղեցնում եր Աբովյանին միքանի տարուց ի վեր, Կամենալով դուրս գալ իրեն համար ստեղծված ծանր դրությունից, Աբովյանը իրը Ռուսաստանից դուքս եր վորոնում ևնոր տուն և նոր հայերենիք։ իրը Աբովյանը գրած ե լեզել Բոդենշանդտին, թե «վճռել ե թողնել ուս պիտական ծառայությունը, Հայաստանի ներքին մասը գնալ և այնտեղ իր պապերի հետ լերկրագործությամբ պարապել»։ «Հայաստանի ներքին մաս ասելով — բացատրում ե ընկ. Ակսելը — Աբովյանը հասկանում եր Ռոմանլուի Հայաստանը, վորովհետև ուսւական Հայաստանի վերաբերմամբ այդ անունն արդին չեր հոլովվում։ Այս դիմադրածը գեպի Ռոմանլուն—հարում ե ընկ. Ակսելը — «Խուզ արձագանդ եր այն մտքերի, վորոնք ուսւական որինատացիալից լերես դարձնողների և գեպի Տաճկաստան նալողների գլխում զգուշ դառնում ելին»։ Սահմանն անցնելու այս միտքն Աբովյանը փորձեց իրը թե իրագործել, լերը անտանելի լեր դարձել նրա դրությունը և հենց վոր, ըստ լերեսութին, վրա հասավ 1848 թ. հեղափոխության «անակնկալ լուրը»։ «Առաջադրելով Աբովյանի անհայտացման այս վերսիան, — նկատում ե ընկ. Ակսելը, — մենք հարկ ենք համարում հայտնել, վոր այդ անհրաժեշտաբար վոչ մի կառ չունի հեղափոխությանը մասնակցած վորեն կազմակերպության աշխարհայացքի հետևորդ լինելու հետ, — այսինքն հեղափոխության լուրը միայն առիթ եր, արտաքին հարված, վոր նրան տեղից շարժեց այնպիսի նպատակով, վոր անմիջական վոչ մի կառ չուներ 1848 թվի հեղափոխության հետ»։ Այս վերապահումը վկայում ե, հարկավ, ընկ. Ակսելի զգուշության մասին, Բայց դովելի այդ զգուշությունն իսկ չի կարող հերքել այն փաստը, վոր ինչպես 1848 թվի հեղափոխության «անակնկալը», նույնպես Աբովյանի փախուստի վերսիան առհասարակ, բարի ցանկու-

թյունների զավակ և լոկ, վոր մաքի ծնող և դարձել ընկ. Ակսելի հյուսած լեզենդի մեջ:

Նկատենք ամենից տռաջ, վոր Շնոր տռւն և նոր հայրենիքը փնտուելով, Արովլանը, ինչպես յերեսում և գեռ Նազարյանցին ու Ֆրենին գրած նամակներից, զրեթե շարունակ նկատի ուներ Ռուսաստանի համալսարանական կենարունները, մասնավորապես Պետերբուրգին ու Կազանը: Անգամ 1845 թվին Ներսեսին գրած նամակում, ակնարկելով Կովկասից հեռանալու այդ դիտավորության մասին, նա վորպես Շնոր տռւն ու նոր հայրենիք՝ նշում եր վոչ միայն Գերմանիան, այլև Ռուսաստանը: Գալով Արովլանի՝ «Հայաստանի ներսի մասում» լերկրագործության նվիրվելու ցանկությանը, այսուեղ ևս պարզ և նրա միտքը. ասելն այն եր, թե մտադիր ե փոխադրվել հայկական ընաշխարհ՝ իր պապերի պես յերկրագործության յեկամուտով ապահովելու ապրուստը: Բողենշտեգտի՝ «Լումա» հանգեսում տաղված թարգմանության համապատասխան առղերը չակերտների մեջ առնելով հանդերձ, ընկ. Ակսելը մեջ և բերում փոփոխված խմբագրությամբ. այդտեղ ուղղակի ասված ե, թե Արովլանը մատիր և «Հայաստանի ներքին մասը գնալ և այնտեղ իր պապերի պես լերկրագործությամբ ապրել»⁸⁸, վոր և համապատասխանում ե գերմաններն ընազրին, «dass er entschlossen sei, den russischen Staatsdienst zu verlassen, um sich in das Innere von Armenien zurückzuziehen und dort nach der Weise seiner Vorfahren von Ackerbau zu leben»⁸⁹:

Բոլոր պարագաներում անհիմն ենք համարում այն պնդումը, թե «Հայաստանի ներքին մասի» տակ պետք ե հասկանալ Թյուրքաց Հայաստանը, քանի վոր իբր այդ ժամանակ, — այսինքն Հայկական Մարզը վերանալուց հետո, — Ռուսական Հայաստանի վերաբերմամբ Հայաստան տերմինը չեր հոլովվում ալլաւ: Նկատենք, վոր Հայկական Մարզը վերանալուց հետո իսկ Թյուրքաց Հայաստանի վերաբերմամբ Արովլանը դործ եր ածում միշտ Թրդստան տերմինը և ընդհակառակը՝ Հայաստան տակը, իր ժամանակի համար, հասկանում Մարզի սահմանները: Այսպես՝ «Վերքացում, առակների մեջ, շատ ուշ գրի առած „Կյորձы“ հողվածաշարում և այնու լնկ. Ակսելը բերում ե միքանի տող «Ովսանալից», վորտեղ ասված ե, թե հերոսուհին՝ Ովսանան «միտք արեց, վոր

⁸⁸ Տես՝ «Լումա», 1902, № 4, յեր. 195:

⁸⁹ Bodenstädt: «Tausend und ein Tag im Orient», II, 161.

Հայաստան անապատներ, վանքեր չատ կան, կերթա նրանց մեկի միջումը իր դառն որը կսքա» և այլն, Ընկ. Ակսելի ուշադրությունից վրիպել ե, վոր նույն ալդ եջի վրա, նկարագրելով Ովսանալի ուղևորությունը դեպի «Հայաստանի որհնլալ հողը», Աբովյանը բերում հասցնում և նրան ուղղակի Յերեվան:

Պաշտոնը թողնելու և հայկական բնաշխարհում յերկրագործությամբ ապրելու մտայնությունը ինքան կապ չունի հետագայում ծալը առած «թյուրքական որիենտացիալի» հետո Արովյանից մոտ 10—12 տարի առաջ եր դեռ, վոր նյութական անապահովությունից նեղված մի այլ ուսուցիչ՝ Մ. Թաղիադյանը, խնդիր տվեց Եջմիածնի վանքին՝ յերեք-չորս որավար հող տալ իրեն՝ յերկրագործությամբ հոգալու իր ապրուստը: Թաղիադյանը, հասկանալի էր, Ռամանլիի յերկրում չե, վոր ապահովություն եր փնտում, այլ հենց «Հայաստանի ներսին մասում» — Եջմիածնի կալվածքներում⁹⁰: Հետագայում գպրոցական աշխատանքից հեռացված կովկասահայ մի այլ մտավորական՝ Պ. Շանջյանը նույնութեա դիմեց յերկրագործության — իր կալվածների շահագործմանը: Բայց դարձալ՝ Շանջյանի կալվածները Թյուրքիայում չելին, այլ Անդրկովկասում — Թիֆլիսի մոտ: Աբովյանը ևս յերկրագործության անցնելու հեռանկարը նյութական անապահովության հետ եր կապում: Հեռու քաղաքական մոտիվներից՝ Աբովյանը հայտնում եր Բողենշտեղտին պարզապես միայն այն, վոր «յուր չնչին յեկամուտը չի բավարարում քաղաքալին կյանքի պահանջներին, իսկ մնալ ծառայության մեջ և սպասել յուր վիճակի վորսե կերպ բարվոքման, այդ նրան ավելի խոր թշվառության կմատներ»: Նույն այս ժամանակ ե հենց, վոր, յեթե հավատանք քանաքեռցիների պատմություններին, Աբովյանը գովում եր գլուղցու աշխատանքը, ոգլուղական կյանքը գովելի կյանք ե, դա սուբք գործ ե, չարեւք ե ձեռքից տալ: Մենք թեև ուսումնական ենք, բայց կզաժամանակ, վոր կզրկվենք մեր վարած պաշտոններից և չենք կարող հող մշակել վոր միակ միջոցն ե կյանքի համար... Մենակ մեր զոնաղների համար հարլուր ուրելի լինք մսխում, վոչինչ լաղաթ չենք տեսնում, իսկ դուք ձեր ունեցածով շատ պարզ ե ուրախ եք անցկացնում քաղաքացիներին նախանձի ձգելով» և այլն⁹¹: Քանաքեռցիների հա-

⁹⁰ Տես՝ Սեղբակյան, «Հովհաննես յեղ. Շահիաթունյանի կենսագրությունը», յեր, 243:

⁹¹ Ն. Տեղ-Կարապետյան, ն. ա., յեր, 211,

զորդած ալս խոսքերը զարմանալի կերպով զուզադիպում են թուղենշտեղտի գրածին։ Անհավանական չենք դանում, վոր հայտնելով Բողենշտեղտին հայկական բնաշխարհը փոխադրվելու մտադրության մասին։ Արովլանը նկատի լիր ունեցել պարզապես Քանաքեռ փոխադրվելու միտքը։ Դյուզացիների հաղորդած տեղեկություններից լիրնեռմ ե, վոր նույն ալս ժամանակ Արովլանը, հենված ուռւ կազակների ուժին, ծեծկուսոցով, կրվովդավով քշել եր Քանաքեռին պատկանող Մուրադ-թափի շուրջ 5000 դեսլատին հողերից Զոբան-Թյարա կոչված թուրք գաղթականներին։ Ոլս հողերի հետ քանաքեռցիները, մինչ վերջերս խակ, կապում ելին Արովլանի անունը⁹²։ Շատ հավանական ե, վոր չորան-քայարացիներին խովելուց հետո Արովլանը պահ մի մտածած լիներ ալս հողերի վրա իրեն ապրուստ հայթալթելու մասին։ Անհարին չենաև, վոր 40-ական թվականների կեսերին կամ 1846 թ. հրատարակված ուկազից հետո Արովլաններին ևս զրադիցրած լինի իրենց պապերի հողալին Շիրավունքները վերականգնելու հոդաը։ Նույն այս ժամանակ Ներսեսին գրած նամակում «Արովի թուր» հետամուտ եր, համենայն դեպս, պապական ոչախի հոգինոր տպարձառությունը վերականգնելու գաղափարին։ լավ կլիներ, յեթե ալս կետը պարզելու համար, տպագրված տեքստերը քամհաճորեն մեկնաբանելու փոխարեն, վորոնումներ կատարվելին Յերևանի Գետարխիվում պահված՝ բեղական կոմիսիալին կամ Քանաքեռի հողալին հարաբերություններին վերաբերող գործերում։ Գուցե նոր հայտաբերվելիք վավերազրերն ավելի պայծառ լուս գցելին Արովլանների անցյալի վրա և մասնավորապես պարզաբանելին Բողենշտեղտի գրած տողերի կոնկրետ իմաստը։

Քանք հիմա 1848 թվի հեղափոխության խնդրին։

Փորձելով վորեն կապ գտնել Արովլանի և Յեվրոպայում բռնկած հեղափոխական անցքերի հետ, ընկ, Ակսելը տուրք ե տալիս այն կոնցեպցիալին, վոր Ներկայացնում ե կովկասահայ լուսավորիչների սկսած շարժումը վորպես միասնական մի շարժում, վորի գաղափարախոսները, վորպես մի սերնդի ներկայացնուցիչներ, տարված ելին իր թե առաջավոր միկնուցն ձգտումներով և այլն։

Հարևանցի խակ հայացք նետելով վերանորոգիչների առաջին

⁹² Ն. ա., յեր. 212 և հետ., նաև լեռ. «Զանքվի ափերից», «Հորիզոն», 1910, № 279:

այն սերունդի վրա, վորի ավագ ներկալացուցիչը Արովյանն եր հենց, դժվար չե համոզվել վոր գործիչների այդ շրջանը վոչ միան ուսանողական տարիներում, այլև հետագայում ավելի քան վերապահ դիրք ուներ դեպի Յելուպալում արծարծվող հեղափոխական անցքերը։ Հիշենք թեկուղ Նազարյանցի՝ «Հյուսիսափալլում հայտարկերած բացասական դիրքը Ֆրանսական մեծ հեղափոխության հանդեպ կոմ Ռ. Պատկանյանի՝ «Հյուսիսառում ձևակերպած վերաբերմունքը դեպի 1863 թ. Անհաստանի ապստամբությունը։ Հայտնի լի մանավանդ Նազարյանցի ժխտական դիրքը դեպի հայերի մասնակցությունը ուռու հեղափոխական շարժման մեջ։ Հիմք կա լին թաղրելու, թե Արովյանն այս կետում կարող եր տարակարծիք լինել նրան։ Հիմք կա կարծելու, թե 1841 թվին Պասկեվիչին «Պոլշու աստված» համարող հեղինակը փոխեց հիմնիվեր իր վերաբերմունքը դեպի լեվոպական անցքերը։

Ընկ. Ակսելը տրամադիր ե թերես կարծելու, վոր դիմադարձ լինելով դեպի Թուրքիա կամ Պարսկաստան, կովկասահալ վերանորոգիչների հետ պայքարող պահպանողականները բարյացակամ դիրք ելին դրավում դեպի Ռուսաստանի դեմ ուղղված հեղափոխական շարժումները... Բայց ալդպես եր արդգոք։ Գժտվելով ցարիզմի հետ՝ պահպանողականները դիմադարձ ելին լինում վոչ թե դեպի հեղափոխությունը, այլ ապավինում Անդվիչի կամ Ֆրանսիայի թեարկության կամ հանդում պարզապես իին, նախառուսական, ուժիւմի ռեստավրացիայի գաղափարին։ Կարծես պահպանողական այս տիպարի մասին ե դրվել թե՝

Նա սողալ դիտե Առյուծի դրան,
Անդրելով ճնշող կնուտից ապավեն,
Արծաթով գնել գողակից իշխան,
Կաշառող կուրծքին ձգել ժապավեն։
(«Անոնի վիշտը»)

Պահպանողականների հականեղափոխական մտալնությունը բնորչելու համար կարելի յե որինակ բերել 60-ական թվականների նրանց լերիտասարդ գործիչներից մեկին՝ Մուրադյանին (հետագայում լիկերդիցական), վորը համոզված եր, թե Խոտալիան ստացավ իր ազատությունը Շենքի մնալով մոլորություններից ու թուլություններից, փախչելով անդունդ գլորող հանկարծահաս պատրիչ ապստամբություններից և հայտարիմ ժառանգորդ մնալով կոմս

Կավուրի յերկու ամենամեծ ավանդին — Ֆրանսիայի դաշնակցությանը և անկախ ազատությանը՝⁹³

Մուրագյանի հայացքներն անդրադարձնում ելին իր ուսուցչի՝ Շանշյանի ազդեցությունը։ Պահպանողականների ամենից հեղինակավոր այդ զեկավարը, Պ. Շանշյանը, վոր, ի դեպ, 1848 թ. փետրվարին Պարիզում մասնակցել եր հեղափոխական շարժմանը և ականատես լեզել դեպքերին, պրոլետարիատի հունիսյան ապրատամբությունից, նրա սոցիալիստական մարտակոչներից սարսափահար՝ ստանձնեց հետագալում հասարակական հաշտության, «սիրուկ» և «խաղաղության» առաքյալի խոհեմ պաշտոնը։ «Հեռանալ ամեն չարագրգիռ պատահմունքներեւ և ամեն բանե, ինչ վոր կարող ե թրկի խաղաղությունը վրդովիւ իսկ ընդհակառակը՝ աշխատիւ վոր բարենորոգումն ամեն բանի մեջ մինի խաղաղ ու որինավոր ճանապարհով» — այս եր կովկասահայ պահպանողական հոսանքի խոշորագույն այդ գաղափարախոսի ամենորյա քարոզը՝⁹⁴ Նա ապարդյուն եր համարում նույնիսկ հայերին ուղղվելիք «չարագըրգգիռ բոլոր տեսակի հորդորները՝ համոզված լինելով, թե հայերը զուրկ են ոռւսական չարիքը հեղափոխական ճանապարհով հաղթահարելու կարողությունից։ Հերքելով հետագալում անհեթեթ այն մեղադրանքը, թե ինքն ապստամբել ե դրդում հայերին, Շանշյանը հայտնում եր, թե «հայերը, դժբախտաբար, անընդունակ են ապստամբելու»⁹⁵ ... Հատկապես յեկեղեցական ռեֆորմներին դալով՝ Շանշյանը նկատի առնելով հայերի քաղաքական կացությունը՝ մատնանշում եր, թե «ամենայն փոփոխություն կուրստական հետեւանք ունի և տանում ե ազգն ոեպի կործանումն։ Վասն զի ամենեն աննշան փոփոխությունն իսկ դառնում է ծանրակշիռ լուր հետեւանքներով»⁹⁶։

Անդամ ոռւսական որինենտացիայի ախտիսի մի հակառակորդ, վորպիսին արևմտահայ գաղութային բուրժուազիայի իդեոլոգ Ստ. Վուկանն եր, մեկը, վոր ուսանողական կազմակերպության դրոշը ձեռքին, 1848 թվի փետրվարին առաջինը խուժեց Տյուիլի, Պարիզի բանվորական ապստամբությունից ահարեկ՝ գրում եր. «Հայկա ճշմարիտ թոռ մը աղատության սերը վատությամբ ի գործ չդներ... Վոչ Քավանյաքի և վոչ ապստամբներու կողմ բռնելու կամ ք.

⁹³ «Կոստնկ», 1861, № 7, յեր. 566:

⁹⁴ Պ. Շանշյան. «Ուսումն պարտուց», յեր. 132:

⁹⁵ Յե. Դեղամյան. «Պետրոս Շանշյան», «Գործ», 1917, № 2, յեր. 70:

⁹⁶ «Լումա», 1898, Ա., յեր. 40:

ունինք։ Ավելի անկեղծորեն ըսենք, լեթե հարկ ըլլար այս լերկու կողմեն մեկ ընտրել՝ Քավանլաքի քան թե ապստամբներու դրոշին ներքո դիմելու միտում կզգալինք»⁹⁷, Հետաքրքրական ե, վոր վոսկանի կարծիքով Արովլանը ևս ընթացավ «Հայկա ճշմարիտ թոռանը վայելք ճանապարհով։ Հիմք ունենալով ըստ լերկութին Արովլանին ճանաչող աշակերտների հավաստիացումները, Ստ. Վոսկանը վստահ եր նրա լուալ վերաբերմունքին, «ալ. Արովլանը — դրում ե նա — վորչափ և վառվոռն լերևակալալություն և մեծ հարցնասիրություն ունենար, իր պարտքը չեր մոռնար ու դիտեր իր ինուանդը զսպել»։

Ընկ. Ակսելին հալտնի լե Վոսկանի այս կարծիքը։ Սակայն զամբյուղ նետելով վերանորողիչների սառը դատումները՝ նա ավելի խելացի լե համարել լուծել «անհայտ բացակալումի» դադտնիքը՝ ականջ կախելով դեպքին ժամանակակից «ժողովրդի» զրուցներին։ Նա հրատարակել ե Արովլանի անհետացման հետ կապված լերկու նամակ, վորոնց մեջ արձանագրված են դեպքից անմիջապես հետո ծայր առած ժողովրդական արդ զրուցների միքանի վարիանտները։ Այսպես, ուշագրավ ե նամակներից մեկում հանդիպող մի պատմություն այն մասին, թե անհետանալուց հետո Արովլանին տեսել են Ակոռի՝ մեկ քարի վրա նստած լաց լինելիս. զբուղացիները հաց են առաջարկել — չի վերցըել. մի այլ վարիանտով՝ նրան տեսել են Ղարսի բազարում պտտելիս կամ Դյանջա՝ աղքատի շորերում և ալլն։ Ակոռու վերսիայի մասին ընկ. Ակսելը հալտնում է հետաքրքրական մանրամասնություն նույնիսկ. այդ վերսիան մնում եր մինչ վերջերս Քանաքեռի բանավոր ավանդությունների շարքում։ «Իբր թե Արովլանը ոռուի թագավորի հետ պայման ե դնում, վոր լեթե ինքը բարձրանա Արարատի գագաթը, թագավորը համբերին պետք ե պարզենի ազատություն։ Զի կարողանում բարձրանալ գագաթը և անկց չի վերադառնում։ Այս ե տոհմային ավանդավեպը, վորի հիմքում կան 40-ական թվականների քաղաքական ակնկալությունների աղճատված և թույլ հետքերը, ինչպես և Արովլանի գերի ըմբռնումը այն ժամանական գլուղացիական վորոշ խավերի կողմից։ Ընկ. Ակսելն ուղիղ ե բնորոշում ավանդավեպի իմաստը, բայց չի նկատում, վոր ժողովրդի պատմած մլուս բոլոր ռասմանները, ինչպես նաև հանրածանոթ՝ Արովլանին սև կառեթի մեջ Միքիր քշելու պատ-

⁹⁷ «Մուբա», 1901, 11, յիր. 119:

մութիւնը, — վորի մասին ի դեպ և ասել վոր ի գերե լելան բուրը մեր ջանքերը՝ իրական վորեն հիմք դանելու Ծենարարխիսիվ գործերում, — հիմնականում նույն արդավանդավեպի վարիանտներն են միայն:

Ի՞նքան նոր չեն ընկ. Ակսելի «Հայտնագործած» ժողովրդական վերսիաները՝ Հիմնականում այդմասին եր ակնարկում Ստ. Վասկանը, յերբ գրում եր Արովլանի մասին, թե՝ «մինչև այսոր մարդ չդիտեր թե ուր ե, ինչ վիճակի մեջ կդառնի, կապի դեռ, թե մեռած եւ Վոմանք կկարծեն վոր Սիբիրիա քշված և պատճառով մը կամ խօր վիրապի մը մեջ կպահվի...»:

Թափառական հրլալի գարավոր զրուցը հիշեցնող ժողովրդական այդ ավանդավեպը հին, Արովլանից շատ առաջ ծագած, մի լեզենդ եր, վոր ներկա դեպքում հրուսվում եր Մասիսի գլուխը բարձրացող տարրորինակ այս մարդու անհետացման անցքի հետո Հեռու անցյալում Մասիսի քաջերն արգելեցին հայ Պրոմեթեոսին — արքայազն Արտավազդին — Արարատի մթնաշխարհում, վորտեղից նա, ինչպես պատմում եր Յեղնիկը, «ելանելոց է և ունելոց զաշսարհն» կամ, ինչպես սոցիալ-քաղաքական տարրեր նշանի ներքո Խորենացին եր գրում, «Ղանալ ելանել և առնել վախճան աշխարհի»: Առասպելի յերկու այս վարիանտները տարրեր խմբագրություններով կրկնվում են 13-րդ դարի մատենագիրների — Վանականի և Վարդանի — գործերում, ինչպես նաև Հայումավուրքի վորոշ որինակների մեջ⁹⁸:

Փոխանցվելով «Մասմա ծոերին»՝ Արտավազդի առասպելը հարատեսց Մհերի մասին պատմվող ավանդությունների ձևով: Միշնադարյան եպոսի մեջ քրիստոնելական սքեմ հագած Մհերը ներկայանում եր այնուհետև վորպես հավատքի համար տառապող մի մարտիրոս⁹⁹: Լուսավորչի՝ խոր վիրապ մանելու առասպելը կամ նրա՝ մեռնելուց հետո լեռներում պահվելու «ժողովրդական մտածունքը» սրա տարրեր վարիանտներն են անշուշտ: Հին առասպելը շաղկապվեց այնուհետև հալոց միշնադարի ազատագրական ուրիշ առասպելների հետ: Ներսես կամ Մահակ Պարթևների «տեսիլները», Մեթոդոսի, Կողեսի կամ Աղաթոնի դուշակությունները և այլն, վորոնք տարբեր, հաճախ իրարամերժ

⁹⁸ Հմ. Գ. Խալատիս: «Армянский эпос в Истории Армении» Монсес Хоренского, Москва, 1896, ч. I, յեր. 317, ч. II, յեր. 73 և հետո.

⁹⁹ Տես՝ Մ. Արեգյան, «Հայ ժողովրդական վեպը Մովսես Խորենացու պատմության մեջ», Թիֆլիս, 1911, յեր. 179 և հետո. 4 յեր. 360:

խմբադրություններով, տարածված ելին ժողովրդական այլ և այլ խավերի մեջ VII—XVIII դարերի ընթացքում, քաղաքական բովանդակությամբ միանում ելին «մեռնող և վերադարձող» հերոսների շուրջ հլուավող ալս առասպելաբանություններին Նկատենք, վոր նման առասպելներն ու «տեսիլները» տարածված ելին մասնավորապես Յերևանում: Զմոռանանք, վոր Յերևանում և հենց թաղված միջնադարի նշանավոր տեսիլներից — մեր տերմինով տակնք՝ ուստոպիաններից — մեկի հեղինակը — Հովհաննես Կողեռը, վորի գերեզմանը ժողովրդականություն վակելող «սրբատեղի» դարձավ հետազալում: Անցյալ դարի կեսերին ժողովրդական հին առասպելը, նացիոնալ-դեմոկրատական գույն ընդունելով, շաղակապվեց Ներսես Աշտարակեցյուն հերոսացնող այն ավանդավեպի հետ, վոր տարածված եր նաև թյուրքահայերի մեջ և ատաղձ դարձավ քաղաքական տարբեր տեսնդենցներ հետապնդող Ս. Տեր-Մարգրարյանի «Շահենն ի Սիրիր» և Մ. Մամուրյանի «Սև լերին մարդը» վիպական գործերի համար¹⁰⁰: Արարատի դադաթը բարձրացած Արովյանի «անհայտ բացակալումը» առիթ տվեց առասպելի նացիոնալ-դեմոկրատական ալս վերսիան չափել-ձևել նրա անվան վրա: Յերկու դեպքում ել առասպելը դառնում և հայերի ազատագրման անկատար մնացած «պայմանի» շուրջ, այն տարբերությամբ, վոր ներսիայն առասպելի մեջ պայմանը չկատարողը ցարն ե, իսկ Արովյանի լեզենդի մեջ՝ հենց ինքը Արովյանը, հանդամանք, վոր մատնում և «ժողովրդի» բացասական կարծիքը վերջնիս կատարած դերի մասին:

Նույնն ե պալքարի առարկան, վոր փոխակերպվելով քրիստոնելական «փրկության» հավատքից դարձել և նացիոնալ-դեմոկրատական «ազատության» ակնկալություն: Նույնը պատժվող արատը կամ առաքինությունը, վորոնց միջոցով հայտնվում եր պատմողի դրական կամ բացասական վերաբերմունքը դեպի իննդրի առարկա լեղած «հերոսուց»: Նույնը հերոսի անհետացումը Մասիսի, Խոր վերապի, Սիրիրի — լեռների, ավերակների, վիճերի, «սև կառնթի» մեջ և այլն. Արովյանի պատկերավորումը աղքատի շորերով, նրա տառապանքը, լացը, անհաց-անշուր ապրուստը, նրա վերադարձի ակնկալությունը կամ նրա հայտնվելը ծանոթ վորեւ վայրում, ձևական նույն մանրամասնություններից են: Հետաքրքրական ե, վոր լեզենդը դադար չառավ Արովյանի

¹⁰⁰ Տե՛ս Պերպերյան Ա. «Պատմություն Հայոց», Կ. Պոլիս, 1871, յեր. 283:

վրա: «Ժողովրդական մտածմունքը» ցուց տվեց, վոր ընդունակ ե վոչ միայն անհետացած Արովյանին հավերժացնելու Արարատի փեշերի վրա կամ Սիրէրի հեռավոր ստոնամանիքներում, այլև հաճախ նաև ակնհայտ կերպով մահացած ու որ ցերեկով հոգին հանձնված մարդկանց: Արովյանից հետո «աև կառեթի» լիդենդը պատմվում եր նաև Մ. Նալբանդյանի մասին: Նալբանդյանի մահից հետո նոր նախարարի կանցկաների մեջ խմբվել եր մի առասպելքիրը թե Նալբանդյանը մեռած չե, այլ մի որ գալու լի վորպես հայ թաղավոր և հողեր պիտի բաժանե հայ գլուղացիներին: Այս առասպելը տարածված եր մանավանդ նոր Նախիջևանում, հատկապես հայ գլուղացիների մեջ¹⁰¹: Դիտենք, վոր լիդենդի քաղաքական սլաքը Նալբանդյանի անվան հետ կապված այս վերսիայում ե միայն, վորտեղ գլուղացիների ու քաղաքալին չքավորների: «Մտածմունքը» ծառանում եր ցարիզմի գեմ:

Ընկ. Ակսելն, «անհայտ բացակալումի» իր վերսիայով հավատարիմ մնալով գլուղացիական ակունքներից սնվող գրական իր տարերքին, համապատասխան փոփոխություններով շարունակում ե միայն հին այս առասպելաբանությունը, անդիտանալով, վոր պրոլետարական հեղափոխության մեր այս որերում զլուղացիներն իսկ ձեռք են քաշում մեռելների ոճիքից՝ ավելի արժանի բախտի հանձնելով նրանց որերի ու վաստակների գնահատականը...

Սակայն ընկ. Ակսելը համոզված ե, ըստ լիբերալին, վոր «Ժողովրդի մտածմունքը» միայն առասպելի չե հլուսել «անհայտ բացակալողի» շուրջը: Նամակագիրներից մեկը Արովյանի անհետանալը կապում եր դեպքից լիբերալ կամ մի տարի առաջ նրա և ինչ-վոր «ընեմեցի» ձեռնարկած՝ Արարատի վերելքի հետ: Նամակագիրը հայտնում ե, վոր, ստացված լուրերի համաձայն, Արովյանը փախել ե Ղարսի կողմերը, քանի վոր կատարված քննությունը սուստ ե դրւը բերել նրա և «ընեմեցի» հավաստիացումները Արարատի գլուխը բարձրանալու մասին: Նամակագիրը հայտնում ե, թե՝ «Են նեմեցն մեկ գիր եր գրել Արովյանի վրեն թե իս ես գիրը քեզ գրեցի լիս դեղ կերա լիս ենց մեռա, դու ել քո գլուշ արեն տես»: Ընկ. Ակսելը հանդում ե այստեղից խորիմաստ այն լենթաղբըության, վոր այն «ընեմեցի գիրը», վորտեղ Արովյանին խորհուրդ եր տրվում «գլխի ճարը տեսնելը», մութ ակնարկ ե նե-

¹⁰¹ Տե՛ս Խ. Բերբերյանի «Հոդվածաշարը Մ. Նալբանդյանի մասին, «Հայրենիք ամսագիր», 1929, № 10, յեր. 79:

դափոխուրյան լուրի մասին։ Դժվարանում ենք հասկանալ, թե ինչն և առիթ տվել ընկ. Ակսելին ալսքան բռնազբոս լեզրակացության։ Սա ըստ լերեսոթին բարի ցանկություններով սալահատակաված նույն փիլտրոգիան ե, վորը մի այլ տեղ ներշնչել ե մեր հեղինակին այն միտքը, թե վոստիկանական հանրածանոթ «անհայտ բացակալող» տերմինը դործ եր ածվում իրը միայն այն մարդկանց վերաբերմամբ, «վորոնց մասին հաստատ տեղեկություն ունեին», թե անվտանգ անցել են սահմանը և ապրում են ոռուսիան իմպերիալի սահմաններից դուրս... Նամակագրի ասածը տեղիք չի տալիս համենայն գեպս վորեւ լերկմտանքի։ Ստախոսության մեջ մեղաղբաղող «նեմեցը» հալտնել ե իրը՝ այս նամակը գրելով իսս գեղ կերա մեռա, դու ել քո գլխի ճարը տես։ Ուր ե ալստեղ «հեղափոխության» լուրը, կամ գեթ՝ «մութ ակնարկը» դրս մասին։ Միթե, իրոք, թուլատրելի լե ալսքան մթագնել աշկարա բանները... Ալստեղ չկա նույնիսկ վարիանտների այն նմանությունը, վոր առիթ կարող ե տալ շփոթելու Շուն համատեղությունը հաջող շան հետ... Այնուհետև ընկ. Ակսելն անմիջական կապ ե «կռահում» Արովյանի անհետացումից առաջ լերեք որվա ընթացքում նրա վերապրած սուր մտատանջության և հեղափոխական «անակնկալ» լուրի միջև։ Սակայն հեղափոխության լուրն Արովյանն ստացել եր, հավանորեն, ավելի առաջ։ 1848 թ. Պարիզի գևալքերից անմիջապես հետո Նիկոլայ I-ը զորահավաքի ձեռնարկեց և համապատասխան հրաման ուղղեց զինվորական մինիստրին, վորի մեջ ձեսկերպում եր Ռուսաստանի հականեղափոխական դիրքը։ Այդ հրամանը՝ ստորագրված փետրվարի 24-ին, տպագրվեց «Կավկազ» թերթի մարտի 20-ի համարում, վորը Յերևան հասավ, հավանորեն, վոչ ուշ քան մարտի 25-ը։ Սակայն պետք ե կարծել Յերևանի պաշտոններությանը, և դրանց թվում նաև Արովյանին, ցարական կարևոր այդ հրամանի շարժառիթների մասին հալտնի լեր ավելի վաղ, քան «Կավկազ»-ի պաշտոնական հաղորդագրությունը։ Ինչ վերաբերում ե ընկ. Ակսելի մյուս այն «կռահումին», թե «անհայտ բացակալող» տերմինը դործ եր ածվում հեղափոխությունից հետո սահմանի մյուս կողմն անցած նմիգրանտների վերաբերմամբ, և վոր անհետացման փաստն առիթ եր տալիս ոռու բյուրոկրատական շրջաններին քաղաքականապես «անբարեմիտ» մեկը համարելու նրան, այդ ևս հերքվում ե թեկուղ հենց այն փաստով, վոր բյուրոկրատիալի պաշտոնական որգանը՝ «Կավկազ» լրագիրը 1848 թ. նոյեմբերի կեսերից

մինչև տարվա վերջը լցնում եր թերթի եջերը՝ տպելով Արովյանի «Կործա» ուսումնասիրությունը, հանգամանք, վոր, ի դեպ, կողմակի մի արգումենտ կարող ենք դիտել նաև ուս կառեթից վերախի դեմ...

Սակայն դառնանք դարձլաւ ընկ. Ակսելի հրատարակած փաստաթթերի պարզաբանությանը:

Հայտնի ին, վոր 1845 թվին, Արիխսի՛ Արարատի վերելքից հետո, գժտություն առաջացավ նրա և Արովյանի միջև Ընկ. Ակսելն այլ և այլ անհիմն և հակասական լենթադրություններ ե անում գժտության պատճառների առիթով: Իր 1844 թ. Արարատ բարձրանալու անհաջող փորձից հետո Արիխսը կասկածի տակ եր առել Պարրոտի վերելքը, ու այստեղից եր ծագել գժտությունը. կամ, իրը, այն առաջ եր իեկել 1846 թվին, իերը Արիխսը դարձլաւ ճանապարհորդում եր Հայաստանում և այլն: Փաստորեն Արիխսը վոչ միայն չեր ժիտում Արարատը բարձրանալու հնարավորությունը, այլև հիմնավորում եր դա տեսականորեն, վոչ միայն չեր ուրանում Պարրոտի վերելքը, այլ ուղղակի մեծարում Պարրոտին¹⁰²: Տհաճության պատճառն այլ եր միանգամայն: Յերը 1845 թ. ամառն Արիխսը գլուխ բերեց վերելքի իր ծրագիրը, Արովյանը, ինչպես յերեսում ե 1846 թ. հունվարի նրա մի գրությունից, կորցրեց փաստը հավաստող ակոռեցիների յերդմնաթուղթը: Այդ առիթ եր տվել Արիխսին կասկածելու Արովյանին: Իրը վերջինս հայ կղերի ներշնչումով թագցրել ե յերդմնաթուղթը՝ «առ ի ստել ու ժիտել զանապարհորդութիւն նորա»¹⁰³: Բողենշտեղաը, — վորին Արովյանը հաղորդել եր այս միջադեպի մասին, ուղարկելով նրան համապատասխան իր որագրությունները և մի հոդված՝ Երացումներ և ուղղումներ Արիխսի՝ Արարատի վերելքի մասին» վերտառությամբ՝ ըստ յերեսութիւն ուղղված վերջինիս՝ «Կավազ» թերթի 1846 թ. փետրվարի համարներում տպված հոդվածի դեմ, գրում ե նույնիսկ, թե Արիխսն ե հենց, վոր իր ընթացքով վերավորել ու հուսահատության ծալրն եր հասցրել «խեղճ հալին»՝ առիթ դառնալով նրա տիսուր վախճանին: Մի տեղ¹⁰⁴ նա նկարագրել ե իր արժանապատվությունը շեշտող ստատսկի սովետնիկ Արիխսի չոր, անհրապուլը պատկերը, վորից դժվար չե լեզրակացնել, թե Արիխսը

¹⁰² Տես՝ H. Abich. ն. առ., յեր. 41 և հետ. և 46:

¹⁰³ Տես՝ «Դործ», 1917, № 7—8, յեր. 7—8:

¹⁰⁴ Տես՝ Bodenstädt: «Erinnerungen aus meinem Leben», Berlin, 1888, յեր. 304:

հեր, համենայն դեպս, վոր բարլացակամ նամակ կարող եր գրել Արովյանին կամ ուրախառիթ լուր հաղորդել նրան... Յեվրոպա-լում ժայթքած հեղափոխության մասին. ամենից քիչ Արիխն ե, արդ արդին կասկածից դուրս ե, վոր ժամանակ կամ առիթ ուներ մտածելու անձնասպանության մասին: Պարզ ե միանգամայն, վոր 1848 թ. հեղափոխության մասին ակնարկ փնտոելով Արի-խին վերաբերող նամակում՝ ընկ. Ակսելը՝ կարելի լե ասելթե՛ ուսուլ պալպեմ և հեծության մեջ կարծիք անհետանալուց մի կամ յերկու տարի առաջ տեղի ունեցած՝ Արարատի վերելքին վերաբերող այն ակնարկը, վոր հանդիպում ենք ընկ. Ակսելի, հրատարակած գրությունների մեջ, վոչ մի կապ չունի առհասարակ Արիխի հետ, վորի վերելքը տեղի էր ունեցել ավելի առաջ՝ 1844 և 1845 թվականներին. 1844 թվին Արովյանի ուղեկ-ցությամբ Արիխի ձեռնարկած վերելքի փորձը, ինչպես հայտնի լե, վիճեց. 1845 թվականի վերելքը հաջող անցավ, սակայն առանց Արովյանի մասնակցության: 1829 թվից հետո Արովյանը հաջող վերելք կատարեց միայն 1846 թ. սեպտեմբերի 17-ին, ուղեկցե-լով անգլիացի ճանապարհորդ Սելմուրին¹⁹⁵, Հավանական ե, վոր «ժողովրդի մտածմունքը» դառնում եր հենց այս վերելքի շուրջը, վորի մասին Արովյանը ինքն եր պատմել հրապարակորեն¹⁰⁶: «Ժո-ղովրդի մտածմունքը» դատապարտում եր ըստ յերկութին նաև Արարատի մասին ինդած դարավոր ավանդությունը խախտելու այս նոր դեպքը. չոդնեց նաև Արովյանի հայտարարությունը, թե վերելքը ձեռնարկվել ե՝ ուղեկցեց ունենալով Ներսես Աշտարակե-ցու բարեմաղթությունները և միաժամանակ ներշնչված ջերմե-ռանդ զգացմունքներով դեպի նոյ նահապետնու նրա տապանը¹⁰⁷, Այս հավաստիացումը չխանգարեց, վոր հենց նույն այս ժամա-նակ, 1847 թ., հայտառ «Կովկաս» թիրթի եղերում ստախոս հոչակին Արարատի գագաթը բարձրացած բոլոր զիտնական-ները¹⁰⁸...

Ավելի համոզիչ չեն, սակայն, փախուստը հիմնայորող մլուս

106 *Шт.^н «Кавказ», 1847, № 20.*

107 *Zoof. B., ser. 1*

¹⁰⁸ Հմ. «Կովկաս», 1847, № 23. «Լեռն Արարատ և Տավրան Նոյի հերթունք Պարսուի, Արէնի և այլոց Մասեաց վրա բարձրանայուն»:

«փաստերը»: Ուսումնասիրելով Յերևանի Պետարխիվի թղթերը՝ ընկ. Ակսելն արձանագրում ե նշանակալից մի յերևությ Արաքսի մուս ափը փախչելու հոսանքը, վոր արամադիր ե 1848 թ. հեղափոխության լուրատեսակ արձագանգը համարել Անդրկովկասում: Աբովյանի «անհայտ բացակայումը», ինթազրում ե ընկ. Ակսելը, փախուստի դեպքերից մեկն եր: Նկատենք, սակայն, վոր փախուստի այդ հոսանքը նոր չեր և կապ չուներ ինքան հեղափոխության «անակնկալի» հետ: Հոսանքն ակսվել եր 20-ական թվականների հետպատերազմյան դադթավարումներից անմիջապես հետո¹⁰⁰: Փախչողները բացառապես «Ռմանլիից» բարվոք որեր ակնկալող թուրք զյուղացիներ ելին, կամ Երդրումի և Ղարսի շրջանից կամ Թլուրքիայից և Պարսկաստանից Անդրկովկաս քշված հայ զյուղացիներ, վորոնք, ճաշակելով ոռուսական կնուռի զորությունը, գերադասում ելին հին բնակավայրն ու ոեժիմը, Յերևությ եր այս, վորի նախանշաններն արձանագրել ե անգամ «Վերք Հայաստանի»: Հասան-խանի ձեռքից Աղասու աղատած թլուրքահայ գերիները վերադառնում են Ղարս, մերժելով ոռուսի հողում մնալու առաջարկը: Կովկասի կառավարչապետ Գալավինին ուղղած ընդարձակ մի զեկուցագրի մեջ ժանդարմական զեներալ Սկալոնը հայտնում եր 1840 թվին, վոր Հայկական Մարզի նատուրալ հարկահանության սիստեմի, ծառալողների չարաշահությունների ու տմարդի վերաբերմունքի յերեսից գյուղացիները տասնյակ ընտանիքներով փախչում ելին Ռուսաստանից Պարսկաստան: «Վերջին յերեք տարվա ընթացքում այսպիսով — զրում եր Սկալոնը — 600 ընտանիք լքել են մեր սահմանները»: Գործ դրված ճնշումները — յեղակացնում եր նա — աղքատության գիրկը կնետելին բնակչությունը, արտասահման փախչելով կդատարկելին յերկիրը և զուցե նույնիսկ կապստամբելին չեցնների պես, լեթե նոր վարչաձեռ (իմա Հայկական Մարզի վերացումը. — Ա. Հ.) վերջ չդներ նախկին դրության»¹¹⁰: Գյուղացիների փախուստը թլուրքիս և Պարսկաստան նոր թափ առավ 1840-ական թվականների կեսերին Վարանցովի հողային քաղաքականության շնորհիվ: Ըսկ Ակսելի հիշատակած 1848 թ. վերաբերող դեպքերը վկայում են նույն այս յերևութիւնի մասին միայն:

¹⁰⁰ Տես այս մասին՝ «Акты Кавказской Археогр. Комиссии», VIII, յեր. 883 և հետ., նաև M. Wagner, ն. ա., յեր. 79 և հետ.:

¹¹⁰ Центрархив. Альбом внешней политики и революции, фонд III отделения, 1 экз. 1840 № 258, fol. 38 и 39.

Արովլանին հալ և թուրք ալս գլուղացիների հետքով Թլուրը բիա փախցնելու ակսելլան վերսիան, նրան գլուղացիության գաղափարախոս համարելու տրամադրության և միաժամանակ մեր բնորոշած «շրջադարձի» աեսության հետևանքներից մեկն ե միայն: Հերքելով թե մեկը և թե մլուսը՝ անհիմն պետք ե համարենք հարկավ նաև փախուստի «կուահումը»:

Սակայն ընկ. Ակսելլ պահեստում կա նաև այլ արգումենտ: Գլուղացիներից զատ, պնդում ե նա, կային նաև սոցիալական այլ տարրեր, վորոնք թիկունք դարձնելով Ռուսաստանին ու նրա ազինաներին՝ Արևմուաքում ելին վիճակում իրենց ազատությունը: Արովլանը «թեքվում եր զեղի այն խմբակը, — զրում ե ընկ. Ակսելլ, — վոր դժգոհ եր թե Ռուսաստանի վերաբերմունքից և թե Ներսեսի քաղաքականությունից, իրրե առաջինի հլու հնազանդ գործիքը, Արդ խմբակի մեջ կային և հոգևորականներ և աշխարհականներ, վորոնցից զոմանք զաղտնի անցնում ելին Արևմուտք, հեռու Ներսեսից և ուսական արքաների արլունու շոշափուկներից»: Շատ ցավում ենք, վոր ընկ. Ակսելլ չի հիշատակում ակնարկված «խմբակի» մեջ մտնող հոգևորական և աշխարհական արդ եմիգրանտների կոնկրետ անունները: Ովքե՞ր ելին դրանք, արդ խիզախները, վոր տակալին Արովլանի ժամանակ Արևմուտք ելին խուսափում ցարիզմի և վեղարավոր նրա սատրապների արլունու շոշափուկներից: Ընկ. Ակսելլ լուսում ե ալդ մասին, և մենք դալիթակղվում ենք կարծելու, թե անհիմն չե ալդ լուսությունը, վասնզի... չկան ալգալիսի անուններ: Բնորոշ չե, վոր մի ալլ տեղ, խոսելով հարակից լեռնուլթների մասին, մեր հեղինակը, վորպես վեղակի որինակ, հիշատակում ե Ս. Տեր-Մարգարյանի «Եահենն ի Սիպիր»ը, մի զերք, վոր թիուրքահայ միջավալի ծնունդ եր և այն ել՝ գրված 70-ական թվականներին...

Գուցե ընկ. Ակսելն այստեղ ևս նկատի ունի «Պոլոֆենիեալի գեմ ծագած կովկասահայ քաղաքական շարժումը: Բայց չե վոր շարժումը ևս սկսվեց շատ ավելի ուշ՝ 50-ական թվականների վերջերին: Չե վոր արդ շարժումը ծալը առավ վոչ թե Կովկասում, այլ Թիուրքիայում և Հնդկաստանում: Կովկասում շարժում սկըսվեց «Պոլոֆենիեալի գեմ Արովլանի անհետանալուց շատ ավելի ուշ:

Կովկասցիների համար մինչև 50-ական թվականների վերջը «Պոլոֆենիեան մեռած մի տառ եր, վոր փաստորեն չեր խանդարում Եջմիածնի կաթողիկոսներին միահեծանորեն տնորինելու յեկեղեցու գործերը: Ներսեսի վարչության վերջին տարինե-

բին եր միախն, Դրիմի պատերազմի շրջանում և այնուհետեւ, վոր սկսեց ակտիվանալ ցարիղմի ինտերեսը դեպի «Պոլոֆենիե»ն և նրա անվթար գործադրումը: Ալդ ժամանակ եր, վոր Թիֆլիսի հայ քաղքենիութիւն վերնախավերում աղմուկ բարձրացավ «Պոլոֆենիե»ի շուրջը: Քաղքենիները բաժանվեցին լերկու խմբակցութիւն, կենտրոնանալով մի կողմից թեմակալ Սարգիս Զալապանի և մլուս կողմից Ներսիսյան դպրոցի տեսուչ Պ. Շանշյանի շուրջը: Զալալյանը ցարիղմին հլու կղերականութիւն ոլուին եր, Շանշյանը՝ ընդդիմադիրների զեկավարը: Զալալյանը հեռացրեց դպրոցից Շանշյանին և ապավինելով վոստիկանութիւն ուժին ձերբակալութիւն եր լենթարկում նրա հաջորդ Արդանովի դեմ ըմբուտացած աշակերտներին, հանգամանք, վոր զդրդյուն բարձրացրեց քաղաքում և հուզմունք հատկապես համքարութիւն մեջ: Շանշյանականները վտանգված հայտարարեցին լեկեղեցու անկախությունը՝ կառավարութիւն և նրան գործիք դարձած լեկեղեցականների շնորհիվ: Անձնապես Զալալյանն ամբաստանվեց Աշտարակեցուն թունավորելու մեջ, Հասարակական հուզված կարծիքը հարկադրեց Եղմիածնին հետ կանչել Զալալյանին, վորին անկարող ելին պաշտպանել անզամ կառավարութիւն ազենտները¹¹¹: Սակայն շարժումն ընդարձակվեց և սրվեց հատկապես «Պոլոֆենիե»ի դեմ: Մատթեոս Չուխաճանի ժամանակ եր ալդ, 1860 թվին, լերը Թիֆլիսում ստեղծվեց հայկական գաղտնի մի հանձնաժողով, վոր ձեռնարկեց «Պոլոֆենիե»ի վերաքննութիւնը՝ լեկեղեցու իրավունքներն ընդարձակելու և կառավարութիւնը համապատասխան դիմում անելու դիտավորութիւմը: Հանձնաժողովի կազմած նախագիծը հետամուտ եր վերականգնելու կաթողիկոսի միահեծան իշխանությունը: Պահանջված դեպքում կաթողիկոսը պիտի փոխադրեր ալսպես կոչված Շմալը աթոռը Եղմիածնից Հռոռմոսի վանքը, այսինքն Թլուրքիալի սահմանները; հանգամանք, վոր լավագույն միջոցն եր համարվում հայերի ուսուացման առաջնառնելու համար: Հանձնաժողովի անդամներն աղքալին-պահպանողականների զեկավարներն ելին — Շանշյան, Պ. Սիմոնյան և Գր. Իզմիրլյան: Կառավարությունը վոչ միայն մերժեց հանձնաժողովի նախագիծը, ալիև, հայտնագործելով նրա հեղինակներին, հալածանք սկսեց նրանց դեմ: Վոստիկանությունը հսկողութիւն առակ առավ Շանշյանին և նրա ընկերներին¹¹²:

¹¹¹Մ. Մուրագյան. «Պ. Շանշյան», տես՝ «Հումա», Ա., յեր. 4 և հետ., 17 և հետ.

¹¹²Յե. Գեղամյան. «Գետքոս Շանշյան», «Թործ», 1917, № 2, յեր. 68 և հետ.

Ալս ժամանակներից ե ահա, վոր ծալը առավ պահպանողականն ների շեշտաված հակակրանքը ցարելոմի դեմ, նրանց թլուրքական որիենտացիան։ Ակնարկելով կովկասահայերի մեջ «Պոլոֆենիեցի» դեմ խմորված ոպողիցիավի մասին, ընկ. Ակսելը կարող եր աչքէ առաջ ունենալ միայն պահպանողական կուսակցության հետագա այս տրամադրությունը։ Հայտնի լե, վոր ալս ժամանակներին ե հենց, վոր թլուրքիա անցան պահպանողականների խմբակի մեջ մտնող միքանի «հոգեռորական» և աշխարհական» գործիչներ (Մ. Սուրադլան և Մ. Աղարեկլան)։ Սակայն ինչ կապ ունի այս ամենը ներսիալան ռեժիմի կամ Արովյանի «անհայտ բացակալումի» հետ... Չե՞ վոր ալս գեղքերը բաժանված են իրարից ժամանակադրական խրամատով և արդյունք պատմական փոխակերպված հանգամանքների։

Անհիմն համարելով ընկ. Ակսելի առաջադրած վերսիան, չենք կարող զանց առնել նրա վերջին մի արգումենտը, վոր մի տեսակ «իրավին ապացուցի» դեր ե կատարում նրա «կռահումների» մեջ։ Արովյանին փնտողները Խոր-Վիրապի մոտ, Արաքսից վոչ հեռու գտել ելին մի կմախք և դրանից վոչ հեռու մի սապօզ։ Արովյանի կինը ճանաչել եր սապոդը և վկայել, վոր իր մարդուն և Ընկ. Ակսելը կարծում ե, վոր ինքն Արովյանը կարող եր Արաքսի ափին թողած լինել «սապոդները» (ՏԸՇ !) կամ Արաքսը հեշտությամբ ճեղքելու համար և կամ հետքը կորցնելու դիտավորությամբ, կամենալով համոզել փնտողներին, թե գետն ե ընկել, խեղդվել։

Այստեղ ևս ընկ. Ակսելի միտքն անկարող և պարփակվել իրական փաստերի սահմաններում։ Սապօզի հայտնագործումն իսկ փորձում ե կովան դարձնել «փախուստի» տեսության։

Կարևոր ե նշել, վոր, ինչպես պարզել եր բժշկական քննությունը, գանված կմախքը 15 տարեկան աղջկա կմախք եր, մի բան, վոր ավելի քան կասկածելի յե դարձնում նաև կմախքի մոտ գտնված սապոդի առնչությունը Արովյանի հետ։ Անհավանական ե թվում ուղղակի, վոր իրարից վոչ հեռու ընկած խորհրդավոր ալս հետքերը կապ չունենալին մեկը մլուսի հետ։ Յեթե Արովյանինը չեր կմախքը, դժվար թե նրանը լիներ նաև սապոդը, մանավանդ, վոր Արովյանի կողկակարը ևս վկայում եր յերդումով, թե իր ձեռագործը չե սապոդը։ Կոշկակարի այդ վկայությունը ընկ. Ակսելը վերագրում է չար խաթալից խուսափելու նրա մտարնությանը։ Կարծում ենք, վոր անթուլլատրելի յե ալդքան վախ-

կոտ ու հիմար մեկը համարել արհեստավոր այս մարդին, Բայց,
յեթե ընդունենք իսկ, վոր Արովյանի կինը չեր տարված պատ-
րանքով և սապողն իսկապես Արովյանին եր, ալդ գեղքում ևս
դժվար ե «իրավին» այդ հետքը կցորդել բացառապես ընկ. Ակսելի
կուահումին, քանի վոր այդ փաստն ինքնըստինքյան առած կա-
րելի լե հանգավորել «անհայտ բացակայումի» դրեթե բոլոր մլուս
վերսիաների հետ: Ուշադրավ ե համենայն զեսպ, վոր հայտնապործ-
ված ե միայն Արովյանի մի սապողը, հանգամանք, վոր դժվար
ե հաշտեցնել այն մտքի հետ, թե «փախչողը» լող եր տվել գետի
մլուս ափը, մի բան, վոր պետք ե ստիպեր նրան հանվել միան-
դամայն, կամ գետի այս կողմ թողնել սապողները, — վոր ան-
միտ բան կլիներ, իեթե վճռել եր իրոք անցնել զետը, — կամ թե
վորևե կերպ մլուս ափը հանել այն լնդհակառակը, այս գեղքում
խելքից ավելի մոտ և հենց այն լնթագրությունը, թե գետի ա-
փին թողնելով սապողներից մինը՝ Արովյանը կամեցել եր համո-
զել իրեն փնտողողներին, վոր ջրահեղձ և լողել Բոլոր պարագա-
ներից դատելով՝ Զանգվում կամ Արաքսում խեղդվելու վարիանան
ամենից հավանականն եւ Յեվ ընկ. Ակսելի այն հարցին, թե՝ ուզ
ե հապա դիակը — պետք ե պատասխանենք մի այլ հարցով. միթե
ավելի դժվար ե պատկերացնել «զիժ» Զանգվի կամ «կամուըջ»
չհանդուրժող» Արաքսի գարնանալին. հորդահոս ջրերում դիակի
անհետանալը, քան բացատրել գետի մլուս ափն անցած կենդանի
մարդու անհետանալը: Ակսելլան վերսիան չի լուծում ըստ ելու-
թյան կենդանի մարդու «անհայտ բացակայման» այս հարցը: Այն
փոխադրում ե միայն հարցի դրումը Արաքսի մի ափից մլուսը:

ՄԱՂ

Զի կարելի ժխտել, իհարկե, վոր ցարիզմը չարդարացրեց անդամ Աբովյանի և նրա բարեկամների հուկսերը։ Ինքնակալական սեակցիայի մռալլ և դաժան ժամանակներից մեկն եր Աբովյանի դործունելության շրջանը — անցյալ դարի 30—40-ական թվականները։ Մռալլ մի տեսարան եր ալդ ժամանակվա Ռուսաստանը, վորտեղ, — ինչպես գրում եր Բելինսկին Գոդովին ուղղած հոչակավոր իր նամակում, — «մարդ վաճառքի յե հանում մարդուն..., վորտեղ վոչ միայն չկա ապահովություն անձի, պատվի, սեփականության, այլ չկա նույնիսկ վոստիկանական կարգապահություն, այլ կան միայն պաշտոնատար գողերի և կողոպատիչների տհաղին կորպորացիաներ»։

Պաշտոնատար գողերի և կողոպատիչների սանձարձակ դործունելության համար լայն մի ասպարեզ եր, մանավանդ, ռուսական նորանվաճ գաղութը՝ Անդրկովկասը։

Ռուսական տիրապետության ժամանակ ալստեղ հսկայական չափեր ընդունեց արտատնտեսական հարկադրանքի սիստեմը։ Տուժում եր գլխավորապես, հարկավ, գլուղացիությունը, վորին նրա «վիրկիչները» դնում ելին ռուս ճորտի վիճակում և վորի հավելվալ արդյունքի խոշոր մի մասն որինավոր և ապօրինի կողոպուտի ճանապարհով դռփում ելին հենց նույն ալդ «վիրկիչները»։ Հանդամանք և այս, վոր շոշափում եր վոչ միայն գլուղացիության անմիջական շահերը, այլև ներքին վեճ առաջ ընթառմ գլուղացիության նեկվոր ու բնիկ շահագործողների միջև, վորչափ դրանով նվազում եր հավելվալ արդյունքի այն մասը, վոր մտնելու յեր ազգային արտօնյալ դասերի գրպանը։ ընորոշ չեմ, վոր տեղական արտօնյալ դասերի, պահպանողական հոսանքների մեջ իսկ հասունացավ դիմադիր վորոշ տրամադրություն դեպի ռուս «ճորտատերերի գիկատատուրան», դեպի ցարիզմի գաղութային քաղաքականությունը և մանավանդ գեղի լեկվոր չեկվոր չենովայիների կորպորացիան։

Ցարիզմի գաղութակին քաղաքականությունը հարվածի տակ եր դնում նաև «ազդի» լուսավորության դորձը: Խնչակս նկատել ե Բողենշտեգտը, Աբովյանի և նրա համախոհների լուսավորական ջանքերը և Ռուսաստանի կողմից ճնշվում ելին ըստամենաբնիւ: «Ռուս կառավարությունը — գրում ե Բողենշտեգտը — չունի վոչ ընդունակություն և վոչ իսկ կամք համակերպվելու վորեն ժողովրդի կուլուուրական կարիքներին. Ցելքրապալում, ինչպես նաև Ասիայում, նա հետամուտ է միայն մի նպատակ՝ կամագուրի ստրակներ դարձնելու իր նպատակներին»¹¹³, Խնչքան ել բարեհույս լինելին Աբովյանի քաղաքական տրամադրությունները, նրա կուլտուրա-լուսավորական պրոգրեսիվ ջանքերը խորտակվում ելին՝ տեղի տարով ցարիզմի և նրան լինթակա որպանների դժմադրության: Գիտությունների ակադեմիան հանձին Բրոսսելի մերժում եր աշխարհաբարի քաղաքացիականացմանը նվիրված նրա ձեռնարկները վորպես «գիտականորեն» արժեքադուրի դորձեր: «Հետագալում—պատմում ե Բողենշտեգտը—բանիմաց մարդկանց ազգեցիկ միջնորդություններն անհետեանք ելին մնում բաղական պատճառներով... Ռուս կառավարությունը ձգտում եր գիտություն ու արվեստ պաշտպանողի հոչակ ձեռք բերել... Սակայն ռուսական կատեխիզիսից տարբերվող ազգային ամեն մի զարգացում նրա աշքի փուշն եր «Թե ուսումն և հայերի ուղածը, թող ռուսերեն ուսանեն, թե աղոթելն ե, թող ռուսերեն աղոթեն», ասել ե ժողովրդական լուսավորության մոսկովյան վարիչներից մեկը, զեներալ Ա.-ը: Աբատեղից հասկանալի լե, վոր Աբովյանը, չնալած իր տոկունության և ընդունակության, անկարող պիտի լիներ Ռուսաստանում ի կատար ածել իր ձգտումները»¹¹⁴: Նույն դիմադրությանն ելին հանդիպում Աբովյանի պրոգրեսիվ ձգտումները նաև դպրոցական բնագավառում: Ուշադրավ են այս տեսակետից մի այլ գերմանացու՝ Քուռի և Աբաքսի ափերում նույն այս ժամանակ շրջադարյած կարլ Կոխի՝ դիտողությունները: Վեր հանելով Աբովյանի կրթական դերը, Կոխը նկատում ե, «Հնարավոր ե, վոր այս կամ այն հարցում նա շեղվում ե ժողովրդական կրթության բնագավառում պետության նախագծած ուղիից, քանի վոր արտաքին ձևականությունը չեր գոհացնում նրա դեպի վեր

¹¹³ Fr. Bodenstädt: «Die Völker des Kaukasus», Frankfurt a/M., 1868, 14p. 157.

¹¹⁴ Fr. Bodenstädt: «Tauseud und ein Tag im Orient», II, 165 և հետո

սավառնող հոգին. հնարավոր ե նաև, վոր նա ևս զործել ե զանազան սալթաքումներ, բայց, անկասկած, մինչև հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի մի ուսուցիչ, վորը նման սիրով ու այնպիսի զոհարերությամբ նվիրված լիներ մանուկների դաստիարակության գործին, ինչպես վոր Արովյանն ե... Սակայն, դժբախտարար, Արովյանին չեն ցուց տալիս արժանի վերաբերմունք: Չինովնիկների նեղարտությունը հաճախ ու շատ ե խանողարում նրան՝ առաջ տանելու իր աղնիվ ու բուռն ձգտումները... Յեթե Արովյանը վորպես Յերևանի զավառալին դպրոցի տեսուչ մաս կարողանա իր գործունելության ներկա շրջանի մեջ, իեթե նրան գործոն աջակցություն ցուց տան իրեն լենթակա պաշտոնյաները, այլև պահանջված չափով զնահատեն նրան, սպասելի յե, վոր Յերևանից մի նոր լուս ծաղի դժբախտ ու մոռացված, դարերով վոռնահարված, հայ ժողովրդի համար»¹¹⁵:

Արովյանի դժբախտությունն այն չեր ինքան, վոր տապակվեց գավառալին դպրոցի մթնոլորտի մեջ, և վոչ իսկ այն, վոր արժանի հատուցում չեր ստանում ցարական իշխանությանը ցուց տված և անբասիր ծառալության համար: Վատթարագուցնն այն եր, վոր Արովյանի միտքը չեր կարողանում պատռել իրեն ժամանակակից հասարակական հակասությունների շրջանը, թեկուզ և նրա միշտ «զեղպի վեր սավառնող հոգին», նրա «աղնիվ» ու բուռն ձգտումները, նրա «մուրազը» որեեկտիվորեն զուրս ելին խոյանում հաճախ ֆեոդալ-բլուզովորակատական ոեժիմի սահմաններից: Արովյանը նկատում եր իշխող ոռուտինային բազմաթիվ արյանդակությունները: «Հազարփեշեն» լերգիծաբանական գրվածքում Արովյանը հարվածում է ոռու այն չինովնիկներին, վորոնք Կովկաս դալով, վերից վար ելին նալում տեղական Շխալվին», ծաղրում նրա բարքերը, դիտում այն վորպես բեռնակիր գրասակամ կամ կաթնատու անատուն:

«Աստծոն ել չանես, խնդիրը չկատարես,
Ելի վոսկիքը, գլխով ջաքարներ,
Սունդուկով չայը, չալ-չալ մանեթներ,
Ելի ջերդ աժես, նրանց հոգին հանես,
Թե խոսը ել սսեն, քամակը դեմ անես.
Սսիացի մարդն զակոն ինչ գիտի,
Վոր քեզ հետ խոսա կամ համարձակվի:
Դւմըն տուբ, դրազըն կանդնիր, քեփ արմ,

¹¹⁵ K. Koch: «Wanderungen im Orient während der Jahre 1843 und 1844», Weimar, 1846–7, Bd. III, յեր. 75 և հետ.

Զերդ լցրու, քո յերկիր գնա.
Ո՞վ ա հարցնում, կամ դլուխոդ կտրում.
Անլեզու հայվանն տուն թողում, պահում
Շատ ել վոր տնեն, մեկ պողոսուդ կտան,
Պրժար, դլուխոդ առ, ու գնա քո ըան»:

Արովյանը դիտե նույնիսկ, վոր «անլեզու հայվանը» յերբեմն
կարող ե կոտոշներ առնել, ցուց տալ նման «իմաստուններին»
«մուշտու հունարը», — «մեր հայի մուշտին, վրացու քացին»:
Արովյանը դիտել ե նույնիսկ կովկասյան գլուղացու դադանակն
ու բահը:

«Բաղմանչիք կետով, թիով, գաղանակով
Վրա հասան՝ վոր նրանց ցխոտ բաներով
Գլխները ջարդեն, նահտատակ անեն»:

Սակայն Արովյանը թույլ չի տալիս, վոր կոփովը դադանակով
վերջանա.

«Բայց մեր խալիք սիրան կակող ըլելով,
Նրանց յետ կանգնացրին, վրա թափեցին,
Փիլխոփեցին ցխեց հանեցին.
Դմխները որբեցին, յերեսները լվացին.
Ել ձեն տալ նրանք հեջ կարմղ եյին»:

Կամ՝

«Մեր դոչադ աղերքն իրանց գուշմանին
Դանչեցին, սուփրի գլխին նստացրին.
Իրանք քեփ արին, նրանց քեփ շանց տվին»:

Բահից ու դադանակից առավել Արովյանը վստահ եր ուսումի ու
խրատի ուժին: «Ո՞վ չի գիտի, — զրում ե նա «Հայվարփեշա»լի՝
առաջարանում, — վոր տեղիցը վեր կացողը հենց մեր խեղճ խալ-
խի վրա յա վորը բարձրացնում... թե աստված կտա՝ մեր ասիա-
ցիք ել իիշ իիշ աշբեները բաց կանեն, են ժամանակը չեն թողալ,
վոր ամէն նայվարա մարդ (sic!) իրանց վրա բերան բաց անի»:
Արովյանը հավատացած եր նույնիսկ, թե «հայվարա մարդն»
իսկ վերջիվերջո խելքի լի գալու. ալդ ե ցուց տալիս հենց «Հա-
յվարփեշա»լի ֆինալը: Բլուրոկրատական ալլանդակություններին
վերջ գնողը «իսալիից» առավել նրան հրամայող կառավարությունն
ե լինելու. «Ախ, յեթե միայն ողարոն մինիստրը կամենար գի-
տենաւ, թե ինչ դրության մեջ են ալստեղ դպրոցները, — զրում
եր նա 1847 թ. վերջերին Ֆրենին: — Միայն ավելորդ փող ե, վոր
կորցնում ե արքունիքը, իսկ պատանիները խորտակում են սիրուն

ժամանակը... Թե խոսում ես այդ ժաման, քեզ հալածում են վորպիս աղանդավորի, չես խոսում՝ ստացվում ե խալտառակ մի դրություն, քո աչքի առաջ տարեցտարի վոտքի տակ են տրվում արքունիքի և քո իսկ հալրենիքի շահերը: Վոչ թե ուսուցիչների սոճիկը բարձրացնելով ե, զոր պետք ե վերջ դրվի անտանելի այդ դրությանը, այլ բարվոք կազմակերպություն մտցնելով, բանիմաց մարդիկ նշանակելով, իրենց գործը սիրով ու յեռանդով առաջ տանողներին խրախուսելով: Նվիրական խոսք եմ տվել հանգուցյալ Պարրոտին, անմոռանալի իմ դաստիարակչին ու բարեկամին, չթողնել յերբեք ուսուցչական ասպարեզը, անգամ յեթե ամենահարապուրիչ կարերն իսկ բացվելու մինի իմ առաջ: Այսուամենայնիվ հիմա զբիթե ստիպված եմ անելու ալդ քալլը, քանի վոր տասն ու մեկ տարի յի տեսնում եմ այս ոռւստինան և անկարող եմ վորեն բան անել դրա դեմ: Լավ ե մենակ 500 աշակերտ ունենաս, քան կը թություն տաս 50 աշակերտի 5 ուսուցչով, վորոնք վոչ մի բանի պետք չեն»:

Արովլանի այս ու նման արտօւնջները, հարկավ, կարեսը են՝ նրա քաղաքական մտայնությունը բնորոշելու համար: Սակայն, կրկնում ենք, ինքան այդ արտօւնջների մեջ բացակայում եք ոեթիմի հետևողական քննադատությունը, նրա հեղափոխական բացասումը: Բավկական չեր, իհարկե, տրտունջն ու գանգատը: Հիշենք, զոր սուս բլուրովկատիայի ծալքագավառալին անկարգությունների — կաշառակերությունների, կամալականությունների, բռնությունների — մասին գանգատներ եր հզում Պետերբուրգի ինքը Պասկեվիչը, Պասկեվիչի պահանջով ե, զոր սենատորական ոեվեղիա նշանակվեց Կովկասում, զորը կտրուկ միջոցներ պիտի առաջարկեր այս ամենին վերջ դնելու համար: Սենատոր Գանի ոեվիլիան, զորին Արովլանը այնքան մեծ հուկաներ եր կապել, հենց բարձր բլուրովկատիայի կողմից դրված նման պահանջների հետեւանքն եր:

Մարգսին ուղղած 1851 թ. մայիսի 23 թվակիր նամակում Ֆր. Ենգելը գրում է. «Ծուսաստանը, իրոք, պլողքեսիվ դեր ե կատարում Արևելքի վերաբերությամբ: Զնալած բոլոր իր զազրանքին և ոլավոնական աղտեղության, Ծուսաստանի տիրապետությունը քաղաքակրթիչ դեր ե կատարում Աև և Կասպից ծովերի ու Կենտրոնական Ասիայի համար, բաշկիրների և թաթարների համար. և Ծուսաստանը լուրացրել ե լուսավորության ավելի շատ տարրեր և մանավանդ արդյունաբերության տարրեր, քան ամբողջ, իր

բնուլիթով աղալական-ծուլամիտ Աեհաստանը»¹¹⁶: Մարքսիդմի կլասիկները նման նշումներով հետու ելին Աեհաստանի կամ Կովկասի վերաբերմամբ Ռուսաստանի գաղութավին «քաղաքակրթությունն արդարացնելու մաքից» «Յարական մոնարփիան — զրել և Աենինը — մերժում և ազգությունների ազատությունն ու իրավահավասարությունը, լինելով լացի ալդ բարրարոսության, վայրագության և ռեակցիայի զվարապոր հենարանը ինչպես Յեվրոպակում, նույնական և Ասիայում»¹¹⁷: Նույն այս կարծիքին ելին ցարական «քաղաքակրթության» մասին նաև Լենինի ուսուցիչները՝ Մարքսը և Ենդելսը: 1864 թվին Ենդելսին զրած նամակում, խոսմելով Կովկասի նվաճման և Աեհաստանի ապստամբությունը ճընշելու մասին, Մարքսը գրում եր. «Այս լիրկու գործերը — Աեհաստանի ապստամբության ճնշումը և Կովկասի նվաճումը — լիս համարում եմ 1815 թվից հետո տեղի ունեցած ամենալուրջ անցքերը», ասել ե. լեվրոպական ռեակցիայի ամենից աղետաբեր փաստերը¹¹⁸: Գրեթե միաժամանակ Մարքսը գրի առավ Խնտերնացիոնալի հիմնադրման աղբեսը, վորտեղ ասված ե. «Անպատկառ այն համերաշխությունը, լերսպաշտ այն համակրանքը և ապուշ այն անտարբերությունը, վորոնցով դիտում ելին Յեվրոպայի բարձր դասակարգերը, թե ինչպես և Ռուսաստանը տիրում Կովկասի լեռներին և խեղում հերոսական Աեհաստանը, բարբարոս ալս հըսկալի ահագին նվաճումները, վորի գլուխը Պետերբուրգումն ե, իսկ շոշափուկները լեվրոպական բոլոր կարինեաներում, ցույց տվեցին վերջապես բանվորներին, վոր ժամանակն ե արդեն, վորպեսզի նրանք թափանցեն միջազգալին քաղաքականության գաղտնիքների մեջ, վոր ժամանակն ե, վորպեսզի դիտողության առնեն իրենց կառավարությունների դիպլոմատիական գործողությունները և հարկը պահանջած դեպքում դիմադրեն զրանց՝ ձեռքի տակ լեղած բոլոր միջոցներով...»:

Ամելորդ ե ասել, վոր Աբովյանին ոտար եր միանգամայն նման դիրքորոշումը: Հայտնի յե մեզ արդեն նրա վերաբերմունքը վեպի Աեհաստանի չար վոգին՝ Պասկեվիչը և լունականների դեմ կուլող ճիվաղը՝ Բեհբուղովը: Պատահական լերևուլթ չեր այս Մնալով իր հիմքում «ճորտատերերի դիկտատուրա», Կովկասում և Միջին Ասիայում ցարիզմը նշանավոր չափով անդրադարձնում

¹¹⁶ К. Маркс и Ф. Энгельс: «Сочинения», XXI, յեր. 211:

¹¹⁷ Ленин: «Сочинения», XVI, յեր. 509.

¹¹⁸ К. Маркс и Ф. Энгельс: «Сочинения», XXIII, յեր. 188:

եր առևտրական և արդյունաբերական կապիտալի շահերը: Ինքնակալությունն այս կամ այն լեզանակով ընդուածում եր կապիտալիդմի շահերին, կապիտալիդմի, վորի զարգացումը Ռուսաստանում զնում եր «վոչ թե դեպի խորքը, ալ դեպի լայնքը» (Անին), այսինքն — զարգութալին եքսպանսիալի գծով: Արովանի աչքը շրջնում ելին հենց կապիտալիստական լուսավորության և մանավանդ արդյունաբերության այն տարրերը, վորոնք, ոնմիջորնեն դատելով, պլրովքեսիվ զիբք ելին տալիս Ռուսաստանին՝ խանական մեղի ու ծուլ Պարսկաստանի հանդեպ: Արովանը կառչում եր նոր, սուսական, ֆեոդալիզմից, նկատելով այն տվյալի առաջատար մի գործոն ազգալին լուսավորության և «քաղաքակրթության» տեսակեալից, քան կարող եր լինել հին, պարսկական, ֆեոդալիզմի նորմերին հլու շահերի և սարդարների ռեժիմը: Պարփակված ամբողջովին ազգայնական և դասակարգալին նեղ ալդ հորիզոնների մեջ՝ Արովյանը զանց եր առնում հաղափական ստրկության այն նոր շղթաները, վոր կռում-կռփում եր ցարերի և գեներալների, պամեշչիկների ու շինովնիկների, կռւպեցների ու ֆարբիկանտների Ռուսաստանը շահագործվող Արեւելքի ժողովուրդների և մասնավորապես հայ ժողովրդական մասսաների համար: Սահմանափակ իր տեսանկյունից Արովյանը չնկատեց և չեր ել կարող նկատել վոչ միայն ցարական եքսպանսիալի հաղափանապես սեակցիոն դերն Արևելքում, ալիև չըմբռնեց ընդհանուր-պատմական առքով պլրովքեսիվ այն նշանակությունը, վոր նրա ժամանակ իսկ ստանում եր ցարիդմի գեմ ուղղած ամեն մի ժողովրդական շարժում, անդամ լեթե ժամանակավորապես ալդ գլամորում ելին մեղի և ծուլ դասակարգի ներկայացուցիչները: Արովյանը համոզված եր ըստ լերեսութիւն, թե ազգալին ինքնապահության գիտակցությունն իսկ բավական և ցարիկմի հարգարիչ ազգեցությունը չեղոքացնելու համար: Արովյանը համոզված չեր, որինակ, թե ալդ՝ քաղաքականությունն ե, վոր ալս կամ այն կերպ կարող ե խախտել հայ լեզվի «իստակությունը». «Դուքս լեզուն վոր խստակ խոսս, ինչ վնաս ունի, հենց գիտում ես, թե սովորած խմաստությունդ ջները կթափի, կամ թե չե պետության սիրտն ես ուղում շահիլ Բարեխնամ տերությունը լեզր կուզի, վոր մարդ իրան լեզուն կոտրի, իր ազգից հեռանար: Բաս ել մեր են եսքան վարժատուն շինում, վարժապետ պահում, աստիճան, պատիվ տալիս» («Հանգի»):

Յեկ չնայած սրան, Արովյանի կացությունը վողբերգական եր

անգամ ազգալին կյանքի նեղ սահմաններում։ Խնդնամփոփ, զոց միջավարչներ կովկասահայերի ազգալին կյանքը, քանի վոր անցլալի արատներով ծանրաբեռնված՝ այն ներկայացնում եր միաժամանակ դասակարգալին շահազործման և քաղաքական բոնակարության տիրող սիստեմի խոտարած պատկերը։ Յեղիկելի մի իրականություն եր այդ, վոր պետք եր հաղթահարել բայց հաղթահարելու համար հարկավոր եր հենակետ փնտուել դարձլալ նույն այդ իրականությունից դուրս։ Մինչդեռ այստեղ ևս Արովլանը ապալինում եր այն իսկ ուժերի ոգնությանը, վորոնց տապալման միջոցով միայն կարող եր հնարավոր դառնալ իշխող կարգերի հաղթահարումը։ Այս հակասության, այս փեղկվածության մեջ եր հենց նրա «ազգալին վողերգությունը»։

Արովլանը յենթադրում եր վերակազմել «ազգն ու ինկեղեցին», ստեղծել հայկական նոր մի «վոսկեղար»՝ ապալինելով ազդի մեծավորների, կաթողիկոսի և նրա հետև կանգնած դասի՝ ազգալին փողքաթշների և մեծատունների աջակցությանը։ «Գրի լեմ հետեւ, —ասում ենա, —գիրը վոչ թուր ա, վոր կտրի, վոչ արծաթ ա, վոր մարդի մուրազը տեղ հասցնի։ Ախ, յարաք մեկ աստվածասեր իշխան ել ինձ կհարցնի, թե մուրազդ ինչ աւ Վոչինչ, յերեսիդ մեռնեմ, քեզ մատադ գնամ, այ ազգի պարծանք, իմ ազդի ճրադ իշխան, վոչինչ»¹¹⁹։ Հայտնինում ե, սակայն, վոր Արովլանի մուրազը հենց այն ե, վոր ազգի ճրադ իշխանը բաց անի նրա առաջ ազգալին դպրոցի դռները կամ թե, ինչպես գրում եր նա, «Մուրազն հենց են աելել, վոր գնամ ընկնիմ մեկ իշխանի վոտք, սահմ, ինձ մեկ կտոր հաց տա ու լես գիշեր ցերեկ ընկնիմ գեղեց գեղ ու մեր ազդի արած բաները հավաքեմ, գրեմ»¹²⁰։ Բայց ազգի մեծավորները, նրանք, վորոնց ապալինում եր Արովլանը, չընդառաջեցին նրա «մուրազին»։

Յերկրի անտեսական հետամնացությունը, նրա շուրջը և նրա ներսում ստեղծված ավատական հարաբերությունները, միջավայրի անծալը վայրենությունն ու տգիտությունը, կղերական և չինովնիկական ինտրիգներն ու կամայականությունները, անձնական հանգամանքների ձախորդ գասավորությունը՝ այս բոլորը նպաստավոր պարմաններ չելին արգասավոր գործուներության համար ծակավին Դորպատի ուսանող եր, յերբ կարքեցուն շրջապատողու-

¹¹⁹ «Թիգլիդի հայոց հանդստարարանը»։

¹²⁰ «Վերը»ի առաջաբանը

ները, կամենալով արմատախիլ անել ներսիսլանների աղեցությունը, Արովլանի վրա արձակեցին իրենց կարիճները, զրպարառությունների անանցանելի ցանց հլուսելով նրա անվան շուրջը: Դորպատարան որագրում Արովլանը արձանագրում ե ալդ առիթով այս առղերը. «Եատ անդամ ման ելի կամենում ինձ. մտաղրվել ելի լեթե հնար լինի դեղաման լինել. շատ անդամ սաստիկ ձըմքանը առանց ջորապի ելի գնում, վորպեսզի սրանով դժնեմ իմ մանը»^{121:} Դեռևս հալրենիք չեր վերադրձել Արովլանը, լերը «St.-Petersburger Zeitung»ում տպած իր հոդվածում դանդառագում եր, թե վորքան վիրավորանքներ ե կրել ինքը թեկուզ հենց Արարատը բարձրանալու «սրբապղծության» համար. «Իմ լերկրի ժողովուրդը Անդրկովկասում — զրում եր Արովլանը — ալդ պատճառով ինձ հետ թշնամացել ե և սպառնացել ինձ»: Հալածանքը սաստկացավ Դորպատից վերադրանալուց հետո. սրան զուգընթաց խորացավ նաև Արովլանի հոգեկան տագնապը: Կարրեցին թշնամարար դիմավորեց նրան. նա վոչ միայն հրաժարվեց Արովլանի ձեռքը տալ լուսավորության կաղըեր պատրաստելու գործը, ալլե փաստորեն զրկեց նրան «հոգեոր կոչումից»: Վոչ ոտար դավանությանց գեղարտամենտի և վոչ ել Գանի հանձնարարականներն ազդեցին կարրեցու վրա: «Հրամանով ես գալիս ինձ վրա, հավատից վտարանդված» — կարքեցու հարձակողական ալս խոսքերը ցուց են տալիս անդամ, վոր ոռու բլուրոկրատների դրական ատեսացիան միայն սաստկացնել կարող եր ավանդապահ կղերի կասկածամտությունն ու խանդը: «Յեվրոսալից վերադրանալուց հետո տարի ու կես մնացի Թիֆլիսում զառու որվահացի — զրում ե Արովլանը: — Ամեն ըովե արքունական ծառայություն ելին առաջարկում ինձ, բայց իմ իղձն ու նպատակն եր՝ չթողնել հոգեոր կոչումս: Հետազալում սենատոր Գանը և, վորը ինձ սիրում եր վորդու պես, անձնապես միջնորդ լեղավ ընդունել տալու ինձ կրկին հոգեոր զասի շարքը, բայց լուսահոգին լութերական համարելով ինձ, չհարգեց նույնիսկ ալդքան լերեւելի մարդու խնդիրը»^{122:}

Անգործությունից նեղված Արովլանն անցավ վերջիվերջո պետական ծառայության: Սակայն այստեղ ևս նույն հալածանքը, նույն անհասկացողությունը: Յերը 1839 թ. դպրոցների վար-

¹²¹ Հմ. Ն. Տեր-Կարապետյան, ն. ա., յեր. 141:

¹²² «Փոբձ», 1880, № 9, յեր. 195:

չությունը հանձնվեց գիրեկտոր Դեմենտյանին, վորին, Ֆրենին՝ գրած նամակներում, Արովյանը ընորոշում եր վորպես «հայատադրաց» և անձնապես իրեն թշնամի մեկին, Արովյանի սիրաց առ ու սարսափի մեջ եր դարձլաբ իր այդ ժամանակվա ապրումներն են, ըստ իերութին, վոր գրի յե առել «Թուրքի աղջկիր» գրվածքում. «վոր լսում եփ, թե մեկ մարդի պատիժ տվին, յա բանովը քցեցին, վոր ասում եցին, թե Ռուսաստանիցը մեծ մարդ ա եկել վոր մեր յերկրի ահվայն քննի իմանա, վոր կուսակալվցը, յա մինիստրիցը մեկ թուղթ եր զալիս, վոր գիրեկցիիցը ստորոժը գիրքը կոնսատակին աչքիս չեր յերկում, ենակես ելի սարսափում, կարծում ելի, թե ես ա, իմ վերջի որը հասել մոռացել ա, իմ արած չարությունը լիս ընկեր Պետերբուրգ, Մոսկով, Թիֆլիս գանգատով լցվել են, իմ բարեկամքը ինձանից ձեռք վերցրել իմ թշնամիքը ինձ մատնել, ինձ պետք ե տանեն սաղ սաղ թաղեն, յա կախ տան: Աստված իմ թշնամուս չի տա եսպես սիրա, եսպես միտք: Յերեակալությունը մարդիս վար գժոխքը չի տանիւ յեղ բերիլ: Հոգեկան ալս կացության մեջ Արովյանին ուղեկցում եր դարձլալ ինքնապանուրյան միտքը: «Ինձ պահողը հենց ես եր, վոր ասում ելի, թե մաքումդ գրել ես ազգին պետք զաս, մեկ անուն թողաս, կմեռնիս, մեկ վրեդ կանգնող, վողորմի ավոր ել չի ըմիլ Ասպիր, վոր ասածդ անես, մուրազդ անիս: Ես, ես եր ինձ ամեն գժոխքից, պատուհասից ազատում, հոգիս յեղ բերում, թե չե Քուռք վազուց կըլեր իմ գերեզմանը: Լողի, կարգացող թող ինձ դնամիշ չանեն, վոր իմ մեղքս իմ բերնովս եմ խոստովանում: Մարդ իրան սիրաց վոր փակի, մվ կիմանա, մվ կզգա, թե նրանում թնչ կա: Բայց եսպես դժոխք սիրա՝ աստված վոչ տա, վոչ ստեղծի»¹²³:

Ազգային «մուրազդ» կյանքի գլխավոր ստիմուլն եր Արովյանի հաւաք: Միայն թե բացակալում ելին այն իրադրծելու միջոցները: Յեկ ալս ե հենց, վոր մէրթ մղում եր նրան մահվան գիրկը, մերթ ուղղում նրա հայացքը դեպի աղջի: «բարերարները»: «Ես ա տասն հինգ տարի յա, — զրում ե Արովյանը «Թիֆլիսի հայոց հանդստարան»ում, — վոր տանից, տեղից, սիրելուց, բարեկամից, պատվից, փառքից ձեռք եմ վերցրել հեռացել աշխարքեախարքը ընկել գլուխս քարեքար տվել, վոր իմ աղջին պետք զամ, մեկ հարիր աղքատ յերեխայի ձեռքից բռնեմ, ինչ գիտեմ, նրանց

¹²³ «Անտիպ յերկեր», յեր. 8—9:

սովորեցնեմ, նրանց սիրտն ու հոգին բանամ, իմ սրտիս դարդերը բոլորը մեջն ածեմ, ազգին ինչ զեղ ա հարկավոր, նրանց տամ, գեղեր, քաղաքներ ու զարկեմ, վոր գնան, իրանց բարի սերմը մեր բարի ազգի լերեխեքանց սրտումը ցանեն, նրանց երված սիրտը հովացնեն, բերանները լիզու գնեն, սրտներում զվաթ, վոր հասնողը նրանց զլիսին չտա, ինչպես մինչև ես որ տվել են, ու հետո, այս, հետո գերեզման մտնիմ, հետո աչքս խփեմ, հոգիս հովանա, մարմինս դինջանա:

Ես ա իմ մուռազը, լերեսիդ մեռնեմ, այ հալազդի իշխանք... Յերեխսա ելի, հստուր ցանկացա, գերեզմանը մտնիմ՝ ես կդառնա իմ մարմնի ցեցը, իմ հոգու գժոխքն ու տանջանքը...»¹²⁴:

«Յուրաքանչյուր լերկիր — զրում և Արովյանը 1839 թվի փետրվարի 23-ին Ֆրենին — իր կուլտուրալի համեմատ ունի իր կարիքները, և լիթե քո տրամադրության տակ կան այդ կարիքները բավարարելու միջոցները և լիթե բախտ ես ունեցել ժամանակին թեթևացներու քո այդ մասին ունեցած հոգսերը, ամեն ինչ կարգին կդնա: Հակառակ զեպքում կպատահի այն, ինչ պատահեց ինձ, լերը իմ զպրոցական ընկերները և նույնիսկ իմ աշակերտները, վորոնք մնացել են ալստեղ, կարողության տեր են դարձել հիմա, հմայք ու վորոշ կշիռ ձեռք բերել իրենց հսմաքաղաքացիների շրջանում, մինչդեռ լես վոչ մի բանի ել չհասա: Վորաբեն հոգեռորական լես խորտակեցի իմ կարկերը միանդամայն և ընդմիշտու իմ ժողովրդի մեծ մասը թշնամի դարձրի ինձ, վորովինետե իմ ձկոտումներն ավելի բարձր հմայք ունելին իմ աշքում, մինչդեռ նրանք կամենում ելին հեռու պահել ինձ դրանցից»...

Արովյանը փորձ արեց հաղթահարել ժողովրդի թշնամանքը, ազդել մասսաների վրա: Յերբեմն թվում եր, թե հաջողվում ե այդ: «Հիմա, — զրում և Ֆրենին 1841 թ. հունիսի 2-ի նամակում, — փառք աստծո, տեսնում եմ հաճուկքով, վոր իմ ազգը կամաց կամաց սկսում և սիրել ինձ»:

Արովյանի գրչի տակից թուած անսովոր տողեր են սրանք, Ռւշադրություն դարձրեք տարեթվի վրա: 1841 թվականը — «Ներք»ի դրության տարին և այդ, Արովյանի համար բացառիկ ընդմինավորության մի տարի, լերը գրի առնվեցին, ըստ լերեկութին, նաև նրա բոլոր մյուս քիչ թե շատ նշանավոր գործերը: Դրանից առաջ և գրանից հետո ստեղծագործական նրա ավելնը կաշկանդող դառ-

¹²⁴ «Տարագ», 1914, № 1, յեր. 8:

նութիւնների անընդհատ մի շղթա լեռ Արովյանի կլանքը, քանի վոր նրա հոգեկան աշխարհում չեր փալատակում այն գիտակցութիւնը, թե «ազգը» սիրում ե իրեն։ Ի՞նչն եր կամ՝ ով, վոր գեթ վայրկենապես հուշեց նրան հակառակը, վստահութիւնն ներշնչեց նրան։ «Վերք»ի առաջարանում հեղինակն ընդգծում ե մի հատիկ մարդու՝ «հայազգի պարոն դոքտոր Ազաֆոն Սմբատյանի» անունը, վոր խրախուսեց աշխարհաբար նրա ստեղծագործութիւնը։ Ո՞վ եր այդ մարդը—չփատենք դժբախտաբար։ կարող ենք ասել միայն, վոր այդ անունը չի հանդիպում Թիֆլիսի «պատվավոր» մոքաւաքների, ազգի լեռնելի «Եշխանների» և փոլքաթշինների ստորագրած մեզ ծանոթ ժամանակակից հանրագրութիւնների տակ։ Անշուշտ, լուսամիտ մի մտավորական եր նա, բացառիկ լեռնուկի շրջապատող խավարի մեջ։ «Նրա սուրբ բարեկամութիւնն եմ պարտական, — գրում ե Արովյանը, — վոր մունջ լեզուս բացարեց»։

Վաղանցուկ, խարուսիկ խանդավառութիւնն վալրկաններ ելին սրանք Ազգի վրա ազգելու համար Արովյանի տրամադրութիւնն տա՛լ կար լերկու միջոց—գպրոցը և գրականութիւնը։ Դպրոցի ուղին ծածկում եր անանցանելի փուշ ու տատասկի Հեղտ չեր նաև գրականութիւնն ճանապարհու Գրական լեզուն—գրաբարը—անամատչելի բազմութիւնը, աշխարհաբարը—«անպատիվ», հարածական։ Արովյանի աշխարհաբար անդրանիկ խսկ աշխատութիւններից մեկը, 1841 թվին Թիֆլիսի գիմնազիալին ներկայացրած ընթերցարանը—(«Նախաշաշավիղը»), վորտեղ մուտք ելին դործել էլերեանլան գոհեիկ բարբառը, հարևան աղջութիւնների բառամթերքը, «ժողովրդական լերդն ու հանաքը», դատապարտվել եր ազգային «ուսումնականների»—Առաքել Արարատյանի և Դավիթ Արզանովի—կողմից վորպես կանոնի և ճաշակի գեմ ըմբուտացող մի հոգացում, վորպես «տհաս մտածողութիւնց պառուղ», «անպետք» ընթերցանութիւնն և գործածութիւնն համար¹²⁵։ Տպագրութիւնն հանձնված «անգետք» այդ գիրքը լուս չտեսավ մամուլի տակից, քանի վոր, ինչպես ասում են, Թիֆլիսի վիճակավորը, կարապետ արքեպիսկոպոսը, «տեսնելով, վոր այս գրքուիկը աշխարհաբար լեզվով ե շարադրված, տպագրելն արգելել ե»¹²⁶, չուսահատական եր Արովյանի գրութիւնը։ Յեղ դարձյալ մեր ական-

¹²⁵ Տե՛ս «Արձագանք», 1896, № 102, Ալ. Ցերիցյանի հբատարակած նյութերը։

¹²⁶ «Կոռունկ», 1861, № 7, յեր. 541։

յրն և համուռմ Արովլանի ծանոթ լալտ-մոտիվը: «Եսպես բաներ մտածելով, որս ու ումբրս մաշվել եր, — կարդում ենք «Վերք»ի առաջարանում:— Շատ անդամ ուղում ելի իմ գլուխս մահու տամ: Զելի խմանում, թե սրա չարին ինչ կըլի: Թող լսողը չհավատա, ամա ևս ցավը ենակես եր սիրտս առեւ վոր շատ անգամ գժվածի պես ընկնում ելի սար ու ձոր, ման գալիս, մտածում, ել լեռ սիրտս լիքը տուն գալիս... զուրն ընկնի ել չելի կարող, չունքի աստծու ահը մտքումս, անմեղ քոռվիս ձենը ականջումս, սերն ու ծնողական գութը ջիպլարումս, լես դինջանալի, լեթըմին ռվ պահեր»:

Արովլանի «կենսագրողներն» աշխարհաբարի ծննդան իբր կունք են համարել այս տողերը: Տարորինակ «իբրկունք», վոր սկսվել եր աշխարհաբարի ծննդից այնքան առաջ և դադար չառավ նույնիսկ նրա «ծննդից» այնքան անց: Արովլանը զրեց իր կտակը, «Աղքասեր մարդը իր մեռնելու վախտը» վերտառությամբ: Այդ վոտանավորի մեջ զրել ենա իր կրանքը մաշող ապրումները.

Փակ եր աշխարհը, ուն իմ քաշած որն,
Վոր ձեռս չհասավ, ինչ ուղեց սիրտս վոր...

1841 թիվի սեպտեմբերին զրի առած չափական մի ալլ գործի մեջ Արովլանն ակնարկում ե դարձլալ անձնասպանության մասին: Դիմելով իր մի բարեկամին՝ նա ասում է.

«Պարզի ես խալվար միտես, զոր ինձ մեկ որ
Վոչ մահ ե տալիս, վոչ կյանքս առնամ, զոր
Կորչիմ, աշխ, պրծմիմ ես դասն աշխարհիցս,
Կարովի ես չար շլամ յեղեկիցս.
Հոգիս ենդ պահ տամ, ու մարմինս հաղին,
Ու են զինումն ել թե դժոխքն ինձ տանի,
Քո սուրբ աղոթքը ինձ մեկ ճար անի,
Թե յես անարժանս եմ սուրբ արարի
Պատկերն իմ ձեռնովն, աշխ, խանգարեցի,
Քո արգար ձեռը, քո սուրբ բերանը
Բալքի ինձ չարա անի են ատյանը»¹³⁷.

Թիֆլիսից հեռանալը չփոխեց Արովլանի մահասարսուռ ալս ապրումների ընթացքը: Կացությունը նույնն եր՝ Թիֆլիսում թե Յերևանում: Յերևանում նրան դիմավորեց նույն տգետ, բութ

¹³⁷ «Անտիպ յերկեր», յեր. 34 և հետա հմմ. Նաև «Իմ բարեկամ Աղաջան վարդանյանի պատկերի առաջն» վոտանավորը:

ու մութ ուսուցչությունը, ալստեղ ևս լարվեցին նրա զեմ նույն շինովնիկական ինտրիգները, Թիֆլիսում Արովյանը միիթարություն եր գտնում լերբեմն զեթ սաների շրջանում: Յերեանում ուրդ իսկ չկար. ալստեղ նա միայն գավառալին դպրոցի վերատեսուչ եր: Այս ամենին ավելանում ելին քաղաքացիների վայրենի բարքերը և մանավանդ՝ նրանց հակալրանքն ու ատելությունը դեպի Արովյանն ու նրա գործունելությունը: Արովյանի առաջարկով՝ թուրք մզկիթներին կից բացված դպրոցներում մտցվել եր ուսու լեզվի դասավանդությունը, մահմեղական կղերից պահանջվում եր ուսու լեզվի գիտություն, արգելքներ հարուցվում թուրք և հայ մասնավոր դպրոցների ուսուցիչների առաջ: Քաղաքացիները չելին կամենում գավառալին դպրոց ուղարկել իրենց լերեխաններին: Յերեանի քաղքենիները՝ հայ թե թուրք, լերկլուղ ելին կրում, թե իրենց զավակները գավառալին դպրոցում կմոռանան մալրենի լեզուն ու կրոնը: Նրանք թշնամական վերաբերմունք ունեին գիտի ուսուական դպրոցը տակավին Արովյանից առաջ: Այդ վերաբերմունքը սաստկացավ Արովյանի ժամանակ, իրեն՝ նախորդող վերատեսուչների որինակով Արովյանը ևս վստիկանության միջոցով եր հաճախ դպրոց բերում աշակերտներին: Վորագեսձալրահեղ միջոց՝ նա ևս առաջարկեց փակել մզկիթների դպրոցները և արգելել աշխարհականներից աշակերտներ ընդունել հայոց թեմական դպրոցում: Ավելացնենք այս ամենին նաև նրա նոր պահանջը՝ գավառալին դպրոցում պրավուլավ գավանանքի ուսուցումը պարտադիր անել նաև հայութեաների համար¹²⁸,

Այս փաստերը շփոթության մեջ են զցել Արովյանի նացիոնալ-դեմոկրատ իկոնոգրաֆներին, ազգասեր նրա վարքագիրներին. վոմանք փարատել են իրենց արդ շփոթությունը այն դիտողությամբ, թե՝ արեգակի վրա ևս «բժեր» են լինում. մլումներն, ընդհակառակը, փորձել են «արդարացնել» Արովյանին՝ մատնանշելով ուսու դպրոցի կամ ուսու ուսուցչության «կուրսուրական» առավելությունները: Էնկ. Ակսեն իսկ խճճվելով ազգալին քաղքենիների տնալին այս վեճերի մեջ՝ հարել ե իր գրքում վերջին տեսակետին: Ուշագրավ ե, վոր վիճող կողմերը լուռթյամբ են սահում ամենից փափուկ նյութի՝ պրավուլավ գավանանքի դասավանդման խնդրի վրայից: Զե՞ վոր այս մեկ հատիկ փաստը բավական եր պատրիոտիկական

¹²⁸ Հմ. «Տեղեկագիր», № 3, յեր. 127 և հետ., «Հորիզոն», 1914 թ., № 84 և 91 և Ռոմանովի: «Историческая записка об Эриванской гимназии», Тифлис, 1890, յեր. 54—57:

նրանց սխեմաները հիմնիվեր գլորելու համար կարծում ենք՝ մեզ համար մնապարձության առարկա չեն կարող լինել Արովյանի արժանիքները, ինչպես նաև ընդհակառակը, խայտառակության ասիթ՝ նրա արատները: Չենք կասկածում, անշուշտ, վոր «կուրտառական» իր այս ձեռնարկություններով Արովյանն որբեկտիվորեն ճանապարհ եր հարթում ցարիզմի գաղութալին եքսպանսիալի առաջ՝ անդրադարձնելով այս մարզում կովկասահալ առետրական բուրժուազիալի ընդհանուր և տևական ինտերեսները: Չենք տարակուսում նաև, վոր Արովյանի «բծերը» նշավակող քաղքենիները, իրենց հերթին, անդրադարձնում ելին նույն դըժդությունը, վոր առաջ եր բերում նրա բռնած դիրքն իրենց տեղական և անմիջական ինտերեսներին հետամուտ բուրժուական վորոյ խավերի մեջ:

Արովյանը վոչինչ սեր ու հարգանք չեր վալելում «համաքաղաքացիների» զրջանում: Իր հերթին Արովյանը ևս չեր սիրում, ըստ Եերեսութին, «Եերեսանցիներին», վորոնցից մեկի զվարին փորձել և անդամ ձեռնախալտի սահսրիչ ուժը: «Յերեսանցիները» — այսինքն Արովյանի հետ շիռում ունեցող՝ քաղաքի առետրականները և որանց հետ կապված կամ սրանց աղղեցությանը լենթակա քաղքենիները ճանաչում ելին նրան վորպես ռուսական շահերին նվիրված, ռուսների տիրապետությունը ջատագովող կոլեժակի առեսոր Խրիստափոր Արտեմ լելիչ Արովյան: Այս և պատճառը, վոր նա դուք չեր զալիս Յերեսանի քաղքենիներին: Արովյանի մուծած գիմուրատական ռեփորմներն իսկ այս պայմաններում «ի չարեն» ելին թվում դարձաւ դեմ առնելով միաժամանակ զրջապատիթանձրացած տղիտությանը: Սակայն տղիտությունից առավել բարբառում եր զասակարգային զիտակցված ինտերեսը: Խընդիրն այն ե, վոր ռուսական նույն այն տիրապետությունը, վոր վերջին հաջովով «կուրտուրական» կատարալ մի բարիք լեղավ կովկասահալ բուրժուազիալի համար ընդհանրապես, վակատար չարիք հանդիսացավ մասնավորաբար և անմիջորեն՝ Յերեսանի վաճառականության համար: Պարսիկների ժամանակ Յերեսանը խոշոր մի շահաստան եր՝ Անդրկովկասի աղատ արանգիալը նովաստում եր մեծապես սարդարների մալրաքաղաքի տնտեսական զարգացմանը: Քաղաքի առետրական զրջանառությունը կապված եր մեծապես իրա սարդարի և քաղաքում ապրող խաների, բեկերի ու միրզաների անտեսական-Փինանսական գործառնությանց հետ: Սարդարին լենթակա զորքի, հարեմի և պալատական

նրա մլուս պետքերի գոհացումը նպաստում եր ըստ ամենալինի առևտրավաշխառուական կապիտալի ուռճացմանը։ Չմոռանանք, վոր սարդարները խոշոր առևտրականներ ելին միաժամանակ, վորոնք շոշափելի ներդրումներով «բեղմավորում» ելին քաղաքի առևտրական խոշոր ձեռնարկությունները։ Նրանց որինակով խաները ևս խոշոր վարկեր ելին հատկացնում քաղաքի առևտրականներին¹²⁹։

Այս բոլորը վերջ առավ ոռւսական տիրապետության առաջին յերկու տասնամյակների ընթացքում։ Այսպես ե վկալում նախ և առաջ կոմպետենտ ալյափիսի մի անձ, ինչպիսին ի. Շոպենն եր։ Պատերազմական ավերումներից անմիջապես հետո, 1829—1830 թվականներին, քաղաքի առևտրին մեծ վնաս հասցըեց ժանտախտն ու խոլերան։ 1832 թվականից ի վեր զրեթե զաղար առավ պարսկական տրանզիտը, վոր գլխավոր աղբյուրն եր բուրժուազիալի տնտեսական բարեկեցության։ «Այն որվանից, ինչ քաղաքը ոռւսական ձեռքն ե անցել, — զրում ե 30-ական թվականներին Յերևանն այցելած նշանավոր մի ճանապարհորդ, — առևտուրը քչացել ե և ալժմ աննշան ծավալ ունի։ Այս ե տրանզիտի արգելման արդյունքը»¹³⁰։ Նույնն ե վկալում նաև 1843 թվին Արովյանի ուղեկցությամբ Հայաստանում ճանապարհորդած Մ. Վաղները։ «Պարսկաստանից Վրաստան տանող ճանապարհների մեջտեղն ընկած լինելով Յերևանի քարվանսարանները մշտական լեռուղեռի մեջ ելին առևտրականների և քարվանների մեծ լերթևեկի շնորհիվ... Շուկան ապրանքով լիքն եր, շրջակալքի զլուղացինները լավ գներով վաճառքի ելին հանում այստեղ իրենց մթերքները։ Ով զրաստ ուներ՝ կարող եր լավ ստակ շահել... (ի գետ ի՞նչպես և ներդաշնակում ալս «Վերք»ի նահապետական «իդիլիալին» և մանավանդ՝ արդ իդիլիալի շուրջը «հյուսված» տեսություններին։ — Ա. Հ.) Բայց այն որվանից, ինչ Ռուսաստանի լերկզլսանի արծիվն Արաքսի ափերն ե հասել, և Կանկրինի չարաբախտ մաքսալին սիստեմը տարածվեց նաև կովկասյան նահանգների վրա, այս լերկրի արնքան ծաղկած վիճակում գտնված տրանզիտալին առևտուրը միանգամայն ընկած վիճակի մեջ ե գտնվում։ Քարվանները խուսափում են ռուսական շրջանը, և զրեթե բոլոր հա-

¹²⁹ Տես՝ Шопен: «Исторический памятник и пр.», յեր. 871 և հետո։

¹³⁰ K. Koch: «Reise durch Russland nach dem kaukasischen Isthmus in den Jahren 1836, 1837 und 1838», Stuttgart und Tübingen, 1843, հատ. II, յեր. 398։

բուստ առետրականներն արտադադիթել են ալստեղից կամ աղ-քատացել ինչպես և մնացած աղդաբնակությունը՝ Զարմանալի չե, վոր, չնայած կրոնական ատելության և սարդարների բռնապետության տխուր հիշատակներին, այս քաղաքի մի վորոշ տեսակի հայեր շատ կցանկանալին, վոր վերադառնար դարձլաւ պարսկական իշխանությունը՝¹³¹

Նման վկալություն գտնում ենք նաև Հաքստհառուղենի գըրքում։ Յերեանցիների «հանդիսավոր մի պատգամավորություն» ալցիելով նրան՝ գանդատվել եր, թէ կառավարությունը խել և քաղաքից նրան պատկանող լեկամտաբեր հողերը, վորով սարսափելի ծանրացել են քաղաքի տուրքերը, Հայտնում են, վոր պարսիկներից հետո ճնշումն ավելացել ե. ճիշտ ե, կամալականություններն ու բռնությունները շատ ելին, բայց դրա փոխարեն՝ քաղաքի տուրքերը քիչ։ Ռուսական զրամով հաշված՝ առաջվահինդ հազար ռուբլու փոխարեն՝ քաղաքը հիմա տասնեհինդ հազար ռուբլի իւ վճարում և բացի ալդ՝ ալլ և ալլ պարտադիր աշխատանքներ կատարում։ Թլուրքիայից ներմուծվող ապրանքների դիմաց առաջ վճարում ելին ձիարեռին լերկու արասի։ Հիմա՝ Պարսկաստանից ապրանք մտցնելիս պետք ե վճարել պարսիկներին ապրանքագնի 10⁰/0-ը, ոռուներին — նույնչափ։ Պարսկահպատակ վաճառականներն, ընդհակառակը, ազատ են իրենց գանձարանին վճարվող տոկոսներից և հաջողությամբ մրցում են տեղացիների հետ։ Աւնեորներն այդ պատճառով գաղթում են ուղղակի Պարսկաստանին¹³²։

Ճնաժամամալին այս շրջանը տեսց, ինչպես հայտնի լե, մինչեւ Արովյանի անհետացումի տարին, մինչեւ 1848 թվականը, — լերբ Վարանցովի վարչությունը վերականգնեց նորից աղատ տրանզիսի քաղաքականությունը։

Պարզ ե, Արովյանի պալքարը, նրա պառակտումն անմիջական իր շրջապատի հետ սոցիալական-քաղաքական խոր հիմքեր ուներ, և այս ե, վոր անտանելի լեր դարձնում նրա կացությունը Յերևանում։ Հետաքրքիր ե, վոր քաղաքի առևտրական շրջանառությունների նվազումն ավելորդ եր դարձնում Յերևանում նույնիսկ Արովյանի գավառապին զպրոցը։ Թվելով դպրոցի անհաջողությունները՝ Արովյանը մատնանշում եր գլխավոր պատճառներից

¹³¹ Wagner, ն. ա., յեր. 64 և հետո։

¹³² Հմմ. Հաքստհառուղեն, ն. ա., I, յեր. 178։

մեկը. «Ռուս գրաճանաչության սակավ հարկավորությունը առետրական տեսակետից, քանի վոր տեղացիք իրենց վոչ-բազմաթիվ գրադրությունը կատարում են տեղական լինություն՝¹³³ Արովյանը բացատրում ե նաև, վոր դպրոցը չեն հաճախում նաև աղնվականների զավակները, — վորովնետե Յերեանում աղնվական ծագում ունեցողների թիվը խիստ պակաս ե, — ինչպես նաև արհեստավորների զավակները, քանի վոր դպրոցի վահկատար դասընթացն ավարտելու համար յերկար ժամանակ ե պահանջվում, վորով աշակերտները կարող ելին հետ մնալ արհեստից՝¹³⁴ Ընդհանուր առմամբ, հարուստներից առավել դպրոցը հաճախում ելին չունեոր տարրերի զավակները, հույս ունենալով բաց անել իրենց առաջ պետական ծառարության ասպարեզը՝¹³⁵ Նկատողության արժանի լե, վոր աշակերտների թիվը, վոր խիստ պակաս եր ընդհանրապես, 1847 թվին, չնայած գործ դրած բոլոր միջոցներին, սկսեց ավելի ևս նվազել՝¹³⁶

Բնական ե, վոր ստեղծված պայմաններում Արովյանի հածող միտքը շարունակեր դարձյալ «նոր տուն և նոր հալրենիք» փընտռել հարազաս միջավայրից դուրս։ Մանավանդ վոր Յերեանում բավականին բարդացել եր նաև նրա ընտանիկան կյանքը, ինչպես այդ յեզրակացնել կարելի լե նազարյանցի 1845 թ. նոյեմբերին նրան ուղղած մի նամակ-պատասխանից՝¹³⁷ Մանը եր մանավանդ նաև նրա նյութականը, հանգամանք, վոր վեր և հանում հատկապես Բողենշտեգու անձնական դիտողությունների և Արովյանի գրավոր տրտունջների վրա հիմնվելով։ Անդրկովկասյան դպրոցների դիրեկտորին 1845 թ. հունվարի 12-ին ուղղած մի թղթում Արովյանը գրում եր, վոր հույս չունի այլևս անփորձ դուրս գալու Յերեանից։ «Այժմ ապրում եմ մի այնպիսի տեղ, — գրում ե նա, — վորտեղ ընտանիքս հիվանդությունից և անտգնականությունից և մենք յերկուսս միասին ձանձրույթից և մեր ընտանեկան կյանքի քայլքայումից չենք իմանում, թե արդյոք պիտի կարողանմնք այստեղից դուրս գալ մի վորեիցե կերպով»¹³⁸ Նույն այս շրջանին ե վերաբերում նաև պաշտոնը լքելու, գյուղ

¹³³ «Տեղակագիր», № 3, յեր. 131:

¹³⁴ Ն. տ.:

¹³⁵ Романовский, ն. տ., յեր. 58:

¹³⁶ Ն. տ., յեր. 61:

¹³⁷ Տեղ «Մուլճ», 1903, № 3, յեր. 125 և հետև.

¹³⁸ «Տեղեկագիր», № 3, յեր. 126:

գնալու միտքը, վորի մասին գրել եր Բողենշտեղտին։ Հստ յերեսութին, այս խսկ մտքին և անդրադառնում Արովլանը 1846 թ. ոգոսառու 31-ին Մ. Եմինին հասցեագրված մի նամակում։ «Յես վերջացրի համարլու թե կլանքիս նպատակը։ Բազմապիսի սրտամաշութլունները չուտապես փակելով մեր ազգի մանուկների ուսման ոգաբին նվիրված բոլոր իմ իղձն ու դիտավորութլունը՝ ստիպում են ինձ հրաժարվել պաշտոնից և վորոնել ինձ համար առանձնական վիճակ։ Անհնարին և աքացել խթանի դեմ։ անշուք Յերանում լավ և ունենած կազմ ու պատրաստ մի եւ կամ ջորի, քան բոլոր քո հրեշտակալին զիտութլունները։ Բայց վոչ թե ժամանակը կամ հանգամանքն եւ և վոչ եւ Յերևանը կամ վորևէ մեկը, վոր կըսում են և առաջ բերում այս անաջողութլունը։ Սիսալ ե, վոր մեր ազգը ուսումնատպաց և համարվում։ ամեն մի ուսում և կարգագրութլուն պետք և համապատասխան լինի ժողովրդի վիճակին և կարողութլուններին։ Մեզ հետ ալսպես չեն վարվում, ուստի և պարտավոր ենք կամ իրրե վարձկան՝ հետամտելով միայն մեր ոգուտը՝ շարունակել սույնորինակ պաշտոնը, կամ թե՝ միանգամայն հեռանալ նրանից, խղճի և սրտի անդորրութլուն ստանալու համար։ Վերջինս վորոնելով հիմա՝ կամենում եմ առանձնանալ՝ բարձրյալի կամքին թողնել ամենն, ինչ վոր լինելու յե¹³⁹։

Պահ մի, ճիշտ ե, թվաց Արովլանին, թե մոտենում եւ «մուրագի» իրականացման ժամը։ Ներսեսի կաթողիկոսության սկզբնական շրջանում եր այդ, իւրը թվաց, իսկապես, թե վերջ պիտի լինի այս տառապանքներին։ Արովլանը ուղղում և ներսեսին ուշագրավ մի նամակ՝ թափելով նրա առաջ ազգային լուսավորության ընադրավառում իր կըսած դառնութլունները։ «Հոգու կուրութլունը, մտքի ագիտությունը կաշկանգել ե բոլոր սրտերը, — զրում ե նա, — ժամ և հոգ տանել այս ապարախտության, ժամ և փարատել անբուժելի այս վիշտը։ «Որերս անցնում են ընդվազը, զորութլունս սպառվում ե որսըստորե, միտքս գլանում, ցանկութլուններս մեռնում։ տեսնում եմ հայրենյաց տարաբախտ վիճակը, և յես չունիմ հնար և միջոց ոգնելու նրան վորևէ բանով, մինչդեռ այդ եր իմ կյանքի առաջին և վերջին նպատակը։ Արովլանը համոզված ե, վոր ազգի «հոգեոր» լուսավորության

¹³⁹ «Մկրտիչ Նմինի յերկասիրությունները», Մոռկլա, 1898, հավելված, յել. 246։

ապավենը հոգեորականությունն և միայն և ամենից առաջ ինքը՝ Ներսեսը, Բայց կմ արդյոք հոգեորականության մեջ մեկը, վոր կարող լիներ հասկանալ և կշռադատել վերջինիս «մեծախորհուրդ դիտավորությունն ու բարեփուլթ քաջաջանությունը»։ Հարց ե այս, վոր պարտավորեցնում եր Արովլանին վերհիշել լեկեղեցուն տված իր հին «ուստար»։ «Ուխտադրուժության» պատճառը Կարբեցու կուսակցությունն եր ։ Ներսեսի հալթանակը հուշում եր՝ թողնել տուն ու տեղ, լքել պաշտոնը, վերադառնալ վանք։ Զե վոր վանքի միջոցով ե հենց, վոր յերազել եր շարունակ՝ մերանորոգել ազգի «վուսկեդարը»։ Վանքն եր միակ այն հանգրվանը, վորտեղ իննթաղրում եր Արովլանը վերգտնել «խղճի ու սրտի անդորրությունը», խուսափել իրեն հալածող մանվան ուրվականից։ «Ինչ ոգուտ ինձ ուրիշի տված փառքն ու պատիվը, — զրում եր նա, — այս ամենը լես ունիմ բարձրալի շնորհիվ։ Ստացել եմ վաղուց կապիտանի աստիճանը, սպասում եմ շուտով նաև մայուրություն (կոլեժմակի ասեսորության մասին և ակնարկը. — Ա. Հ.). Ռըբե տեղիս արքունական դպրոցի տեսուչ ունիմ նաև ոռնիկ և ամեն տեսակի այլ արտօնություններ, բաց և իմ առաջ ճանապարհն ամենուրեք, ուր վոր հոժար լինիմ ծառալելու Բայց միթե ծառայության և աստիճանի համար ե, վոր տանջվեցի մինչև հիմա... Մրցիս անբուժելի ցավը, վոր յեկ պահնոտ ե լինելու իմ մահվան, խափանել յեկ խանգարել ե իմ բոլոր զորությունը, մեռցել իմ աշխում ամբողջ աշխարհը։ Զկա ինձ համար այլ կյանք, քան հայրենյաց բարեբախտությունը... Առաջին որինակը չեմ լես, վոր կամենում եմ թողնել տուն ու զավակ և վերցնել Քրիստոսի խաչը։ Կամենում եմ, պատրաստ եմ հոգով և մարմնով։ Խաչ բառնալ հայրենիքի սիրո համար»¹⁴⁰.

Մարդկալին ուշագրավ գոկումինա ե, հարկավ, Ներսեսին ուղղած այս նամակը։ Հոգեկան այն եկղալտացիան, բուռն այն զգայականությունը, վոր անցնում ե կարմիր թելի պես Արովլանի գրվածքների միջով, հորդահոս ամպրումներից ելեկտրականացած, հասնում ե այստեղ ծալքահեղ լարվածության, լենթակա բռնկումի վտանքին, ուստի և կարու՝ արտահայտության ու հեղման։ Արովլանը այս անգամ ես տարված եր հին, բարեհոգի որորումներով։ Մշուշապատ իդեալիզմի մեջ ծրարված նրա միտքն զբաղված եր դարձաւ աղջալին լուսավորության վաղեմի հոգսերով։ Ֆր. Բո-

¹⁴⁰ «Փորձ», 1880, № 9, յեր. 197:

չենշտեգտը, վորի հետ նույն ալս ժամանակ, 1844—45 թվականներին, շփում և նամակագրություն ուներ Արովլանը, պարզաբնում և նույն ալդ ժամանակ վերջինիս համակած եքստազի կոնկրետ խմաստը: Արովլանի մտադրությունն եր՝ կազմակերպել զրարարից և լեվրոպական լեզուներից աշխարհաբար թարգմանություններ կատարելու աշխատանքը, ալդ միջոցով կրթություն տարածել հայերի մեջ և հարցասիրություն առաջացնել նրանց մեջ զետի դիտությունը: «Իր ամենաընդունակ աշակերտների ողությամբ — գրում և Բողենշտեգութը — գրարարից և լեվրոպական լեզուներից թարգմանություններ անելով — Արովլանը միքանի տարում ժողովրդի ընթացիկ պահանջները բավարարող գրականություն ստեղծած կլիներ, լեթե նրա ծրագիրներն ի զերև հանած չինելին»^{141:}

Արովլանի խանդավառության աղբյուրը դարձալ նրա «մուրագն» եր. մխիթարյանների որինակով՝ վանական նոր «վուկեղար» սկսել Եջմիածնում... Սակայն հայտնվում եր, վոր ալդ ծրագիրը, վորի հետ, ինչպես իբրևում ե, նա շարունակում եր կապված լինել մտքի բոլոր լարերով, անհնարին և գլուխ բերել նաև Ներսեսի ողնությամբ: «Տորիթա հրեշտակը» գոցում ե նրա և նրա աշակերտների առաջ վանքի դռները, ինչպես նաև դրժում Արովլանի սաներին Յեվրոպա ուղարկելու խոստումը:

1847 թ. հունիսին և 48 թ. հունվարին Արովլանը մեկնում է Թիֆլիս Ներսեսի հետ տեսակցելու և նրա անվան դպրոցում պաշտոն ստանալու համար: Հայտնի յե, վոր Ներսեսն ալդ ժամանակ հարմարավոր տեսուչ եր վորոնում դպրոցի համար: Միաժամանակ հետամուտ եր «ուսումնարան կամ համալսարան» կամ, ինչպես ասված ե մի այլ տեղ, «սեմինարիա կամ հոգևոր ակադեմիա» հիմնելու Եջմիածնում: Նույն ալս ժամանակ հայոց և լեվրոպական լեզուների ուսուցիչներ եր վորոնում նաև Թիֆլիսի կամ Եջմիածնի համար^{142:} Հետաքրքրական ե, վոր նույն ալս պահին Ներսեսը Վարանցովի ոժանդակությամբ հետամուտ եր հիմնելու Թիֆլիսում հայ վաճառականության համար հատուկ առևտուրական դպրոց և ալդ նպատակով կազմեց «Հայկական առևտուրական դպրոցի կանոնադրության» նախադիմ^{143:}

¹⁴¹ Fr. Bodenstädt: «Tausend und ein Tag im Orient», II, 165:

¹⁴² «Մ. Եմլիի յերկասիրությունները», յեր. 226 և 227:

¹⁴³ Տես՝ A. Երկու: «Патриарх всех армян Нерсес V, князь М. С. и княгиня Е. К. Воронцовы в их частной переписке», Тифлис, 1898, յեր. 12 և հետո:

Ներսեսը պաշտոն առաջարկեց Արովյանին Թիֆլիսում, սահայն 1848 թ. մարտին, անհալտ պատճառով, հետ կանգնեց զարձյալ իր առաջարկից: Այդ այն ժամանակ եր, ինը Արովյանը հրաժարվել եր արդեն Յերևանի իր տեղից և մատնվում եր միանգամայն լիակատար անգործության: Հարկավ անգործության հեռանկարը չե, վոր տանջում եր ամենից առաջ Արովյանին, այլ շնուրագիր կատարյալ Ֆիխանին: Արովյանին թիկունք զարձնողը հաստագում կարեցին չեր, վորի մասին նրա հակառակորդները պատմում ելին, թե՝ գիտե միայն «զճարապալիք» մասն խորովածի ի լրաբէն որոշելու: Արովյանին մերժում եր ինքը «Հայաստանիաց հոգացք»: «Ազգի», կապիտալիաստական վերածնության, նրա նոր «վոսկեղարի» հանդեպ բացասական դիրքով խաչածնվում եր հայ Գեղողալական հիերարխիայի աշն ու ահապելը: Անսպասելի, անակընկալ մի հարված եր այս Արովյանի համար: Նրա հուսահատությունը լիակատար պիտի լիներ, այսու Զուր չեր նկատել նա դեռ Բողենշտեգտին Եջմիածին ուղեկցիլիս, թե կարծեք սառը չուր և մաղվում իր գիխին ամեն անգամ, ինը վորք և զնում վանքի շրջապարսով ներսը: Դժբախտությունն այն եր, սական, վոր սառը ջուրն զպաստություն չըերեց Արովյանին, այլ միայն բացահայտ դարձրեց նրա վիճակի անհուսառությունը, խորացրեց նրա անդառնալի լքումը...

Արովյանի կինսադիբներից վոմանք արամադիր են պատուղիական տիպ համարել «հանգուցալին», նրան ներկայացնում են վորպես «հոգեկան անգործությունը կորցրած», «միտքն ու հոգին մթագնած մարդ» (Յե. Շահազիդ): Պատոլոգիան անշոշշտ վորոշ իր բաժինն ունի Արովյանի վերապրած հոգեկան գալարումների մեջ: Սակայն անհնարին և հասկանալ Արովյանի հուղական աշխարհը, յեթե անտեսենք հիմնականը, նրա սոցիալական տիպը: Արովյանի հոգեկան վիճակը նրա հասարակական կացության արդյունքն եր: Նրա «մտքի և հոգու մթագնումն ուղագրավ և մեղ համար վոչ վորպես հոգեֆիզիկական երեսովի, այլև վորպես հասարակական արտադրությալ արտադրությալ այս նշանակում և չըրևսը եր նրա կը ած տառապանքների հասարակական եկվիվալինտը, անգիտանալ նրա ապրումների, նրա պայմանի, նրա պարառության կուսակցական, քաղաքական, սկզբունքային իմաստն ու նշանակությունը:

Ֆեոդալիզմի և կապիտալիզմի միջև ընկնող փոխանցման ըրջանը, ճորտատիրության շրջանի մեջ պատեսատ ընկած կա-

պիտալիդմն ու գարգացող կապիտալիզմի պայմաններում ճորտա-
տիրական սիստեմի ներսում ծալը առած ճգնաժամն արևմտյան-
յեվրոպական դրականության մեջ իսկ ունեցել եւ «պատոլոգիա-
կան» իր անդրադարձումները։ Խելացնորությունն ու անձնա-
սպանությունը սովորական իերեսությ եր ոռմանտիկների մեջ։ Հի-
շիշնք թեկուղ նովալիսին և Կլաստին։ Հայնքիս Հայնեն «գժա-
տուն» հոչակեց զերմանական պառնասի ոռմանտիկական դպրոցը։
Մի ուրիշը շեշտում եւ ֆրանսական ոռմանտիկների «կաննիբա-
լիստական», «մստճարակալին», «սատանալական» բնույթը։ Աըն-
դիրը ոռմանտիզմի մեջ չե, ինարկե, ալլ հասարակական-քաղա-
քական այն հակասությունների, վորոնցով հզի լեռ այն սնող
ժամանակաշրջանը։ Համանման պայմաններում նվազ չափով
«կաննիբալիստական», «մստճարակալին» և «սատանալական» չեր
վողրերգական այն ճակատագիրը, վոր վիճակից Արովիանին ժա-
մանակակից ուսւ գրողներին՝ Պուշկինին, Լերմոնտովին, Գոդովին։

Սակայն Արովյանի վերադրած վողրերգական կացությանը
սահա տուրք են վճարել նաև նրան ժամանակակալից կովկասա-
հալ մէուս լուսավորիչները, մարդիկ, վորոնք նյարդերի վիճակով
նրա հակապատերն ելին միանդամայն։ Հիշենք Մ. Թաղիա-
զյանին՝ Արովյանի համաքաղաքաբացուն, նրա անմիջական նախոր-
դին, «բարձրաւարանոց», — Ներսեսի բնորոշումն ե, — զորեղ նյար-
դերի, լերկաթե կամքի տեր այդ մարդուն։ Նույնպես վանքի մոնթ,
նույնպես դպիր, վոր լեվորպական կրթություն սաացավ մի ալլ
Պարրոտի — Պուլիկըմոս Հաճ Միլի առաջնորդությամբ։ Նույն
մտացնությունը, թե ուստական տիրապետությունը լեվորպական
լուսավորության նոր գարագուխ պիտի բացի «ազգի» համար։
Նույն ձգուումը՝ հագնել արեղայական սքեմ, ծառայել «ազ-
գին»՝ լեկեղեցու միջոցով։ Նույն իղձը՝ թափել լեվորպացիների
մոտ վաստակած իմաստության գանձը Եջմիածնի վեշը։ «կալաց
և ոչ թողից զնա մինչ ածից ի տուն մօր իմոլ և ի սենեակ լղա-
ցելոցն զիս, և սուրբ իջմիածնին»¹⁴⁴։

Յեկ գարձաւ՝ հուսախաբությունների նույն շարանը։ Կամեա-
ցավ վարդապետ դառնալ — մերժում։ Կամեցավ Անդլիա գնալ
կրթություն ստանալու համար — մերժում։ Կամեցավ դպրոց հիմել
«Շնարի», կոնդի և Զորագեղիք տղաներին և աղջկներին զիր ու
արհեստ սովորեցնելու համար — մերժում։ Կամեցավ ուսուցիչ

¹⁴⁴ «Գործ», 1917, № 9 — 10, յեր. 96։

կարգվել Յերևանի «արքունի վարժատանը» — դարձալ մերժում։ Արովյանից մի տարի առաջ Թաղիադյանն եր առաջարկել Կարբեցուն ընծալարան կազմակերպել Եջմիածնում։ Սակայն նրան ևս նեղը լծեցին վանականները։ Արովյանի առաջ փակեցին ընծալարանի դռները։ Թաղիադյանն ինքն եր, վոր փախավ ընծալարանից։ Յուր «Ճանապարհորդություն ի Հայս» աշխատության առաջաբանում Թաղիադյանը, դիմելով Ներսեսին, տալիս եւ իր կրտծ տառապանքների համառոտ պատմությունը։ «Ստանալով հնդկահայ հասարակությանն ուղղած՝ վեհիդ ավետիսը հալրենիքի աղատության մասին՝ մերժեցի անձնապես այն ամենը, ինչ մի լերկիր կարող եր տալ վորմե ոտարականի։ Յեվ վորպես մոր ստինքից կտրված մանուկ՝ դեպի նա դիմեցի կրկին։ Բայց չգտնելով այն, ինչ վորոնում ելի, վորպես վանական մտած լինելով Հնդկաստան և վորպես վանական ել մեկնած այնտեղից՝ անցա Պարսկաստան վորպես աշխարհական։ Հասի ծնողիս ծոցը, ծառայության լեկա հալրապետիս, բայց միսիթարության փոխարեն՝ անձինս աղատության համար խուսել պարտավորվեցի»¹⁴⁵։ Արովյանի որինակով Թաղիադյանը ևս Ներսեսի կաթողիկոսության ժամանակ տրամադրում եւ վերջինիս իր ուժերը՝ «ազգի» կրթության գործը կազմակերպելու համար խնդրելով նրա «զթության թևը», վորպեսզի «գեթ իրեւ մթնոլորտ փարվի նրա սքանչելի լուսի շուրջը»։ Յեվ սակայն՝ «սքանչելի լուսը» խավար նույն անհուսությանը մատնեց Թաղիադյանին, վորին գրեթե նույն ալդ ժամանակ մատնվել եր Արովյանը։

Տարբեր հունով չգնաց նաև Արովյանի հաջորդի՝ նրա դասընկեր և նրան մտերիմ Ստ. Նազարյանցի, բութ նյարդերի ու համառ ու կոշտ բնավորության տեր ալդ մարդու, կլանքի և գործունելության առաջին շրջանը։ Նազարյանցը ևս սկսեց իր կարլերը բռնելով ազգի մեծատունների ու «հարստականների» փեշը, ապավինելով ցարիկմի ուժին ու յեկեղեցու հովանավորությանը։ Ճիշտ ե, դպիր չեր Նազարյանցը և վոչել վարդապետական գավազանին ակնդեռ։ Լինելով ավելի անկախ դիրքի տեր, նա ուրիշներից չխնդրեց ալդ «շնորհը», ալլ լուրբացրեց այն վորպես ինքնակոչիր հայերեն գրվածքների ճակատին, մինչև 1857 թվականը, ողատվարժան դոկտորը գրոշմում եր ուղղակի՝ «աշխատասիրություն Ստեփաննոս վարդապետի Նազարյանց»։ Մուսա բոլոր կետերում,

¹⁴⁵ Մ. Թաղիադյան. «Ճանապարհորդություն ի Հայս», Կալկաթա, 1847, առաջաբան։

սակալն, — գեթ մինչև 60-ական թվականների սկիզբը — շատ ել հեռու չգնաց նա իր ավագ ժամանակակիցներից։ Կրոնա-բարու-լական, իդեալիստական նույն աշխարհակացքը, աղջալին լուսա-վորության նույն ջանքերը, վոր լեկեցու և պետության անիշ-ներին եր կապում հափերի հույսերը, գեթ սկզբնապես։ Նազա-րյանցը ևս հավատացած եր, թե կդերը ինքն ե, վոր պիտի լուսավորվի ու լուսավորի ռազզը, աջակից ունենալով իրեն «ազգի» մեծատուն-ներին։ Նազարյանցը ևս ապարդուն հենարաններ եր փնտում էջմիածնում։ Նրա անդրանիկ գրական գործը Ներսեսին նվիրած մի ներքող եր, վորը լույս եր տեսել 1828 թվին «Յերախալրիք Ներսիմական դպրոցի» կոչված ժողովածվում։ 1843 թվից մեր ձեռքը հասած ոռւսերեն անտիզ մի նամակում, արծարծելով աղ-դալին կրթության իր պրոգրամը, Նազարյանցն արդեն իսկ «բա-րենպաստ» եր համարում գրա իրագործման հանդամանքները։ «Իմաստուն նախախնամությունը — դրում եր նա — իրագործել ե մեր վաղուցվա ջերմ ցանկությունը, շնորհելով մեզ արժանավոր պատրիարք հանձին հայրենասեր Ներսիսի։» Նազարյանցը մտո-րում եր այս պահին «Հայկազլան որագրություն» վերնագրով մի յերկարաթաթերթ հրատարակելու Դազանում, նպատակ ունենա-լով «հեշտին ու առհասարակ հասկանալի լեզվով» հայերի մեջ ողակար դիտուններ տարածելու։ «Հալոց ազգը — զրում եր 1844 թվին Նազարյանցն արծարծելով որագրության մանրամասն ծրագիրը Դազանի ուսումնական շրջանի հոգաբարձությանը — մինչև արժմ ևս չունի այնպես մի ընդունակ ընդհանուր գործի՝ վորով հնար եր հաղորդել ժողովրդականը Յելբողական քաղաքա-կանության և կրթության հառաջադիմությունը, ավելի ասեմ։ հայոց ազգը զեռևս զուրկ և այնպես մի ամեն տեղում հասկա-նալի խոսող միջնորդից՝ վոր աշխարհումը ցան ու ցիր լեկած Հայկա վորդլոց մեջ մտավարական առ ու տուրք կատարելով, կարո-ղանալը զնոսա քաջակերել առ ազնիվ և գեղեցիկ նախանձավո-րություն ազգային լուսավորության մտսին, և վոր կարողանալը, ասեմ, զնոսա միավորելի մարմին բարոյական՝ հոգևորալ հասա-րակաց կամոք և հասարակաց մտածությամբք»¹⁴⁰։

Այս միտքն անհնար լեզավ իրագործել Դազանում։ Նազա-րյանցը դիմեց կովկաս, վորոնելով գործի համար անհրաժեշտ հո-

140 Ողակում ենք Դազանի համալսարանական արխիվից հանված գրության ֆոտոնկարից։

վանավորներ ու աջակիցներ: Արագլության հրատարակությունը լենթաղբում եր Թիֆլիսում՝ գլուխ ընթերել Շահիսաթունանի թըղթերում պահված մի տեղեկությունից դաստիլով՝ Նազարյանցը լենթաղբում եր աշխատակցության հրամիրել «ազգուցուա ալս գործում Արովլանին: Դվամակոր հուբը դրել եր Ներսեսի ու Վարանցովի վրա: 1846 թ. լուս ընծալած մի ուսումնասիրություն մեջ նա գրում եր. «Հիմք կա հուսալու, թէ Ներսես կաթողիկոսը, գիտությունների և լուսավորության ալդ բարձր հովանավորողը, կարգի բերելով Հայաստանի հոգևորական գործերը, ավերգած վիճակից վերականգնելու իր նաև խմացության տաճարը, կինսագործելով իր կյանքի փայտայած գաղափարը—մուծելով ինվրոպական Աթենքի սրբավայրը Հայաստանի մոր զավակներին: Իշխան Վարանցովի լուսավոր միաբն ու աղնիվ կամքը լիսկատար ու հաստատուն իրավունք են տալիս մեզ համատալու կովկասյան բովանդակ լերկրի համար ցանկալի պատուղներով առատ ապագային և դրա հետ միասին նաև ասիրական Ռուսաստանում ամփոփված ներկա Հայաստանի մատագրը վերածնությանը»¹⁴⁷: Սակայն հազիվ մի ասրի անց, 1847 թվին, Նազարյանցը, ակնարկելով, անշուշտ, Ներսեսին, գրում եր Շահիսաթունանին: «Թէե մարզիկ շատախոսում են մեսիակի զալուստի մասին, բայց իմ աչքերը վոչ մի տեղ չեն նշմարում նրա հետքերը, քանի վոր մեսիաները, ինչպես թվում ե ինձ, չեն լինում առանց փրկագործության: Ուստի կարծում եմ, թէ ընդունայն են մեր ջանքերն ու աշխատանքները, ինչպես նաև ազգի վերակենդանացումը իր ավերակների միջից»¹⁴⁸: 1849 թվի՝ մեր արամազդրության տակ լիդած ուսուերեն անտիպ մի նամակում Նազարյանցը գանգատվում եր հուսարեկ զրչով. «Հայերը — խոսքը «արժանավոր» հայ ուսումնականների մասին և — չունին և վոչ մի պաշտպան. հայերին հալածում են և ուսուները և հայերը հավասարապես. քանի վոր հայերի սաւնությունը դեպի արժանավոր ուսումնականները չե տարբերվում ուսարադղիներից կրած նրանց հալածանքից: Ահավասիկ հայոց թագավորության կործանման պատճառը. նույնն և նաև հայկական անվան միշտ ու հանապաղ թշվառանալու և անշքանալու պատճառն ու ազբյուրը»: Հետագալում, 1870 թվին, Նազարյանցը, կարծես, եր այս շրջանի ապրումներն եր վերհիշում, լեր գրում եր

¹⁴⁷ «Ученые записки, издаваемые имп. Казанским Университетом», 1846 кн. II. №р. 117 և հետ. Հմմ. նաև «Մուրճ», 1903, № 3, №р. 124 և հետ.:

¹⁴⁸ Սեղբակյան, ն. ա., №р. 203 և հետ.:

Մ. Փանուանին. «Դու զիսես իմ անբակառովլունը. իսս կամիմ սիրել, բայց տեթև չկարողացա սիրել անբաղտ եմ լիս. մեռած և հոգիս և սիրտս, լիթե նա չուներ պատճառ, սիրելու, ի հարկե մարդիկը. Այս ցավը մի հին ցավ և իմ սրտի մեջ. դորա համար շատ անզամ մարդիկ, իմայինք և ոտարք խելացար համարեցին, հայովեցին, դառնացուցին զիս և թունավորեցին կյանքս. վորով—հետեւ այս աշխարհիս մարդիկ—ալդպիս ուսուցանում և փորձը—անարժան ելին իմ սիրում...»¹⁴⁹

Ինչպես տեսնում եք, մեզանում ևս, ինչպես Գրիբալեդովի ժամանակ, ստեղծված ելին պայմաններ, երբ առաջավոր մտավորականները պատուհանավում ելին խելքից, երբ խելառությունը գառնում եր նշան ժամանակի՝ հոգեմիջիկական իր եկվիվալենտից անկախ:

Կովկասահայ բուրժուազիայի առաջին «արժանավոր ուսումնականների» համար ստեղծված անելաննելի այս կացության մեջ և, անշուշտ, վոր պետք և վորոնել նաև Արովյանի վերապրած վորերդության և նրա շանհայտ բացակարումից սոցիալական պաղանձքը:

Թաղիադրանը և Նազարյանցը, ապամիննելով գաղութահայ բուրժուազիայի քիչշատ աւաննելի սժանդակության, կարող ելին դեռ մի կերպ քարշ տալ իրենց գոլությունը — սպասելով ավելի բախտավոր ժամանակների մերձեցման: Բարենպաստ գալիքի կոնտուրները նշմարում եր մանավանդ նազարյանցը: Արդեն իսկ 1846 թվին և, վոր նա գրում եր նշանակալից այս տողերը. «Թանի զեռ ազգը չի հասել մտավոր իր չափահասության, քանի զեռ չի արթնացել նրա ինքնազդացումը, ինքնազիակցությունը և այն մտահնությունը, թե սեփական լեզվի սրբությունը անկապտելի իր իրավունքն ե, մինչ ալդ ժողովրդական կրթության զեկը պետք և վոր վարեն հոգենոր պաշտոնականները: Սակայն յեկեղեցու դիկտատորական ազգեցությունից հոգեպես ազմագրիվու առաջին ուրախալի սկզբնափորությունը նկատում ենք արդեն թյուրքահայերի մոտ: Այսուհետ հայերին արված և արդեն ազգային լուսավորության որգանը, այստեղ առաջացել են և առաջանում են, ժողովրդի կամ քով, դպրոցներ, վորոնք նպատակ են դնում իրենց առաջնորդներու հայրենի լերիտասարդիներին յնվորապական իմացության շրջանը, թեկուղ և այդ ամենը արվում և տակալիին սահ-

¹⁴⁹ «Արաբատ», 1914, յեր. 546:

ժանափակ չափերով, չանդրադառնալով ամբողջությանը՝ ¹⁶⁰ Նշանակալից ե, վոր նույն ալս ժամանակ Նազարյանցից անկախ հրապարակ լեկավ հետագալի նրա համարձակ զինակիցը, տակավին 16—17 տարեկան մի պատանի, դարձյալ հայ-լուսավորչական լեկեղեցու մի դպիր, վոր հանդգնեց, սակայն, կլանքի ու մահվան ձեռնոց նետել լեկեղեցու հոգեոր գիլտատուրալին և նրան հենարան հանդիսացող աղալական դասին՝ նեցուկ ունենալով իրեն նույն այն «Ժողովրդի կամքը», վոր մատնանշում եր Նազարյանցը՝ առանց, սակայն, մարտնչելու հետևղականորեն նրա տիրապետության համար: Մ. Նալբանդյանն եր «հետալ» ալդ պատանին, վոր նույն 1846 թվականին, տակալիին տիրացուական մշուշի մեջ ծրարված իր մի նամակում, ծաղրում եր և ծանակում վոչ միայն Խալբրովների ղեկավարությամբ գործող համաքաղաքացի աղաներին, ալև Նազարյանցի ակնարկած՝ աղզի հանդերձյալ մեսիալին՝ Ներսես Աշտարակեցուն ¹⁵¹: Նալբանդյանին իսկ զբաղեցնում եր ազգային լուսավորության գործը նոր միարանության, նոր ուխտի կամ կրոնի միջոցով սպասարկելու միտքը: Սակայն բնուրոշ ե, վոր Նալբանդյանի պատկերացումով կրոնական ալդ ուխտը պետք ե լիներ ինքնավար մի համայնք, լեկեղեցու միջամտությունից աղատ: «Ազգի լուսավորությունը պիտո լի հառաջանաբուն ազգի հոգաբարձությամբ: Լուսավորությունը այնքան հիմնավոր ե, վորքան աղատ ե և անկախ: սարկության մեջ չե կարող լուսավորության ծիլը կանաչիլ»¹⁵²:

Աբովյանը, դժբախտաբար, զուրկ եր վոչ միայն Նալբանդյանի մարտական կորովից, նրա մտքի հետևղականությունից, այլև ծանրախոհ ու զանդաղաշարժ իր ընկերոջ, Նազարյանցի դիմացկաւն նարդերից ու նրա գծագրած հեռանկարներից: Դատապարտված գործելու հայկական բնաշխարհի շատ ավելի նեղ պալմաններում և կրելու իր թույլ ուսերի վրա միջավայրի ամբողջ ծանրությունը, Աբովյանի համար մեսիայի չքացումը համազոր եր ամեն մի հեռանկարի չքացման: Զրկվելով «մուրազն» իրազործելու բոլոր հնարներից, վերանորոգչական ճիգերից խորտակված, շըջապատված անբարյացակամ մարդկանցով, մեկուսացած ըստա-

¹⁵⁰ «Կառայ Յանձնություն», ն. ա., յեր. 149:

¹⁵¹ Տես՝ «Հումա», 1905, № 1, Յեր. Շահազիդի հրատարակած՝ Նալբանդյանի հնագույն նամակները:

¹⁵² Տես՝ Յեր. Շահազիդ. «Մ. Ղ. Նալբանդյանց», Մոսկվա, 1897, յեր. 181 և հետ. և Մ. Նալբանդյանի «Յերկերը», Ա, 191 և 268:

մենակնի, ընտանելիան միջավալրին խոկ խորթացած, գնրի կասկածամտության և անկալուն արամադրության, ցավագար, հոգեպես ցնցված Արովլանը կարող եր, իրոք, ինչպես Նազարյանցն և գրեւ «մի խավար բռպելի մեջ մահու տալ իր անձը»։ Նազարյանցը մասնանշել է միաժամանակ նաև Արովլանին մահվան դիրիը նետող հանդամանքները, ցավ հալունելով, «վոր ազգի իշխանքը, մանավանդ թե հոգեորների կարգից... պարզ ասեմ... վոր ներսես կաթողիկոսի պես մարդը, չկարողացավ կամ թե չկամեցավ այնպիսի դրություն տալ Արովլանին, վոր սա լուր ազգին պիտանի կացուցաներ լուր անձը բոլորամասն չափով, այնքան, ինչքան կարող եր: Պատվական Ապօվլանը Թիֆլիզից Յերևան, Յերևանից Թիֆլիզ տարրուրերվելով, անվերջ հալածանքի և տհաճությունների մեջ, հուսկ հետո անձնատուր և լինում մի խավար հուսահատության և հանկարծ չքանում և լուր ընտանիքի և բարեկամների միջից...»¹⁵³: Նազարյանցը գրում եր այս տողերը «միտ դնելով» Արովլանի կլանքի վերջին շրջանում գրած հուսահատական լերգերին: Սակայն դժվար չե գլխի ընկնել, վոր Նազարյանցը խոսում եր Արովլանի չքացման պատճառների և նրա հավանական անձնասպանության մասին, հիմք ունենալով նախ և առաջ իրեն ուղղած նրա դրությունները և հատկապես նրա կյանքի վերջին տարիներին վերաբերող նամակները: Նույն ալդ նամակների հիման վրա լեր անշուշտ գրում նաև Մ. Նալբանդյանը Արովլանի և ներսեսի հարաբերությունները լուսաբանող իր եջերը¹⁵⁴: Ուշադրավ ե, վոր Արովլանի անձնասպանության մենթագրությունն անում և նաև Բողենշտեղու՛ շեշտելով իր հանգիպումների ժամանակ (1844 թ.) դիտած նրա «մոալլ ու անհեռանկար» կացությունը (քաղաքական խոչընդոտներ, դրամական նեղ վիճակ և այլն): Այդ լեզրակացության և հանգել Բողենշտեղուրը ևս՝ աչքի առաջ ունենալով մասամբ Արովլանից ստացած նամակները, վորտեղ վերջինս պատմել եր Արիսի հետ ունեցած իր ընթարումի մասին: Ինչ ել ասենք Նազարյանցի կամ Բողենշտեղուի դիտողությունների մասին, ակներեւ, համենալն զեպս, վոր նրանք ավելի մոտիկից ելքն ճանաչում Արովլանի հուզական աշխարհը և հետեւաբար կարող ելքն փոքր ինչ ավելի ստուգ գաղափար ունենալ նրա կացության հավանական լեզքի

¹⁵³ «Հյուսիսափայլ», 1858, № 2, յեր. 146:

¹⁵⁴ Ն. ա., յեր. 145 և հետո:

մասին, քան Յերևանի վոստիկանությունը կամ դանթարի շուրջը պտտող նրա համարազաքացիները, վորոնց մասին հայտնի լե, թե հեռու ելին կանդնած Արովյանից և միաժամանակ խոր տոհությամբ լցված զիափի նրա անձն ու գործը:

Արովյանի այս վախճանն ըստ ամենայնի համապատասխանում և նրա վողբերգական կացությանը, վոր ճնշաժամի ամենից սուր վայրէլչաններին, ինչպես տեսանք, տարիների ընթացքում շարունակ ինքնատպանություն միտքն եր մեխում նրա գիտակցության մեջ: Վողբերգական հանգուցի նման լուծումը համապատասխանում և նուև այն ցուցմունքներին, վոր տվել են Արովյանի տանեցիները նրա վերջին որերի մասին. «հետանարուց յերեք որ ասած նա ընկել եր մտածմունքների մեջ, համարյա վոչինչ չեր ուտում, քիչ եր խոսում, չեր հանում շորերը և ըստ իրենութին տառապում եր անքնությունից¹⁵⁵: Այս ցուցմունքը և միաժամանակ այն հանգամանքը, վոր աղբիլի Հին Արովյանը գուրս յեկավ տնից կամովին և անտովոր մի ժամանակ, լուսագեմին, նշան և ինքիան, վոր նրա վախճանը չեր կարող հետեանք լինել վորեն «չար պատահմունքի» կամ վոր իննթարկված կարող և լինել «թիւրքերի գավազը ութիան», ինչպես հերլուրել և հետապակում հայկական տիմար շովինիզմը, կամ, վոր զոհ կարող եր դարձած լինել III բաժանմունքի գաղանի կարգադրության, ինչպես կարելի լի հետեցնել «սե կառեթի» մինչ այժմ իսկ շարունակվող լեգինդից: Անհետացման հանգամանքները վկարում¹⁵⁶ են այն մասին, վոր հեռացել եր նա տնից ինքնարերաբար՝ արտակարդիր մի վորոշումը զլուխ ընթերու համար: Նրա վողբերգության վերլուծումը համոզում և մեզ, վոր ընդունած այդ վորոշումը փրկարար փախուստը չեր, այլ՝ կամավոր մահ:

Ինչպես ել պատկերացնենք մեզ Արովյանի անհետացման մանրամասնությունները, նրա «անհայտ բացակարումի» մեջնշնչարելի լի անշուշտ հուսահատության «չար շվաքը»: Արովյանի հոգեկան լքումը, վոր անմիջական պատճառ դարձավ նրա վողբերգական վախճանին, հասարակական-քաղաքական՝ վորոնումների ճանապարհին նրա վերասլրած ծանր հուսախաբության հետեւանք եր անշուշտ: Նշան եր սա արգելք, թե վողբերգական այս վախճանով Արովյանը հասարակական-քաղաքական ուղարկարձ եր կատարում: Վոչ, իհարկե: Հուսախարությունը նշան չե դեռ շրջադարձի,

155 Տես՝ «Акты Кавказской Археогр. Ком.», X, 830:

հուսախարությունը ապացուց չե տակավին, թե հուսախարզովը փոխում ե հին ուղենիշները, փարում նոր հեռանկարների: Արովլանի ճնշված հոգիվիճակը նրա մտասեեոված ապրումները հայտարար չեն ինքան նրա շրջադարձի, քանի վոր շրջադարձը նոր կլանքի ու պալքարի աղբյուր կլիներ, մինչզեռ, իրերի ընթացքից դատելով, պալքարից ու կլանքից հրաժարվելու մեջ գոտավ նա հասարակական հակասություններից գուրս գալու ճանապարհը: Լքել պաշտոնը—վանք մտնել, թողնել քաղաքը—«առանձնանալ» զյուզում և կամ ուղղակի նետվել ջուրը—խեղգվել, այս եր ըստ յերևութին փոթորկահույզ նրա վորոնումների ֆինալը: Գրոհի և հաղթության նշան չեր ալս, այլ լքման ու պարտության: Գաղափարական նահանջ եր այս իրականության առաջ, «մուրազի» պարտությունը սոցցիալական նույն այն միջավայրում, վորի ներսում ապարդուն հենակետներ փնտոեց Արովլանը նրա իրականացման համար: Նա պառակտվել եր հասարակական միջավայրի հետ, բայց և այնպես ամերող հյությամբ գամժած մնացել նույն ալդ միջավայրին, վորից զուրս չկար կլանք նրա համար: Արովլանի նկատմամբ ևս ճիշտ կլիներ վերհիշել այն մտքերը, վոր ձեւակերպել եր մի այլ զրոյի: Գյոթեցի նկատմամբ Ֆր. Ենգելը. «Գյոթեն ի վիճակի չեր հաղթահարելու գերմանական խղճալիությունը, ընդհակառակը վերջինս և, վոր հաղթահարեց նրան և խղճկալիության (misère) հաղթանակը մեծագույն գերմանացու հանդեպ՝ լավագույն ապացուցն և, վոր ներքուստ հաղթահարել այն— անհնարին և»¹⁵⁶: Հայկական «խղճկալիությունը», նրա հետամնացությունը ևս անհնարին պիտի լիներ հաղթահարել «ներքուստ», այսինքն՝ պատրագ գալով բացառապես հասարակական-քաղաքական տիրող հարաբերությունների ողակում: Արովլանին չեր վիճակված փշրելու ալդ ողակը: Ժամանակի մեծագույն հայր կամ, ինչպես ասել և նրա մտարին նշանավոր Միրզա-Շամին՝ «առաջին հայր, վոր հայ չեր»— ընթացավ նվազագույն զիմադրության ճանապարհով: Պարտությունն անխուսափելի պիտի լիներ նաև նրա համար:

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Արովյանը պատկանում ե խոշոր այն գործիչների շարքին, վորոնց վաստակը հասարակական սեփականությունն ե դառնում միայն հաջորդող սերունդների գիտակցության մեջ: Ժամանակակիցների անտարբերությունը պատճառ դարձավ նրա մահվան: Հետնորդների մեծարանքը վոգեկոչեց նրա դիմապատկերը, գաղափարական առաջնորդ դարձնելով նրան դասակարգավին մարտերի մեջ: Նույն այն լերկվությունը, վոր մահվան դիրէլ մղեց Արովյանին, պայման դարձավ ապամահ նրա վերակենդանացման:

Յերկվությունը հնարավորություն եր տալիս պայքարող հոսանքներին վեր հանել նրա ժառանգության իրարամերժ առանձնահատկությունները, իւլակետ դարձնելով նրա ստեղծագործության մերթ պահպանողական, մերթ վերանորոգչական տենդենցները, ընձեռելով մերթ նրա գործունելության ուսակցիոն, մերթ պրոգրեսիվ պատգամմները: Հետևանքը — Արովյանը ընդունելի լի դառնում բոլոր հոսանքների համար, հեղինակություն նվաճում «ազգի» աշխատ, ճանաչվում «ազգային գրող» րաց excellence: Հետնորդների գիտակցության մեջ արձագանգող նրա անունը դառնում ե պաշտամունքի առարկա, հասարակական-քաղաքական հրահրությունների զորավոր միջոց:

50—60-ական թվականներին եր վերապահված վեր հանելու Արովյանի նշանակությունը ժամանակի հասարակական միջավայրը հուզող խնդիրների տեսակետից: Դրական նրա ժառանգությունը դառնում եր հատու զենք, վորին հավասար իրավունքով ձեռք են մեկնում պահպանողականները մի կողմից, վերանորոգչականները — մյուս:

Հետաքրքիր լերնույթ ե, վոր Արովյանի առաջին մերձավորները նրա կենդանության իսկ ժամանակ պահպանողական կուսակցության ապագա ղեկավարներից ելին: Սրանցից մեկը Մաեր Մաերյանն եր, ուլտրառեակցիոն «Ճռաքաղ»ի հետագա խմբագիրը, վորի՝ Արօվյանին ուղղած գրություններին կանդրագու-

նանք տակավին։ Միուաը՝ «խավարամիտների» հետագա քուրմեռից մեկը, Առաքել Արարատանը, վորի համար եր, ըստ լեբեդութին, զրի առել Արովլանը ուսանողական հիշատակարանները¹⁵⁷ և վորը, սակայն, ապագայում ճակատադրական դեր խաղաց Արովլանի կրանքում։ Ռւշագրավ ենակ, վոր «Վերք»ի անդրանիկ ժողովրդականացնողը, Արովլան կուլտի սահմանողը, ինը տակավին ձեռագիր վիճակում եր նրա դլուխ գործոցը, ազգավին պահպանողական հոսանքի ղեկավարներից եր դարձլաւ Արովլանի «հոգեսուն» աշակերտ Գելորդ Աքիմլանը, վորը անցյալ դարի 50-ական թվականների սկզբներին Դորպատ տարավ «Վերք»ի մի որինակը և կազմակերպեց հալրենակիցների շրջանում նրա խանդավառ ընթերցումը։ Դորպատան ալդ ժամանակվա ուսանողների համար «Վերք»ը գարձավ նոր հայախոսության ձեռնարկ։ 1858 թվին Փոնդուանի հետ միասին դարձյալ նույն Աքիմլանն եր, վոր հոգաց վեպի առաջին տպագրության մասին։

60-ական թվականների սկզբներին Արովլանի անտիպ լեբեդին սկսում են լույս տեսնել պահպանողական Ենֆիաջլանցի տպարանում — առանձին գրքերով, կամ պահպանողականների դրական որդանի՝ «Կոռունկ»ի եջերում։ «Կոռունկ»ի խմբագիր Մ. Աղարեկլանը Գ. Նարեկացու հետ համեմատեց Արովլանին, յերկինք հանելով «հայկագն աստվածասեր և հալրենասեր հանդուցալ բանաստեղծին»¹⁵⁸, «Կոռունկ»ի շրջանին եր պատկանում «Վերք»ի անդրանիկ հրատարակիչը — Փոնդուանը։ «Կոռունկ»ի եջերում ե, վոր տպիում ելին կենսագրական ընդարձակ նյութեր Արովլանի մասին, ձեռնարկվում նրա լայն ժողովրդականացումը։ «Կոռունկ»ում եր տպվում «Վերք»ի անդրանիկ դրական արձագանողը — Պ. Պոռշյանի «Սոս և Վարդիթեր»ը, վոր լուրացրեց Արովլանի ստեղծագործության պահպանողական տեսնդենցները, նրա կենցաղագրական, ետնոգրաֆիական տարրերը։ «Կոռունկ»ի մեջ ե, վոր նույն հեղինակը տպեց իր «Աղասին» — դրամագիր վերածված «Վերք»ը։ «Կոռունկ»ի շրջանից դուրս բեկալ նաև Արովլանի մյուս նշանավոր հետևորդը, Աղայանը, վորը թեև յենթարկվեց հետագայում վերանորոգչականների աղղեցությանը, ջատագով դառնալով «Ժամանակակից լուսավորության», «աշխարացության», «մաքի ու խելքի գարզացման»։ ըալց չազատապըր-

157 Հմմ, Տեր-Կարտպետյան, ն. ա., եջ 92։

158 «Կոռունկ», 1860, յեր. 875։

վեց իսպառ Շանշլանի և Աղարեկյանի կրոնա-բարովական հայոցքաների թովչանքից:

Ազգային անցյալի հավերժացման, ազգապահության, ազգային սնապարծության հորդառատ մի աղբըուր, — ահա թե ինչ եր Արովյանը՝ ազգային-պահպանողականների համար: Խոսելով «Վերք»ի մասին՝ Մ. Աղարեկյանը գրում եր, որինակ, թե Արովյանի ջանքն ե յեղել, վոր «Հայոց աշխարհի գրեթե գլխավոր կենտրոնի բարրառը կենդանացնե, մարմանալորե ինչ անմանացնեա: «Կարող ենք և մենք արդյան հայքս պատճենալով ասեր, թեև մենք նոր ժամանակաց, նոր գաղափարաց հետ մի նոր գրականություն ունինք, վորն վոր բոլորովին մեր Հայոց աշխարհի հայ ժողովրդյան ենք պարտական»¹⁵⁹: Սակայն ամենից բնորոշ կերպով ձեսկերպել ե պահպանողականների վերաբերմունքը գեղի Արովյանը Պ. Պոլոցյանը, 1860 թվին գրված «Սոս և Վարդիթեր»ի նախարարանության մեջ: Յերկարաբաններով կորստի մատնված ազգային ծեսերի և ավանդությունների մասին, Պոլոցյանը զրում է, թե ազգն «անհրաժեշտ պարտականություն ե որել մեր վրա այս լուսավորրակ գարումն չըսողու այն ամենը անհայտության մեջ մնալ կամ թե փշանալ (!), այլ դրով ի ըսւու հանել լուսաքանչյուրքս մեր բնակած յերկրինը մեր բոլոր համազգաց առաջին, և այն անգին ավանդությանց հիշատակները, վորոնք բոլորը մեր ազգի կենաց տիպն են պարունակում իրենց մեջ, մինչեւ հայլիքյան հասցնել» (!): «Մատճերով այս ամենը — շարունակում և Պերճը — բաղմաջան Խաչառուր Արովյան ուսումնականը և զգալով անշուշտ ազդի ավանդություններն ու ծեսերը կենդանացնելո հարկն, վեց լուր «Վերք Հայաստանի» արդյունավոր շարադրությունը, նկարագրելով նրա մեջ Յերեանու նահանգի Քանաքեռ գլուխի լեզվի դարձվածքը և տնային միքանի սովորությունքը... Սա առաջինն լեզավ, վոր մի զյուցազնի ձեռքով ընծացեց մեր ազգին լուր առանին կենաց նկարագիրը և հայունապես ցուց տվեց, թե մեր ազգն այնքան տառապանաց ու նեղությանց մեջ ևս ունի մի վեհ հողի, պարսից անողոք բանակալությանց դեմ դնող սիրա, ջերմաջերմ աստվածաշատություն, զվարճության մեջ հողիս պարզություն: Յեթե չի լեզել Աղասին, կամ թե լեզել ե մի աննշան վոնն, հոդ չե: Աղասու վրա պատմաներն ամեն հայ մարդու հատկությունն ե: հայն այդ ամենը իր որորոցի մեջ իր մոր կաթի հետ և ծծել Արովյանը տալով քանա-

¹⁵⁹ «Կոունկ», 1860, յեր. 773 և հետո:

քեսցոց այն ջերմեռանդ ժամասիրությունը, աղոթասիրությունը, այն անմեղ զրոսանքները, այն հոգւրասիրությունը և այն անկեղծ հատկությունները, տալիս և այս ամենը բոլոր հալոց ազգին։ Սրա ստուգությունը կարե ամեն հայ մարդ ինքն իր վրա քննել. մանավանդ նրանք ես, վորոնք թե ըստ դիսլաց, թե ըստ հանգամանաց և թե ըստ այլ և այլ իրաղությանց հալությունը մեռցրել են իրանց սրտի մեջ, վոր քաջ լիցի, չկարծեմ թե հալոց մեջ արակես մարդիկ գտնվին։

«Կոռնկախ շավդով ընթացան Մսերլանների «Ճռաքաղ»ն ու «Փարոսաք հրապարակեց Մսերի՝ Արովյանին ուղղած կամ նրա մասին գրած հին, հետաքրքրական նամակները, կարծես ցուց տալու համար վաղեմի ու խոր այն կապը, վոր հարազաացնում եր պաշտամունքի ասարկա դարձած զրոյին կղերական-պահպանողական գաղտափարախոսության հետ։ Մսերին միացնում եր Արովյանին վաղեմի «մուրազը»—«միաբանության», «ընկերության» ներսիստական կուսակցության ընդհանուր «ուխտը»։ «Միրտ մեր մի, հոգի մեր մի, կամք մեր մի, նպատակ դիտման մերու մի։ և զի՞նչ քան զայս գերազանցագոյն՝ միաւորութեան եղանակ», գրել եր Մսերը Արովյանին¹⁶⁰, «Ես Խաչատուրալ, և Խաչտուրը՝ ինձ»— Մսերի այս խոռոչերը պահպանողակամնները հրապարակում ելին, կարծես, Արովյանի ժառանգության վրա սեփականության կնիք դրոշմերու համար։ Իսկ այդ ժառանգության արժեքը «ազգի» և «աթոռի» անսակեաից գուշակել եր Մսերը տակապին 1831 թվին. այն բարձրացնելու ցեր Արովյանի անունը. «ի պատի և ի փառս հայրենեաց ի մէջ օտար ազանց՝ ընդ իւր բարձրացուցանելով զաղդ մեր և զանուն»¹⁶¹,

Գաղափարական նույն այս շահագրդությունը դեպի Արովյանի ժառանգությունը հայտնաբերեց հետազալում մանավանդ ազդացին-կղերական «Նոր-Դարձ»։ «Նոր-դարձն և, վոր 1893 թ. նախաձեռնություն ստանձնեց վերահրատարակելու «Վերքը և արձան կանդնեցնելու Արովյանին՝ Յերեխանի ավագ յեկեղեցու գալրում (!), Զանգվիլի մոտ, Մասիսի դիմացը»¹⁶², «Վոչ մեկ հայ վործիչ այն քան մոտիկ չե մեր սրտին և մտքին, վորքան Խաչատուր Արովյանը, հոգվով ու սրտով և յուր ամբողջ ելությամբ հայը և «Նոր-Դարձ»։

¹⁶⁰ «Փարոս», 1876, № 5, յեր. 24:

¹⁶¹ Ն. ա., յեր. 6—7:

¹⁶² «Նոր-Դարձ», 1893, № 30, հմմ. ն. ա., № 72:

մեծ հայրը» — գրում եր Սպանդարյանը¹⁶³: Նոր-դարական մի հրապարակագիր՝ Հ. Խաչումլանը՝ անդրադառնալով «Վերք»ի տերկրորդ հրատարակությունը լուս ընծալելու խնդրին՝ առաջարկում եր խմբագրական մի շարք փոփոխություններ մտցնել տեքստի մեջ: «Ով պետք եւ անե ալս դժվարին սրբագրությունը, վոր հմուտ ձեռքի միայն վատահելի լիւ: Հարկավ «Նոր-Դար»ի արգո խմբագրությունը, վորին ե պատկանում «Վերք»ի վերատին ապագրությամբ հայ ժողովրդին ընծալելու գեղեցիկ գործի նախաձեռնությունը... Մեր կարծիքով «Վերք»ի սրբագրության պատասխանառու գործը վատահել կարելի լիւ պ. Կ. Կոստանլանին, Ներսէսյան հոգեոր դպրանոցի ալֆմյան տեսչին և դրականության մեր յերեմիլան պատվական ուսուցչին Գելորդյան ճեմարանում...»¹⁶⁴: Խաչումլանի ալս առաջարկը գլուխ չեկավ: Սակայն նոր-դարական մտանության ծնունդ եր փաստապես 1897 թ. լուս տեսած «Յերկեր»-ի հրատարակությունը, և մանավանդ հայ-լուսավորչական ջերմեռանդությամբ զրի առած նրա առաջարանը: Արովյանի մահվան հիմնամիակի առիթով Սպանդարյանը գրեց, իր հերթին, մի առաջնորդող, վորտեղ իր կուսակցությանն եր վերապահում Արովյանի ամբողջական ժառանգության իրավունքը: «Մարդիկ, — զրում և Սպանդարյանը, — ինչպես և մեր պարբերական մամուլը, զանազան հայացակետով կարող են փառաբանել նրա հիշտատակը միացած: Ալսպես, մեկը կարող ե Արովյանի հիշտատակը առնել միմիայն նրա տաղանդի համար, մյուսը՝ զոր նա առաջին վիրապանն և հանդիսանում, մեկ ուրիշը՝ վոր նա առաջին անգամ աշխարհիկ բարբառով, ժողովրդի խոսած լեզվով գրեց և մեր նոր գեղեցիկ դրականության հիմքը գրեց և դրա համար ճանապարհ բացեց, և դրանք ամենքը կարող են ընդունել նրա մտքերը, նրա գաղափարները, զգացալ նրա զգացածները: Ալսպիսով միայն կարելի լուսականել մտքի նուարտօւրյանը և զգացումների անկեղծուրյանը: «Նոր-Դար»ը փառաբանում ե գրող Արովյանին իր ամբողջ ելությամբը և ուրիշ կերպ ել չի կարող, ուրիշ կերպ ել անհասականալի կլիները: Այս ժամադրը, վոր այսպիսի սուբբը և կրակ կտրած զգացումներով սիրում ե լուր մալրենի լեզուն և հայրենի նախարք, ինչպես «Վերք» հայաստանից-ն ստեղծողը, չի կարող «Նոր-Դար»ի սիրելին, պաշտելին չկինել»¹⁶⁵:

163 Ն. ա.ա.

164 «Նոր-Դար», 1893, № 137;

165 «Նոր-Դար», 1898, № 94; Հմմ. ն. ա., № 95:

«Մեկ ազգի պահողն ել լեզուն առ հավատը, թե սրանք ել կորցնենք, վայն եկել ամեր որին»։ Ազգալին-պահպանողական, կղերական հոսանքի մարդիկ մեծարում ելին Արովյանին այն խոշոր գերի համար, վոր հատկացնում եր նա ազգալին լեզվին ու հավատին, վորպես ազգապահության գործոնների, նրանք մեծարում ելին նրան մանավանդ այն ակնածանքի համար, վոր տածում եր նա գեղի ազգալին լեկեղեցին ու ավանդությունները, ազգալին բարքերն ու առանձնահատկությունները։ Հավատ, որենք, տուն, ընտանիք, սրբություն — այս եր նրանց համար Արովյան կուլտի բուն խմատը։

Արովյանի մեջ նրանք պաշտում ելին այն ամենը, ինչ հարազատացնում եր նրան անցյալին, նրա պատկառանքը գեղի ազգալին պատմության, ազգալին գիտակցության մդլած նախադաշտաբումները, նրա լուսավորչական հալրենասիրությունը, նրա քաղաքական խոհեմությունն ու կրավորական դիմադրականությունը, նրա հարգալիր վերաբերմունքը գեղի ազգի իշխաններն ու մեծավորներ։

Սակայն Արովյանը վոչ միայն հմայիչ անուն եր՝ գեղի անցյալը միտված, հասարակական արտօնյալ վերնախավերի հայացքներն անզբազարձնող պահպանողականների համար, այլև պահքարի հրավառ զինադրոց՝ գալիքի գռները բախող բուրժուականնեմոկրատական վերանորոգիչների ձեռքում։

Կարող եր թվալ, թե Արովյանին վերանորոգչական, առաջամարտ գաղափարների զենք եր գարձնելու Ստ. Նազարյանցը, նրա վաղեմի ընկերը, Փաստապես Նազարյանցը չե, վոր ստանձնեց ալդ գերը, ձիշտ ե, Նազարյանցն առաջինն եր, վոր 1853 թվին, իր առակալին հայտնի չեր «Վերք»ը, տպագրական խոսքի միջոցով հոչակեց Արովյանի անունը։ Մանուկների համար կազմած իր առաջին աշխարհաբար դասազրքի մեջ, հիշատակելով Դորպատ քաղաքի անունը, Նազարյանցը գրում ե. «Այս քաղաքումս եր յուր կրթությունն ստացել Խաչատուր Արովյան լերեվելի հայկազունը, վոր ափսոս՝ շուտ թառամեցավ յուր ազգի համար»¹⁰⁶։

Հինգ տարի անց ավելի մանրամասն խոսելով Արովյանի մասին, Նազարյանցը շեշտում եր լերեւի ալդ հայկազունի «իշխա-

¹⁰⁶ Ստ. Նազարյանց. «Առաջին հոգեղեն կերակուր հայ ազգի յերեխաների համար», Մոսկվա, 1853, յեր. 42:

նապատիվ» ծագումը, վեր հանում «այն ընդհանուր կրթությունը, այն աղջասիրական հոգին, այն անորինակ սերը դեպի հայոց մանկունքը, այն առաքինի հոգին, վոր նա դուրս տարավ լուր հետ Դորպատից»։ Արովլանին նա բնորոշում եւ ովորապես քաջ գաստիարակ, վորպես սիրող ուսուցիչ, վորպես քաղցր խնամակալ ու հայր և բարեկամ լուր աշակերտների համար»¹⁶⁷.

Արովլանի «Վերք»ի տպագրությունը կարծես առիթ պիտի տար Նազարյանցին ծանրանալու հետազալում նաև Արովլանի գրական արժանիքների վրա։ Սակայն վոչ մի խոսք այս առիթով՝ Նազարյանցի կարծիքով նոր գրական լեզուն պիտի լիներ վոչ թե հայախոս մի զավառի, կամ մի քաղաքի բարբառը, այլ հայ բուրժուազի համատարած լեզուն, այն «ընտիր աշխարհաբարբառ հայախոսությունը, վոր Ռուսաստանի հայաբնակ քաղաքներումը լավում եւ ընդհանրապես»¹⁶⁸։ Նրան դուր չեր կարող զալ, բնականաբար, «Վերք»ի պլերեխական, գավառային «հայախոսություն», նրա գուեհիկ ժողովրդի «վայրենացած լեզուն», նրա աշխարհ հանած «տգետ խառնիճաղանճի» բարբառը։ «Խոսելով մի նորահայ լեզվի վրա, վոր կարող եր լինել այժմյան լուսավորության հարմար ճանապարհ, վոչ մտածել ենք լերբեք և վոչ մտածում ենք, վորպես թե այդ նորախոս լեզուն պետք եւ լիներ այն գործածական ռամկախոսությունը խանդարված ամենալի տեսակի ալլազգի բառերով՝ ամենակին վոչ։ այդ աղավաղլաւ և վայրենացյալ լեզվով չեր կարելի գործ առաջ տանել. այլև վոչ մի առողջամիտ կրթալ անձը խոսելով լուր ընկերի հետ՝ արժանի կհամարել ծառայանալ տգետ խառնիճաղանճի լեզվին»։ Նազարյանցի այս տողը գրված են հատկապես, կարծես, Արովլանի դեմ։

Այլ եր պահպանողականների հետ պալքարող վերանցողականների մերձեցումը։ Զի կարելի ասել, թե կուլտի, պաշտամունքի առարկա լեր Արովլանը նրանց համար։ Ինչքան ել տարորինակ լինի այդ՝ «Հյուսիսափայլը»ի խմբագիրը հազիվ միայն մի լերիուն կատողություն տպեց վաղեմի իր ընկերոջ մասին։

Վերանորոգիչ՝ պահպանողականների մեջ և պահպանողական՝ վերանորոգիչների մեջ, Նազարյանցը, ինչպես տեսանք, անդրադարձնում եր անմիջորեն այն իերկվությունը, վոր հատուկ եր Արովլանին։ 50—60-ական թվականներին Նազարյանցի միտքը շատ

¹⁶⁷ «Հյուսիսափայլ», 1858, 3, յեր. 146։

¹⁶⁸ Ստ. Նազարյանց. «Յերկեր», յեր. 33։

Հղողմերով կարողացավ դուրս գալ 30—40-ական թվականներին զծաղրված հեռանկարների շրջանից։ Պահ մի հուսախարված մեծառուններից՝ նազարյանցը հալացք նետեց ազգի «հասարակին» հանգամանք, վոր կովկասահալերի հասարակական-տնտեսական հետագա եկոլոգիալի հալտարարը լինելով, անդրադարձ-նում եր միաժամանակ 60-ական թվականների համառուսական շարժումների ազդեցությունը։ Բայց և այնպես նազարյանցը շարունակում եր շատ կողմերից տուրք տալ նաև ռեակցիոն այն հալացքներին, վոր շաղկապում եր նրան Արովյանի հետ։ Նրա հետագայում ևս հալտարերած «խոնհմա» ընթացքը ցարիզմի հանդեպ, նրա գրական կարծիքները լեկեղեցու լուսավորական պաշտոնի մասին, նրա առաջարկը «հոգեսոր ակադեմիա» հիմնելու մասին, նրա հալացքները լեզվի և կրոնի ազգաշն դերի մասին բղխում ելին տրագիցիոն նույն ակունքներից, վորոնցից ջուր եր խմել ժամանակին նաև Արովյանը։ «Ազգն ու լեկեղեցին — գրում եր հետագայում պահպանողական «Մեղու Հայաստանի»ն — միշտ սուրբ են լեզել հանդուցյալ նազարյանցի համար և նոցա թերությանց վրա խոսելիս ցավից միշտ նորա վաթունամյա աչքերում արտասունք ե լերեացել...»¹⁶⁹։

Արովյանի գեմոկրատական ժառանգության հետեվողական հաջորդը հանդիսացավ, ընդհակառակը, Մ. Նալբանդյանը։ «Մեռեցահարցուկ»ում Նալբանդյանը սուր և իմաստալից տողեր նվիրեց «Վերք»ի բովանդակությանը։ Նալբանդյանը մահացու մեղք չհամարեց Արովյանի ռամկախոսությունը։ Դրական խոսքը չփառվում միայն քաղաքաբնակ բուրժուազիալի, այլև գյուղաբնակ «խառնիճաղանճի» և մութ ու խավար «ամբոխի» համար առհասարակ։ Նալբանդյանը «Վերք»ի խոշոր արժանիքը համարեց հեղինակի ձգտումը «պատկերացնել ազգի կյանքը նույն իսկ ազգի համար», նրա խորհուրդը՝ «զրել այնպես, վոր անկիրթ ժողովուրդը չկարծե թե դիրք ե կարդում, այլ կարծե թե մի մարդ խոսում եր յուր հետ»։ Նալբանդյանը կարծում եր միայն, վոր, հետամտելով այդ ձգտումի իրագործմանը, Արովյանն ընկավ չափացանցություն մեջ. բայց, նկատում եր նա ներողամտարար, «ինչ առնե Արովյանցը լեթե ասիացին չափազանց ե ամեն բանի մեջ»¹⁷⁰։

¹⁶⁹ «Մեղու Հայաստանի», 1881, № 133։

¹⁷⁰ Մ. Նալբանդյան. «Յերկեր», I, 97։

Բայց Նալբանդյանը չսահմանափակվեց լեզվական դիտողություններով։ Յեթե պահպանողականներին հուզում եղին Արովլյանի ազգապահ տողերը, Նալբանդյանին, ընդհակառակը, շահագրգոռում եր այն ամենը, ինչ արել եր Արովլյանը կովկասահալ գրականության վերակառուցման, ազգային բուրժուականողեմուկրատական լուսավորության համար։ Նալբանդյանի համար «Վերք»ն ազգային մի վիպերգություն ե, վորտեղ՝ «վորպես մի կախարդական հայելու մեջ ցուց ե տալիս բանաստեղծը հայոց ազգի ընտանեկան կյանքի անուուշիլ յիշ անմիջիաց պատկերները»։ Արովլյանը հրապարակ ե հանում «գլուղերի տանուալարքը» (նկատեցնք, «տանուալարքը» և վոչ՝ գլուղացիները, ինչպես գրում են սովորաբար Արովլյանի մասին գրիչ շարժող հետազա «քննազատները»։ — Ա. Հ.), «հանդիպեցնում ե մեզ հոգեոր մարդերի... սահմանում ե այն ժիուր նարաբերությունը, վոր կար նոցա մեջ»։ «Ապոլոնյան հայելու մեջ» Արովլյանը ցուց ե տալիս այսուհետեւ «հայկական կյանքի մեռած պատկերը» և «թե ինչպես այդ մեռելային դաշտի զանազան կետերում խլրավում ե առաքինությունը», վոր «ընդդեմ ե զինվորվում այս կամ այն անիրավության»։ Նալբանդյանի համար Աղասին խլրացող այդ առաքինության մարմնացումն ե, վոր հրավեր ե ուղղում ինքուպում ե առաքինությունը», վոր «ընդդեմ ե զինվորվում այս կամ այն անիրավության»։ Բնորոշ ե, վոր Նալբանդյանը զանց ե առնում գրեթե այն հանգամանքը, վոր Արովլյանի հերոսը զինակցում եր պարսիկների դեմ կուզող սուս զեներախներին։ Աղասու պայքարը պարսիկների դեմ Նալբանդյանի գրչի տակ ստանում ե փոխարերական իմաստ և նշանակություն։ սա պայքար ե բռնակալության դեմ առնասարակի «Ծեսանում ենք այն համելու մեջ պարսիկների բարբարոս վարեցողությունը մեր խեղճ ազգի հետ, մեր ազգի հարստահարված վիճակը. այսեղ ցույց ե տալիս բանասեղծը այն նարաբերությունը, վոր մի անկիր ազգ կարող եր ունենալ դեպի բռնակալ իշխանություն»¹⁷¹։ Նալբանդյանը գիտեր, վոր պարսկական բռնակալության դեմ վոտքի լելած Աղասիներն ստրուկ դարձան մի այլ վատթարագույն, բռնակալության։ Նանշավակում եր նոր այդ բռնակալությանը սատարող կղերի առաջնորդներին, Արդությանին և Աշտարակեցուն։ «Յերկու տող»ի մեջ նա հարցնում եր. «Ո՞վ հայոց ազգը յուր շահաստացության

¹⁷¹ Մ. Նալբանդյանի Յերկերը, I, յեր. 93 և հետ.

և պատվամոլության համար լերկից լերկիր գաղթեցնելով մի կեսին պատճառ լեզավ մահի, ողի և կյանքի հանգամանքների անսովորությունից, իսկ մըուս կեսին աղքատության և ստրկության սանդուխքի ամենաբարձր աստիճանին վերա վոտք կոչ խելու... Այս բոլորը պատմական ֆակտեր լինելուց հետո դեռևս հոգևորականությունը պիտի կարծի՞ թե ազգ պահեց»¹⁷²:

Բնորոշ և միաժամանակ, վոր մի այլ առիթով, վերադառնալով Արովյանի անձնական ճակատազրին, Նալբանդյանը դուրս է բերում նրան հայ կղերի, հատկապես Ներսես Աշտարակեցու, զոհի վիճակում՝¹⁷³:

Նալբանդյանի ձեռքով գծադրված Արովյանի և նրա ստեղծագործության զիմանկարը բնորոշում է վոչ այնքան Արովյանին, վորքան իրեն՝ Նալբանդյանին ու իր հետևողներին: Վեր հանելով Արովյանի ժառանգության դրական տարրերը, դիմոկրատական մեկնարանություն տալով նրա ստեղծագործությանը, հանձին Նալբանդյանի կովկասահայ բուրժուազիայի արժամատական հոսանքի գաղափարախոսները դուրս ելին գալիս ֆեոդալական ախրոկ կարգերի գեմ առհասարակ, նիզակ ու նետ ուղղելով հատկապես իրենց հակառակորդների՝ Ներսեսների ու Զարյաների, Խալիքների և Ալվազների դեմ, ճանապարհ հարթելով գրանով Արովյանի «մուրազի» մեջ ամփոփված պրոգրեսիվ տենտենցների կենսագործման առաջ: Այս տեսակետից «Վերք»ի վերլուծությունը ևս Նալբանդյանը դարձնում է պահպանողական մտալության դեմ ուղղած մի զենք: Համեմատեցնեք Նալբանդյանի դրածը Պառշանի նախարանության հետ: Զուր չե, վոր բանտում դրած անտիպ մի աշխատառության մեջ գառնալով «Սոս և Վարդիթեր»ի նախարանությանը, Նալբանդյանը բնորոշեց վերջինս վորպես «շատ ձախ» (կարգա՝ ձախորդ. — Ա. Հ.) մի գործ, վորը «յեթի չլիներ ավել գոհ պիտի լինելինք»:

50—60-ական թվականները չսահմանափակվեցին Արովյանի ժառանգության այս տարրերի ոգտագործումով. նույն այդ ժամանակ ե, վոր ուժեղ կերպով արծարծվել են սկսում նաև Արովյանի ժառանգության մեջ ամփոփված հայդուկալին գաղափարախոսության տարրերը: Դրիմի պատերազմի շրջանում եր տակավին, 1855 թվին, յերբ Գ. Քանանյանին ուղղած նշանակալից մի նամակում Ռ. Փատկանյանը գծագրում եր հարցուկալից՝ աղքա-

¹⁷² Ե. ա., II, յեր. 288:

¹⁷³ Ե. ա., II, յեր. 503 և հետո:

սիրական ռոմանտիզմի մի ամրող պրոգրամ. «Գամառ - Քամբիպա» վերտառությամբ հրատարակելիք պարբերականը — գրում եր Պատկանյանը — չվետք և «անդորր կյանքի» սեր ներշնչի ընթերցողներին, դարձնելով նրանց «կրոնասեր քրիստոնյա, զավակասեր կամ ընտանեսեր ծնող». պարբերականում զետեղված ամեն մի հոդված «թող կարողանա արծարծել նոցա սրտի մեջ յեթե վոչ ուղղակի կերպով հալրենասիրությունը, գոնե թող հիշեցնե նոցա կորցրած յերջանկությունը, թող կամաց կամաց սովորի պաղարլուն նայել այն մահվան վրա, վոր նա կարող ե ստանալ զոհելով անձը ազգի ազատությանը. մեկ խոսքով՝ այն ամեն զգացմունքները, վորոնք խորը տպավորվել են մեր մեջ, վոր չենք համարձակվում նրապարակով հարողել և վորն վոր հալին ըստ մեծի մասին անհալտ ե, թող անզգամ կերպով սերմանվի նոցա սրտի և հոգլո մեջ: Ուստի մենք պետք ե աշխատենք մուծանել Գ. Ք.-ի մեջ վարք յերևելի արանց, ինչպես վոր ելին Գուստավ Ալփրի, Վիլհելմ Թելը, Բոցարիսը, Դիմիտրի Դանսկովը, Լիոնիդը և շատ ուրիշները, վորոնք փառք են իրանց հալրենլաց: Ընդհակառակն, յեթե մենք կտեղավորենք այնպիսի շարադրություններ, ուրտեղ վոր ապստամբությունը (ազգասիրական) համարվում ե հանցանք, կսովորացնենք հալին խաղաղ, առանին կյանք վարել, այն ժամանակ ինչի՞ պիտի նմանին նոքա, վճչ ապաքեն այն տաելի հայերուն, վորոնցմով առատ են, մանավանդ ներկա դարումս, Մոսկով, Փետերբուրգ, Ղզլար, Հաշտարիսան: Իմ կարծիքով՝ ավելի լավ ե նկարագրել ապստամբ ավազակների կյանքը, զոր որինակ Պուդաչովի, Ստենկա Ռազինի, Աստրելլիվի, քան գերմանական կյանքից առած մեղը ու կարագով ծեփած ու սերով կոկած Եռնեսաներու, Վոլգեմառներու և Դյուվալյիներու: Յերգերս թող պարունակեն իրանց մեջ հուսահատություն, կասկածանք (սկեպտիցիզմ), կյանքից զրդվումն, քան թե բնության և աստծու վողորմությունը, բարոյականության հաղթանակը: Թող հայ աղջիկը սիրե քաջություն, քան թե բարոյական առաջինություն, սև ու խուճուճիկ մազեր, զգալուն հոգի, տոփոտ (սրածնակ) աչքեր, քան թե փայլուն ուսաղիրներ, հարուստ կամ աստիճանավոր փեսա»¹⁷⁴.

Ծ. Պատկանյանը գրի յե առել այս տողերը նախ քան «Վերք»ի ապագրությունը (1858 թ.): Վերջինիս բովանդակությունը կանխում եր Պատկանյանի ծրագիրը, և Արովյանի վեպը պետք ե վոյք:

¹⁷⁴ «Մուբն», № 2, 3, յեր. 89 և հետ.

ուժեղ տպավորություն աներ բանաստեղծի վրա: 1862 թվին Պատկանանը զրում ե իր «Աղասու մոր լեռգը»՝ նվիրված «Ն. Արովիանի անմահ հիշտակին»: Յերգն անդրադարձնում ե բացառապես վեպի հարդուկալին տարրի աղղեցությունը: Անշուշտ, Արովիանի և Պատկանանին մեջ վոչ միայն նմանություն կար, այլև տարրերություն: Պատկանանի նացիոնալիզմը վոչ միայն չեր փառաբանում ցարական Ռուսաստանը, այլև ուղղված եր վորոշակի վերջինս դեմ: Բանանյանին գրած նամակում բանաստեղծը նկատի ուներ Ռուսաստանը, լեռը գրում եր, թե հրատարակվելիք պարբերականը պետք ե վոր «անզգամորեն» քողարկի հայ ազգանական այն զգացմունքները, «վոր չենք համարձակվում հրատարակով քարողելք: Նա դատապարտում եր ոռւս բանաստեղծ Մալկովին, վորը «փոքր ինչ նվաստացավ պետության առաջ լուր շողոքորթ զրվածքներով»¹⁷⁵: Հետագալում նշավակում եր ոռւսական որինացիալին հետեւած վեղարավոր դիպլոմատներին: «Հասարակութեն խոսելով — զրում ե նա Հովսեփի լարքեալիսկոպոսի (Արքությանի) պատմությունը — սաստիկ մառախլապատ և կասկածելի եւ. ի թիվս ազգիս բարերարներին մտնելու համար նա կարուտում ե ջատագով-պատմարանի... Նմանապես խիստ քննության կարու ե Ներսես Ե.-ի գաղթեցնելը հայերուն Պարսկաստանին և Կարապետ լեպիսկոպոսին՝ Տաճկաստանեն: Բանի վրա արժըմվա աչքերով նայելով՝ թե Ներսեսը և թե Կարապետը մեծամեծ չարիք են հասցըել հային և վոչ բարիք»¹⁷⁶:

Այս ամենը, սակայն, կովկասահալ հետեղական դեմոկրատիայի համախոհ չեր զարձնում Պատկանանին: Հետեղական դեմոկրատիայից զատում ելին Պատկանանին նրա մոնարխիստական հայացքները: Բնորոշ ե, վոր Վիլհելմ Թելի և Թոմաս Բուցարիսի, Ստենկա Ռազինի և Յեմելյան Պուգաչովի անունների հետ միենուն շնչով նա արտասանում եր Գուստավ Ալոլֆի, Դիմիտրի Դանսկովի և Գրիշկա Ատրեալելի անունները: Ազատ Հայաստանում նա կամենում եր վերականգնել ազգի խորածակված թագն ու գահը: Նրա պայքարն ուղղած եր բացառապես ազգի արտաքին թշնամու՝ Շնենդ ոռւսի, մոլիք թուրքի, վոխերիմ պարսկի և դարավոր վոսոխ հույն կրոնամոլին, բայց մանավանդ՝ «անգութ, դիշատիչ զաղիք տաճիկի դեմ»: Հակակրանքը դեպի ցարիզմը

¹⁷⁵ Ն. ա., յեր. 94:

¹⁷⁶ «Փորձ», 1880, № 1, յեր. 186 և հետո:

նշանակում եր հակակրանք դեպի ռուսն ու Ռուսաստանն առհաս-
սարակ.

«Ահա Հյուսիսի սոխակն, ահա
Հյուսիսի այեր.
Ինչ եք կոըցրել Հյուսիսում,
այ խելագար խեղճ հայեր...»

կամ՝

«Ճնէր, ուրեմն, ինձ քո ձեռքը,
Թողնենք այս նոր խուժաստան
Հայոց ազգիս, դաղթենք դեպի
Վանը, — մեր բուն Հայաստան։»

Քաղաքական ալս կոչերով Պատկանյանը փաստորեն կրկնում եր
միայն կովկասահայ ազգային-պահպանողականների լոգունգները,
վորոնցից նրան բաժանում եր միայն մարտական, ուազմաշունչ
գործելակերպը. «Հալոց լեզու, հալոց կրոն, — ահա մեր նշանա-
բանը. առանց հայկական լեզվի չի կա մեզ ազգություն, առանց
հայ լեկեղեցվո չի կա բարոյականություն»¹⁷⁷; Կրոն, լեկեղեցի ասե-
լով Պատկանյանը հասկանում եր հայ լուսավորչական կրոնն ու
լեկեղեցին, վորը, նրա ասելով, «վոչ միայն չե ստրկացնում մեր
միտքն ու հոգին, այլ ընդհակառակը, ինքն և, վոր ինչպես անառ-
պատի բոցեղեն սլունը մեր առջևեն գնում և դեպի լուսավորու-
թյան տաճարը»¹⁷⁸; Պատկանյանը ջատագովում և լեկեղեցական
այդ լուսավորությունը, բայց և միաժամանակ վոտքի լի լեհնում
այն «Դե Մրուսի» գեմ, վոր լափում եր ազգի մարտական կորովը.

«Եարդալ-գրել լավ բան և.
Բայց վոր հասավ քննություն,
Աշակերտին հարցուցեք —
Վոթել դիտե՛ նա արյունաւ
(«Մշեցու նոր սերունդը»)

Ակստեղ և ծալր առնում առանձնահատուկ այն տեղը, վոր
զրագում և Պատկանյանը ազգային-պահպանողականների բա-
նակում:

«Ազյուն վոթե թող հայր,
Աղաղակե միջտ «ուռամ»

Պատկանյանը չկարողացավ հասկանալ, վոր ալս «ուռամ»ն կովկա-
սահայ մարտական բուրժուազիալի արձագանք եր հենց ցարիզմի

¹⁷⁷ «Փորձ», 1880, № 1, յեր. 168:

¹⁷⁸ Ն. ա., յեր. 167:

դաղութալին «քաղաքակրթությանը», նրա ազրեսիալին, վորի առաջ ձանապարհ էին հարթում որևեկտիվորեն նաև բանաստեղծի ցարիզմի հակառակորդների դեմ ուղղած ատելավառ, հարձակութան, դրգուիչ, ռազմիկ լերպերը...

Այնին ցալուուն լեղավ այս տրանսֆորմացիան Բաֆֆու ստեղծագործության մեջ: Ժառանգ կանգնելով Արովյանի հալդուկալին դաղախարախության, Բաֆֆին վեր հանեց նրա մարտական նացիօնալիզմը, խառնելով սրան լիբերալիզմի ֆրազեսության: «Անմահ Արովյանի «Վերք Հայաստանի»ն — գրում և Բաֆֆին «Սալրիաի առաջարանում — ամեն մի հայ մարդ, վորքան անզգա լիներ նաև և սառնասիրտ, դարձլալ սիրում և այդ հրաշալի գիրքը: Այդ գիրքը թորում և ամեն մի հայի աշքերից արտասուք, իերենին շարժում և նոցա ծիծաղը. իսկ շատ անզգամ ուռեցնում և նոցա կուրծեներ մի վսիմ ազգասիրական վոգելուրբյանք: Խոչու: Վորովհետեւ ազգի հոգին խոսում և այդ գրքի խորքից, և ընթերցովը ճանաչում եր նրա թուլլ կիսամեռ ձայնը»: Կասկածից զուրս և «Վերքաի ազգեցությունը «Սալրիաի վրա, աղղեցություն, զոր հանդես լիկավ նաև հետազայտում 1877/78 թ. թ. սուս-թյուրքական պատերազմի տպավորության տակ հրատարակված՝ Բաֆֆու մեծ վեպերի մեջ:

«Եկզու, հալրենիք, լեկեղեցի, ցեղական առանձնահատկություններ, — ահա այն գլխավոր հիմունքները, վորոնցով, հավատացած ենք, կպահպանվի մեր ազգությունը: Հարկավոր են և ուրիշ միքանի պայմաններ, այդ, իհարկե, մեզանից ամեն մեկը հասկանում ե, — զրանց մասին վոչ կարող ենք և վոչ պետք ենք համարում խոսելք: Այսպես և զրել Բաֆֆին «Մշակուում տպված իր հոգվածներից մեկում¹⁷⁹: Իր զրական գործունելության ընթացքում միշտ ավելի զորեղ թափով շեշտելով հոգվածի մեջ վարագության պայմանների» նշանակությունը — Բաֆֆին եր հարկավ, զոր լիակատար չափով ոգտագործեց Արովյանի ժառանգության մարտական տարրերը: Արծրունու թերթը չեր սխալվում, յերբ տալով Բաֆֆու ստեղծագործության համազումարը՝ գրում եր քողարկված. «Արովյանի «Վերք Հայաստանի»ն հրաբխալին զորության առաջին ժամկետն եր: Բայց այդ ժամկետումը կատարվեցալ բավական թուլլ և դանդաղ կերպով և վեր հանեց դեռ վոչ հատարելապես կազմակերպված մի բարձրություն: Հետո ժամկ-

¹⁷⁹ «Մշակ», 1880, № 121:

քումները կատարվում են ավելի սաստիկ և սաստիկ կերպով, յերեան են հանում ավելի մեծ բարձրություններ, վորոնց վերջինը և իր կազմակերպությամբ ավելի կատարելագործվածը պետք և համարել Շաֆֆու «Կալծեր»ը¹⁸⁰,

«Ժայթքումը» միանգամից չկատարվեց: Հետաքրքրական է, վոր «Սալբի»ի վերջնական մշակման շրջանում, 60-ական թվականների վերջերին Բաֆֆին տակավին Մ. Նալբանդյանի ուղղության համակիր եր հոչակում իրեն¹⁸¹, Պատահական չե, վոր «պաշտելի տղամարդի» հիշատակին եր ձոնում նա անդրանիկ իր վեպը: Տակավին 1857 թ. գրած մի նամակում Բաֆֆին հոռի կարծիք եր հայտնում ցարիզմի մասին. «Գիտե՞ք, — հարցնում եր նա, — ինչ դժոխաբեր ներգործություն ունի այժմ Ռուսիո կալսրությունն յուր հայ բնակչաց վրա, վորո դիտավորությունն կորցնել և համայն Արամյան վորդիքն Հայաստանից»¹⁸²: «Սալբի»ի մեջ Բաֆֆին անիծում եր Ներսես Աշտարակեցուն և Լազարեվին պարսկահայերին Ռուսաստան գաղթեցնելու համար: Սակայն, ձախակցիով կովկասահայ մարտական բուրժուազիավին, այլ յերգ եր յիրգում նա տարիներ անց՝ ոռւս-տաճկական պատերազմի ժամանակ: «Պետք ե մտածել — գրում ե նա, — յեթե այս գաղթականությունը չլիներ, ամբողջ Արարատը և Նախիջևանի գավառը կմնար թուրքերի սեփականություն: Ուրեմն Ներսես հինգերորդի ջանքը՝ յուր վորդիներից թափուր Հայաստանը կրկին զետեղել հայոց աղքաբնակությամբ՝ ունեցել ե յուր բարի նպատակները»¹⁸³: Այս գիտակցությամբ ե, վոր Բաֆֆու ստեղծած նոր Աղասիները գնում ելին սպասարկելու ազգի նոր Ներսեսներին և Լազարեվներին: 1877 թվին «Մշակում տպված «Վիպագրությունը ոռւսահայերի մեջ» հոդվածում Բաֆֆին մատնանշում ե, վոր վիպագրողի նպատակը՝ ևս պետք ե լինի՝ իր գրվածքով հոգալ ազգի «ապագայի» մասին, գառնալ «Ժամանակի մտանությունների և զգացումների արտահայտություն», ինչպես Արտվանը և Ծերենցը, կամ ինչպես ինքը՝ Բաֆֆին: Բաֆֆին արհամարհանքով ե խոսում Արովյանի այն հետևորդների մասին, վորոնք կենցաղագրական իրենց գործերով (Պոռշյան, Աղալյան) կամ հասարակական-քաղաքական տենդենցիներով (Տեր-Սարգսյան) մատնում ելին միայն հեղինակների մտքի-

¹⁸⁰ «Մշակ», 1883, № 148:

¹⁸¹ Տես՝ Դ. Աղայան. «Իմ կյանքի գլխավոր գեպքերը», Թիֆլիս, 1894, յեր. 102:

¹⁸² «Հայրենիք» ամս., 1929, № 11, յեր. 80:

¹⁸³ «Փորձ», 1877, «Ճանապարհորդություն Թիֆլիզից Ազուլիս հոդվածում:

սահմանափակությունը. «Դրանց համար — գրում ե Բաֆֆին — հայի անցյալ, հայի պատմություն չկար: Դրանց համար չկար և հայի ապագա Դրանք ծանոթ ելին այն գուղի հետ, վորի մեջ ծնված ելին և վորի սահմաններից դուրս մի ալ կլանք չելին ճանաչում: Դրանց աշխարհալեցողության թոփչքն իրենց գուղի հորիզոնից ավելի հետո չեր անցնում»¹⁸⁴: Ցուր այս գնահատականով Բաֆֆին թիկունք և գարձնում «պաշտելի տղամարդի»՝ Նալբանդյանի սեալիստական ուղղությանը և թիվավարում ուղղակի Պատկանականի ռոմանտիկական նավահանգիստը: Զուր չե, վոր վերջինս, տակալին 1874 թվականին, վողջունեց Բաֆֆուն վորպես այն մեսսիա-բանաստեղծին, «վորին մենք ցարդ պարում ելինք և չելինք գանում», վորպես այն բանաստեղծներից մեկին, «վորոնց մեջ մշտավառ կա հին մարդարեների աստվածաշունչ վողին», վոր պիտի այնքան խլրտա նրա մեջ, «մինչև ազգին ցուց կառ լուր գրոշը և լերթալու ուղիղ ճանապարհը...»¹⁸⁵:

Արովյանի ժառանգության մարտական նման մեկնաբանությունների գեմ սկզբից ևեթ վոտքի լելան վորոշակի կովկասահայ պահպանողականները: Բնարան վերցնելով լեզվի և հավատի պաշտպանությանը նվիրված՝ Արովյանի տողերը՝ շանշանական Գ. Մուրազյանը գրում եր «Կոռունկը եղերում: «Ձեռն պետք և միսենք ազգաշինության, բայց նութերն հնության ավերակներից և մնացորդներից պետք և ժողովենք: Պատերազմների և մաքառումների պետք և ընդդիմանանք, բայց վոչ թե գեմ հանդիման հայտնի զրահավորված թշնամիների, ալլ գաղտնի սրերի, ծածուկ վոտնձգությունների և զողունի վերքերի, վորոնց համար հմտություն և հարկավոր և զգուշություն... Պատերազմներ և մըցմունքներ կան մեր առաջին, վորոնց ընդդիմանալ և հաղթել կարող ենք միախ մեր լեկեղեցու ազատական սիրով, մեր առաքինի հայրենասիրությամբ և ազգային լեզվի մշակությամբ, հաղթության պսակ ստանալով մեր ազգի հարատե կենդանությունն ու բարոլական հառաջադիմությունն: Յեվ չկարծեք թե հալածանքներն, պատերազմունքներն ու գերությունները մեր ազգի համար մի թշվառ ճակատագիր և ապաբախտության նշան, վոչ բնավ — հալածանքը և նեղությունները մեզ համար այն լերկնալին ամպերն են, վորոնց միջից մեր ազգը մղվելով փո-

¹⁸⁴ Տես՝ Գ. Վանանդեցի. «Բաֆֆու վեպերը», Եերևան, 1928, լեռ. 41:

¹⁸⁵ Տես՝ «Սալբի» նախաբանը:

թորիկներից և մըրիկներից անձրեխ վճիռ կաթիւների նման մաղվել և պարզվել եւ մինչև մեր ժամանակներն անկախ պահպանելով իրեն ազգալին ելությունը»¹⁸⁶:

70-ական թվականների վերջերից, կովկասահայ բուրժուազիակ մարտական տրամադրությունների աճման պրոցեսին զուգընթաց, սասակացավ նաև այդ տրամադրությունների գեմ պահպանողականների հալտարերած դիմադրությունը: Պահպանողականների քաղաքական դիրքորոշումն անդրադարձավ մասամբ նույնիսկ Արովյանի ժառանգության պահպանողական վերագնահատմանը: Ալ. Յերիցլանը պահպանողական «Փորձ»ի հջերում ֆիլմատերական «մերկացումներ» տպեց Արովյանի մասին: Գրական բամբասանքներ ելին դրանք Արովյանի՝ զիջծարարության, ուրիշի ամուսնական իրավունքները» վոտնահարելու, վորովեանպետք գործավար պաշտոնից վտարվելու մասին և այլն:

«Աղասին գործնական անձն չեր — զրում եր հետագալում պահպանողական մի այլ քննադատ: — նա այն մարդկանցից եր, վորոնք «մեկ գեղ ելին ուղում շինել, մեկ սաղ աշխար քանդիլ...»: Ճիշտ ե, Աղասին իր անդադար հարձակումներով թեթևացնում և ուսւի հաղթության գործը: ճիշտ ե, նա իր փոքրիկ խմբով մեծ կոտորածներ եր անում մահմելականների մեջ, բայց յեթե մենք կշեռքի մեկ աշքին դնելու լինենք այն ոգուտը, վոր նա բերեց իրեն ժամանակակից հայրենակիցներին, իսկ մյուս աչքին այն մնասը, վոր նա հասցրեց նրանց, — մենք կտեսնենք, վոր յերկրորդ աշքը կքաշի... Բանին արդպես նախելով՝ պետք ե խոստովանել, վոր մելիք Սահակը և Սվանդուլի-խանն իրենց համեստ գործունելությամբ ավելի ոգուտ բերեցին հայերին: նրանք ազատեցին սարդարի թրից քանի հարցուր հայ...»¹⁸⁷: Այս մերձեցում ունենալով՝ վերը բերած առղերի հեղինակը համամիտ չեր վերերալների այն հալացքին, թե պետք ե ժողովրդականացնել տարածել մասսաների մեջ «Վերքը», «Վերք Հայաստանի»: — գրում եր այդ քննադատը — այնպիսի գիրք ե, վոր կարող ե զնանատվել կյանքի մեջ փոքր ի շատե փորձաված մարդու կողմից միմիայն: միմիայն նա կարող ե ոգտվել նրա արժանավորություններից և ճանաչել նրա պակասությունները...»¹⁸⁸: Պայքարելով հայ-

¹⁸⁶ «Կոռունկ», 1860, յեր. 750—51:

¹⁸⁷ Հ. Շահնաւզայան. «Խ. Արովյանի հասարակական և գրականական գործունելությունը», Մոսկվա, 1899, յեր. 21 և հետ.

¹⁸⁸ Ն. ա., յեր. 22:

դուկալին ոռմանսախղմի զեմ, պահպանողական բանակի գրողները ջատագով հանդիսացան գրականության ուսալիստական ուղղությանը՝ Նվիրագործելով աղքալին կյանքում անմիջապես տիրող, կենցաղով և արագիցիալով սրբազործված հարաբերությունները, նրանք ժխտում ելին ամեն մի մտավնություն, վոր չեր տեղավորվում «իրական» կյանքի սահմաններում:

«Վերք Հայաստանի»ի հերոս Աղասին — գրում եր «Մեղու Հայաստանի» թերթի եջերում Հայկունին — մի ահագին իդեալական է, միայն թե սովորական լոգվով նա չի կոչվում իդեալիստ, այլ աղքասեր Ալդ տեսակ աղքասերներից շատ բան չեն կարող սպասել աղքերը և ժողովուրդները¹⁸⁹: Հայտնի լի Հայկունու լելույթը Բաֆֆու «Կալծեր»ից առաջ եր դեռ, իբր Հայկունին արշավանք սկսեց ոռմանտիկական վիպազրության զեմ առհասարակ, ծաղրելով նրա այն հերոսներին, վորոնք գլուխ առած փախչում ելին հանդ ու չոլ, սար ու ձոր՝ ձեռք զարկելով «աշրջության, վարժապետության, վորսորդության» և ամեն տեսակի «ասրաւազության, բժժանքի ու հիմարության»: «Բժժանքի ու հիմարության» շարքն եր գասում Հայկունին նաև ոռմանտիկուներից վոմանց զեմոկրատական սիմպատիաները: Բնորոշ են, որինակ, Հայկունու դիտողությունները Տեր-Սարգսյանի մասին: «Յսս չեմ հասկանում — գրում ե Հայկունին, — թե ինչի համար զորորինակ «Շահենախ» (կ. Պոլիս, 1877) շնորհալի հեղինակը, Պ. Տեր-Սարգսյանը, յուր այս սիրուն վիպասանությունն ուղում և անպատճառ ոռմանտիկականության մի լարերինտոս շինել և եֆեկտաները շատացնելու համար ավելորդ և աննպատակ ցանկությամբ լուր գրքի մեջ կոխում, խճողում և և վոգիներ և սովերներ... քաղաքականություն... տնտեսականություն... քնարերդություն... սոցիալ-դեմոկրատություն... կոսմոպոլիտություն... աղքայնություն և ամեն ություն»¹⁹⁰: Համեմատելով Աղայանին նրա ուսուցիչ Արովյանի հետ՝ Հայկունին գոհունակություն և հայտնում, վոր Աղայանը վերջիվերջո չհետեւց «Վերք»ին, վորտեղ «զրեթե ամբողջապես իշխում և սիրու, զգացմունքը, լերևակալությունը»: «Աղայանի մեջ առաջ և գալիս իրեն իրավունքներով ուղեղը, միտքը, դատողությունը: Աբովյանը վողերվում և, հափշտակվում և, Աղայանը խորհում, կշռում եւ Առաջինն աչքի

¹⁸⁹ «Մեղու Հայաստանի», 1881, № 13:

¹⁹⁰ Ն. ա., № 96:

առաջ ունի հետևանքը, իսկ լերկը որդը — պատճառը՝¹⁹¹ «Հայերիս համար, յիթե գեռ չի լեկած, բայց անշուշտ կուզա ժամանակ, լերը մեր հայտնի հեղինակի «Վերը Հայաստանին ել չի կարդացվելու, բայց նորա գեղեցիկ առակները միշտ կկարդացվեն»: Իբրև հեղինակի Արովլանի անմահությունն այդ միքանի առակներով միմիայն կարող ե տեղի ունենալ իհարկե, յիթե անմահություն ասած բանի գինը մեր գրականության բորսալում այդ աստիճան ընկնի, ստորանա...»¹⁹²:

«Յերևակակալություն, կեղծ-դասականություն, ոռմանտիզմ, իդեալիզմ, լերթաք բարով, տեր ընդ ձեզ: Մենք գիտենք հարգել ձեզ և ձեր ներկայացուցիչներին, մենք խոնարհվում ենք նոցա հանճարների առաջ, բայց և այնպես մենք տեսնում ենք, բայց աչքով տեսնում ենք, վոր դուք և ձեր ներկայացուցիչները չեք կարող մեր պահանջները լցնել, այսուհետեւ դուք մեզ չեք հասկանում, մենք ձեզ. ուրեմն մենք ալլես ձեռք չենք տալու մեկումեկու. ձեր ժամանակը այլ եր, մերը ալլ. այսուհետեւ «մեզ պարտ ե աճիլ և ձեզ մեղմանալ»¹⁹³:

Հայկունու այս տողերն իր ժամանակի համար չելին գրված հարկավէ 80-ական և 90-ական թվականներին Հայաստանի գիր ու բեմ, յեռ ու ձոր վխտում ելին «հայի ապագալի» մարմաջով բռնված «ազգասերներով», հայկական մեծ ու պստիկ Ասլան-բարլասիներով:

«Մեսսիա»-Բաֆֆուն հաջորդեցին գաճաճ առաքյալները: Հայդուկալին շարժումը գլխավորող հնչալյաններն ու դաշնականականները ձեռք մեկնեցին Արովլանի ժառանգության այն բաժնին, վոր հետագալում Պատկանլանի և Բաֆֆու արծարծած մարտական նացիոնալիզմի սեփականություն եր դարձել: «Հրեղեն խոսքերին հետևեցին հրեղեն գործերը», գրում եր այս հաջորդականության մասին Ք. Միքայելյանը: «Ճանճը առաջովս անց կենալիս ուզում ելի սպանեմ, ենպես ելի վառվել: Հայաստան հրեշտակի պես առաջիս կանգնել ինձ թեեր եր տվել»: Արովլանի այս տողերն ե, վոր գրված ելին կարծես հատկապես հենց հուր ու կրակ դարձած քաջ-նազարյան այս սերնդի համար:

Ասլան-բարլասիների կուլտը չընթացավ, իհարկե, միակերպ շառավիղներով: Այն թագնվում ե մերթ պատմական վեպերի և

¹⁹¹ Ն. ա., № 140:

¹⁹² Ն. ա., № 132:

¹⁹³ Ն. ա., № 91:

պատմադրական հաստափոր գրվածքների մեջ (Կոռ), մերթ իրենցիս գալիս փոճավորված պատկերների կամ լեղապատառ վողը ասցութեանների մեջ (Փափաղլան, Ահարոնլան), մերթ մարում հայզուկալին մտաբնութիւն գեկադանոը բնորոշող սիմվոլների մեջ (Շանթ): Հետաքրքրական ե, վոր դարավերջին ռազմաշունչում Արծունութիւն մեջ կամ առաջնորդութիւն ստացած, ներկալացնում ելին Արովյանին բացառապես «խաղաղ կուլուրական» համեստ գործչի դերում. «Նրա գործունելութիւնը — գրում եր Արովյանի մահվան 50-ամյակի առիթով Ալ-Բարանթարը — դարձալ մի կուլտուրական դրոշակ, վորի տակ ժողովվեցին հաջորդ շատ գործիչները¹⁹⁴: Հետաքրքրական ե նաև, վոր 1905 թվականի թու ու բոհի աղղեցութիւն ներքո Արովյանի սավերը վոգեկոչող պազրումալին միտքը փորձ եր անում անդամ շղարշվել բանուկ շրջանառություն ունեցող հեղափոխական լողունգներով... «Ներկայումս (!) — հայտարարում եր դաշնակցական «Ենթակիր» թերթի առաջնորդողը — մեզ հետաքրքրում ե Արովյանը վորպես հեղափոխական (!!) գեմք, վորպես պատքարող, վորպես յեղակի մարտիկ ազատազրութիւն (ինչ «ազատազրութիւն», վեր «ազատազրութիւն» — Ա. Հ.) մեծ գործի համար, մեր (?) մռալլիրականութիւն մեջ»: «Յերկիր»ը տալիս ե այդ «հեղափոխականի» պորտեն. նա ալլինչ չե, քան մարմնացում «մաքուր գաղափարականութիւն, հզոր վոգու, հեղափոխիչ տեմպերամենտի, անընկճելի լիուանդի, անխորտակելի կամքի» և այն: Ո՞վ ե այս: Արովյանը, գուցե — Դումանը, գուցե... Դրսն: Թող ասի, ով ինչ ուզում ե: Պորտեն դժված ե, և այն ավելի քան այժմեական եր «Ենթակիր» ցավերով բանված՝ Ֆրելիխնյան բթափողոցի տղաների համար «խոշոր բազմութեանը, ազատական մարտերի այս որերում (ինչ բաղխութեր, ինչ մարտեր են զրանք. արդիք բանվորական բարիկադների մասին և խոսքը, թե... թուրքերին ջարդելու համար կազմակերպված «ազգային ինքնապաշտպանութիւն»: — Ա. Հ.), իերը այնքան մութ ուժեր իրենց աղտոտ գրոհով թափ առած փորձում են վերականգնել հնի տիրապետությունը, իերը կյանքը կերպարանափոխվում ե և նոր հորիզոնների (!?) ծարավը ալրում ե պապակած շրթունքները¹⁹⁵:

Ալեգորիկ այս տողերը կարգալիս հարց ե առաջանում ակամա՝

¹⁹⁴ «Եղակ», 1898, № 92:

¹⁹⁵ «Յերկիր», 1906, № 2:

պատահականություն եր արդիոք, վոր հենց հալթուրքական պատրոքների զլխավոր վայրում — Բագվում — ռեակցիայի տարիներին «տղերանց» պետքերն սպասարկող «Հայոց կուլտուրական միությունը վաղեմի դաշնակ Կ. Խատիսովի նախաձեռնության շնորհիվ լուս եր ընծալում «Վերք»ի նոր տպագրությունը (1908 թ.), կամ աննախընթաց թափով արծարծվում կրկին Արովլանին արձան կանգնեցնելու խնդիրը... Ազգայնական ղեկավարների ձեռքում Արովլանի կարիկատուրը դառնում և պազրում այլին ազիտկայի նյութ բանվորության դասակարգացին շարժման և ազրարարացին հեղափոխության դեմ: Սակայն նույն այս տարիներին եր միաժամանակ, վոր կովկասահայ բուրժուական միջավայրում մշակվում են նաև «ժամանակի վողուն» պատշաճող հայացքներ Արովլանի մասին: Նրան սկսում են պաշտել բացառապես հենց իր ռեակցիոն մտքերի ու տրամադրությունների, իր կրօնա-բարոյական «խորանքների», նացիոնալիստական իր լավկանության կամ խանդավառ իր ցարապաշտության համար...

Ուշագրավ են այս տեսակետներից Արովլանին նվիրված լերկու գործ — Կ. Կուսիկյանի՝ «Հանճարեղ սիրտ» վերտառությամբ՝ 1912 թվին սպեցիֆիկյան «Գարուն» արմանախում լուս տեսած ետլուգը և ապա՝ Լեռով՝ 1910 թվին դաշնակցական ոփիցիող «Հորիզոն»ում հրապարակած «Զանգվի ափերից» հոդվածաշարքը:

Կուսիկյանի վերլուծության մեջ Արովլանը ներկայանում է մեր առաջ վորակես իդեալիստ, կրօնամոլ, միստիկ, վորը զոհ և դառնում վերջիվերջո հոգեկան հիվանդության: Կուսիկյանը մեծարում և Արովլանին խորազգաց իր տառապանքների, իր միստիկական կենսազգացության, իր «հանճարեղ սրտի» համար: Կուսիկյանի վերաբերմունքը դեպի Արովլանը եսթեաթիկական և նախ և առաջ: Արովլանի կյանքը և գրականությունը «մի միաձուլլ պոեմ ե, շքեղ գեղանկար» նրա համար, մի բարձր հնչող կոչ գեղապի... «վսեմն ու դադափարականը»¹⁹⁶: Բայց մեր հեղինակը զուրկ չենաև կրօնա-բարոյադիտական խոկումներից: «Նրա խոսքը՝ գրում ե Կուսիկյանը — քաղցր ու դաշնակավոր, պարզ ու անկեղծ, միշտ հուղում և մեղ և լցնում մեր սիրտը գործվալից կարեկցանեալ (!) դեպի աղջը և ժողովուրդը. նրա անհուն վողմորությունը տանում և մեղ մարդկային վոգու լեռնային կատարները (!!): Նրա վեհ հո-

¹⁹⁶ «Գարուն» գրական-քննադատական ալմանախ, դիբը Գ., Մոսկվա, 1912, յեր. 10:

դու առաջ ակամա խոնարհվում ես և պահանջ զգում նոզեպես գտվելու (!!!): Նրա կլանքը և բանաստեղծությունը հանձարեղ սրտի միջազգործություն եւ դա մի բորբոքուն և նազելի ճիգ ե արթ-նացնելու քարացած հայ միտքը, մաերելու մեր ցավագար խղճի խոցերը (sic!): Մրա մեջ ե նրա հմայքը, սրանով նա դարձավ հայության մեծ զավակ»¹⁹⁷,

Եսթեափմը և միստիցիզմը կատարեալ եքստազի լե փոխանց-գում մանավանդ լեզրափակիչ տողերի մեջ: «Յեվ այն ուղեղը, վոր ամբողջովին խոն ու զաղափար ե, այն սիրտը, վոր ալրվեց ներքին կրակից և զեղուն զգացմունքների թափից, այն մարդը, վոր գործում եր կսկիծների և զրկանքների գնով, բարուական վեհության կատարեալ պատկեր ե, և աշխարհի ամենամեծ վարդապետությունը պետք ե տապալված համարել, իբթե արդպիսի զաղափարական կլանքը պատրանք ե միայն»¹⁹⁸:

Նշանակալից ե, վոր ըստ լերեւութին «չնաշխարհիկ», «ապուլիսիկ», այս տողերի հեղինակը մատնում ե մի տեղ «քննադատական» վերասլաց այս պոեզիալի ներքին կապը քաղաքական պրոդալի նկուն մտալինության հետ: Պատմելով Արովյանի կլանքը՝ նա գրում ե. «Հայն արհամարհում ե իր լուսամիտ զավակին, սակայն ոռու կառավարությունը ըստ արժանույն դնահատում ե նրան, տեսուչ և ուսուցիչ նշանակելով նահանգական վարժարանում»¹⁹⁹: Սակայն ավելի անմիջորեն են լերեւան գալիս լերախտագիտական այս զգացմունքները գեղիքի «բարեխնամ կառավարությունը» լեռի հոգվածաշարքում: «Վերք»ի հեղինակի պատմական մեծությունը, լեռի ըմբռնումով, այն ե հենց, վոր մի կողմից կարողացել ե անդրադարձնել հայկական դարավոր տառապանքները, «մահմեդական» լիք տակ հայերի ճաշակած «զուրումը», դառնալով արդապիսով Բաֆֆու և Ահարոնյանի «նախահայրը». մլում կողմից, կարողացել ե զորեղ գրչով պատկերել դարերի ակնկալած հերջանիկ այն «սհաթը», լերը գլուխ լեկավ հայերի փրկությունը՝ Ցերեւանի նվաճումը ոռուների ձեռքով, վորը, լեռի կարծիքով, ռհացկական հարցի արմատական լուծումն (լ). Եր Հայաստանի ամենակարևոր մասում»: «Կատարվում եր անթիվ սերունդների բաղձանքը — զրում եր լեռն: — Հայկական հարցը Հայաստանի պարսից բաժնում իր բնական (!) լուծումն եր ստանում»: Լեռն բնորոշում ե

¹⁹⁷ Ն. ա., յեր. 34 և հետա.

¹⁹⁸ Ն. ա., յեր. 35 և հետա.

¹⁹⁹ Ն. ա., յեր. 14:

ալդ անցքը վորպես «պատմական անհուն նշանակություն ունեցող նեղաջում (!!!): Հետաքրքրական ե, վոր «հեղաշրջման» հայզգի դեկավարներից մեկը — Ներսեսը — Անոյի գրչով մեծարվում եր վորպես «անխոնջ մի վաստակավոր, քաղաքագետ, սառնասիրտ մտածող մի իշխանավոր»²⁰⁰; Հետաքրքրական ե, վոր իմալերիամստական պատերազմի նախօրելին «Հորիզոն»ը Արովյանի պաշտամունքն արդարացնում եր մեջ բերելով նրա «սուսասիրությունը», ջերմեռանդ նրա վերաբերմունքը դեպի ոռւս «պետականությունը»... «Ե. Արովյանը — զրում եր թերթը — մի մոլեռանդ ոռւսասեր եր, նրա «Վերք Հայաստանին» հայ ժողովրդի տանջանքի և տենչանքի արտահայտությունը լինելով հանդերձ՝ միաժամանակ մի վոգենորված ջատագովում և ոռւս աղջին և նրա պետական ուժին, և առաջ քաշելով Խ. Արովյանին, կնշանակի հայերի մեջ արծարծել նաև սեր ու համակրանք դեպի ոռւս աղջն ու ոռւս պետականությունը...»²⁰¹, Իմալերիամստական վիրահաս պատերազմի շրջանում ալստեղից մի քայլ եր մնում միայն վեր հանելու «Վերք»ի նշանակությունը ոռւսական զենքի հաջողությանը նպաստող հայ կամավորական շարժման տեսակետից. Զե վոր «Վերք»ի գովերգած Զավրովսկուն ու Տիգրանովսկուն ելին հենց, կամ Արովյանի փառարանած վիրահալ թեմակալը, վոր կամավորական շարժման ոգտին վատնած իրենց լիումնով կանխում ելին «Ազգային բյուրովի» ցարականության ոգտին քրանող նրանց ժառանգների ու հաջորդների նույն ուղղությամբ սպառած ջանքերը...

Մուսաստանի կատարած «հեղաշրջիչ» դերի տեսությունը բորբոքված բուրժուական պատրիոտիզմի այդ շրջանում համառ տեսություն եր ինքան: Կովկասահայ պատմագրության մեջ լիրերալ Անոյից այն անցավ սպեցիֆիզմի զաղափարախոս Դ. Անանունին, վորը գլխավոր իր աշխատության մեջ նույն ալդ ժամանակի հատում գլուխ նվիրեց «նոր տիրողին և նրա հեղափոխիչ դերին»: Մանրանալով ոռւսական զենքի կատարած դերի վրա՝ Դ. Անանունը թվում և ոռւսական զենքի մուծած հետևկալ «հեղափոխիչ» ակտուրը՝ գրավոր որենազրությունը, բնահարկի փոխարինումը դրամահարկով և մանավանդ արտոնյալ դասի հողատիրական իրավունքի ճանաչումը, վորով ոռւսներն իրը «մի հարվածով խախտեցին բնաշրջ-

²⁰⁰ «Հորիզոն», 1910, № 263 և 270:

²⁰¹ «Հորիզոն», 1913, № 272:

ման կանոնը՝²⁰² «Մարքսիստա պատմաբանը չի կամենում նկատել, արկավ, վոր սրանով փոփոխություն եր մտցվում միայն գոյություն ունեցող իրավական վերնաշնքի մեջ՝ առանց մազաշափ իսկ շարժելու գլուղացիության հարստահարման վրա հիմնված ֆեոդալական այն հանրակարգը, վորի վրա խարսխված եր ալդ վերնաշնքը»։ «Նոր տիրողը» սաստկացրեց միայն մասսաների ֆեոդալական շահագործումը՝ «նոր վարք ու նոր բարք» մտցնելով շահագործման տիրող լեզանակի մեջ՝ անխախտ թողնելով նրա «ընազդման կանոնը»։ Գալուի այնուհետև Արովյանին,
 Դ. Անանունը շեշտում ե, վոր այնչափ, վորչափ նա ընդառաջում եր Անդրկովկասում «հեղափոխիչ» ալդ ուժի — ցարիզմի — տիրապետությանը, բերան եր գառնում հեղինակություններին գերի, փրկարար ասածուն կամ ազատարար հերօսներին պաշտող գլուղացիության։ «Արովյանը գլուղացիության բարեկամն եր. նա գլուղացիության պես ակնկալում եր մի ազատարար ձեռք։ Յեվլիբր ալդ ազատարար ձեռքը հանդիսացավ (!? — Ա. Հ.) ոռւս բանակը, նա լցվեց ոռւսասիրության բուռն զղացմունքով։ Հայ անցյալը դարձավ նրա համար խնկելի հիշողություն, իսկ ոռւսական տիրապետությունը հորջորջվեց ալդ անցյալի շարունակություն, հարազատ իշխանության վերածնունդը»²⁰³. Անանունը խճճվում ե ալստեղ ներքին հակասության մեջ։ Խոսելով գլուղացիության մասին, նա մատնանշում ե այն փաստը, վոր ոռւսական տիրապետությունը սաստկացնում եր ճորտական շահագործումը. նա հիշատակում ե Թաղիբաղյանի այն գիտողությունները, թե՛ տեսնելով ոռւների որով վրացի հայ ճորտական շահագործումը Վրաստանում, ժողովուրդն ավելի փառք եր տալիս պարսիկներին, քան թե «քրիստոնեաց ալսոցիկ գերչաց»²⁰⁴. Հանգամանք ե այս, վոր կարծես չի հանգավորվում գլուղացիության «ոռւսասիրության» հետ։ Դրությունը չի փոխվում նրանից, իերը Անանունը, մի կողմ գնելով Արովյանի «ոռւսասիրությունը», զանց առնելով լեկվոր «փրկչին» ներբողելու նրա մտայնությունը, շեշտում ե նրա մի ալլ «առաքինությունը», վոր «չի մոռացվի», չի անդիտացվիլ», այն, վոր իբր «նա առաջինը լեզավ գլուղացիության հարազատ հովանավորի շուրջն ունեցած վորոնումների արձանագրողն ե ալդ

²⁰² Դ. Անանուն. «Մոռասահայերի հասարակական զարգացումը XIX դարում», հատ. I, յեր. 115 և հետո.

²⁰³ Ն. առ., I, յեր. 340։

²⁰⁴ Ն. առ., յեր. 116։

մասին գլուղացիական տենչերով մտորողը՝^{205:} Ալստեղ արդեն հեղինակն ազգահավաքման նացիոնալիստական իր գաղափարախոսությունն ե, վոր փորձում ե մի կողմից Արովլանի, մլուս կողմից գլուղացիության շնչին փաթաթելու Վերջին գեղքում նա զանց ե առնում իր իսկ այն հայտարարությունը, թե ազգայնության գաղափարի հաղթանակը բաւրծուազիալի հաղթանակը պիտի լիներ^{206:} Համաշխարհային պատերազմի որերին կրկնակի այս զանցառությունը պատահական յերևուկթ չեր, այլ՝ հեղինակի արծարծած սոցիալ-շովինիստական գաղափարախոսության ցայտուն մի արտահայտությունը:

²⁰⁵ Ե. առ., յեր. 343:

²⁰⁶ Ե. առ., յեր. 314

* * *

Շուրջ լերեք քառորդ դար կովկասահալ հասարակական միտքը մեծարանքի առարկա դարձրեց Արովյանին՝ վեր հանելով նրա անհատականության մերժ ալս, մերժ այն լերանդը, անդրադարձնելով գրանովի իսկ Արովյանի ժառանգության համար պալքարող դասակարգերի ու հոսանքների առանձնահատուկ ըմբռնումներն ու տեսնդենցները։ Տոհմալին ավանդները ջատագովող կոնսերվատոր և հնագարյան նախապաշտարումների գեմ վոտքի լելած վերանորոգիչ, Դադութի գեմոկրատական իդեալների համար մարտնչող առաջնորդ և ցարիզմի «ազատարար» միսիալին հավատացող քաղաքագետ։ Հալութիկալին սխրագործությունները գովերգող աշուղ և կրօնական եքստագով հափշտակված միստիկ։ Ոտար պետականության գաղափարախոս և «հարազատ հովանափորի» թախիծով բռնված ազգասեր։ Ահա լերիներանգ այն կինո-լենտը, վոր վերարտադրում եր Արովյանի ալլակերպվող գիմապատկերը, անդրադարձնելով նրա կլանքի ու գործունելության և նրա ժառանգության շուրջը բորբոքված պալքարի հակասությունները։

Յեզ չնայած սրան՝ պատմությունը գեռ չի նկարագծել Արովյանի լիակատար գիմապատկերը, չի սպառել լիովին նրա ժառանգությունը։ Վորչափ Հայաստանի՝ աննախընթաց ծավալով ու թափով զարդացող պրոլետարական լեզուն հիմնականում խմորվում է ալսոր Արովյանի առաջ մղած «արարատյան բարբառի» շաղախից։ Վորչափ խորհրդակին գրականությունը, պրոլետարական նոր ու լայն բաղիսի վրա, ընդարձակում է ալսպես կոչված «Ժողովրդական» լեզվի, «Ժողովրդական» մոտիվների — «իմալսի խոսացածների», «առակի, մասալալի, սուր-սուր խոսքերի» — վերամշակման հնարավորությունները։ Կամ վորչափ խորհրդակին դըպրոցը, կառուցվելով սոցիալիստական խնդիրների համաձայն, հասնում է տեսականի և գործնականի, ուսուցման և արտադրության այնպիսի մի համագրության, վորի ուղղությամբ բուրժուական հանրակարգում ապարդյուն ջանքեր միայն կարող ելին թափվել —

բոլոր ալս բնագավառներում։ Արովլանի թողած ժառանգության արժեքն ալսոր ե միայն, վոր լերևան ե գալիս ամբողջ իր ծավալով ու խորությամբ։

«Պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիզմի շինարարության դարաշրջանը ԽՍՀ Միության մեջ ազգային կուլտուրաների — բովանդակությամբ սոցիալիստական և ձևով ազգային — ծաղկման շրջանն ե խսկապես» (Ստալին) ²⁰⁷։ Բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային կուլտուրաների ծաղկման այս դարաշրջանը անհնարին ե, անշուշտ, իեթե չհուղենք և չլուծենք դրականապես ազգային գրականության կլասիկների լենինյան վերագնահատման և ոգտագործման, նրանց լուրացման և հաղթահարման խնդիրը։

Զենք կարող ասել, գիրախտաբար, թե ընկ. Ակսելի գիրքը, վոր խորհրդային անդրանիկ մենագրությունն ե Արովլանի մասին, վորևէ չափով մոտեցրել ե մեզ Արովլանի մարքսիստական-լենինյան վերագնահատման ու ոգտագործման, նրա լուրացման ու հաղթահարման ալս խնդիրի լուծմանը։

Ընկ. Ակսելին զրագեցնողը, նրան հուզողը Արովլանի ժառանգության պրոգրեսիվ, գեմոկրատական տարրերի լուրացման կամ հաղթահարման խնդիրը չե, այլ քաղաքական նրա ուսաբիլիտացիան ընթացիկ սերնդի աշքում։ Արովլանի քաղաքական ուսաբիլիտացիայի մտաբնությամբ ե անշուշտ, վոր ընկ. Ակսելը փորձել ե գուրս բերել նրան պլուզի և պլուզացիության գաղափարախոռն թշնամի կապիտալիստներին և կապիտալիզմին, լերևան հանել նրա սկզբունքային ներհակությունը քաղաքական տիրող կարգերին կամ լեկեղեցական տիրող նվիրապետությանը և այլն։ Բայց կարիք կամ գրան։ Կարիք կամ, վոր Արովլանը յեղած լիներ անպատճառ գլուղացի կամ գլուղագիր, անձնապես պառակտված լիներ տիրող կարգերի ու ուժիմի հետ, ունեցած լիներ, ասենք, հեղափոխական ստաժ, վորպեսզի Խորհրդային Հայաստանի բանվորական կամ գլուղացիական մասսաները կարողանալին արժանի տուրքը առաջ Արովլանին թեկուզ հենց նրա համար, վոր նրա միջոցով հռչակեցին կովկասահայ բուրժուական դեմոկրատիայի մանկավարժական պրոգրեսիվ հայացքները, կամ նրա համար, վոր այդ մարդու ձեռքով ե գրվել աշխարհաբարի անդրանիկ մանիֆեստը — «Վերք Հայաստանին։ Արովլանը, հարկավ, առաջին հեղինակը

²⁰⁷ Сталин И. В.: «Вопросы ленинизма», 8-ье изд., 1931, № 702.

չեր, վոր աշխարհաբար գրեց. բայց առաջին հեղինակն երնա, վոր պայմար սկսեց երա տիրապետության համար։ Հուզելով գրական նոր լեզվի խնդիրը՝ Արովլանը կարևորություն տվեց վոչ այնքան նրան «համազգային» ծավալ հաղորդելու ինդրին, վորքան նրա հանրամատչելիությանը, գրական խոսքի ներգործության լենթակա իրական հայաստանի սահմաններում, Հայկական Մարզում։ Իրական նույն արդ Հայաստանի կենդանի բարբառն եր հենց, վոր հիմք գարձրեց նա գրական նոր լեզվին։ Արովլանը նախընտրեց Յերևանի բարբառը, վորպես մասսաների վրա ունենալիք անմիջական ազդեցության գործիք, վորպես մասսաների լուսավորության, մասսաների դաստիարակության գենք։ Քաղքենիության շարքերն անցած գլուղացիության և գլուղացիության հետ շաղկապված քաղքենիության դասակարգային կենդանի բարբառն եր արդ, վոր Արովլանի շնորհիվ թափանցեց կովկասահալ գրականությունը։

«Թեկուղ ոսերեն, նեմեցերեն, յա ֆրանցուզերեն գրած, թեկուղ գրաբառ՝ տասը կըլի վոր հասկանալին, բայց հարդի հազարի համար թեկուղ իմ գրածը, թեկուղ մեկ քամու ջաղաց»։ «Տար հազարը թող հասկանան ու կարդան, մեկ քանի ջուխտ ու կենդիսողի տասձին ու ծիծաղելուն՝ գլուխ քաշ արած մտիկ կանեմ»։ Արովլանը կովկասահալ բուրժուազիայի առաջին, գուցե և վերջին, հեղինակն ե, վոր պոկելով կենդանի խոսքը գրագետ համքարության ձեռքից՝ կամեցավ գործ ունենալ հարյուր հազարի լեզվի ու լալիքի հետ։

Անշուշտ, Արովլանի գրական լեզուն կովկասահալ կապիտալիստական հարաբերությունների ազդարարն եր։ Այդ հարաբերություններն արդեն բավականին զարգացած ելին գրական նոր լեզվի խնդիր առաջարկելու համար, բայց տակավին չելին հասունացել առաջարած խնդիրը գրականապես լուծելու համար։ Բուրժուազիան անկարող եր գեռես համազգային շրջանակների մեջ զնելու գրական նոր խոսքը։ Զեր խփել գեռես համազգային կյանքի բուրժուական զարկերակը, բուրժուազիան չեր սահմանադրվել գեռես վորպես ազդություն։

Հասկանալի յե, վոր միանգամից չե, վոր ձեավորվեց կովկասահալ բուրժուազիայի գրական լեզուն։ «Վերք»ը գրելուց հետո շուրջ լերեք-չորս տասնամյակ տևող պալքարի ընթացքում և միայն, վոր գրաբարի և բարբառների սինթեզի ճանապարհով ձեավորվեց և հաստատվեց վորպես գրական լեզու հետազա աշ-

խարհաբարը, կովկասահայ բուրժուազիալի գրական այն լեզուն, վորի ուղիները հարթեցին մի կողմից Նազարյանցը և մյուս կողմից Նալբանդյանը և վորի դասական ձևակերպողը հանդիսացավ հետագայում Բաֆֆին:

Արովյանի ժամանակ կովկասահայ գրական լեզուն տակալին չեր հաղթահարել իր «ծագման տարերայնությունը» (Naturwüchs-sigkeit), լեռնուլթ, վոր տեղի ուներ «ժամանակակից լուրաքան-չուր կուլտուրական լեզուների մեջ», կամ վոր կովկասահայ բուրժուազիալի գրական լեզվի մեջ տեղի չեր ունեցել դիալիկտի այն «կենտրոնացումը», վորի հիմքն ազգության տնտեսական և քաղաքական կենտրոնացումն է¹⁰⁸, Խոսելով Վրաստանի մասին ընկեր Ստալինը գրել ե. «Վրաստանն իբրև ազգություն լերևան լեկավ միայն դարի լերկրորդ կեսում, լերը ճորտատիրության անկումը և լերկրի տնտեսական կյանքի աճումը, հաղորդակցության ճանապարհների զարգացումը և կապիտալիզմի առաջացումն աշխատանքի բաժանում սահմանեցին Վրաստանի մարզերի միջև, վերջնականապես խախտեցին իշխանությունների տնտեսական մեկուսացումը և ի մի շաղկապեցին նրանց»¹⁰⁹:

Կովկասահայերի ազգալին խմորման պրոցեսը տեղի լե ունեցել վրացականին զուգընթաց, ամփոփվելով պատմական գրեթե միևնույն շրջանակների մեջ։ Արովյանի աշխարհաբարը կովկասահայ բուրժուազիալի սաղմնավորվող ինքնազիտակցության նախանշանն եր միայն և վորպես արդպիսին կրում եր իր վրա ֆեոդալական զավառայնուրյան տիրական շեշտը։ Բնորոշ ե միաժամանակ, վոր Արովյանի գրական լեզուն դիմադարձ եր լինում դեպի ժողովրդական մասսաները։

Պատահական լեռնուլթ չե, վոր Արովյանը, բուրժուազիալի գաղափարախոսը, իր գլուխ-գործոցում գլխավոր հերոսի դեր հատկացրեց հենց մասսաների հետ կապված մարզուն։ «Միտսները մեծ մեծ մարդիկ եին, —գրում ե Արովյանը—շատն ել գեռ հլա սաղ սալամաթ՝ փառք աստուծո, Աղասին աղքատ ու մեռած, նրա սուրբ գերեզմանին դուրբան։ Ասեցի կեղծավորություն չանեմ, նրան ընտրեցին»։

Արովյանի գործերի մեջ նկատելի լե, հիրավի, ուշադիր վերաբերմունք դեպի ֆեոդալական հասարակության արագած-

¹⁰⁸ Հմմ. K. Marx und Fr. Engels: «Die deutsche Ideologie» p. p. 404—405.

¹⁰⁹ Տես՝ «Марксизм и национальный вопрос» (Сборник), 1923, յեր. 268։

աղքատն ու անանկը: Ճիշտ չեր ասում Արովլանը, թե իր հեռուս, Աղասին, աղքատ եր, թեև հավատում ենք, վոր Աղասին ողնում եր աղքատներին ու խորհում նրանց մասին. «Մեկին մի փորձանք դիտչելիս, կամ մեկ դարդ ունենալիս, նա իր գլուխը լեզ եր գնում, նրա մուրազին հասնում: Բերնի թիգեն հանում եր, ուրիշին ուտացնում: Ենքան իր ապրանքին, իր հանդին ու մալին չեր մուլալիթ, վորքան իր հարեանների: Տանուտերի տղին եր (Ա. Հ.), աղքատի ու նաշարի ընկեր: Վորք եր նրա գուռը գալիս, սուփրեն եր բաց անում, կամ քիսեն. ում գութան չուներ, իրանցը բան տալիս. ում լեզն ու հոտաղ չուներ, իրանցն եր ուղարկում. ում փող չուներ, վոր մշակ բռնի՝ իքին ետի, փորի լա թաղի, կամ թաղը լեռտ տա, ինքն եր առաջ ընկնում, գեղի աղերքը հավաքում ու գնում նրա բանն...»:

Աղասու մորալը ֆեոդալ-բուրժուական Փիլանտրոպիալի մորան եր: Աղասու մորալը հենց իրա՝ Արովլանի մորալն եր: Տակալին Դորպատում, հանդիպելով Ֆահրադ անունով խեղճ ու կրակ մի հայ մշակի՝ Արովլանը գրում ե. «Եսպես Ֆահրադներ հարյուրներով են ման գալիս մեր քաղաքի (կարդա՝ Յերևանի. — Ա. Հ.) փողոցներումը մշակության համար և նվազ մտածում, թե նրանք ել մեր արինիցն են: Ես Ֆահրադին ել աղքատությունն եր հասցըել եստեղ (կարդա՝ Դորպատ. — Ա. Հ.): Աղքատություն, աղքատություն, վոր մեր պատվական հայերից հազարավորներին վերջին հուսահատության մեջ գցելով, տանջում ու մաշում ե: Բայց լեզրը կրացվի են արշալուսը, վոր մեր ազգի հարուսաները հոգս կքաշեն իր մերձավորների ու խեղճերի արտասուքները սրբելու Յերանի են ժամանակին, լերանի նրան, ով վոր ժամանակակից ու մասնակից կըլի եսպես աղքաշեն հայրենասիրության»²¹⁰; Արովլանը վողբում հայ պանդուխտի կլանքը:

«Եյսպէս թափառի, այսպէս տարագրի անառւն, անտեղի
Անրադդ հայկաղուն, չիք նմա կայան,
Ոչ յօտար աղխարհ, ոչ յիւր ծննդարան,
Ելեալ պանդիտի, լայ զիւր հայրենիս,
Մինչեւ սպառին չունչը նորա յառափառ»²¹¹:

Թիֆլիսի բաղնիսներից մեկում չին Բայազետից գաղթած հայքիսաշին պատմում ե նրան. «Ճուն, տեղ քանդեցինք, թորգե-

²¹⁰ «Կառնիվ», 1861, № 7, յեր. 538:

²¹¹ Ն. ա.:

ցինք։ Մեր շհարում մարդ մի ել լիս ելիս Մկա ցամաք խացն ել և մեր գլխիցը զհաթ ելեր Զիմ ճժեր դուռն լերեսին թողեր, ցքեւ յեկել եմ եսվանք, վոր մեկ քանի մը շահի դատեմ, զնամ նրանց խավարին խասնիմ։ Մենք սանիաթքլար մարդ ենք, ունչպարություն չենք կարա ենել, դժորը կորչինք»։ — «Թող լսողը միտք անի—հարում ե Արովյանը, — թե ես լսելիս՝ սրտիս ինչ տեղն եր լսի զալիս, երվում»²¹²։ «Մեկ հարիր աղբատ յերեխալի ձեռքից բռնեմ, ինչ գիտեմ նրանց սովորեցնեմ», — բնորոշ չվ Արովյանի «մուրազի» շեշտված այս գիծը։ «Ես որ ել վոր միտք եմ անում, թե լիս հացս ուտելիս, տաք տեղը նստելիս՝ ազարավոր հայ վոչ հաց ունեն, վոր ուտեն, վոչ շոր ունեն, վոր տաքանան, սիրտս պատռում ա, որս խավարում»²¹³։ Արովյանի կարծիքով իր «մուրազի» իրաւործումն իսկ սրտամաշ այս աղքատությունը վերացնելու միջոց եր լինելու, վորի համար այնքան հորդորներ եր ուղղում ազգի հարուստներին ու մեծավորներին... Արովյանն իգեալիստական մերձեցում հայտարերեց այստեղ, ինչպես նաև այն դեպքում, յեր կարծում եր, թե բավական ե, վոր ասիացիք բաց անեն իրենց աչքերը, այսինքն — ուսում ստանան, վորպեսզի չթողան, ևվոր ամեն հայվարա մարդ իրենց վրա բերան բաց անի»։ Մասսաների նլութական դեղրադացիալի հետ միաժամանակ Արովյանը շոշափեց նրանց քաղաքական ճորտացման փաստերը։ Մական իշխող սիստեմի վերաբերմամբ Արովյանի քննադատությունը չհանգավ հեղափոխական յեղրակացությունների։ Մասսաների քաղաքական շարժման, նրանց դասակարգային պայքարի փոխարեն Արովյանը քարողեց դասակարգերի փոխադարձ ողնություն, արտօնալաների և արտօնողների հոգատարություն հայցեց զրկվածների և հալածվածների կացությունը փրկելու համար... Այս Փոնի վրա լե հենց, վոր «Վերք»ի և «Զանդի»ի հեղինակը թախծալից հալացք եր նետում դեպի հեռու անցուալը, յերբ իրը միասին ելին արածում գառն ու գելը, կամ վերհիշում Արով պապի և խնամի Հարությունի բաղ-բոստանը, վորոնց բերքն իրը աղքատ զուղացիների բաժին եր դատնում ամրողջովին...»

Անշուշտ մասսական պառապերիզմը, մասսաների կրած ճնշումը վերացնելու միամիտ, ուտոպիստական միջոց եր այս և

²¹² «Անտիպ յերկեր», I, յեր. 37.

²¹³ «Տարազ», 1914, № 1, յեր. 8:

Արովյանի սահմանափակ պատմականաւասարակական պերսպեկտիվների շրջանում չե, վոր պետք ե հնար լիներ նման խնդիրների լուծման համար: Այնուամենանիվ ուսուպիստական նրա արդմտականությունը բնորոշ ե մի այլ տեսակետից: Արովյանը, այն հեղինակը, վորին նրա «քննադատներն» ու «կենսագրողները» ներկայացրել են բացառապես նահապետական «շեն ու բոլ» կենցաղը մեծարողի գերում, կամ բացառապես «ազգասիրության» ու «հաւաքենասիրության» նշանի տակ, կովկասահակ առաջին հեղինակն ե փաստապես, վոր դիտել ե սոցիալական անձավասրության փաստը, շոշափել «ազգաստության» և «հարստության» խնդիրը, նկատել մասսաների ճնշված ու հալածական կացությունը՝ կարելից վերաբերմունք հայտարերելով դեպի աղքատը, թեկուց, կրկնում ենք, խնդիրը լուծելու համար յերեան բերել յիակատար իր անողությունն ու անկարությունը: Անողության և անկարության գիտակցությունն եր հենց, վոր պատճառ դարձագ նրա հոգեկան ճգնաժամին, նրա տրագիկական վախճանին: Արովյանի հոգեկան արդ կրախը տիրող հակասություններից լելնելու բուրժուական իլլուզիաների կրախն եր: Նրա անձնական վորդիրգությունը՝ պատմական դաս, վոր կոչված պիտի լիներ ազատազրելու մասսաներին «գերզասակարգալին ֆեոդալ-բուրժուական իլլուզիաներից»՝ առաջնորդելով նրանց դեպի դասակարգալին գիտակցության դարթոնք, դեպի հեղափոխական անհաշտ պալքար...

Արովյանի ժամանակ, նրան շրջապատող միջավալրում, բացակայում եր գրեթե բուրժուազիալի առաջատար ուժը Բուրժուազիան, վորպես կղերի և աղնվականության գերիշխանության ու նրանց հետ զողված քաղաքական տիրող ուժիմի գեմ պարքարող դասակարգ, բացակալում եր տակավին: Հրապարակի վրա յերեսում ելին լուսավորության գրոշակ պարզող առանձին անհատներ, և Արովյանը դրանց մեջ առաջններից եր: Այս ե, վոր բարձրացնում ե նրա տեսակարար կշիռը և նրա ստեղծագործության նշանակությունը բուրժուական-դեմոկրատական վերածնության հետագա շրջանի համար:

Սահմանափակ եր, հարկավ, տարտամ և պալմանական կովկասանակ բուրժուազիալի առաջատար դերը վերածնության արդդարաշրջանում անգամ: XIX դարի վերջին տասնամյակների ընթացքում գարզացող հասարակական շերտավորումը, բուրժուական աղջության ներսում արծարծվող դասակարգալին հակամարտը,

զրկեց բուրժուազիալին ու նրա գաղափարախոսներին հասարակական պրոգրեսի պահանջներն անդրադարձնելու սահմանափակիր ունակություններից անգամ։ Զուր կլիներ վնատուել այդ շրջանի բուրժուական գրականության մեջ Արովլանի դասական պարզությունն ու անմիջականությունը, նրա անկեղծությունն ու սրտաբացությունը։ Յեվ այդ՝ չնալած նրա ստեղծագործության ակունքների բազմաբարդության, նրա հասարակական-քաղաքական մոտիվների բազմերանգության։ Յեվ հասկանալի յի, Բուրժուական հետազա գրականության գլխավոր խնդիրն այլևս մասսաների լուսավորությունը չեր, այլ նրանց հիմարացումը, նրանց կապիտալիստական հարստահարության քողարկումը, նրանց դասակարգալին գիտակցության և դասակարգալին կովի խաթարումը։ Ազգալին լուսավորության անունով վերածնիչների կուածկոփած «գաղափարական» զենքերը բուրժուազիան և նրա առաջնորդներն ուղղեցին վերջիվերջո ազգի բազմության դեմ, ի սպաս գնելով այն նրա հասարակական-տնտեսական շահագործման, նրա մտավոր և քաղաքական ստրկացման։ Հանգամմանք եր այդ, վոր պարտավորեցրեց շահագործվող այդ բազմությանը և նրա պալքարը զեկավարող կոմունիստական ավանդություն խլել բուրժուազիալի ձեռքից այդ զենքերը, ուղղել այն հենց բուրժուազիալի ու նրա գաղափարախոսության դեմ։ Զուր չե, վոր այդ զենքերի թվում Արովլանի կենդանի բարբառը ևս խլիում և այսոր բուրժուազիալի ձեռքից, ատաղձ դառնում սոցիալիստական անդասակարգ հասարակություն կառուցող պրոլետարիատի նոր մի լեզվի, գործադրվում մասսաների նյութական բարեկեցության, նրանց կազմակերպության ու պալքարի, նրանց կուլտուրական հեղափոխության նպատակների համար։ Յեվ չի գնում արդյոք այսորվա մեր պրոլետարական և կոլխոզալին գրականությունն Արովլանը հիշեցնող մի ճանապարհով, յերբ, հարստացնելով նոր կազմակերպվող գրական լեզուն ժողովրդական կենդանի բարբառների հաշվին, ոգտագործում և միաժամանակ նրա միջազգային «ոտար» բառամթերքը, լեզվական այն տարրերը, վոր հեղափոխության քուրայում միանալով քիմիապես բարբառային բառապաշարին, դարձել են արդեն մասսաների խոսակցական լեզվի անհրաժեշտ ու հարազատ բաղադրիչները։ Ավելորդ ե ասել, թե միանգամայն այլ կերպ են դնում և լուծում պրոլետարիատն ու իր կուսակցությունը սոցիալական և քաղաքական խնդիրները, քան կարող եր մտածել կամ յերևակալել, ուր մնաց

թե կենսագործել ալդ իր ժամանակին Արովլանը։ Բայց այսոր իսկ հրահանգիչ շատ բան կա այն շիտակութիւն և կարեկ ցութիւն, այն անկեղծութիւն և պարզութիւն մեջ, վոր հալտարերում եր Արովլանն ամեն անդամ, իերբ շոշափում եր մասսաների լուսավորութիւն և կրթութիւն, նրանց սոցիալական և քաղաքական կացութիւն բարվոքման հարցերը։ Կարդացնք թեկուզ հենց նրա գործերի առաջարանները։ Վորքան ուսանելի բան կա հասարակական տեմպերամենտով հրավառված սրտառուչ ալդ եջերի մեջ ալսորվա իսկ լերիտասարդ մեր գրողների համար։

Չենք շղարշում, հարկավ, Արովլանի ստեղծագործութիւն դասակարգային իմաստը։ Չենք թագնում, վոր Արովլանի աղքատասիրութլունը, նրա աղքատասիրութլունը բուրժուական լուսավորչութիւն ատրիբուտներ ելին միայն։ Չենք մոռանում հատկապես նրա գլուխ-գործոցի՝ «Վերք»ի մեջ ամփոփված ռեակցիոն տարրերը։ Չենք անդիտանում այն գերը, վոր կատարեց ալս վեպը կովկասահալ ազգային շարժման հետագա շրջադարձի մեջ հենց իրա ալդ ռեակցիոն տենդենցների շնորհիվ։ Դիտենք, վոր տակավին Արովլանի ժամանակ, կովկասահալ բուրժուազիալի վերելքի նախորելին, նրա պետքերի համար մշակվող բարբառն աշխարհ լեկալ այն լերկնող դասակարգի պատմական արատով։ Սակայն մեղ չի կարող շփոթեցնել Արովլանի ժամանակութիւն պատմական ալդ արատը։ Մենք ոգտագործում ենք պրոլետարիատի սպառազինման համար թշնամի դասակարգերից ստացած կուլտուրական ժառանգութիւնը, վերլուծելով և մերկացնելով այն, մերժելով ալդ կուլտուրալի պատմիվը, ընդունելով նրա ակտիվը։

«Առաջազրելով «գեմոկրատիզմի ինտերնացիոնալ կուլտուրալի և համաշխարհային բանվորական շարժման» լողունգը, յուրաքանչյուր ազգային կուլտուրալից վերցնում ենք միմիայն նրա գեմոկրատական և սոցիալիստական տարրերը, վերցնում ենք ալդ միմիայն յեվ անպայման հակագրելով բուրժուական կուլտուրալին, յուրաքանչյուր ազգութիւն բուրժուական նացիոնալիզմին»²¹⁴։

Ըսկ. Ակսելը, մոռանալով ազգալին կուլտուրալի վերագնահատման հիմնական ալս ուղեցուցը, Արովլանի ժառանգութիւն գեմոկրատական տարրերը նրա բուրժուական նացիոնալիստական տենդենցներին հակագրելու փոխարեն ջանք ե թափել... ազատել

²¹⁴ Лепин: «Сочинения», 2-ое изд., XVIII, 137.

կորստից Արովլանի ամբողջական ժառանգությունը։ Նա փորձ է արել սրբել «Վերք»ի ճակատից պատմական նրա արատը, զանց տանել կամ մեղմացնել ոեգրեսիվ տարրերը նրա մեջ։ Բայց քանի վոր ըստ իերևութին իրեն իսկ վերջիվերջո անհուսալի մի ձեռնարկ է թվացել արդ, հանգել ե «շրջադարձի» տեսության, զատել «Վերք»ից նրա հեղինակին, վերհուսել աղղալին նոր վիպասանություն, նոր լեգենդ՝ Աղասու փոխարեն հերոսացնելով այս անդամ հենց իրեն՝ Արովլանին։


Ասում են՝ ավարտելով իր այս գրվածքը, ընկ. Ակսելը ձեռնարկել է զրելու նոր մի վեպ Արովլանի մասին, գործ, վորին սպասում են սրտատրով գրական նրա բարեկամները։ Թվում ե, թե ինչ-վոր թյուրիմացություն կա այստեղ։ Վեպը Արովլանի մասին գրված է արդեն։ Ակներեւ ե, վոր «նոր» վեպը հնի գեղարվեստական փոխակերպումն ե լինելու միայն, ինչպես հինը՝ Արովլանի մասին պատմվող հնորյա մի լեգենդ ե միայն՝ նոր փոխակերպությամբ։


Կասկած չկա, վոր ասպետական, բայց հապաղած փորձ ե այս՝ «փրկելու» ջրատար Արովլանին։ Փորձը վրիպել ե և պիտի վրիպեր, անկասկած։ Սակայն տարվելով այդ փորձով՝ լերիտասարդ գրողը կատարում է գաղափարական այնպիսի գալարումներ, վոր հարկ կա, անշուշտ, հոգ տանել իր իսկ անձի և լեռնդի փրկության։


Մոսկա,

Հունվար 30.

1933 թ.







ԳԱԱ Եիմնարար Գիտ. Կուադ.



FL0397402

(604-)

ՀԵԿ
1170

ԳԻՒԾ 2 Ո. 50 Կ.



Աշոտ Իօաննիսյան
Ա Բ Օ Վ Յ Ա Ն
Գոսիզդատ ՀՀ Հարևանություն
Էրևան 1988